

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ



«ԻՆԵԿՈԲԱՆԿ»

Թողարկողի ֆիրմային անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն

կազմակերպատիրական ձևը

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0001, Թումանյան 17,

հեռ. (+374 10) 510 510, ֆաքս (+374 10) 510 573

էլ.փոստ՝ info@inecobank.am,

ինտերնետային կայք՝ www.inecobank.am

«ԻՆԵԿՈԲԱՆԿ»

Տեղաբաշխողի անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն

կազմակերպատիրական ձևը

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0001, Թումանյան 17,

հեռ. (+374 10) 510 510, ֆաքս (+374 10) 510 573

էլ.փոստ՝ info@inecobank.am,

ինտերնետային կայք՝ www.inecobank.am

Արժեթղթերի տեսակը		անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը	ոչ փաստաթղթային	
Արժեթղթերի քանակը	Թողարկման ծավալին և անվանական արժեքին համապատասխան	
Արժեթղթերի անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի թողարկման ծավալը	Առավելագույնը 15,000,000,000 (տասնհինգ միլիարդ) ՀՀ դրամ	Առավելագույնը 10,000,000 (տաս միլիոն) ԱՄՆ դոլար
Արժեկտրոնը	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ	
Շրջանառության ժամկետը	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ	

«ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ.....	6
1.1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	6
1.2. ԲԱՆԿԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՌԻՍԿԵՐ.....	15
1.3. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	16
1.4. ԲԱՆԿԻ ԱՌԻԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ԱՆՁ.....	17
1.5. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	17
1.6. ԲԱՆԿԻ ԹՈՂԱՐԿԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	19
1.7. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ.....	20
1.8. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՁԵՎԸ.....	22
1.9. ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ.....	22
ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	24
2.1. ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ.....	25
2.2. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	27
2.3. ԱՌԱՋԱՐԿԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	27
2.4. ԱՌԱՋԱՐԿԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	38
2.5. ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.....	46
2.6. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	46
ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	47
3.1. ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԸ.....	47
3.2. ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ.....	48
3.3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ.....	52
3.4. ԲԻԶՆԵՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	53
3.5. ԲԱՆԿԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ.....	60
3.6. ԲԱՆԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ.....	59
3.7. ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ.....	61
3.8. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ.....	62
3.9. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.....	70
3.10. ՀՍԿՈՂ ԱՆՁԻՆՔ.....	70

3.11. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ	71
3.12. ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ	71
3.13. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	72
ԲԱԺԻՆ 4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	72

Սույն ծրագրային ազդագրի համար պատասխանատու անձինք

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ծրագրային ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ծրագրային ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ծրագրային ազդագրի բովանդակությունը:

Ստորագրող անձինք

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի նախագահ
Ավետիս Բալոյան



08.11.2021

(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ
Կարեն Սաֆարյան



04.11.2021

(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ
Աշոտ Ավետիսյան



04.11.2021

(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ
Սուլիսան Գվալիա



10.11.2021

(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ
Յան Դիվանգարթ



(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ
Արամ Կայֆաջյան



10.11.2021

(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ
Սումա Սվամինաթան



(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ
Արեն Նալթակյան


10/11/2021
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Ֆինանսական տնօրեն, տնօրինության անդամ
Հայկ Ոսկանյան


10/11/2021
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ
Արտեմ Զիչյան


10/11/2021
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Ռիսկերի տնօրեն, տնօրինության անդամ
Վաղինակ Խաչատրյան


10/11/21
(ամսաթիվ)


«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Մանրածախ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ
Լևոն Ռուբինյան


10.11.21
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ
Արշալույս Սահակյան


10/11/21թ.
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Գործառնական տնօրեն, տնօրինության անդամ
Լիլիթ Գրիգորյան


10/11/21թ.
(ամսաթիվ)

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես սույն Ծրագրային ազդագրի ներառական համառոտ նկարագրություն, և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ծրագրային ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ծրագրային ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել սույն փաստաթուղթը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Բանկի գլխամասային գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջինիս ինտերնետային կայքում՝ www.inecobank.am:

1.1 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բանկի ֆիրմային լրիվ անվանումը՝

հայերեն՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ռուսերեն՝ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО ЗАКРЫТОГО ТИПА «ИНЕКОБАНК»
անգլերեն՝ “INECOBANK” CLOSED JOINT STOCK COMPANY

Բանկի ֆիրմային կրճապ անվանումը

հայերեն՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
ռուսերեն՝ АОЗТ “ИНЕКОБАНК”
անգլերեն՝ “INECOBANK” CJSC

Բանկային գործունեության լիցենզիա թիվ 68

Բանկի գրանցման վկայական թիվ 0169, գրանցման ամսաթիվ 07.02.1996թ.

Բանկի պետական գրանցման վայրը՝ ՀՀ, ք. Երևան 0001, Թումանյան 17

Բանկի գործառնական վայրը՝ ՀՀ, ք. Երևան 0001, Թումանյան 17

Կապի միջոցները՝ հեռ. (+37410) 56-59-74, (+37410) 51-05-10, ֆաքս (+37410) 51-05-73

էլ. Փոստ՝ info@inecobank.am

Ինտերնետային կայք՝ www.inecobank.am

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապվել Դիրեկտորի գործառնությունների բաժնի որևէ մասնագետի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 56-59-74:

Բանկի նկարագիրը

1. Բանկի հիմնադրումը

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Բանկ) հիմնադրվել է 1996թ. փետրվարի 7-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն: Բանկի պետական գրանցման վկայականի համարն է N0169, իսկ բանկային գործունեության լիցենզիան՝ N 68: Բանկի հիմնադրման երկիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Բանկն ունի Գլխամասային գրասենյակ և 25 մասնաճյուղ, չունի ներկայացուցչություն:

Բանկը 25 տարի գործունեություն է ծավալում ՀՀ բանկային համակարգում՝ մատուցելով ունիվերսալ բանկային ծառայություններ ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ կորպորատիվ հաճախորդներին՝ սպասարկելով ավելի քան 500,000 հաճախորդների Հայաստանում: Բանկը առանձնանում է հայաստանյան բանկային շուկայում իր ուրույն կորպորատիվ ոճով: Դրա ձևավորման գործում կարևոր դեր է խաղում «Ինեկոբանկ» ապրանքանիշի զարգացումը, ինչը հնարավորություն է տալիս ստեղծել զգայական և գիտակցական կապ Բանկի ներկա ու հնարավոր հաճախորդների և Բանկի միջև:

Տարիներ շարունակ լինելով ամենաեկամտաբեր և ամենաարագ զարգացող բանկերից մեկը՝ Բանկը մատուցում է կորպորատիվ ու մանրածախ բանկային ծառայություններ: Բանկը որդեգրել է հաճախորդակենտրոն մոտեցում՝ իր ծառայություններն առավելագույնս համապատասխանեցնելով հաճախորդների պահանջմունքներին:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի, երաշխիքների, ակրեդիտիվների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների իրականացումը, արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը:

Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա, հանդիսանում է ՀՀ ավանդների երաշխավորման համակարգի անդամ:

Բանկը հանդիսանում է SWIFT միջազգային վճարային համակարգի, մի շարք միջազգային դրամական փոխանցումների համակարգերի անդամ, ինչպես օրինակ «MoneyGram», «Unistream», «IntelExpress» և «Converse Payments» համակարգերը, Visa միջազգային վճարային համակարգի անդամ, ինչպես նաև ArCa վճարային համակարգի լիիրավ անդամ և բաժնետեր, MasterCard միջազգային վճարային համակարգի աֆիլիացված անդամ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ի անդամ, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամ:

2. Բանկի առաքելությունը

Բանկի առաքելությունն է մարդկանց նպատակների իրագործման համար հնարավորություններ ստեղծելը՝ մատուցելով իրենց պահանջներին համահունչ ֆինանսական ծառայություններ:

3. Բանկի արժեքները

Բանկի արժեքները արտացոլում են Բանկի ավելի քան 25-ամյա պատմությունը և հանդիսանում են հաղթանակների գրավականը: Նրանք ոչ միայն կարևոր են Բանկի տեսլականին և նպատակներին հասնելու համար, այլև ուղղորդում են Ինեկոթեմի յուրաքանչյուր անդամի՝ գործընկերների, հաճախորդների և համայնքի ներկայացուցիչների հետ շփման և համագործակցության ընթացքում: Բանկի արժեքները հանդիսանում են Բանկի գործունեության կարևորագույն հիմքը և նպաստում են նորարարական գաղափարների և ծրագրերի մշակմանը: Դրանք են՝

ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

Ազնվությունը Բանկի համար հիմնաքարային արժեք է և սահմանված վարվելակերպ Բանկի բոլոր շահառուների նկատմամբ: Բանկի համար ազնվությունը նախ և առաջ մտածելակերպի և գործելաոճի, նպատակների և այդ նպատակներին հասնելու միջոցների ներդաշնակությունն է՝ հիմնված թե՛ իրավական, թե՛ բարոյական նորմերի վրա:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Բանկն ունի նախաձեռնողականության ու վճռական գործողությունների ազատություն՝ ի շահ Բանկի հաճախորդների և ի նպաստ ընկերության: Այդ ազատությունն է օգնում Ինեկոթեմին զարգանալ՝ խրախուսելով նորարարությունն ու առաջնորդությունը:

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Թափանցիկությունն այն կարևորագույն արժեքներից է, որի վրա հիմնվում է Բանկի գործելաոճը: Այն Բանկի համար խորհրդանիշ է՝ անկախ նրանից՝ Բանկը գտնվում է թոփաքային զարգացման, թե լրջագույն մարտահրավերների փուլում:

ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Լավ արդյունքի հասնելու ու հաջողելու միակ ճանապարհը միմյանց հետ համագործակցող թիմերի առկայությունն է, որի բոլոր անդամները պատրաստ են կրելու հաջողության դափնիներն ու ծախողման պատասխանատվությունը: Բանկում բոլորը վստահում են իրար ու հարգում միմյանց կարծիքը, ինչպես նաև

աջակցում բոլոր նրանց, ովքեր պատրաստ են այս միջոցով գործելու ու արդյունքի հասնելու:

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼԻՉՄ

Պրոֆեսիոնալիզմ ասելով Բանկը ամբողջացնում է Ինեկոբանկի համար ամենաէական արժեքների շրջանակը: Բանկը համատեղում է գործողությունների ազատությունն ու ստեղծագործ միտքը ազնիվ ու թափանցիկ գործելաոճի հետ՝ կառուցելով մասնագիտական ու անհատական լավագույն հատկանիշներով օժտված թիմ:

4. Բանկի ապրանքային նշանը

Բանկի ապրանքային նշանը, որը գրանցվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 04.05.2004թ., հետևյալն է՝



6. Բանկի կարգախոսն է՝ «Արժևորե՛ք Ձեր ժամանակը»:

7. Բանկի կանոնադրական կապիտալը

Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 14,545,680,000 (տասնչորս միլիարդ հինգ հարյուր քառասունհինգ միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ 15.10.2021թ. դրությամբ, որը բաժանված է 181,821 (մեկ հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր քսանմեկ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 80,000 (ութսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի հիմնական բաժնետերերն են՝

(համաձայն Ինեկոբանկի ՓԲԸ Արժեթղթերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի առ 15.10.2021թ.):

N	Անուն, Ազգանուն	Սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի քանակը /հատ/	Մասնաբաժինը /%/
1	Բալոյան Ավետիս Յուլիկի	64,406	35.42%,
2	Սաֆարյան Կարեն Գառնիկի	55,687	30.63%
3	ԱԳՐԻՖ ԿՈՈՊԵՐԱՏԻՖ ՅՈՒ ԷՅ	18,201	10.01%
4	ԴԻԴԱԲԼՅՈՒԷՄ ՖԱՆԴՍ ԿԲԸ ՓԿՆԿ ՄՆՀ/DWM FUNDS S.C.A.- SICAV SIF	9,272	5.10%

8. Բիզնեսի համառոտ նկարագիր.

Բանկն իր հաճախորդներին մատուցում է հետևյալ ֆինանսական ծառայությունները.

Վարկային ծառայություններ, որոնց մեջ կարելի է առանձնացնել՝

❖ Մանրածախ բիզնես

Բանկի հիմնական մրցակցային առավելությունն է մանրածախ վարկավորումը, որը տարիների ընթացքում կատարելագործվել է՝ քայլ առ քայլ կիրառելով նորագույն տեխնոլոգիական լուծումներ: Ընդհանուր առմամբ այս ուղղությունը բաղկացած է սպառողական և հիփոթեքային վարկավորումից:

1. Ապառիկ վարկեր. Բանկն առաջինն էր շուկայում, որը հետևողականորեն զարգացրեց ապառիկ վաճառքի տեխնիկան՝ ներկայացնելով «Ապառիկը տեղում» ծառայությունը, որը էականորեն հեշտացրեց ապառիկ գնումների ընթացքը: Բանկն ապառիկի շուկայում առաջատարներից մեկն է: Սա այն ոլորտն է, որտեղ Բանկը տրամադրում է լավագույն ծառայություններն իր հաճախորդներին:

2. Սպառողական վարկեր. Բանկն իր հաճախորդներին տրամադրում է տարբեր նպատակներով սպառողական վարկեր՝ գրավով և առանց գրավի: Ուշագրավ են Բանկի վերջին մի քանի տարիների ձեռքբերումները. 2017 թվականի սկզբում ներդրվեցին արագ սպառողական վարկերը, իսկ արդեն տարեվերջին՝ «1 CLICK» առցանց վարկը: Բանկն առաջինն էր հայկական շուկայում, որ կիրառեց ամբողջովին ավտոմատացված առցանց վարկավորման գործընթաց:

«1 CLICK» վարկը հասանելի է հաճախորդին 24/7 ռեժիմով աշխարհի ցանկացած կետից՝ InecoMobile և InecoOnline համակարգերի միջոցով՝ առանց Բանկի մասնաճյուղեր այցելության:

2021թ. ընթացքում Բանկը մեծացրել է սպառողական վարկերի սահմանաչափը: Այժմ Բանկի հաճախորդները կարող են ստանալ մինչև 10,000,000 ՀՀ դրամ «1 CLICK» օնլայն վարկ՝ առանց երաշխավորի և հավելյալ թղթաբանության:

3. Հիփոթեքային վարկեր. Բանկն առաջարկում է հիփոթեքային վարկեր՝ ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման, վերանորոգման, կառուցապատման, ինչպես նաև այլ բանկում հաճախորդի ունեցած հիփոթեքային վարկի վերաֆինանսավորման նպատակով:

Վարկավորումը իրականացվում է ինչպես Բանկի ներքին ռեսուրսներով, այնպես էլ մի շարք կառույցների՝ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի և «Բնակարան Երկիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի ծրագրերի շրջանակներում: Բանկն իր ռեսուրսներով տրամադրում է նաև լողացող տոկոսադրույքով հիփոթեքային վարկեր, որի շրջանակում առաջին երեք տարիների համար գործում է հաստատուն տոկոսադրույք, այնուհետև՝ լողացող:

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ համագործակցության շրջանակներում տրամադրվում են «Բնակարանային էներգաարդյունավետ վարկեր», որոնք ուղղված են բնակարանների և/կամ բնակելի տան էներգաարդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև «Մարզային բնակարանային վարկեր»՝ ՀՀ մարզերում բնակարանների և/կամ բնակելի տների ձեռքբերումը խթանելու նպատակով:

Բանկի սքորինգային համակարգը վերջին տարիների ընթացքում էականորեն կատարելագործվել է և հնարավորություն է ընձեռում իրականացնել վարկունակության գնահատում տարբեր տիպի հաճախորդների համար, հետևաբար նաև տրամադրել կոնկրետ հաճախորդի վարկունակությանը և կարիքներին համապատասխանող վարկային պրոդուկտ:

Կորպորատիվ բիզնես

1. Բիզնես վարկեր. Բանկը բիզնես ֆինանսավորման ոլորտում մատուցում է բավականին ընդարձակ ծառայություններ, ինչպես իր ներքին ռեսուրսների հաշվին, այնպես էլ համագործակցող կազմակերպությունների կողմից ներգրավված միջոցների հաշվին: Վերջին տարիների ընթացքում Բանկը համագործակցել է մոտ 30 միջազգային ֆինանսական և ներդրումային կազմակերպությունների հետ, որոնց շարքին են դասվում KFW, ADB, IFC, EBRD, DEG, FMO, OFID, DWM, EFSE, Incofin Investment Management, Blue Orchard Microfinance Fund և այլն:

Բանկի ռազմավարության կարևոր մաս է կազմում Փոքր ու Միջին Ձեռնարկությունների ֆինանսավորումը: Իր ՓՄՁ հաճախորդներին Բանկն առաջարկում է վարկավորման լայն գործիքակազմ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆտներ, գյուղատնտեսական վարկեր և այլն:

Այսօր, իր ճկուն գործելաոճի շնորհիվ Բանկը կորպորատիվ հաճախորդների շրջանակում վայելում է բարի համբավ:

2. Առևտրի ֆինանսավորման գործիքներ. Բանկն առևտրի ֆինանսավորման ոլորտում տրամադրում է ծառայությունների մատուցման արդյունավետ և ամբողջական գործիքակազմ (երաշխիքներ, ակրեդիտիվներ, ինկասոներ և այլն), և ակտիվ համագործակցում է Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC), Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), ինչպես նաև միջազգային առաջնակարգ մի շարք բանկերի հետ: Բանկն արժանացել է միջազգային մի շարք հեղինակավոր մրցանակների: 2007թ. և 2009 թ. Բանկը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) կողմից ճանաչվել է Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտում ամենաակտիվ թողարկող բանկ, 2010թ. Գերմանական «Կոմերցբանկի» կողմից ստացել է մրցանակ առևտրի ֆինանսավորման ոլորտում գերազանց համագործակցության համար, իսկ 2016թ. Բանկը ճանաչվել է «Լավագույն գործընկեր բանկ առևտրի ֆինանսավորման ոլորտում» Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) կողմից:

Ավանդային գործառնություններ

Բանկն իր ֆիզիկական անձ հաճախորդներին առաջարկում է ժամկետային և ցպահանջ ավանդների ներդրման լայն հնարավորություններ, ինչպես նաև խնայողական հաշվի և նպատակային խնայողական պլանի ընտրման ճկուն տարբերակներ: Ավանդի տեսակները առավելագույնս հարմարեցված են հաճախորդների պահանջներին և նպատակներին: Իրավաբանական անձ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հաճախորդների համար Բանկը նույնպես նախատեսել է ավանդների ներդրման գրավիչ տարբերակներ՝ ավանդի ժամկետից և արժույթից կախված ճկուն սակագներով: Ավանդատեսակների նպատակների և պայմանների միջև ճիշտ հավասարակշռության պահպանման շնորհիվ վերջին տարիների ընթացքում Բանկը շարունակաբար գրանցում է ավանդատու հաճախորդների ցանկի ընդլայնում և ավանդային պայմանագրերի վերականգնման բարձր ցուցանիշ:

Գործառնություններ արժեթղթերով

❖ Բրոքերային ծառայություններ

Բանկը իր հաճախորդներին տրամադրում է Բրոքերային ծառայություններ, հնարավորություն ընձեռելով գնել և վաճառել տարբեր տեսակի արժեթղթեր հայկական շուկայում:

❖ Պահառուական ծառայություններ

Բանկի կողմից մատուցվող արժեթղթերի պահառության ծառայությունը նախատեսված է ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, որոնք սեփականության իրավունքով կամ որպես անվանատեր տիրապետում են այլ անձանց կողմից թողարկված արժեթղթերի:

❖ ՀԿԴ ծառայությունների միջնորդավորում

Բանկը, հանդիսանալով Դեպոզիտար համակարգի հաշվի օպերատոր, միջնորդավորում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունները, որոնք ներառում են ռեեստրի վարման, արժեթղթերի պահառության հետ կապված ծառայությունները:

❖ Այլ հաշվարկադրամարկղային ծառայություններ, որոնք ստանդարտ, ավանդական բանկային ծառայություններ են և իրենց մեջ ներառում են՝

1. Դրամական փոխանցումներ
2. Միջազգային փոխանցումներ
3. Արտարժույթային փոխարկումներ և այլն

Առանձնահատուկ շեշտադրման կարիք ունեն թվային ուղիներով մատուցվող ծառայությունները, որը Բանկը իրականացնում է ԻնեկոՕնլայն, ԻնեկոՄոբայլ համակարգերի և Ինեկոփեյ ծառայության միջոցով:

InecoOnline

ԻնեկոՕնլայն համակարգը հուսալի և ապահով թվային բանկինգի լուծում է, որը Բանկի հաճախորդներին հնարավորություն է ընձեռում օգտվել բանկային գրեթե բոլոր ծառայություններից ինտերնետ հասանելիությամբ համակարգչի միջոցով՝ առանց բանկ այցելելու:

InecoMobile

ԻնեկոՄոբայլ բջջային հավելվածը ժամանակակից մոբայլ բանկինգի լավագույն տարբերակն է, որը հնարավորություն է ընձեռում, ունենալով միայն սմարթֆոն և ինտերնետ հասանելիություն, կատարել բանկային գործարքներ ցանկացած վայրում, ցանկացած պահի՝ 24/7 ռեժիմով:

INECOPAY

Հայաստանյան բանկային համակարգում բացառիկ վճարային լուծում, որը հնարավորություն է ընձեռում անկոնտակտ վճարումներ կատարել անմիջապես սմարթֆոնով: Այն առանձնանում է շուկայում իր հարմարավետությամբ և ապահովությամբ:

2017-2020 թթ. ընթացքում Բանկը շահույթի մեծությամբ և կապիտալի շահութաբերությամբ գտնվել է ՀՀ բանկային համակարգի առաջին քառյակում:

2020թ. տարեվերջի դրությամբ՝

-  Բանկը ընդամենը ակտիվներով գրավել է ՀՀ բանկային համակարգում 5-րդ հորիզոնականը
-  Վարկային պորտֆելի մեծությամբ զբաղեցրել է բանկային համակարգի 6-րդ հորիզոնականը
-  Բանկը նշանակալի աճ է արձանագրել ավանդային պորտֆելով՝ համակարգում պահպանելով 7-րդ հորիզոնականը
-  Բանկը առաջատարներից է շահույթի ծավալով ու կապիտալի շահութաբերությամբ, ինչպես նաև արդյունավետության մի շարք այլ ցուցանիշներով:

Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը

Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում:

Բանկի եկամտաբեր ակտիվները

	30.09.2021	31.12.2020	31.12.2019
Ակտիվներ, այդ թվում.	382,088,618	387,775,479	339,113,468
Եկամտաբեր ակտիվներ	301,845,452	301,669,808	278,002,576
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	205,470,325	216,462,240	238,649,450
Բանկերից ստացվելիք գումարներ	8,506,604	10,877,562	6,750,195
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,055,745	3,724,166	3,132,214
Ներդրումային արժեթղթեր	85,812,778	70,605,840	29,470,717
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	79.00%	77.79%	82.0%

Բանկն ունի Գլխամասային գրասենյակ և 25 մասնաճյուղ (15.10.2021թ. դրությամբ)

Անվանում	Հասցե
Գլխամասային գրասենյակ	ք. Երևան, Թումանյան փ. 17
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ	
Աբովյան 18 մասնաճյուղ	ք. Երևան, Աբովյան փ. 18,
Կորյուն մասնաճյուղ	ք. Երևան, Տերյան 105/1
Մաշտոց մասնաճյուղ	ք. Երևան, Մաշտոց պ. 18, շ. 52/1
Արաբկիր մասնաճյուղ	ք. Երևան, Կոմիտասի պ., 38/2 շենք -62
Կոմիտաս մասնաճյուղ	ք. Երևան, Կոմիտասի պ. 39 շ. թ. 78
Կոմիտաս 2 մասնաճյուղ	ք. Երևան, Կոմիտասի 54բ., 1 շինություն
Նոր Նորք մասնաճյուղ	ք. Երևան, Նոր Նորք, Գալի պող. 15/9, շ. 17/1
Աջափնյակ մասնաճյուղ	ք. Երևան, Բաշինջաղյան փողոց, հ. 192/8,
Մալաթիա մասնաճյուղ	ք. Երևան, Ռաֆֆու փ. 39 շենք, 64 տարածք
Շենգավիթ մասնաճյուղ	ք. Երևան, Բագրատունյաց 22/3փ, շինություն 105
Շենգավիթ 2 մասնաճյուղ	ք. Երևան, Բագրատունյաց փողոց 15 շ., շին թիվ 120
Տիգրան Մեծ մասնաճյուղ	ք. Երևան, Տիգրան Մեծ պող. 29ա-95
Չեչոյն մասնաճյուղ	ք. Երևան, Քանաքեռ-Չեչոյն, Պարույր Սևակ փ. 51/9
Ավետիսյան մասնաճյուղ	ք. Երևան, Ավետիսյան 63/41
Խորենացի մասնաճյուղ	ք. Երևան, Խորենացի փ. 15, "Էլիտ Պլազա" Բիզնես Կենտրոն, առաջին հարկ
Կասկադ մասնաճյուղ	ք. Երևան, Բաղրամյան 2/83
Էրեբունի մասնաճյուղ	ք. Երևան, Էրեբունի 14
Գյումրիի մասնաճյուղ	ք. Գյումրի, Ալեք Մանուկյան փ. 6
Վանաձորի մասնաճյուղ	ք. Վանաձոր, Տիգրան Մեծ փ. 75
Լոռի մասնաճյուղ	ք. Վանաձոր, Տիգրան Մեծ փ. 41ա
Արմավիրի մասնաճյուղ	ք. Արմավիր, Հանրապետության փ. 17
Հրազդան մասնաճյուղ	ք. Հրազդան, Օգոստոսի 23 - 46/100
Աբովյան մասնաճյուղ	ք. Աբովյան, Սահմանադրության հրապարակ 7/3

Աշտարակ մասնաճյուղ	ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցու հրապ. 2, բնակ. տան 1-ի հարակից տարածք
Արտաշատ մասնաճյուղ	ք. Արտաշատ, Օգոստոսի 23փ, թիվ 93

Բանկը չի հանդիսանում որևէ խմբի անդամ:

1.2 ԲԱՆԿԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՌԻՍԿԵՐ

Բանկն, ինչպես ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ: Ներդրողները պետք է տեղյակ լինեն իրենց կողմից կատարված ներդրումների հետ կապված ռիսկերին նախքան Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը ձեռք բերելը:

Պարտատոմսերում ներդրում կատարողները առնչվում են ինչպես տվյալ պարտատոմսերը թողարկող կազմակերպության՝ Բանկի գործունեության հետ կապված, այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից առաջացող ռիսկերի (շուկայական ռիսկ) հետ:

Բանկի ռիսկը կապված է վարկային, գործառնական, իրացվելիության և շուկայական ռիսկերի հետ: Տվյալ ռիսկերը կարող են հանգեցնել Բանկի ֆինանսական վիճակի վատթարացմանը:

Մասնավորապես, Բանկի համար առավել էական ռիսկերն են.

1. Գործընկերների կամ վարկային ռիսկը Բանկի ֆինանսական վնաս կրելու ռիսկն է փոխառուի կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմի՝ Բանկի հանդեպ ստանձնած պայմանագրային պարտականությունները չկատարելու հետևանքով:
2. Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողության հետ՝ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Իրացվելիության ռիսկն առաջանում է Բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:
3. Տոկոսադրույքի ռիսկը Բանկի շահույթի կամ ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում: Նման փոփոխությունները կարող են ավելացնել կամ նվազեցնել Բանկի տոկոսային մարժան:
4. Ընդհանուր տնտեսության ռիսկեր. ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար անդրադառնալ Բանկի գործունեության, մասնավորապես վարկավորման ծավալների վրա:

5. Օրենսդրական ռիսկ. Օրենսդրական դաշտի փոփոխությունները ևս կարող են բացասաբար ազդել Բանկի գործունեության վրա:
6. Գործառնական ռիսկը Բանկի գործունեության ընթացքում կորստի ռիսկն է, որը առաջանում է անհամապատասխան կամ ձախողված ներքին գործընթացներից, մարդկանց և համակարգերի, կամ արտաքին գործոնների պատճառով:

❖ Պարտատոմսերին առնչվող ռիսկերից կարելի է առանձնացնել՝

1. Տոկոսադրույքի ռիսկ. Այս ռիսկը կարող է էական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գրավչության վրա: Մասնավորապես, շուկայում տոկոսադրույքների բարձրացումը ենթադրում է պարտատոմսի գնի նվազում, ինչի արդյունքում էլ ներդրողը կարող է չստանալ նախատեսվող շահույթը, կամ անգամ վնասներ կրել:
Նշված ռիսկը, սակայն, էական է այն դեպքում, երբ նախատեսվում է պարտատոմսերի վաճառք մինչև դրանց մարվելը:
2. Արտարժույթի ռիսկ. Այս ռիսկը առաջանում է ազգային դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի՝ պարտատոմսերից ստացված եկամուտների վրա: Կախված այն բանից, թե ինչպիսի նպատակով է կատարվում ներդրումը, հետագայում դրանք ՀՀ դրամի կամ ԱՄՆ դոլարի փոխարկելիս հնարավոր են կորուստներ:
3. Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ. Պարտատոմսերը երկրորդային շուկայում վաճառելու հետ կապված հնարավոր են խնդիրներ՝ կախված շուկայում առկա իրավիճակից: Բանկը պարտատոմսերի իրացվելիության ապահովման համար ձեռնարկելու է համապատասխան միջոցներ, այդ թվում՝ շուկա ստեղծողի հետ պայմանագրի կնքում, սակայն իրացվելիության ռիսկը այնուամենայնիվ կարող է ի հայտ գալ:

1.3. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է Բանկի խորհրդի, Գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Բանկի գործունեությունը շուկայի պահանջներին, ինչպես նաև նվազեցնելով տարբեր ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը:

1.4. ԲԱՆԿԻ ԱՌԻԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁ

Բանկի 2020թ. անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «Քեյ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից:

«Քեյ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-ՓԻ-ԷՄ-ՋԻ» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:

«Քեյ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՓԲԸ -ի հասցեն է՝ ՀՀ ք. Երևան 0010, Վ. Սարգսյանի փ. 26/1, «Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ, հեռ.՝ +37410 59-59-99, ֆաքս՝ +37410 59-59-99, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.kpmg.am:

Բանկի 2018 և 2019թթ. անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ կողմից: «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն Դելոյթ ԱՊՀ Հոլդինգս Լիմիթեդի (“Դելոյթ ԱՊՀ”) մասն է կազմում, որը Deloitte Touche Tohmatsu Limited-ի անդամ ընկերությունն է ԱՊՀ-ում:

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Ամիրյան փող., 4/7 շենք, 7-րդ հարկ, հեռ. +374-10-526520, ֆաքս՝ +374-10-527520, ինտերնետային կայքի հասցեն է՝ <http://www.deloitte.am>:


Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:

Աուդիտորական եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Բանկի աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

1.5 ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բանկի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝



❏ Բաժնետերերի ընդհանուր ժողով

Սույն Ծրագրային ազդագիրը կազմելու պահին Բանկի հիմնական բաժնետերերն են՝

(համաձայն Ինեկորբանկ ՓԲԸ Արժեթղթերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի առ 15.10.2021թ.):

1	Բալոյան Ավետիս Յուլակի	Հանդիսանում է Բանկի 64,406 (վաթսունչորս հազար չորս հարյուր վեց) հատ սովորական բաժնետոմսերի սեփականատերը (35.42%)
2	Սաֆարյան Կարեն Գառնիկի	Հանդիսանում է Բանկի 55,687 (հիսունհինգ հազար վեց հարյուր ութսունյոթ) հատ սովորական բաժնետոմսերի սեփականատերը (30.63%)
3	ԱԳՐԻՖ ԿՈՈՊԵՐԱՏԻՖ ՅՈՒԷյ	Հանդիսանում է Բանկի 18,201 (տասնութ հազար երկու հարյուր մեկ) հատ սովորական բաժնետոմսերի սեփականատերը (10.01%)
4	ԴԻԴԱԲԼՅՈՒԷՄ ՖԱՆԴՍ ԿԲԸ ՓԿՆԿ ՄՆՀ /DWM FUNDS S.C.A.-SICAV SIF	Հանդիսանում է Բանկի 9,272 (ինը հազար երկու հարյուր յոթանասուներկու) հատ սովորական բաժնետոմսերի սեփականատերը (5.10%)

❖ Բանկի խորհուրդը

Սույն Ծրագրային ազդագիրը կազմելու պահին՝ 15.10.2021թ. դրությամբ, Բանկի խորհուրդը բաղկացած է յոթ անդամից՝

1	Ավետիս Բալոյան	խորհրդի նախագահ
2	Կարեն Սաֆարյան	խորհրդի անդամ
3	Աշոտ Ավետիսյան	խորհրդի անդամ
4	Սուլխան Գվալիա	խորհրդի անդամ
5	Յան Դիվայնգարթ	խորհրդի անդամ
6	Արամ Կայֆաջյան	խորհրդի անդամ
7	Սումա Սվամինաթան	խորհրդի անդամ

❖ Բանկի Գործադիր մարմինը

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում են Բանկի գործադիր տնօրենը և Բանկի տնօրինությունը:

Բանկի Տնօրինությունը 15.10.2021թ. դրությամբ կազմված է 7 անդամից՝

1	Արեն Նալբալյան	Գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ
2	Հայկ Ոսկանյան	Ֆինանսական տնօրեն, տնօրինության անդամ
3	Արտեմ Զիչյան	Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ
4	Վաղինակ Խաչատրյան	Ռիսկերի տնօրեն, տնօրինության անդամ
5	Լևոն Ռուբինյան	Մանրածախ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ
6	Լիլիթ Գրիգորյան	Գործառնական տնօրեն, տնօրինության անդամ
7	Արշալույս Սահակյան	Գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ

Բանկի աշխատակիցների թիվը ներկայացված է ստորև՝

	2020թ.	2019թ.	2018թ.
Աշխատակիցների թիվը	831	838	811

Սույն Ծրագրային ազդագիրը կազմելու պահին՝ 15.10.2021թ. դրությամբ, Բանկի աշխատակիցների թիվը կազմում է 804:

1.6 ԲԱՆԿԻ ԹՈՂԱՐԿԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկը մինչ այժմ թողարկել է ինչպես բաժնետոմսեր, այնպես էլ պարտատոմսեր:

2009թ. Բանկը թողարկել է 350,000,000 (երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ անվանական արժեքով գեղջատոկոսային պարտատոմսեր:

Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 14,545,680,000 (տասնչորս միլիարդ հինգ հարյուր քառասունհինգ միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Համաձայն Բանկի կանոնադրության՝ կանոնադրական կապիտալը կազմված է թվով 181,821 (մեկ հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր քսանմեկ) հատ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 80,000 (ութսուն) հազար ՀՀ դրամ անվանական արժեքով:

Հաշվի առնելով Բանկի կազմակերպարավական ձևը՝ Բանկի կողմից թողարկված բաժնետոմսերը չեն շրջանառվում կարգավորող շուկայում:

Բանկի բաժնետոմսերը թողարկված են անժամկետ:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 14.04.2018թ. և 03.07.2019թ. գրանցված Ծրագրային ազդագրերի շրջանակներում Բանկը թողարկել է անվանական արժեկտրոնային պարտատոմսեր հետևյալ հիմնական պայմաններով.

ISIN: AMINECB22ER8

Արժույթ	Անվանական արժեք	Քանակ	Թողարկման ծավալ	Արժեկտրոն	Ժամկետ
USD	100	50,000	5,000,000	5.25%	36 ամիս

ISIN: AMINECB23ER6

Արժույթ	Անվանական արժեք	Քանակ	Թողարկման ծավալ	Արժեկտրոն	Ժամկետ
USD	100	50,000	5,000,000	5.25%	36 ամիս

ISIN: AMINECB24ER4

Արժույթ	Անվանական արժեք	Քանակ	Թողարկման ծավալ	Արժեկտրոն	Ժամկետ
AMD	10,000	150,000	1,500,000,000	9.75%	36 ամիս

ISIN: AMINECB25ER1

Արժույթ	Անվանական արժեք	Քանակ	Թողարկման ծավալ	Արժեկտրոն	Ժամկետ
USD	100	50,000	5,000,000	5.25%	24 ամիս

ISIN: AMINECB26ER9

Արժույթ	Անվանական արժեք	Քանակ	Թողարկման ծավալ	Արժեկտրոն	Ժամկետ
AMD	10,000	150,000	1,500,000,000	9.75%	36 ամիս

ՀՀ ԿԲ կողմից 14.04.2018թ. և 03.07.2019թ. գրանցված ծրագրային ազդագրերի շրջանակներում թողարկված պարտատոմսերը ցուցակվել են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ում:

1.7 ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Տեսակը	Անվանական, արժեկտրոնային	
Ձևը	ոչ փաստաթղթային	
Փոխարկելիությունը	ոչ փոխարկելի	
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Թողարկման ընդհանուր ծավալը	Առավելագույնը 15,000,000,000 (տասնհինգ միլիարդ) ՀՀ դրամ	Առավելագույնը 10,000,000 (տաս միլիոն) ԱՄՆ դոլար
Տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր քանակը	որոշվելու է յուրաքանչյուր թողարկման համար ըստ տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալի և անվանական արժեքի:	
Տեղաբաշխման օրը	տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:	
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	կիսամյակային	

Տարեկան արժեկտրոնի մեծությունը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:
Շրջանառության ժամկետը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:
Մարման օրը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:
Շրջանառության ձևը	ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի ապահովվածությունը	ապահովված չեն

Ե՛վ դրամային, և՛ դոլարային պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվում են ՀՀ դրամով: Մասնավորապես, դոլարային պարտատոմսերի դեպքում արժեկտրոնի վճարումը կատարվում է արժեկտրոնների վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ կողմից ԱՄՆ դոլարի նկատմամբ հրապարակված պաշտոնական փոխարժեքով:

Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը (աճուրդ կամ ուղղակի վաճառք ներդրողներին) ենթակա է որոշման Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Նույն որոշմամբ սահմանվում է նաև տեղաբաշխման կազմակերպման եղանակը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ (Այսուհետ՝ Բորսա) տեղաբաշխման համակարգով՝ ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով՝ Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով կամ Ֆոնդային բորսայից դուրս:

Պարտատոմսերում ներդրում իրականացնելու ցանկություն հայտնող անձը (ֆիզիկական կամ իրավաբանական) կարող է ձեռք բերել պարտատոմսեր գնման հայտ-հանձնարարական ներկայացնելու միջոցով (ֆոնդային բորսայից դուրս) կամ Բորսայում՝ Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպությունների միջոցով՝ վերջիններիս ներքին ընթացակարգերով սահմանված կարգով:

Բանկի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման հիմնական նպատակը միջոցների ներգրավումն է, ինչպես նաև հնարավոր ավանդատու-ներդրողների քանակի ընդլայնումը՝ վերջիններիս առաջարկելով միջոցների ներդրման տարբերակված մեխանիզմներ:

Տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցները հիմնականում ուղղվելու են Բանկի կողմից միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին վարկերի տրամադրմանը:

1.8. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՁԵՎԸ

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հերթական տեղաբաշխումից առնվազն 2 (երկու) օր առաջ:

Բանկը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները:

1.9 ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Ստորև ներկայացվում են Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները 2019, 2020թթ. և 2021թ. երրորդ եռամսյակի դրությամբ:

■ Ամփոփ ֆինանսական արդյունք

	2021թ. 30.09.2021 հազ. Դրամ /չստուգված/	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	26,048,051	35,097,562	34,658,625
Տոկոսային ծախս	(11,182,996)	(14,723,538)	(13,188,536)
Զուտ տոկոսային եկամուտ	14,865,055	20,374,024	21,470,089
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	2,944,396	3,021,995	2,892,882
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	(1,480,804)	(1,653,333)	(1,895,106)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ	1,463,592	1,368,662	997,776
Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	261,887	455,564	184,841
Զուտ օգուտ/(վնաս) արտարժույթով առևտրից և փոխարկումից	1,729,280	1,806,649	1,552,019
Զուտ օգուտ/(վնաս) ներդրումային արժեթղթերից	3,308	-	140,760
Զուտ այլ գործառնական (ծախս) եկամուտ	235,051	476,410	647,022
Գործառնական եկամուտ	18,558,173	24,481,309	24,992,507
Արժեզրկումից կորուստներ	(4,982,741)	(10,245,815)	(5,578,230)
Աշխատակազմի գծով ծախսեր	(3,751,892)	(4,826,634)	(4,820,354)

Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,209,633)	(3,120,232)	(2,958,159)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	7,613,907	6,288,628	11,635,764
Շահութահարկի գծով ծախս	(1,461,901)	(1,214,840)	(2,222,984)
Շահույթ տարվա համար	6,152,006	5,073,788	9,412,780
Այլ համապարփակ եկամուտ (վնաս) տարվա համար	(322,332)	(547,476)	418,777
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	5,829,674	4,526,312	9,831,557

Ամփոփ հաշվապահական հաշվեկշիռ

	2021թ. 30.09.2021 հազ. Դրամ /չստուգված/	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	62,739,707	69,090,934	44,132,034
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	-	77,619	3,418
Ներդրումային արժեթղթեր			
- Բանկի կողմից պահվող	54,513,748	58,929,428	29,470,717
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	31,299,030	11,676,412	-
Բանկերից ստացվելիք գումարներ	8,506,604	10,923,190	6,750,195
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,055,745	3,724,166	3,132,214
Հաճախորդներին տրված վարկեր	205,470,325	216,462,240	238,649,450
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	7,674,283	7,339,247	6,894,326
Վարձակալված տարածքների օգտագործման իրավունք	2,037,949	1,921,338	2,128,882
Այլ ակտիվներ	7,791,227	7,630,905	7,952,232
Ընդամենը ակտիվներ	382,088,618	387,775,479	339,113,468
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	15,207	1,385	4,400
Բանկերի ավանդներ և մնացորդներ	3,170	12,466	4,027,490
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	28,611,994	11,037,131	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	230,754,650	220,478,528	195,656,532

Այլ փոխառություններ	46,796,074	72,134,597	57,750,600
Ստորադաս փոխառություն	7,316,557	8,092,844	7,413,205
Թողարկված պարտքային արժեթղթեր	5,527,482	10,961,859	10,312,640
Վարձակալության գծով պարտավորություն	2,226,224	2,074,462	2,194,824
Ընթացիկ հարկային պարտավորություններ	583,396	1,606,737	142,035
Հետաձգված հարկային պարտավորություններ	481,051	461,574	1,889,150
Այլ պարտավորություններ	3,657,462	2,927,647	3,438,975
Ընդամենը պարտավորություններ	325,973,267	329,789,230	282,829,851
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	14,545,680	14,545,680	14,545,680
Էմիսիոն եկամուտ	7,753,923	7,753,923	7,753,923
Գլխավոր պահուստ	3,500,000	3,500,000	3,500,000
Հողի և շենքերի վերագնահատման պահուստ	1,718,938	1,737,869	1,763,111
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	179,385	501,717	1,049,193
Զբաղիչված շահույթ	28,417,425	29,947,060	27,671,710
Ընդամենը սեփական կապիտալ	56,115,351	57,986,249	56,283,617
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	382,088,618	387,775,479	339,113,468

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ցուցանիշի անվանումը	2021թ. 30.09.2021 հազ. դրամ /չստուգված/	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	6,152,006	5,401,788	9,412,780
Սեփական կապիտալի միջին մեծություն	57,646,166	57,747,697	53,158,335
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), % / տարեկանացված/	14.2%	9.4%	17.8%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	6,152,006	5,401,788	9,412,780
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	380,020,455	360,295,507	310,565,387
Ակտիվների շահութաբերություն(ROA), % / տարեկանացված/	2.2%	1.5%	3.0%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	6,152,006	5,401,788	9,412,780
Գործառնական եկամուտ	18,558,173	24,481,309	24,992,507
Զուտ շահույթի մարժա (NMP), %	33.1%	22.1%	37.7%
Գործառնական եկամուտ	18,558,173	24,481,309	24,992,507
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	380,020,455	360,295,507	310,565,387

Ակտիվների օգտագործման գործակից (AU), % /տարեկանացված/	6.52%	6.79%	8.05%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	380,020,455	360,295,507	310,565,387
Սեփական կապիտալի միջին մեծություն	57,646,166	57,747,697	53,158,335
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	6.59	6.24	5.84
Զուտ տոկոսային եկամուտ	14,865,055	20,374,024	21,470,089
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	294,711,140	282,477,778	295,303,857
Զուտ տոկոսային մարժա (NIM) /տարեկանացված/	6.7%	7.2%	8.3%
Տոկոսային եկամուտ	26,048,051	35,097,562	34,658,625
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	296,144,448	282,477,778	295,303,857
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն /տարեկանացված/	11.7%	12.4%	11.7%
Տոկոսային ծախսեր	11,182,996	14,723,538	13,188,536
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	319,006,757	311,667,828	271,132,977
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր /տարեկանացված/	4.7%	5.1%	4.9%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	6,152,006	5,401,788	9,412,780
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	181,821	181,821	181,821
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	33.83	29.7	51.8
Սպրեդ	7.0%	7.28%	6.87%

ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Պարտատոմսերում, ինչպես և այլ արժեթղթերում ներդրումները ենթակա են որոշակի ռիսկերի, որոնք կապված են թողարկողի՝ Բանկի ֆինանսատնտեսական վիճակի և գործունեության արդյունքների հետ (թողարկողի ռիսկ), ինչպես նաև ֆինանսական շուկայում առկա իրավիճակի հետ (շուկայական ռիսկ):

Ներդրողը նախքան ներդրում կատարելու վերաբերյալ որոշում կայացնելը՝ պետք է մանրակրկիտ ուսումնասիրի և վերլուծի ներդրման հետ կապված և սույն փաստաթղթում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը:

Շուկայական ռիսկը առաջանում է տնտեսությունում պարտատոմսերի գնի վրա ազդող գործոնների փոփոխության հետևանքով, ինչի արդյունքում ներդրողը կարող է կրել կորուստներ:

Հիմնական շուկայական ռիսկերն են **տոկոսադրույքի ռիսկը** և **արտարժույթային ռիսկը**:

Տոկոսադրույքի ռիսկը առաջանում է շուկայական տոկոսադրույքների փոփոխության հետևանքով. տոկոսադրույքների աճի դեպքում պարտատոմսերի գինը նվազում է, ինչը կարող է հանգեցնել նրան, որ ներդրողը մինչև մարումը պարտատոմսը վաճառելու դեպքում կարող է կրել վնասներ, կամ չստանալ նախատեսված եկամուտը: Այդ ռիսկի ի հայտ գալը կապված է տնտեսության ընդհանուր վիճակի, ֆինանսական շուկայում ռեսուրսների առաջարկի և պահանջարկի հարաբերակցության, գնաճի և այլ գործոնների հետ:

Նշված ռիսկը, սակայն, էական է այն դեպքում, երբ նախատեսվում է պարտատոմսերի վաճառք մինչև դրանց մարումը: Բոլոր այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերը պահելու են մինչև դրանց մարումը, տոկոսադրույքի ռիսկը էական է միայն ստացված արժեկտրոնների վերաներդրման իմաստով:

Արտարժույթային ռիսկը առաջանում է ազգային դրամի փոխարժեքի տատանումների պատճառով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի՝ պարտատոմսերից ստացված եկամուտների վրա: Մասնավորապես, ազգային արժույթի արժևորման դեպքում, պարտատոմսի մարումից ստացված գումարները՝ արտարժույթով արտահայտված, ՀՀ դրամի փոխարկելու դեպքում հաշվարկված եկամուտը կարող է նախատեսվածից քիչ (բացասական) լինել և հակառակը: Ուստի կախված թե ներդրողը ինչ արժույթով և ինչ նպատակով է պարտատոմսեր ձեռք բերում, ազգային արժույթի արժևորումը կամ արժեզրկումը տարբեր ազդեցություն կունենան վերջինիս կողմից ակնկալվող եկամտի վրա:

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ. արժեթղթերի շուկայում կարող է ստեղծվել մի իրավիճակ, որի դեպքում պարտատոմսի սեփականատերը ցանկացած պահի դրությամբ պարտատոմսերը վաճառելու հետ կապված խնդիրներ ունենա: Նման պատճառներից կարող է լինել շուկայի ցածր զարգացվածության մակարդակը, շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխությունները: Բանկը պարտատոմսերի իրացվելիության ապահովման համար ձեռնարկելու է համապատասխան միջոցներ, այդ թվում՝ շուկա ստեղծողի առկայություն, սակայն իրացվելիության ռիսկը այնուամենայնիվ կարող է ի հայտ գալ:

Գնողունակության ռիսկ. այս ռիսկը ի հայտ է գալիս, երբ փաստացի գնաճն ավելի բարձր է լինում քան սպասված գնաճը, կամ անսպասելի գնաճը իջեցնում

է պարտատոմսից ակնկալվող իրական եկամտաբերությունը: Գնողունակության ռիսկը հաշվի է առնվում առանձին արժույթների ներդրման դեպքում առանձին: Այս ռիսկը բնորոշ է կայուն եկամտաբերություն ունեցող բոլոր ներդրումային գործիքներին, ուստի ներդրողները պետք է նաև ձևավորեն իրենց սեփական սպասումները գնաճի հետ կապված և ի վերջո որոշում կայացնեն, ներդրման արժույթի և ժամկետի առումով:

Վերը նշված ռիսկերի նկարագիրը և դրանց հնարավոր ազդեցությունները բացահայտված են սույն փաստաթղթում, բայց, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ներկայացված ռիսկերի ցանկը վերջնական և սպառիչ չէ, և հնարավոր են անկանխատեսելի իրադարձությունների (այլ ռիսկեր) ի հայտ գալը, որն էլ իր հերթին կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրումների վերադարձելիության կամ արժեքի վրա: Ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս ամբողջությամբ գիտակցի ներդրման էությունը և բացի նկարագրված ռիսկերից ու առկա տեղեկատվությունից, առաջնորդվի նաև իր սեփական փորձով, ակնկալիքներով և սպասումներով:

2.2 ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բանկի կողմից անվանական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման հիմնական նպատակն է միջոցների ներգրավումը, հնարավոր ավանդատուների և ներդրողների ընդլայնումը և տարատեսականացումը՝ վերջիններիս առաջարկելով ավելի ճկուն մեխանիզմների միջոցով միջոցների ներդրում:

Ներգրավված միջոցները հիմնականում ուղղվելու են միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին վարկերի տրամադրմանը:

Բանկի կողմից իրականացվող թողարկումները լինելու են շարունակական, և Բանկը առավել ակտիվ կօգտագործի տեղական և արտասահմանյան կապիտալի շուկաները պարտավորությունների ժամկետայնության, կառուցվածքի և գնի արդյունավետ կառավարման նպատակով:

2.3 ԱՌԱՋԱՐԿԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Առաջարկվող պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ տարածքում համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ

Պարտատոմսերի տեսակը	Անվանական արժեկտրոնային	
Պարտատոմսերի տարբերակիչ ծածկագիր	Պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր	
Փոխարկելիությունը	Ոչ փոխարկելի	
Պարտատոմսերի ձևը	Ոչ փաստաթղթային	
Պարտատոմսերի ռեեստրի վարում	Բանկի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի (այսուհետև ՀԿԴ) միջոցով, որը հանդես է գալիս որպես Գլխավոր պահառու համաձայն ՀՀ օրենսդրության և կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնների: Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են ՀԿԴ-ում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման համար անձնական դեպոզիտ: ՀԿԴ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ (հեռ.՝ +374 60 61-55-55): Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր հանդիսանում է Ինտելեքսնեկ ՓԲԸ-ն:	
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի քանակը	որոշվելու է յուրաքանչյուր թողարկման համար ըստ տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալի և անվանական արժեքի:	
Արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Թողարկման ընդհանուր ծավալը	Առավելագույնը 15,000,000,000 (տասնհինգ միլիարդ) ՀՀ դրամ	Առավելագույնը 10,000,000 (տաս միլիոն) ԱՄՆ դոլար
Տեղաբաշխման օրը	տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:	
Տարեկան արժեկտրոնի մեծությունը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:	
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	կիսամյակային	
Արժեկտրոնի արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար, որը ենթակա է ներդրողներին վճարման ՀՀ դրամով՝ արժեկտրոնի

		վճարումը կատարելու օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ կողմից ԱՄՆ դոլարի նկատմամբ հրապարակված պաշտոնական փոխարժեքով:
Արժեկտրոնի վճարման ամսաթիվ	Արժեկտրոնների հաշվարկման և վճարման օրերը նույնն են, և ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:	
Արժեկտրոնի հաշվարկման բանաձև	$AI = FV \times \frac{C}{f} \times \frac{DCS}{DCC}$ Որտեղ՝ AI - կուտակված արժեկտրոնային եկամուտն է, FV – մեկ պարտատոմսի անվանական արժեքն է, C - արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույքն է, f -արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=2՝ կիսամյակային վճարումների դեպքում) Օրերի հաշվարկման պայմանականությունը Բանկի պարտատոմսերի համար համարվում է փաստացի/փաստացի, ընդ որում DCS = Օրերի փաստացի քանակը, D2M2Y2 - D1M1Y1 DCC = Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1 DSN = Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2 որտեղ՝ D1M1Y1 գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է. D2M2Y2 գործարքի կատարման ամսաթիվն է D3M3Y3 գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:	
Արժեկտրոն ստացողները	Արժեկտրոնները ստանալու իրավունք ունեն արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրը ժամը 18:00 դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի /անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը): Բանկն արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրի հիման վրա պատրաստում է տեղեկանք պարտատոմսերի արժեկտրոնների գումարներ ստանալու իրավունք ունեցող անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր) վերաբերյալ, ինչպես նաև արժեկտրոնների գումարի փոխանցման համար անհրաժեշտ տվյալները: Արժեկտրոնային վճարումները անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 0.10 ՀՀ դրամ ճշտությամբ (ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը):	

Պարտատոմսերի գնի հաշվարկման բանաձև	Պարտատոմսերի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով. $DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$ $\tau = \frac{DSN}{DCC}$ որտեղ՝ DP - Պարտատոմսի գինն է, DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է: DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է, N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց y - մինչև մարում եկամտաբերություն	
Շրջանառության ժամկետը	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:	
Մարման օրը	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:	
Պարտատոմսերի մարման արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի մարման գումարներ ստացողները	Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրը ժամը 18:00-ի դրությամբ գրանցված անձինք: Հաշվի առնելով պարտատոմսերի անվանական արժեքի արժույթը և պարտատոմսերի մարման հետ կապված հնարավոր միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը (եթե ներդրողի ԱՄՆ դոլարի հաշիվը չի գտնվում Բանկում)՝ մարման գումարների փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված միջնորդավճարների ծախսերը կատարվելու են ներդրողի հաշվին, հետևաբար նման ներդրողները մարման գումարները հնարավոր է ստանան պահումներով: Բանկը պարտատոմսի մասնակի մարումներ կամ վաղաժամկետ մարում չի նախատեսում:	

Պարտատոմսերի մարման ձևը	Բանկը պարտատոմսերի մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում ներդրողի կողմից բանկային հաշվեհամարների մասին նշման բացակայության կամ նշված բանկային հաշվեհամարների ճիշտ չլինելու կամ այլ հանգամանքների ուժով ներդրողի հաշվին մարման գումարի փոխանցման անհնարինության դեպքում՝ գումարը կփոխանցվի և/կամ կսառեցվի Բանկում այդ նպատակով բացված հաշվեհամարին, այնուհետև՝ Բանկը կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի փոխանցման կամ առձեռն վճարելու համար:	
Մեկ պարտատոմսի մարման արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Շրջանառության ձևը	Պարտատոմսերի ցուցակումից հետո՝ բացառապես կարգավորվող շուկայում ազատ շրջանառության իրավունքով	Պարտատոմսերի ցուցակումից հետո՝ բացառապես կարգավորվող շուկայում ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի ապահովվածությունը	Պարտատոմսերը ապահովված չեն	
Պարտատոմսերի տեղաբաշխող	«ԻՆԵՆՈՐԱՆԿ» ՓԲԸ	
Պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացը	Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը (աճուրդ կամ ուղղակի վաճառք), ինչպես նաև տեղաբաշխման կազմակերպման եղանակը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ի տեղաբաշխման համակարգով կամ ֆոնդային բորսայից դուրս, ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:	
Պարտատոմսերի առաջարկի և ազատ շրջանառելիության սահմանափակումներ	Պարտատոմսերի թողարկման մասին Բանկի համապատասխան իրավասու մարմնի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ սահմանափակումներ չեն սահմանվում: Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ սահմանափակումներ չկան՝ բացառությամբ օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի: Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել իրենց պատկանող պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ Բորսայից դուրս՝ օրենքով սահմանված կարգով: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթերը, բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի հոդված 129-ի 4-րդ կետով սահմանված դեպքերի:	
Տեղաբաշխման սահմանափակումներ	Չկան	

Պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ Բանկի լուծարման դեպքում վերջինիս պարտատերերի պահանջները բավարարվում են լուծարային միջոցների հաշվին, հետևյալ հերթականությամբ՝

1. առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում.
2. երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի.
3. երրորդ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժույթային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ.
4. չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների.
5. հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.
6. վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.
7. յոթերորդ՝ բանկի մասնակիցների պահանջները:

Միևնույն հերթի պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ:

Միևնույն հերթի պարտատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի բոլոր պահանջները լրիվ բավարարելուց հետո:

Բանկի կողմից առաջարկվող Պարտատոմսերի դեպքում, սեփականատերերի պահանջները կբավարարվեն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական կազմակերպությունների սնանկության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերով սահմանված պահանջները բավարարելուց հետո: Բանկի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:

Ֆիզիկական անձ ներդրողներին հայտնվում է, որ պարտատոմսերի թողարկմամբ ներգրավված միջոցները երաշխավորվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով:

Վերոհիշյալ օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով բանկի թողարկած անվանական արժեթղթերով, տվյալ դեպքում պարտատոմսերով, ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից) ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, որոնց հատուցումը կատարվում է հետևյալ չափերով՝

1. Եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն դրամային Պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը **տասնվեց միլիոն ՀՀ դրամ է.**
2. Եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն արտարժույթային Պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը **յոթ միլիոն ՀՀ դրամ է.**
3. Եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժույթային Պարտատոմսեր, և դրամային Պարտատոմսերի գումարը յոթ միլիոն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային Պարտատոմսերի գումարը՝ **մինչև տասնվեց միլիոն ՀՀ դրամով.**
4. Եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժույթային Պարտատոմսեր, և նրա դրամային Պարտատոմսերի գումարը պակաս է յոթ միլիոն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային Պարտատոմսերն ամբողջությամբ և արտարժույթային Պարտատոմսերը՝ **յոթ միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային Պարտատոմսերի գումարի տարբերության չափով:**

Ներդրողի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները, ներառյալ՝ Պարտատոմսերում ներդրումները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների և ներդրողի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժույթային ավանդները:

Երաշխավորված ավանդների հատուցման դեպք (այսուհետ՝ հատուցման դեպք) է համարվում «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին անվճարունակ ճանաչելը և ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը հաստատելը կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին սնանկ ճանաչելը (այսուհետ՝ բոլոր դեպքերի համար՝ անվճարունակ բանկ):

Ավանդների հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը: Հիմնադրամի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, 0010, Էլիտ պլազա բիզնես կենտրոն, Խորենացի 15, հեռախոսահամարը՝ +37410 58-35-14, ինտերնետային կայք՝ [www. Adgf.am](http://www.Adgf.am):

🔗 Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

1. Ինքնուրույնաբար տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող Պարտատոմսերը,
2. Պարտատոմսերով իրականացնել ցանկացած գործառույթ, որը բխում է սեփականության իրավունքից,
3. Թողարկման օրվանից հաշված կիսամյակային պարբերությամբ ստանալ՝ արժեկտրոնային եկամուտը՝ սույն Ծրագրային Ազդագրով սահմանված կարգով:
Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումը իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
4. Պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը)՝ սույն Ծրագրային Ազդագրով սահմանված կարգով: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումը իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
5. Բանկի կողմից Պարտատոմսերի մարման գումարը, ինչպես նաև արժեկտրոնի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով դատական կարգով օգտվել պարտատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներից,
6. Գրավադրել Պարտատոմսերը՝ օրենքով սահմանված կարգով,
7. ՀԿԴ հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք,
8. Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

❏ Պարտատոմսերի սեփականատիրոջ պարտավորությունները.

1. Պարտատոմսերում պոտենցիալ ներդրողները պարտավոր են մինչև Պարտատոմսերի ձեռք բերումը ՀԿԴ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կամ ՀԿԴ ենթապահառու հանդիսացող այլ անձանց մոտ ունենալ սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ:
2. Պոտենցիալ ներդրողները պարտավոր են պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում կամ մուտքագրում համապատասխան բանկային հաշվին,
3. Կատարել Պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործառնություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն:
4. Կրել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

❏ Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ որոշում

Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ որոշումն ընդունվել է Բանկի Խորհրդի 2021թ հոկտեմբերի 27-ի նիստում (Որոշում թիվ 260.4):

Որոշմամբ ամրագրվել է թողարկվող պարտատոմսերի առավելագույն ծավալը, որի շրջանակներում Բանկի Տնօրինությունը առանձին որոշմամբ (որոշումներով) կարող է իրականացնել պարտատոմսերի տեղաբաշխում (տեղաբաշխումներ):

❏ Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկումը

Կարևոր ծանուցում: Բանկը սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, բայց միաժամանակ հայտարարում է, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Բանկը չի երաշխավորում, որ Ծրագրային Ազդագրի ստացման և/կամ ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և խորհուրդ է տալիս որոշում ընդունելիս օգտվել նաև մասնագիտացված հարկային խորհրդատվությունից: Բանկը հայտարարում է, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից՝ կապված հարկային օրենսդրության կիրառման արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Թողարկված պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման իրավաբանական անձանց համար **շահութահարկով** և ֆիզիկական անձանց համար՝ **եկամտային հարկով**:

❧ Շահութահարկով հարկման կարգը

ՀՀ-ում շահութահարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ՀՀ ԿԲ-ի:

ՀՀ Հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Հարկային օրենսգիրք) ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն (այսուհետ՝ ռեզիդենտ կազմակերպություն) է համարվում այն կազմակերպությունը, որի գտնվելու վայրը հանդիսանում է ՀՀ-ն:

Ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ **18 (տասնութ) տոկոս դրույքաչափով**:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Համաձայն Հարկային օրենսգրքի՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներին են դասվում նաև ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները: Ընդ որում, ոչ ռեզիդենտի ստացված պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) ՀՀ տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝ շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ և այլ պասիվ եկամուտներ:

ՀՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ: ՀՀ-ում ոչ ռեզիդենտի ստացած եկամտից վճարման աղբյուրի մոտ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկային գործակալները շահութահարկը պահում են **10 (տասը) տոկոս դրույքաչափով**:

2020թ.-ի մարտի 1-ից ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում մինչև 2024թ.-ի դեկտեմբերի 31-ը ցուցակված պարտատոմսերից ստացվող տոկոսային եկամտի, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից ստացվող եկամուտների մասով ազատվում են շահութահարկի վճարումից:

❖ Եկամտային հարկով հարկման կարգը

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Հարկային օրենսգրքի համաձայն՝ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես, համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, եթե Հայաստանի Հանրապետությունում է գտնվում նրա տունը կամ այլ բնակարանը, ընտանիքը, մասնագիտական կամ այլ գործունեության հիմնական վայրը:

Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկումը

Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը:

Տոկոսագումարների համար եկամտային հարկը հաշվարկվում է **10 (տասը) տոկոս դրույքաչափով**: Ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը: Եկամտային հարկի պահումը (գանձումը) իրականացվում է տոկոսագումարների յուրաքանչյուր վճարման դեպքում:

Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկումը

Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի

դրույթների համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (եկամտային հարկի գծով), ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (շահութահարկի գծով) համար հարկային գործակալ է հանդիսանում Բանկը:

2020թ. -ի մարտի 1-ից ֆիզիկական անձինք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում մինչև 2024թ. -ի դեկտեմբերի 31-ը ցուցակված պարտատոմսերից ստացվող եկամուտներն ազատվում են եկամտային հարկից, բացառություն են կազմում միայն բանկերի թողարկած այն պարտատոմսերը, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:

2.4 ԱՌԱՋԱՐԿԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է առավելագույնը 10,000,000 (տաս միլիոն) ԱՄՆ դոլար՝ դոլարային պարտատոմսերի համար և 15,000,000,000 (տասնհինգ միլիարդ) ՀՀ դրամ՝ դրամային պարտատոմսերի համար:

Տեղաբաշխման ընթացքում Բանկը չի նախատեսում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն:

Թողարկում	Մեկ պարտատոմսերի անվանական արժեքը	Թողարկվող պարտատոմսերի քանակը
ՀՀ դրամով	10,000	որոշվելու է յուրաքանչյուր թողարկման համար ըստ տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալի և անվանական արժեքի
ԱՄՆ դոլարով	100	որոշվելու է յուրաքանչյուր թողարկման համար ըստ տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալի և անվանական արժեքի

Տեղաբաշխումը կարող է իրականացվել մի քանի սերիաներով: Տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի ծավալը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

❖ Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

🚩 Պարտատոմսերի տեղաբաշխում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ միջոցով

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ի (այսուհետ նաև՝ Բորսա) տեղաբաշխման համակարգով պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է համաձայն «Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների»:

Պարտատոմսերը տեղաբաշխվում են ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով:

Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին անմիջապես կարող են մասնակցել միայն Բորսայի անդամները, որոնց ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական կայքում (www.amx.am): Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները կարող են աճուրդին մասնակցել (օգտվել առաջարկից) Բորսայի անդամների միջոցով՝ վերջիններիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:

Բորսայի տարբեր մասնակիցներ կարող են սահմանել աճուրդին մասնակցելու (առաջարկից օգտվելու) տարբեր գործընթացներ, պարտատոմսերի դիմաց վճարումներ կատարելու տարբեր մեթոդներ և ժամկետներ, արժեթղթերի վերաբերյալ քաղվածք ստանալու ձևեր, ներդրողների հայտերի բավարարման արդյունքների մասին իրազեկման կարգեր և ձևեր, ինչպես նաև սահմանել տարբեր սակագներ:

Այդ իսկ պատճառով, Բանկը չի կարող սպառիչ տեղեկություններ հրապարակել նշված հարցերի վերաբերյալ՝ հորդորելով Բորսայի անդամ չհանդիսացող պոտենցիալ ներդրողներին ուսումնասիրել Բորսայի անդամների կողմից առաջարկվող պայմանները՝ իրենց համար լավագույն տարբերակ գտնելու համար:

Աճուրդը անցկացվում է տեղաբաշխման օրը ժամը 11:00-ից (առաջարկի իրականացման սկիզբ) մինչև ժամը 13:30 (առաջարկի իրականացման ավարտ):

Բանկի պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին

չի կարող ներկայացվել գնման ոչ մրցակցային հայտ,

չի կարող ներկայացվել լրիվ բավարարմամբ հայտ:

Բանկի պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդը իրականացվում է դրամական միջոցների և պարտատոմսերի նախնական դեպոնացմամբ՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված կարգով:

Լրացուցիչ դեպոնացումները և ապադեպոնացումները կատարվում են Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի առևտրի կանոններով» և ՀԿԴ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով»:

Տեղաբաշխման աճուրդի ժամանակ գնման հայտերը ներկայացվում են աճուրդի մասնակցի մոտ տեղակայված աշխատանքային կայանից Բորսայի

Առևտրային համակարգում (այսուհետ՝ համակարգ) մուտքագրելու միջոցով: Տեղաբաշխման աճուրդի ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել տեղաբաշխման համակարգ տվյալ աճուրդի տեղաբաշխման օրվա ժամը 11:00-ից մինչև 13:30: Աճուրդի մասնակիցը կարող է հետ կանչել կամ փոփոխել իր կողմից ներկայացրած հայտը և նոր հայտ մուտքագրել մինչև 13:30:

Միևնույն գին ունեցող հայտերը բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում հայտի մասնակի բավարարման դեպքում գումարների վերադարձն իրականացվում է համաձայն «Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների»:

Տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացվում է գործարքի կնքման օրվա ընթացքում:

Տեղաբաշխման ավարտից հետո Բորսան «Տեղեկատվության բացահայտման կանոններին» համապատասխան կազմակերպում է տեղաբաշխման արդյունքների հրապարակումը իր պաշտոնական կայքում:

Բանկը պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում իր ինտերնետային կայքում (www.inecobank.am) հրապարակում է տեղաբաշխման արդյունքների մասին հաշվետվություն:

❖ Պարտատոմսերի տեղաբաշխումը ֆոնդային բորսայից դուրս.

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում գործում են առաջարկից օգտվելու հետևյալ պայմանները.

1. Ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով (առձեռն կամ էլեկտրոնային եղանակով) Բանկ ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման **հայտ-հանձնարարականները**, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը: Իրավաբանական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է սույն Ազդագրի **Հավելված 2-ում**, իսկ ֆիզիկական անձ ներդրողների համար՝ **Հավելված 3-ում**: Ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են ներկայացնել 1-ից ավելի հայտ-հանձնարարականներ, ընդ որում, պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն քանակը կազմում է 1 (մեկ) պարտատոմս, իսկ առավելագույն քանակ Բանկի կողմից չի սահմանվում:
2. Յուրաքանչյուր հայտ-հանձնարարականը լրացնելուց և պատշաճ կերպով Բանկ ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ներդրողը պետք է թողարկման նպատակով Բանկում բացված հատուկ հաշվեհամարին կատարի վճարում պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար, իսկ սահմանված ժամկետում և կարգով

համապատասխան վճարում չիրականացվելու դեպքում տվյալ հայտ-հանձնարարական/ները համարվում է/են անվավեր: Սահմանված ժամկետից ուշ ստացված գումարները համարվում են ստացված հաջորդ աշխատանքային օրը, և նոր հայտի բացակայության դեպքում ենթակա են վերադարձման ներդրողին տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ ներդրողի՝ հայտ-հանձնարարականում նշված բանկային հաշվին, եթե ներդրողի կողմից չեն ստացվել այլ ցուցումներ:

Տեղաբաշխման ավարտի օրը հայտ-հանձնարարականները և վճարումներն ընդունվում են մինչև ժամը 16:30-ը:

3. Հայտ-հանձնարարականի ներկայացման և դրամական միջոցների մուտքագրման հերթականություն չի սահմանվում, ուստի ներդրողը կարող է հայտը ներկայացնել նաև դրամական միջոցների մուտքագրման պահից հետո:
4. Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված Բանկի կողմից հատուկ այդ նպատակով բացված բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից: Ընդ որում, Բանկը տեղեկացնում է, որ, եթե Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները չեն բավարարվում կամ մասնակի են բավարարվում, ապա պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների մնալը հատուկ այդ նպատակով բացված բանկային հաշվին մինչև պարտատոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:
5. Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական/ները, որոնք ներկայացվում են պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո, ինչպես նաև պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո վճարումներ իրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր՝ անկախ դրանց առաքման և/կամ Բանկի կողմից ստացման ժամկետից:
6. Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո Բանկում բացված հատուկ հաշվեհամարին ստացված դրամական միջոցները, ինչպես նաև այն դրամական միջոցները, որոնք ստացվել են տեղաբաշխման ընթացքում, սակայն դրանց համապատասխան հայտ-հանձնարարականներ տեղաբաշխման ընթացքում չեն ներկայացվել, ենթակա են վերադարձման ներդրողին տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում : Այդպիսի դրամական միջոցների փոխանցումների հետ կապված բոլոր հնարավոր ծախսերը կրում է ներդրողը, ըստ այդմ՝ Բանկն իրավունք ունի ներդրողին վերադարձման ենթակա դրամական միջոցներից կատարելու համապատասխան պահումներ: Նշված դրամական միջոցների մնալը հատուկ այդ նպատակով բացված բանկային հաշվին մինչև դրանք ներդրողին վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ

դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

7. Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V = P \times Q$$

որտեղ՝

- 1) V-ն պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունն է:
 - 2) P-ն պարտատոմսերի ձեռք բերման հայտի Բանկ ներկայացման օրվա դրությամբ պարտատոմսի գինն է, որը հաշվարկվում է Ազդագրի 2.3. բաժնում ներկայացված բանաձևի միջոցով
 - 3) Q-ն պարտատոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:
8. Ներդրողի կողմից հայտ-հանձնարարականի ներկայացումից և Բանկում բացված հատուկ հաշվեհամարին դրամական միջոցների ստացումից հետո Բանկը ՀԿԴ-ին ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր՝ համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար:
9. ՀԿԴ-ից ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ դեպո հաշվին պարտատոմսերի փոխանցման վերաբերյալ համապատասխան հաստատում ստանալուց անմիջապես հետո Բանկը թողարկման նպատակով բացված հատուկ հաշվեհամարից իր օգտագործման համար մատչելի է դարձնում համապատասխան հայտ-հանձնարարականում նշված դրամական միջոցները:
10. Հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ հայտ-հանձնարարականում նշված կապի միջոցներով՝ Բանկի կողմից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը կհամարվի պատշաճ կերպով առաքված Բանկին, եթե այն առաքվել է Բանկի հետ միայն ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ Բանկ այցելելով) և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում:

Տեղաբաշխողի հետ կապի միջոցներն են՝

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0001, Թումանյան փողոց 17, “ԻՆԵԿՈԲԱՆԿ” ՓԲԸ, Գանձապետական ծառայություն, Դիլինգային գործառնությունների բաժին:

Էլեկտրոնային հասցե՝ Dealing@inecobank.am

Ձեռքբերման հայտ-հանձնարարականները կատարվում են ըստ դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն՝ առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում հայտ-հանձնարարականի դիմաց վճարումը Բանկում բացված հատուկ հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

❏ Հայտ-հանձնարարականների հետ կանչելու հնարավորությունը

Ներդրողները պարտատոմսերի հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց, Բանկի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք **չեն կարող ետ կանչել:**

❏ Հայտ-հանձնարարականների մասնակի բավարարում

Տեղաբաշխման ընթացքում հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի մասնակի բավարարում: Մասնավորապես, երբ պարտատոմսերի տեղաբաշխումը կատարվում է ուղղակի վաճառքի միջոցով, այն հայտ-հանձնարարականը, որը ժամանակագրական առումով վերջինն է ստացվել և որի ծավալը գերազանցում է տեղաբաշխման ենթակա մնացած պարտատոմսերի ծավալը, կբավարարվի մասնակի:

Տվյալ դեպքում առաջանում է ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, որը տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Բանկի կողմից ենթակա է վերադարձման՝ ներդրողի՝ հայտ-հանձնարարականում նշված բանկային հաշվին:

❏ Պարտատոմսերի առաջարկի հնարավոր հետաձգումը, կասեցումը

Բանկի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել միայն անհաղթահարելի ուժի (Ֆորս մաժոր) ազդեցության դեպքում:

ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Բանկի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Բանկը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

❖ Արդյունքների վերաբերյալ տեղեկացումը

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում ներդրողները Բանկի կողմից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտի բավարարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն էլեկտրոնային հասցեով, որը ներդրողը ներկայացրել է պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական/ներում:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում ներդրողներն իրենց հայտերի բավարարման մասին տեղեկացվում են «Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով սահմանված ձևով և կարգով:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո Բանկը մեկ աշխատանքային օրվա ընթացքում իր ինտերնետային կայքում (www.inecobank.am) հրապարակում է տեղաբաշխման արդյունքների մասին հաշվետվություն:

❖ Առաջարկի վերջնական պայմանները

Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը և տեղաբաշխումն սկսելու օրը ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Նույն որոշմամբ է սահմանվում նաև տեղաբաշխման կազմակերպման եղանակը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով կամ ֆոնդային բորսայից դուրս:

❖ Նախապատվության իրավունք

Բանկը չի նախատեսում նախապատվության իրավունքի կիրառում՝ պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակ:

❖ Տեղաբաշխման պլանը

Սույն փաստաթղթով ներկայացվող առաջարկը ուղղված է ներդրողների բոլոր խմբերին՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց, ներառյալ որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին:

❖ Առաջարկի գինը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու ժամանակ աճուրդի մասնակիցները ներկայացնում են իրենց

առաջարկությունները գնի վերաբերյալ՝ աճուրդին մասնակցելու առաջարկությունները ներկայացնելու միջոցով: Պարտատոմսերի գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց հաշվարկվում է 2.3. բաժնում նշված բանաձևի միջոցով: Ներդրողները ներկայացվող հայտում նշում են ձեռք բերվող պարտատոմսերի պահանջվող եկամտաբերությունը/ գինը և պարտատոմսերի այն ծավալը, որը ներդրողը պատրաստ է ձեռք բերել հայտում ներկայացված եկամտաբերությամբ/գնով: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու ժամանակ Բանկը սահմանում է սահմանային եկամտաբերություն/ կտրման գին, որից բարձր եկամտաբերությամբ/ցածր գնով առաջարկները չեն բավարարվում:

Ֆոնդային բորսայից դուրս պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակ տեղաբաշխման ամբողջ ընթացքի համար նախատեսվում է արժեթղթերի ուղղակի վաճառք ներդրողներին պարտատոմսերի տեղաբաշխման գնով, որը հաշվարկվում է 2.3. բաժնում ներկայացված բանաձևի միջոցով:

■ Տեղաբաշխումը

Թողարկողը և Տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն են՝ «Ինելկոբանկ» ՓԲԸ:

Թողարկող/Տեղաբաշխողի գտնվելու վայրն է ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17:

Թողարկող/Տեղաբաշխողը այլ տեղաբաշխողների և/կամ խմբի հետ համատեղաբաշխման պայմանագիր չի կնքել:

Պոտենցիալ ներդրողների համար արժեթղթերի հաշիվները բացվում և սպասարկվում են ՀԿԴ հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է ՀԿԴ պաշտոնական ինտերնետային կայքում (www.cda.am):

Պոտենցիալ ներդրողները պարտատոմսերի դիմաց վճարումը կատարում են Բանկում բացված համապատասխան հաշվին:

Սույն փաստաթղթով առաջարկվող պարտատոմսերի տեղաբաշխման համար նախատեսված է **չերաշխավորված տեղաբաշխում**:

■ Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման ձևը

Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը (աճուրդ կամ ուղղակի վաճառք), ինչպես նաև տեղաբաշխումը սկսելու օրը ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Տնօրինության որոշմամբ է սահմանվում նաև տեղաբաշխման կազմակերպման եղանակը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով կամ ֆոնդային բորսայից դուրս:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է համաձայն վերջինիս «Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների: Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում գործում են առաջարկից օգտվելու պայմաններ, որոնք ներկայացված են Պարտատոմսերի տեղաբաշխումը Ֆոնդային բորսայից դուրս բաժնում:

2.5. ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Սույն Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո Բանկը դիմելու է Բորսա տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու համար:

Առևտրի թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել Բորսայի կողմից: Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, դառնալիս պարտատոմսերի տեղաբաշխումը կհամարվի չեղյալ:

Շուկա ստեղծող

Երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու նպատակով Բանկը նախատեսում է մասնագիտացված անձանց հետ կնքել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ -ում պարտատոմսերի պարտադիր երկկողմանի գնանշումներ կազմակերպելու մասին պայմանագիր: Բանկը պարտավորվում է շուկա ստեղծողի պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր Պարտատոմսերի սեփականատերերին և անվանատերերին նման պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

Յուրաքանչյուր տեղաբաշխման ժամանակ, եթե այն իրականացվում է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ի աճուրդի միջոցով, Բանկի կողմից սահմանվում է պոտենցիալ Շուկա ստեղծողի կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի նվազագույն ծավալ, որը Շուկա ստեղծողի կողմից ձեռք է բերվում տվյալ տրանշի աճուրդի ընթացքում ձևավորված միջին կշռված գնով աճուրդից հետո:

2.6. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարտատոմսերի մասին տեղեկությունների մասում ներկայացված տեղեկությունների հետ կապված խորհրդատու հանդես չի եկել:

Պարտատոմսերի մասում ներկայացված տեղեկությունները Բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտի չեն ենթարկվել:

Պարտատոմսերի մասին տեղեկությունների մեջ երրորդ անձից ստացված տեղեկատվություն չկա:

Մուդիզ միջազգային վարկանշային կազմակերպության կողմից Ինեկոբանկ ՓԲԸ-ին շնորհված վարկանիշներն են՝

- հիմնական վարկավորման գնահատական (BCA)՝ b1, հեռանկարը՝ կայուն,
- ազգային արժույթով երկարաժամկետ ավանդների վարկանիշ՝ B1, հեռանկարը՝ կայուն,
- կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ գնահատական՝ Ba3(cr), հեռանկարը՝ կայուն,
- կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ վարկանիշ (ազգային արժույթով և արտարժույթով)՝ Ba3:

Թողարկվող պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԸ

Բանկի 2020թ. անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «Քեյ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից:

«Քեյ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-ՓԻ-ԷՄ-ՋԻ» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:

«Քեյ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՓԲԸ -ի հասցեն է՝ ՀՀ ք. Երևան 0010, Վ. Սարգսյանի փ. 26/1, «Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ, հեռ.՝ +37410 59-59-99, ֆաքս՝ +37410 59-59-99, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.kpmg.am:

Բանկի 2018 և 2019թթ. անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ կողմից: «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն Դելոյթ ԱՊՀ Հոլդինգս Լիմիթեդի («Դելոյթ ԱՊՀ») մասն է կազմում, որը Deloitte Touche Tohmatsu Limited-ի անդամ ընկերությունն է ԱՊՀ-ում:

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է ՀՀ, ք. Երևան 0010, Ամիրյան փող., 4/7 շենք, 7-րդ հարկ, հեռ. +374-10-526520, ֆաքս՝ +374-10-527520, ինտերնետային կայքի հասցեն է՝ <http://www.deloitte.am>:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:

Աուդիտորական եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Բանկի աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:

Աուդիտորական եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

3.2. ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Ռիսկերի կառավարումը էական գործոն է բանկային ոլորտի համար և Բանկի գործառնությունների կարևոր տարր է: Բանկի հիմնական ռիսկերը կապված են վարկային, գործառնական, իրացվելիության և շուկայական ռիսկերի հետ: Տվյալ ռիսկերը կարող են հանգեցնել Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման: Վերոհիշյալը իր հերթին կարող է որոշակի չափով սահմանափակել ներդրողների կողմից Բանկի պարտատոմսերի արագ և շահավետ իրացումը, դրանց մասով նախատեսված տոկոսային եկամտի ժամանակին և ամբողջ ծավալով ստացումը:

Ներդրողները պետք է ի նկատի ունենան, որ վերոհիշյալ ռիսկերի տեսակները ներառում են ոչ բոլոր ռիսկերը, որոնք կարող են բերել Բանկի ֆինանսական վիճակի վատթարացմանը: Բանկը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք համարել է էական: Այլ բնորոշ ռիսկերից կարող են համարվել նաև աշխարհաքաղաքական, մակրոտնտեսական զարգացումներով, նորմատիվային ու օրենսդրական դաշտի փոփոխություններով պայմանավորված հնարավոր ռիսկերը:

Բանկի կողմից պարտատոմսերի տեղաբաշխմամբ ստանձնած պարտավորությունների մասնակի կամ ամբողջությամբ չկատարելը կարող է տեղի ունենալ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման պարագայում, ինչն իր հերթին կարող է արդյունք լինել ինչպես ներքին, այնպես և արտաքին ռիսկերի դրսևորման:

Բանկին առնչվող հիմնական ռիսկերն են՝

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը Բանկի ֆինանսական վնաս կրելու ռիսկն է փոխառուի կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմի՝ Բանկի հանդեպ ստանձնած պայմանագրային պարտականությունները չկատարելու հետևանքով: Վարկային ռիսկը Բանկի հիմնական ռիսկերից է, ինչի պատճառով դրա կառավարմանը Բանկը առանձնահատուկ տեղ է հատկացնում իր ռիսկերի կառավարման ընդհանուր համակարգում: Մասնավորապես, Բանկը ներդրել և կիրառում է լավագույն սքորինգային համակարգեր և հաճախորդների ռեյտինգավորման ընթացակարգեր վարկային ռիսկի ճշգրիտ գնահատման նպատակով, իսկ բոլոր՝ Բանկի կողմից էական համարվող շեմը գերազանցող վարկային ռիսկ առաջացնող գործարքները ենթակա են հաստատման Բանկի բազմամակարդակ կոմիտեներում:

Բանկի Ռիսկերի կառավարման կոմիտեն յուրաքանչյուր ամիս դիտարկում է վարկային ռիսկի հիմնական կենտրոնացումները՝ ըստ պորտֆելների տեսակի, դրանց աշխարհագրական տեղաբաշխման, որակական և այլ չափանիշների և ըստ անհրաժեշտության նախաձեռնում համապատասխան փոփոխություններ:

Բանկի վարկային ռիսկի կառավարումը և դրան վերաբերվող գործընթացները կանոնակարգված են ներքին իրավական ակտերով:

Վարկային ռիսկը բնութագրող ցուցանիշներից են.

	31.12.2020թ.	31.12.2019թ.
Վարկային ռիսկի արժեք (Cost of credit Risk)	4.36%	2.46%
Չաշխատող վարկեր (NPL)	4.89%	3.477%

30.09.2021թ. դրությամբ Cost of credit risk-ը կազմել է 2.03%, իսկ NPL-ը՝ 3.61%, Վերոհիշյալ 2 ցուցանիշների աճը պայմանավորված է համավարակով:

🔍 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը Բանկի գործունեության ընթացքում կորստի ռիսկն է, որը առաջացել է անհամապատասխան կամ ձախողված ներքին գործընթացներից, մարդկանց և համակարգերի, կամ արտաքին գործոնների պատճառով: Գործառնական ռիսկի կառավարման նպատակով Բանկը իրականացնում է արտաքին և ներքին գործոնների սահմանման, բացահայտման, գնահատման, կանխարգելման, հսկման, վերահսկման և զսպման համակարգված գործողություններ, որոնց հիմնական նպատակն է նվազագույնի հասցնել հնարավոր կորուստները՝ միաժամանակ ապահովելով Բանկի արդյունավետ գործունեությունը: Բանկի գործառնական ռիսկի կառավարումը և դրան վերաբերվող գործընթացները կանոնակարգված են ներքին իրավական ակտերով և վերահսկվում են Բանկի Ռիսկերի կառավարման կոմիտեի կողմից: Տեխնիկական միջոցների խափանման հետ կապված ռիսկերից Բանկի համար առավել մեծ նշանակություն ունեն տվյալների բազայի ամբողջական պահպանմանը վտանգող ռիսկերը: Այս առումով Բանկը իրականացնում է տվյալների բազայի պարբերաբար արխիվացում, որոնց կրկնօրինակները պահվում են ինչպես Բանկի սերվերների և համակարգիչների մեջ, այնպես էլ արտաքին կրիչների վրա: Ընդ որում, արտաքին կրիչները պահվում են ինչպես Բանկի տարածքում, այնպես էլ Բանկի տարածքից դուրս: Մարդկային գործոններով պայմանավորված ռիսկերը նվազեցնելու նպատակով Բանկում ներդրված է ներքին հսկողության համակարգ, ինչի տարր են հանդիսանում գործարքների կրկնակի ստուգումը և առնվազն երկու անձի կողմից հաստատումը, Բանկի վերստուգողի և արտաքին աուդիտորի կողմից պարբերաբար իրականացվող ստուգումները և այլն:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Իրացվելիության ռիսկն առաջանում է Բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների կայուն կառուցվածք, որը ներառում է բանկերից ստացված վարկեր, միջազգային և օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների, նաև ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատների ավանդներ: Իրացվելիության անկանխատեսելի պահանջները բացահայտելու նպատակով կիրառվում են սթրես- տեստեր՝ հաշվի առնելով շուկայի զարգացման բազմաթիվ սցենարներ ինչպես սովորական, այնպես էլ ոչ բարենպաստ պայմանների համար: Բանկի իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացվում են Ակտիվների և Պարտավորությունների Կառավարման Կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից Ռիսկերի կառավարման կոմիտեի առաջարկությունների հիման վրա:

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում է Բանկի իրացվելիությունը գնահատելու համար անհրաժեշտ տեղեկատվություն:

Նորմատիվի անվանումը	ՀՀ ԿԲ-ի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծություն	Նորմատիվի փաստացի մեծություն 30.09.2021	Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2020թ.	Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2019թ.
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	Նվազագույնը՝ 15%	36.1%	35.57%	20.95%
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	Նվազագույնը՝ 60%	112,10%	135.90%	93.63%

❖ Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Բանկի շահույթի կամ ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, ներառյալ արտարժույթի փոխարժեքի, տոկոսադրույքների, վարկային սպրեդների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Բանկը շուկայական ռիսկի գնահատման ու կառավարման նպատակով առանձնացնում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը դրա այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել Բանկի՝ այդ ռիսկին ենթարկվածության աստիճանը ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց ակնկալվող եկամտաբերության արդյունավետ մակարդակ: Շուկայական ռիսկի կառավարման գծով որոշումները կայացնում են Բանկի ԱՊԿԿ-ն և Ռիսկերի կառավարման կոմիտեն:

❖ Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը Բանկի շահույթի կամ ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում: Նման փոփոխությունները կարող են ավելացնել կամ նվազեցնել Բանկի տոկոսային մարժան: Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է, երբ Բանկի որոշակի ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսված պարտավորություններից:

Բանկի տոկոսադրույքի ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով իրականացվում են տոկոսադրույքից կախված ակտիվների ու պարտավորությունների փաստացի/կանխատեսվող փոփոխությունների մասով սթրես-տեստեր և արդյունքները հաշվի են առնվում Բանկի կողմից նոր ֆինանսական գործիքների ձեռք բերման կամ ընթացիկ ֆինանսական գործիքների գծով օտարման որոշումների կայացման ժամանակ:

❖ Արտարժույթային ռիսկ

Բանկի արտարժույթային ռիսկն առաջանում է, երբ Բանկի արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից: ՀՀ դրամի էական արժեզրկումը հիմնական արտարժույթների նկատմամբ կարող է նվազեցնել Բանկի արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների որակը և Բանկի շահույթը: Բանկը կառավարում է իր արտարժույթի ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի (նույն արտարժույթով թողարկողի ակտիվների ու պարտավորությունների միջև առկա փաստացի կամ կանխատեսվող տարբերություն) սահմանաչափեր ըստ արտարժույթի տեսակների: Սահմանաչափերը վերահսկվում են ամենօրյա

կտրվածքով և ամսական ցուցանիշները ներկայացվում են Բանկի Ռիսկերի կառավարման Կոմիտեին որոշումների կայացման նպատակով:

ՀՀ-ում բանկային ծառայությունների շուկան բավականին զարգացած է և խիստ մրցակցային է:

Բանկն, իր մրցակցային դիրքերն ամրապնդելու նպատակով, իրականացնում է կառավարման համակարգի բարեփոխումներ, ներդնում է բանկային ինովացիոն առաջավոր տեխնոլոգիաներ, բարձրացնում է մատուցվող ծառայությունների սպասարկման որակը և մատչելիությունը:

Գիտակցելով վերը նշված ռիսկերը, այնուամենայնիվ, Բանկը, մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխությունները և դրանցով պայմանավորված մարտահրավերները, պատրաստ է իրականացնել այլընտրանքային ռազմավարություններ՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել իր գործունեության վրա դրանց բացասական ազդեցությունը:

3.3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

Բանկի ֆիրմային լրիվ անվանումը՝

հայերեն՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ռուսերեն՝ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО ЗАКРЫТОГО ТИПА «ИНЕКОБАНК»
անգլերեն՝ “INECOBANK” CLOSED JOINT STOCK COMPANY

Բանկի ֆիրմային կրճապ անվանումը

հայերեն՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
ռուսերեն՝ АОЗТ “ИНЕКОБАНК”
անգլերեն՝ “INECOBANK” CJSC

Բանկային գործունեության լիցենզիա թիվ 68

Բանկի գրանցման վկայական թիվ 0169, գրանցման ամսաթիվ 07.02.1996թ.

Բանկի պետական գրանցման վայրը՝ ՀՀ, ք. Երևան 0001, Թումանյան 17

Բանկի գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան 0001, Թումանյան 17

Կապի միջոցները՝ հեռ. (+37410) 56-59-74, (+37410) 51-05-10, ֆաքս (+37410) 51-05-73

էլ. Փոստը՝ info@inecobank.am

Ինտերնետային կայք՝ www.inecobank.am

Բանկի գրանցված ապրանքային նշանն է՝



Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 2016 թվականի մարտի 25-ի թիվ 1 և «ՊրոԿրեդիտ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության միակ մասնակցի 2016 թվականի մարտի 25-ի թիվ 1 որոշումների համաձայն և ՀՀ

օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է նշված բանկերի վերակազմակերպում՝ «ՊրոԿրեդիտ Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը Բանկին միացնելու միջոցով, որի արդյունքում «ՊրոԿրեդիտ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության գործունեությունը դադարել է, իսկ Բանկը պահպանել է իր գործունեությունը՝ նաև որպես «ՊրոԿրեդիտ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդ:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են դիմել Բանկ, իսկ որակավորված ներդրողները կարող են կապվել Դիլինգային գործառնությունների բաժնի որևէ մասնագետի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 56-59-74:

❏ Բանկի հիմնադրումը

Ինեկոբանկ ՓԲԸ հիմնադրվել է 1996թ. փետրվարի 7-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն: Բանկի պետական գրանցման վկայականի համարն է N 0169, իսկ բանկային գործունեության լիցենզիան՝ N 68:

Բանկի հիմնադրման երկիրը Հայաստանի Հանրապետություն:

Բանկը ունի Գլխամասային գրասենյակ և 25 մասնաճյուղ, չունի ներկայացուցչություն:

Բանկը 25 տարի գործունեություն է ծավալում ՀՀ բանկային համակարգում՝ մատուցելով ունիվերսալ բանկային ծառայություններ՝ ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ կորպորատիվ հաճախորդներին՝ սպասարկելով ավելի քան 500,000 հաճախորդների Հայաստանում: Բանկն առանձնանում է հայաստանյան բանկային շուկայում իր ուրույն կորպորատիվ ոճով: Դրա ձևավորման գործում կարևոր դեր է խաղում "Ինեկոբանկ" ապրանքանիշի զարգացումը/առաջխաղացումը, ինչը հնարավորություն է տալիս ստեղծել զգայական և գիտակցական կապ Բանկի ներկա ու հնարավոր հաճախորդների և Բանկի հետ:

❏ Բանկի նպատակները

Բանկի ռազմավարական նպատակներն են բարելավել դիրքերը բանկային համակարգում ակտիվների և հաճախորդներից ներգրավված միջոցների գծով՝ միաժամանակ ապահովելով շահութաբերության բարձր մակարդակ:

Առաքելությամբ, Տեսլականով, ինչպես նաև Ռազմավարական նպատակներով սահմանված թիրախային արդյունքներին հասնելու նպատակով Բանկն առանձնացրել է զարգացման հետևյալ հիմնական ուղղությունները, որոնց գծով շարունակական աշխատանքներ են տարվում: Դրանք են՝

- Շահութաբերության բարձրացում
- Հաճախորդների կենսափորձի բարելավում
- Բրենդի առաջխաղացում
- Վաճառքների առաջխաղացում
- SS ենթակառուցվածքի զարգացում

❏ Բանկի հիմնական խնդիրները

Վերոնշյալ նպատակների իրականացման նպատակով Բանկը շարունակելու է իրականացնել իր որդեգրած ռազմավարական ծրագիրը: Աշխատանքներ են տարվելու հետևյալ հիմնական ուղղություններով՝

1. Ակտիվների ծավալի շարունակական կայուն աճ
2. Որակապես կայուն վարկային պորտֆելի աճի ապահովում
3. Ավանդների ծավալի և շուկայական դիրքի/կշռի աճ նաև ակտիվների ֆինանսավորման կառուցվածքի փոփոխության նպատակով
4. Ակտիվների որակի արդյունավետ կառավարում և բարելավում հատկապես վարկավորման գործընթացների կատարելագործման շնորհիվ (առկա սքորինգային համակարգերի զարգացում և բարելավում, խնդրահարույց ակտիվների վերականգման գործընթացի էֆֆեկտիվության բարձրացում, վարկերի հաստատման և տրամադրման գործընթացների ավտոմատացման մակարդակի բարձրացում):
5. Թվային ուղիների և SS ենթակառուցվածքի զարգացում՝ թե՛ ներքին գործընթացների արդյունավետության բարձրացման, թե՛ հեռահար վաճառքների իրականացման և ամենակարևորը հաճախորդի կենսափորձի բարելավման տեսանկյունից:

3.4. ԲԻԶՆԵՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

❏ Հիմնական գործունեություն

Բանկն իրականացնում է օրենսդրությամբ բանկերին թույլատրված ֆինանսական գործառնություններ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ միջազգային ֆինանսական շուկաներում: Ինտելեկտուալ բանկ է, սակայն որպես հիմնական ուղղվածություն է ընտրել մանրածախ սեգմենտը, որի ուղղությամբ էլ այն զարգանում է:

Բանկը ֆինանսական գործառնություններն իրականացնում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

Բանկն իր գործունեությունն իրականացնում է կորպորատիվ և ներդրումային ուղղություններով՝ ներդնելով միջազգային բանկային համակարգում ընդունված բանկային տեխնոլոգիաները:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի թղթակցային նոստրո հաշիվներ 12 բանկում, որից 10-ը ոչ ռեզիդենտ են և 2 ռեզիդենտ բանկերի թղթակցային լորո հաշիվներ:

Իր գործունեությունն իրականացնելու համար Բանկը օգտվում է ինչպես միջազգային SWIFT վճարային, այնպես էլ ՀՀ գործող BankMail և CBANet համակարգերից:

Բանկը համաձայն իր կողմից որդեգրված ռազմավարության՝ իր հաճախորդներին մատուցում է հետևյալ ֆինանսական ծառայությունները:

Մանրածախ բիզնես

Բանկի հիմնական մրցակցային առավելությունն է մանրածախ վարկավորումը, որը տարիների ընթացքում կատարելագործվել է՝ քայլ առ քայլ կիրառելով նորագույն տեխնոլոգիական լուծումներ: Ընդհանուր առմամբ այս ուղղությունը բաղկացած է ապառիկ վարկավորումից, սպառողական և հիփոթեքային վարկերից:

1.Ապառիկ վարկեր. Բանկն առաջինն էր շուկայում, որը հետևողականորեն զարգացրեց ապառիկ վաճառքի տեխնիկան՝ ներկայացնելով «Ապառիկը տեղում» ծառայությունը, որը էականորեն հեշտացրեց ապառիկ գնումների ընթացքը, որի արդյունքում նախկինում մի քանի օր տևող գործընթացը այժմ հնարավոր է իրականացնել մի քանի րոպեում: Այսօր Բանկն ապառիկի շուկայում առաջատարներից է:

2.Սպառողական վարկեր. Բանկն իր հաճախորդներին տրամադրում է տարբեր նպատակներով սպառողական վարկեր՝ գրավով և առանց գրավի: Ուշագրավ են Բանկի վերջին մի քանի տարիների ձեռքբերումները. 2017 թվականի սկզբում ներդրվեցին արագ սպառողական վարկերը, իսկ արդեն տարեվերջին՝ «1 CLICK» առցանց վարկը: Բանկն առաջինն էր հայկական շուկայում, որ կիրառեց ամբողջովին ավտոմատացված առցանց վարկավորման գործընթաց:

«1 CLICK» վարկը հասանելի է հաճախորդին 24/7 ռեժիմով աշխարհի ցանկացած կետից՝ InecoMobile և InecoOnline համակարգերի միջոցով՝ առանց Բանկի մասնաճյուղեր այցելության:

2021թ. ընթացքում Բանկը մեծացրել է սպառողական վարկերի սահմանաչափը: Այժմ Բանկի հաճախորդները կարող են ստանալ մինչև 10,000,000 ՀՀ դրամ «1 CLICK» օնլայն վարկ՝ առանց երաշխավորի և հավելյալ թղթաբանության:

3.Հիփոթեքային վարկեր. Բանկն առաջարկում է հիփոթեքային վարկեր՝ ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման, վերանորոգման, կառուցապատման, ինչպես նաև այլ բանկում հաճախորդի ունեցած հիփոթեքային վարկի վերաֆինանսավորման նպատակով:

Վարկավորումը իրականացվում է ինչպես Բանկի ներքին ռեսուրսներով, այնպես էլ մի շարք կառույցների՝ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի և «Բնակարան Երկիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի ծրագրերի շրջանակներում: Բանկն իր ռեսուրսներով տրամադրում է նաև լողացող տոկոսադրույքով հիփոթեքային վարկեր, որի շրջանակում առաջին երեք տարիների համար գործում է հաստատուն տոկոսադրույք, այնուհետև՝ լողացող:

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ համագործակցության շրջանակներում տրամադրվում են «Բնակարանային Էներգաարդյունավետ վարկեր», որոնք ուղղված են բնակարանների և/կամ

բնակելի տան էներգաարդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև «Մարզային բնակարանային վարկեր»՝ ՀՀ մարզերում բնակարանների և/կամ բնակելի տների ձեռքբերումը խթանելու նպատակով:

Բանկի սքորինգային համակարգը վերջին տարիների ընթացքում էականորեն կատարելագործվել է և հնարավորություն է ընձեռում իրականացնել վարկունակության գնահատում տարբեր տիպի հաճախորդների համար, հետևաբար նաև տրամադրել կոնկրետ հաճախորդի վարկունակությանը և կարիքներին համապատասխանող վարկային պրոդուկտ: Բանկի զարգացման տեսլականում մանրաձախ վարկավորման ուղղությունն ունի գերակա կշիռ և հետագա տարիների ընթացքում շարունակաբար աճելու է ինչպես ակտիվների տեսակարար կշռի բարձրացման, այնպես էլ մատուցվող ծառայությունների ընդլայնման տեսանկյունից:

📌 Կորպորատիվ բիզնես

1.Բիզնես վարկեր. Բանկը բիզնես ֆինանսավորման ոլորտում մատուցում է բավականին ընդարձակ ծառայություններ, ինչպես իր ներքին ռեսուրսների հաշվին, այնպես էլ համագործակցող կազմակերպությունների կողմից ներգրավված միջոցների հաշվին: Վերջին տարիների ընթացքում Բանկը համագործակցել է մոտ 30 միջազգային ֆինանսական և ներդրումային կազմակերպությունների հետ, որոնց շարքին են դասվում KFW, ADB, IFC, EBRD, DEG, FMO, OFID, DWM, EFSE ,Incofin Investment Management, Blue Orchard Microfinance Fund և այլն:

Բանկի ռազմավարության կարևոր մաս է կազմում Փոքր ու Միջին Ձեռնարկությունների ֆինանսավորումը: Իր ՓՄՁ հաճախորդներին Բանկն առաջարկում է վարկավորման լայն գործիքակազմ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆտներ, գյուղատնտեսական վարկեր և այլն:

Այսօր, իր ճկուն գործելաոճի շնորհիվ Բանկը կորպորատիվ հաճախորդների շրջանում վայելում է բարի համբավ:

2.Առևտրի ֆինանսավորման գործիքներ. Բանկը առևտրի ֆինանսավորման ոլորտում տրամադրում է ծառայությունների մատուցման արդյունավետ և ամբողջական գործիքակազմ (երաշխիքներ, ակրեդիտիվներ, ինկասոներ և այլն), և ակտիվ համագործակցում է Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC), Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), ինչպես նաև միջազգային առաջնակարգ մի շարք բանկերի հետ: Բանկն արժանացել է միջազգային մի շարք հեղինակավոր մրցանակների: 2007թ. և 2009 թ. Բանկը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) կողմից ճանաչվել է Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտում ամենաակտիվ թողարկող բանկ, 2010թ. Գերմանական «Կոմերցբանկի» կողմից ստացել է մրցանակ առևտրի ֆինանսավորման ոլորտում գերազանց համագործակցության համար, իսկ 2016թ. Բանկը ճանաչվել է «Լավագույն

գործընկեր բանկ առևտրի ֆինանսավորման ոլորտում» Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) կողմից:

Ավանդային գործառնություններ

Բանկն իր ֆիզիկական անձ հաճախորդներին առաջարկում է ժամկետային և ցպահանջ ավանդների ներդրման լայն հնարավորություններ, ինչպես նաև խնայողական հաշվի և նպատակային խնայողական պլանի ընտրման ճկուն տարբերակներ: Ավանդի տեսակները առավելագույնս հարմարեցված են հաճախորդների պահանջներին և նպատակներին: Իրավաբանական անձ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հաճախորդների համար Բանկը նույնպես նախատեսել է ավանդների ներդրման գրավիչ տարբերակներ՝ ավանդի ժամկետից և արժույթից կախված ճկուն սակագներով: Ավանդատեսակների նպատակների և պայմանների միջև ճիշտ հավասարակշռության պահպանման շնորհիվ վերջին տարիների ընթացքում Բանկը շարունակաբար գրանցում է ավանդատու հաճախորդների ցանկի ընդլայնում և ավանդային պայմանագրերի վերականգնման բարձր ցուցանիշ:

Գործառնություններ արժեթղթերով

✚ Բրոքերային ծառայություններ

Բանկը իր հաճախորդներին տրամադրում է Բրոքերային ծառայություններ, հնարավորություն ընձեռնելով գնել և վաճառել տարբեր տեսակի արժեթղթեր հայկական շուկայում:

✚ Պահառուական ծառայություններ

Բանկի կողմից մատուցվող արժեթղթերի պահառության ծառայությունը նախատեսված է ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, որոնք սեփականության իրավունքով կամ որպես անվանատեր տիրապետում են այլ անձանց կողմից թողարկված արժեթղթերի:

✚ ՀԿԴ ծառայությունների միջնորդավորում

Բանկը, հանդիսանալով Դեպոզիտար համակարգի հաշվի օպերատոր, միջնորդավորում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունները, որոնք ներառում են ռեեստրի վարման, արժեթղթերի պահառության հետ կապված ծառայությունները:

✚ Այլ հաշվարկադրամարկղային ծառայություններ, որոնք ստանդարտ, ավանդական բանկային ծառայություններ են և իրենց մեջ ներառում են՝

4. Դրամական փոխանցումներ
5. Միջազգային փոխանցումներ
6. Արտարժույթային փոխարկումներ և այլն

Առանձնահատուկ շեշտադրման կարիք ունեն թվային ուղիներով մատուցվող ծառայությունները, որը Բանկը իրագործում է ԻնեկոՕնլայն, ԻնեկոՄոբայլ

համակարգերի, ինչպես նաև 2018թ. ներդրված Ինեկոփեյ ծառայության միջոցով:

InecoOnline

ԻնեկոՕնլայն համակարգը հուսալի և ապահով թվային բանկինգի լուծում է, որը Բանկի հաճախորդներին հնարավորություն է ընձեռում օգտվել բանկային գրեթե բոլոր ծառայություններից ինտերնետ հասանելիությամբ համակարգչի միջոցով՝ առանց բանկ այցելելու:

InecoMobile

ԻնեկոՄոբայլ բջջային հավելվածը ժամանակակից մոբայլ բանկինգի լավագույն տարբերակն է, որը հնարավորություն է ընձեռում, ունենալով միայն սմարթֆոն և ինտերնետ հասանելիություն, կատարել բանկային գործարքներ ցանկացած վայրում, ցանկացած պահի՝ 24/7 ռեժիմով:

2018 թ. ԻնեկոՄոբայլ բջջային հավելվածը բրիտանական «Global Business Outlook» հեղինակավոր ամսագրի կողմից արժանացել է «Բանկային ոլորտի տարվա լավագույն բջջային հավելված» մրցանակին:

INECOPAY

2018թ. Բանկը ներդրել է InecoPay ծառայությունը, որը առանձնանում է շուկայում իր հարմարավետությամբ և ապահովությամբ: Այն բացառիկ վճարային լուծում է Հայաստանյան բանկային համակարգում, որը հնարավորություն է ընձեռում անկոնտակտ վճարումներ կատարել անմիջապես սմարթֆոնով՝ սքանավորելով վճարման կետերում ներկայացվող QR կոդերը: InecoPay համակարգն ամբողջովին փոխում է անկանխիկ վճարումների վերաբերյալ ավանդական պատկերացումները, միտված է ձևավորել վճարում կատարելու նոր մշակույթ և ապահովել յուրահատուկ կենսաոճ: Ծառայությունը հասանելի է ոչ միայն Բանկի հաճախորդներին, այլ նաև բոլոր նրանց, ովքեր ունեն ArCa, Visa, Master համակարգերի վճարային քարտեր: Ընդամենն անհրաժեշտ է InecoMobile հավելվածին կցել վճարային քարտն ու կատարել InecoPay վճարում սմարթֆոնի միջոցով:

Շնորհիվ InecoPay-ի այսօր Բանկը միավորել է բոլոր բանկային գործիքները մեկ ապահով միջավայրում՝ հնարավորություն տալով հաճախորդներին կատարել փոխանցումներ, ներդնել ավանդներ, ստանալ վարկեր և կատարել վճարումներ գնումների, ծառայությունների ձեռք բերման համար անմիջապես սմարթֆոնի միջոցով:

2018թ. InecoPay վճարային լուծումը բրիտանական «Global Business Outlook» հեղինակավոր ամսագրի կողմից արժանացել է «Տարվա Լավագույն Նորարարական վճարային լուծում» մրցանակին:

Կարևորելով իր հաճախորդների հարմարավետությունը՝ Բանկը շարունակում է կատարելագործել մատուցվող ծառայությունների որակն, արագությունը ու

հուսալիությունը: Հաշվի առնելով, որ ծառայությունների մատուցումն ու գործարքների կատարումը չի սահմանափակվում աշխատանքային օրերով և ժամերով՝ Բանկը հաճախորդներին ահնարաժեշտ տեղեկատվությունը տրամադրում է շուրջօրյա ռեժիմով:

Բանկի կոնտակտային կենտրոնը հասանելի է 24/7 ռեժիմով՝ ապահովելով ժամանակակից միջոցներով անխափան կապ հաճախորդների հետ:

🏦 Հիմնական շուկաները

Բանկը որպես իր հիմնական գործունեության շուկա դիտարկում է Հայաստանի Հանրապետությունը, տրամադրում է բանկային ծառայությունների լայն շրջանակ: Հիմնական ուղղվածությունը մանրածախ սեգմենտն է, որին էլ ուղղված են բանկի միջնաժամկետ և երկարաժամկետ պլանները:

Բանկը հաճախորդներին առաջարկում է մի շարք բանկային ծառայություններ, ինչպիսիք են ավանդային, վճարահաշվարկային, վարկային ծառայությունները, առևտրի ֆինանսավորում, ինչպես նաև գործարքներ ածանցյալ գործիքներով՝ ֆորվարդ, սվոփ, օպցիոն և այլն:

Բանկն իր հաճախորդների հետ ձևավորում է երկարատև ու գործընկերային հարաբերություններ, որոնց հիմքում ընկած է սերտ ու փոխշահավետ համագործակցությունը: Բանկը փորձում է բացահայտել հաճախորդների կարիքները և ժամանակին տալ համապատասխան ֆինանսական լուծումներ՝ հմուտ և փորձառու անձնակազմի շնորհիվ:

Հաշվի առնելով բանկային համակարգում առկա մրցակցությունը՝ Բանկը մշտապես իրականացնում է մրցակցային դիրքի վերլուծություն, բանկային ծառայությունների շուկայում գործող պայմանների և տոկոսադրույքների ուսումնասիրություններ:

2015-2018թթ. Բանկը շարունակել է կայուն զարգացումը՝ արձանագրելով նոր ձեռքբերումներ: 2015թ.-ին Բանկը ձեռք է բերել Պրոկրեդիտ Բանկ ՓԲԸ-ի 100% բաժնետոմսերը՝ ամրապնդելով մրցակցային դիրքը ՀՀ բանկային շուկայում: 2016թ.-ին բարեհաջող ավարտել է Պրոկրեդիտի համախմբման գործընթացը՝ 2017թ.-ի եռամսյակային և կիսամյակային արդյունքներով գրանցելով առաջատար դիրք շահույթի բացարձակ մեծությամբ և կապիտալի շահութաբերությամբ, ինչպես նաև բարելավել է դիրքը ակտիվների և կապիտալի մեծությամբ: 2017թ. տարեկան արդյունքով Բանկը առաջատարն է կապիտալի շահութաբերությամբ, բարելավել է իր դիրքը բանկային համակարգում գրեթե բոլոր ցուցանիշներով:

2018թ. մայիս ամսին Հոլանդական agRIF Coopeartief U.A կազմակերպությունը, որը կառավարվում է Incofin Investment Management ֆինանսական կազմակերպության կողմից ձեռք է բերել International Finance Corporation (IFC) և Deutsche Investitions und Entwicklungsgesellschaft (DEG) միջազգային ֆինանսական կազմակերպություններին պատկանող Ինեկոբանկի բաժնետոմսեր՝ դառնալով Ինեկոբանկ ՓԲԸ-ի 10.0104% բաժնետոմսերի սեփականատեր:

2019թ. մարտ ամսին Ամերիկյան DWM ընկերությունը դարձել է Ինեկոբանկ ՓԲԸ նոր բաժնետեր:

«Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի» (ՎԶԵԲ) և ամերիկյան «Դեվելոփինգ Վորլդ Մարքեթս» (DWM) ներդրումային ընկերության միջև կնքված համաձայնագրով ձեռք բերելով ՎԶԵԲ-ին պատկանող Ինեկոբանկ ՓԲԸ բաժնետոմսերի մի մասը՝ DWM ընկերությունը դարձել է Բանկի ընդհանուր բաժնետոմսերի 5.10%-ի սեփականատեր:

2020թ. հուլիսին Բանկն ընդլայնել է իր գործունեությունը՝ բացելով մեկ այլ նորարարական մասնաճյուղ Երևանում՝ հաճախորդների 24/7 սպասարկմամբ: Բանկը նախատեսում է ընդլայնել իր գործընկերների շրջանակը՝ շեշտադրելով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը: Այդ նպատակով Բանկը շարունակում է ակտիվ գործունեություն ծավալել ինչպես առկա գործընկերների մասով համագործակցության ընդլայնման, այնպես էլ նոր միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատման ու զարգացման ուղղությամբ:

3.5. ԲԱՆԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բանկը որևէ խմբի անդամ չէ:

Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում:

3.6. ԲԱՆԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Վերջին հաշվետու տարվա ավարտից մինչև սույն Ծրագրային Ազդագրի ներկայացման օրն ընկած ժամանակահատվածում Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների էական աճ չի գրանցվել, որը ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ստորև բերված աղյուսակում պատենցիալ ներդրողների համար ներկայացված է համապարփակ տեղեկատվություն նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում Բանկի ֆինանսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ:

	30.09.2021 հազ. դրամ	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցներ	35,119,392	63,569,924	46,524,541
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	230,754,650	220,478,528	195,656,532
Հաճախորդներին տրված վարկեր	205,470,325	216,462,240	238,649,450
Բանկերից ստացվելիք գումարներ	8,506,604	10,877,562	6,750,195
Ներդրումային արժեթղթեր	85,812,778	70,605,840	29,470,717

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների նվազումը բացատրվում է պարտավորություններում հաճախորդների միջոցների կշռի ավելացման ռազմավարությամբ:

2017-2020 թթ. ընթացքում Բանկը շահույթի մեծությամբ և կապիտալի շահութաբերությամբ գտնվել է ՀՀ բանկային համակարգի առաջին քառյակում:

2020թ. տարեվերջի դրությամբ՝

- ❖ Գրանցվել է Հաճախորդներից ներգրավված ավանդների աճ 12.7%-ով՝ կազմելով ընդհանուր պարտավորությունների 67%-ը
- ❖ Վարկային պորտֆելը նվազել է 7.2%-ով՝ կազմելով ընդհանուր ակտիվների 55.8%-ը
- ❖ Բանկը ընդամենը ակտիվներով գրավել է ՀՀ բանկային համակարգում 5-րդ հորիզոնականը
- ❖ Վարկային պորտֆելի մեծությամբ զբաղեցրել է բանկային համակարգի 6-րդ հորիզոնականը
- ❖ Բանկը ավանդային պորտֆելով համակարգում զբաղեցրել է 7-րդ հորիզոնականը
- ❖ Բանկը առաջատարներից է շահույթի ծավալով ու կապիտալի շահութաբերությամբ, մասնավորապես 9.4% ROE մեծությամբ և շահույթով զբաղեցրել է 4-րդ հորիզոնականը
- ❖ Ընդհանուր կապիտալի մեծությամբ զբաղեցրել է 5-րդ հորիզոնականը
- ❖ Առաջինն է շուկայում Օնլայն բանկային ծառայություններից օգտվողների քանակով. մոտ 270 հազար օգտատեր:

3.7. ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

Բանկը նախատեսում է ընթացիկ տարում բարելավել դիրքերը բանկային համակարգում ակտիվների և հաճախորդներից ներգրավված միջոցների գծով, ինչպես նաև զուտ շահույթի մեծությամբ՝ միաժամանակ պահպանելով առաջատար դիրք շահութաբերության ցուցանիշով: Բանկի կողմից վարկային պորտֆելի և պարտավորությունների կառուցվածքների արդյունավետ կառավարումը, ինչպես նաև ակտիվների որակի և գործառնական ծախսերի հսկողությունը կնպաստեն շահութաբերության աճին:

Բանկի կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

1. Բանկի ներգրավող և տեղաբաշխվող միջոցների ծավալների կառավարում,
2. Բանկի ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում և կառավարում,
3. Բանկի տեխնիկատեխնոլոգիական և տեղեկատվական համակարգերի արդիականացմանն ուղղված ներդրումներ,
4. Բանկի անձնակազմի վարձատրության, պատրաստման և վերապատրաստման ծախսեր,
5. Բանկի գործունեության ապահովման ծախսեր:
6. Բանկի կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն, ըստ էության, հնարավորություն չունեն ազդելու Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա, ինչպիսիք են.

-Ավանդատուների վարքագիծ,

-Ֆինանսական շուկայի տոկոսադրույքների վարքագիծ,

-Փոխարժեքների փոփոխություն,

-Անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը

- Հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները,

-Պատերազմը,

- և այլ գործոններ, որոնք անհնարին են դարձնում Բանկի բնականոն գործունեությունը

3.8. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Բանկի Կանոնադրությամբ սահմանված Բանկի կառավարման մարմիններն են.

1. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը.
2. Բանկի խորհուրդը.
3. Բանկի գործադիր տնօրենը, Բանկի տնօրինությունը:

Բանկի կառավարման մարմինների կազմավորման և գործունեության կարգը, իրավասությունների շրջանակը սահմանվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով և Բանկի կանոնադրությամբ:

Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը

Բանկի կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է:

Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են

պատկանում

1. Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը.
2. Բանկի վերակազմակերպումը.
3. Բանկի լուծարումը.
4. Ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.
5. Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.
6. Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը, ինչպես նաև Բանկի կանոնադրական կապիտալի ավելացումը.
7. Բանկի խորհրդի ներկայացմամբ բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
8. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.
9. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.
10. Բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը.
11. օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
12. օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ հարցեր:

Սույն փաստաթղթի «**Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություն**» կետում սահմանված հարցերով որոշումների ընդունումը հանդիսանում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը և չի կարող փոխանցվել Բանկի խորհրդին, գործադիր տնօրենին, նրա տեղակալներին, տնօրինության անդամներին և գլխավոր հաշվապահին:

Բանկի խորհուրդը

Բանկի խորհուրդն իրականացնում է բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Բանկի խորհրդի կազմակերպման և գործունեության հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված խորհրդի կանոնակարգով:

Բանկի խորհրդի իրավասություններն են՝

1. Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.
2. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.
3. Բանկի գործադիր տնօրենի, նրա տեղակալների, տնօրինության անդամների և գլխավոր հաշվապահի նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
4. Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
5. Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.
6. Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
7. Շահութաբաժինների վճարման վերաբերյալ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.
8. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.
9. Ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.
10. Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.
11. Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.
12. ՀՀ օրենսդրությամբ և կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող Բանկի ներքին իրավական ակտերի ընդունումը.
13. Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի

ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառույթային պարտականությունների բաշխումը.

14. Բանկի վերակազմակերպման մասին հարցի ներկայացումն ընդհանուր ժողովի քննարկմանը.
15. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.
16. Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
17. Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.
18. Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.
19. Դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.
20. Դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.
21. Առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը.
22. Առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը.
23. Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.
24. Օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը.
25. Բանկի տնօրինության ձևավորման և տնօրինության աշխատանքների կանոնակարգման վերաբերյալ որոշումների ընդունումը:

Վերոհիշյալ հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Բանկի խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել կառավարման այլ մարմնի կամ այլ անձանց:

Բանկի խորհրդի նախագահը՝

1. Կազմակերպում է խորհրդի աշխատանքները.
2. Գումարում և նախագահում է խորհրդի նիստերը.
3. Կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.
4. Նախագահում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում.
5. Կազմակերպում է խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը:

Բանկի խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Բանկի խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Բանկի խորհրդի անդամները և Բանկի այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ: Բանկի խորհրդին կից հանձնաժողովների գործունեությունը հիմնվում է հարցերի ազատ քննարկման և կոլեկտիվ լուծման սկզբունքների վրա:

Հանձնաժողովները կարող են ստեղծվել Բանկի հաճախորդների սպասարկման, ակտիվների կառավարման, ռիսկերի կառավարման և բյուջետային հարցերի շուրջ եզրակացություններ տալու նպատակով:

Հանձնաժողովները ստեղծվում են խորհրդի որոշմամբ և գործում են խորհրդի կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

Բանկի խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

❖ Բանկի գործադիր տնօրենը, Բանկի տնօրինությունը

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում են Բանկի գործադիր տնօրենը և Բանկի տնօրինությունը:

❖ Բանկի տնօրինությունը

1. Նախապես քննարկում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասությանը վերապահված հարցերը և անհրաժեշտության դեպքում այդ հարցերի վերաբերյալ ներկայացնում է իր դիրքորոշումը:
2. Բանկի խորհրդի հաստատմանն է ներկայացնում խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, հիմնարկների և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը:
3. Վերահսկում է օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների պահպանումը Բանկում:
4. Ապահովում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումների կատարումը:
5. Սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, միջնորդավճարների չափը, ներգրավվող ավանդների, տրամադրվող վարկերի և այլ ֆինանսական գործառնությունների տոկոսադրույքները:
6. իր իրավասության սահմաններում կարող է կազմավորել մշտապես գործող աշխատանքային, խորհրդակցական և այլ տիպի մարմիններ:
7. Քննարկում է դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծման և/կամ մասնակցության, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման, դրանց գործունեության դադարեցման նպատակահարմարության հարցերը:
8. Բանկի խորհրդի կողմից հաստատված՝ Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում հաստատում է մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների գործունեության եռամսյակային, ծախսերի նախահաշիվներն ու դրանց կատարողականները:
9. Հաստատում է Բանկի ընթացիկ գործունեությունը կանոնակարգող կարգերի, կանոնակարգերի, հրահանգների, ընթացակարգերի, մեթոդական ցուցումների և այլ աշխատանքային փաստաթղթերը, բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք, համաձայն գործող օրենսդրության և կանոնադրության, ենթակա են հաստատման Բանկի խորհրդի կողմից:

10. Բանկի խորհրդի կողմից հաստատված՝ Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի և Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի շրջանակներում հաստատում է Բանկի աշխատատեղերը /հաստիքացուցակը/.
11. Հաստատում է Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացվող հաշվետվությունները, աշխատանքային գործունեության պլանները և դրանց կատարողականը.
12. Քննարկում է ներքին և արտաքին աուդիտորների, ինչպես նաև այլ մարմինների կողմից իրականացված ստուգման արդյունքները և անհրաժեշտության դեպքում դրանց վերաբերյալ կայացնում է որոշումներ.
13. Բանկի խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ խորհրդի սահմանած կարգով.
14. Հաստատում է պայմանագրերից բխող Բանկի իրավունքների երրորդ անձանց զիջման պայմանները, ինչպես նաև կայացնում է որոշում Բանկի պարտապանների պարտքի գումարի վրա տոկոսների, տույժերի հաշվարկման դադարեցման և/կամ հաշվարկված տոկոսների և տույժերի զեղչման կամ ներման վերաբերյալ.
15. Իրականացնում է կանոնադրությամբ, ինչպես նաև Բանկի խորհրդի կողմից սահմանված Բանկի ներքին իրավական ակտերի շրջանակներում նախատեսված Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

❖ Բանկի գործադիր տնօրենը

1. Որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է Բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր.
2. Տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
3. Աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Բանկի աշխատակիցներին.
4. Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
5. Ապահովում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի որոշումների կատարումը.
6. Իրականացնում է կանոնադրությամբ, ինչպես նաև Բանկի խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:
7. Այն հարցերը, որոնք օրենքով կամ կանոնադրությամբ չեն սահմանվել որպես Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի, Խորհրդի, Բանկի

տնօրինության կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են գործադիր տնօրենի իրավասությանը:

8. Բանկի գործադիր տնօրենի իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտին, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ եթե Բանկի գործադիր տնօրենի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին:
9. Գործադիր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

Տեղեկություններ Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ.

Բանկի հիմնական բաժնետերերն են՝

N	Անուն, Ազգանուն	Սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի քանակը /հատ/	Մասնաբաժինը /%/	Բանկի գործունեությունից դուրս ծավալած գործունեությունը
1	Բալոյան Ավետիս Յուլիսի	64,406	35,42%,	ԻՆԵԿՈ ՓԱՐԹՆԵՐՍ ՓԲԸ, Խորհրդի նախագահ
2	Սաֆարյան Կարեն Գառնիկի	55,687	30,63%	Չկա
3	ԱԳՐԻՖ ԿՈՈՊԵՐԱՏԻՖ ՅՈՒԷՅ	18,201	10.01%	Ներդրումային ֆոնդ
4	ԴԻԴԱԲԼՅՈՒԷՄ ՖԱՆԴՍ ԿԲԸ ՓԿՆԿ ՄՆՀ/DWM FUNDS S.C.A.-SICAV SIF	9,272	5.10%	Ներդրումային ֆոնդ

Խորհուրդ

N	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Բնակության վայր	Իրավասություններն ու պարտականությունները	Բանկի գործունեությունից դուրս ծավալած գործունեությունը	Խորհրդում ներկայացվող բաժնետեր
1	Ավետիս Բալոյան	Խորհրդի նախագահ	ք. Երևան, Հայաստան	Մասնակցում են Խորհրդի նիստերին, կարծիք/ առաջարկություն են ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ:	ԻՆԵԿՈ ՓԱՐԹՆԵՐՍ ՓԲԸ, Խորհրդի նախագահ	Ավետիս Բալոյան
2	Կարեն Սաֆարյան	Խորհրդի անդամ	ք. Կիև, Ուկրաինա	Խորհրդի անդամներն իրենց	Չկա	Կարեն Սաֆարյան
3	Աշոտ Ավետիսյան	Խորհրդի անդամ	ք. Երևան, Հայաստան		Գիտահետազոտական աշխատանքներ	Խորհրդի անկախ անդամ

4	Սուվխան Գվալիա	Խորհրդի անդամ	ք. Թբիլիսի, Վրաստան	պարտականություններն ու իրավասությունները իրականացնում են	«Բանկ օՖ Ջորջիա» ԲԸ, Գործադիր տնօրենի տեղակալ, ֆինանսական տնօրեն	Խորհրդի անկախ անդամ
5	Յան Դիվայնգարթ	Խորհրդի անդամ	ք. Անտվերպեն, Բելգիա	օրենքով, Բանկի կանոնադրությամբ և ներքին կարգերով	Ինկոֆին ներդրումային ֆոնդ	Ագրիֆ Կոոպերատիվ Ֆու Էյ
6	Արամ Կայֆաջյան	Խորհրդի անդամ	ք. Երևան, Հայաստան	սահմանված իրավասությունների սահմաններում Խորհրդի նիստում	Արմբրոկ ԲԲԸ, Գլխավոր տնօրեն	Խորհրդի անկախ անդամ
7	Սումա Սվամինաթան	Խորհրդի անդամ	ք. Նյու Յորք, ԱՄՆ	առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:	ԴԻԴԱԲԼՅՈՒԷՄ Ասեթ Մենեջմենթ ՍՊԸ, Փոխնախագահ	ԴԻԴԱԲԼՅՈՒԷՄ ՖԱՆԴՍ ԿԲԸ ՓԿՆԿ ՄՆՀ/DWM FUNDS S.C.A.-SICAV SIF

Գործադիր մարմին

N	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Բնակության վայր	Բանկի գործունեությունից Դուրս ծավալած գործունեությունը
1	Արեն Նալթալյան	Գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ	ք. Երևան, Հայաստան	ԻՆԵԿՈ ՓԱՐԹՆԵՐՍ ՓԲԸ Տնօրեն
2	Վաղինակ Խաչատրյան	Ռիսկերի տնօրեն, տնօրինության անդամ	ք. Երևան, Հայաստան	Չկա
3	Արտեմ Զիչյան	Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ	ք. Երևան, Հայաստան	Չկա
4	Հայկ Ոսկանյան	Ֆինանսական տնօրեն, տնօրինության անդամ	ք. Երևան, Հայաստան	«Տնօրենների Հայկական Ինստիտուտ» ՀԿ, Հայաստանի Ամերիկյան Համալսարան՝ այլցելող դասախոս
5	Լևոն Ռուբինյան	Մանրածախ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ	ք. Երևան, Հայաստան	Չկա
6	Լիլիթ Գրիգորյան	Գործառնական տնօրեն, տնօրինության անդամ	ք. Երևան, Հայաստան	«Հանրային հաղորդակցության լաբորատորիա» ՍՊԸ, հիմնադիր
7	Արշալույս Սահակյան	Գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ	ք. Երևան, Հայաստան	Չկա

Տնօրինության անդամներն իրենց իրավասություններն իրականացնում են Տնօրինության նիստերի միջոցով, Տնօրինության լիազորությունների շրջանակներում, նիստերին մասնակցելու և քվեարկությամբ որոշումներ ընդունելու միջոցով:

Բանկի մասնաճյուղերի կենտրոնացումներ

Սույն Ծրագրային Ազդագրի կազմելու պահին՝ 15.10.2021թ. դրությամբ, Բանկի ոչ մի մասնաճյուղում կենտրոնացված չէ Բանկի ակտիվների 10 և ավելի տոկոսը:

Բանկի և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև սույն փաստաթղթի ներկայացման պահի դրությամբ շահերի բախման դեպքեր և հիմքեր չկան:

3.9. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Բանկում ներդրված կորպորատիվ կառավարման սկզբունքները համապատասխանում են «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին:

3.10. ՀՍԿՈՂ ԱՆՁԻՆՔ

Բանկի հսկող անձինք են հանդիսանում՝

1	Բալյան Ավետիս Ցոլակի	Բանկի կանոնադրական կապիտալում 35,42 (երեսունհինգ ամբողջ քառասուններկու հարյուրերորդական) տոկոս մասնակցության ուժով
2	Սաֆարյան Կարեն Գառնիկի	Բանկի կանոնադրական կապիտալում 30,63 (երեսուն ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) տոկոս մասնակցության ուժով
3	agRIF Coöperatief U.A. կազմակերպություն	Բանկի կանոնադրական կապիտալում 10,01 (տասն ամբողջ մեկ հարյուրերորդական) տոկոս մասնակցության և Բանկի, Բանկի բաժնետերեր Ավետիս Բալյանի, Կարեն Սաֆարյանի, agRIF Cooperatief U.A.-ի և DWM Funds SCA_SICAV SIF միջև 2019 թվականի փետրվարի 20-ին կնքված Հինգերորդ անգամ վերանայված և խմբագրված բաժնետերերի պայմանագրի ուժով
4	Incofin Investment Management Comm. VA	Բանկի, Բանկի բաժնետերեր Ավետիս Բալյանի, Կարեն Սաֆարյանի, agRIF Cooperatief U.A.-ի և DWM Funds SCA_SICAV SIF միջև 2019 թվականի փետրվարի 20-ին կնքված Հինգերորդ անգամ վերանայված և խմբագրված բաժնետերերի պայմանագրի ուժով
5	DWM Funds SCA_SICAV SIF	Բանկի, Բանկի բաժնետերեր Ավետիս Բալյանի, Կարեն Սաֆարյանի, agRIF Cooperatief U.A.-ի և DWM Funds SCA_SICAV SIF միջև 2019 թվականի փետրվարի 20-ին կնքված Հինգերորդ անգամ վերանայված և խմբագրված բաժնետերերի պայմանագրի ուժով

3.11. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանկի 2020թ., 2019թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները և 2021թ. միջանկյալ հաշվետվությունը և անկախ Աուդիտորական եզրակացությունները (պատճենները) ներկայացված են որպես սույն Ծրագրային ազդագրի հավելված:

❖ Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

Ֆինանսական վիճակի վրա ազդող էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

❖ Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Սույն ծրագրային ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամիսների ընթացքում Բանկը ներգրավված չի եղել դատական, արբիտրաժային և վարչական այնպիսի վարույթներում (ներառյալ՝ վարույթներ, որոնք սկսվել կամ սպասվում են և որոնց մասին Բանկը տեղյակ է), որոնք Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա կարող են կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

3.12. ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

Բանկը 2017թ. ընթացքում ներգրավել է 14 մլն ԱՄՆ դոլար Symbiotics SA -ից և 12 մլն ԱՄՆ դոլար ResponsAbility Investments AG ընկերությունից, որոնց հիմնական նպատակն է միկրո վարկերի տրամադրումը:

Նույն տարվա ընթացքում օգոստոս և նոյեմբեր ամիսներին Բանկը ներգրավել է 13 մլն ԱՄՆ դոլար OFID-ից. հիմնական նպատակը առևտրի ֆինանսավորումն է, և 2017թ. հոկտեմբերին՝ 15 մլն ԱՄՆ դոլար FMO -ից՝ փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորման նպատակով:

Բանկը 2018թ. դեկտեմբերին ներգրավել է 2.9 մլրդ ՀՀ դրամ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից (EBRD), որի հիմնական նպատակն է ՓՄՁ վարկավորումը:

Ստորև 2019-2020թթ. ընթացքում ներգրավված միջոցներ՝

- 2019թ. փետրվարին Blue Orchard Microfinance Fund -15 մլն ԱՄՆ դոլարի ստորադաս փոխառություն :Ներգրավված միջոցները ուղղվելու են Բանկի ընդհանուր գործունեության ֆինանսավորմանը, ինչպես նաև նպաստելու են Բանկի վարկային պորտֆելի աճին՝ մասնավորապես շեշտադրելով հաճախորդների ՓՄՁ սեգմենտը:
- 2019 հունիս EFSE 5մլն ԱՄՆ դոլար, ՓՄՁ ֆինանսավորում
- 2019 սեպտեմբեր EFSE 5 մլն ԱՄՆ դոլար, ՓՄՁ ֆինանսավորում

- 2020 ապրիլ EFSE 10 մլն ԱՄՆ դոլար, ՓՄՁ ֆինանսավորում և 2,4 մլրդ ՀՀ դրամ, հիփոթեքային վարկեր
- 2020 հուլիս EBRD 15 մլն ԱՄՆ դոլար- մասնավոր ընկերություններին աջակցության տրամադրում կորոնավիրուսային համաճարակի տնտեսական բացասական ազդեցությունը մեղմելու նպատակով:
- 2020 հուլիս MEF 5 մլն ԱՄՆ դոլար, միկրո վարկերի տրամադրում
- 2020 սեպտեմբեր IFC 5 մլն ԱՄՆ դոլար - ՓՄՁ ֆինանսավորում ԿՈՎԻԴ-19-ով պայմանավորված տնտեսական մարտահրավերները հաղթահարելու համար
- 2020 նոյեմբեր IFC 10 մլն ԱՄՆ դոլար ՓՄՁ ֆինանսավորում ԿՈՎԻԴ-19-ով պայմանավորված տնտեսական մարտահրավերները հաղթահարելու համար
- 2020 դեկտեմբեր EFSE 2,6 մլրդ ՀՀ դրամ, հիփոթեքային վարկեր

3.13. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթղթում պարտատոմսերի թողարկման հիմնական պայմանների և դրանց տնտեսական հիմնավորվածության հետ կապված որևէ խորհրդատու հանդես չի եկել:


Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են էլեկտրոնային տարբերակով:

Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.inecobank.am հասցեով:

ԲԱԺԻՆ 4: ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը



**«Ինեկորբանկ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի
ձեռքբերման**

Հայտ-հանձնարարական /իրավաբանական անձ/

Հայտը Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ)	
Իրավաբանական անձի անվանումը (ֆիրմային անվանում, կազմակերպարավական ձև)	
Պետական գրանցման տվյալները (գրանցման վկայականի համար, ամսաթիվ)	
Գրանցման և գտնվելու վայրը (Գրանցման և գտնվելու վայրի հասցեները)	
ՀՎՀՀ	
Ռեզիդենտությունը (ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)	
Հեռախոս, էլեկտրոնային հասցե*	
Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «Ինեկորբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել Բանկի թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝	
Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ քանակը թվերով (տառերով)	
Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման գինը գինը թվերով (տառերով)	
Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը** ընդհանուր գումարը թվերով (տառերով)	
Բանկային տվյալներ	
Բանկի անվանումը	
Անձի բանկային հաշվի համարը / ՀՀ դրամով /	
Անձի բանկային հաշվի համարը / ԱՄՆ դոլարով /	
Դեպո հաշիվ	
Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը	
Արժեթղթերի հաշվի համարը	

Սույնով, հավաստում ենք, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ ծանոթացել ենք վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային Ազդագրին, համաձայն ենք դրանում նշված պայմաններին, ստանձնում ենք այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու/ ակցեպտավորելու պահից, այն կհանդիսանա Կողմերիս միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ	
Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ քանակը թվերով (տառերով)	
Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը (ժամ, օր, ամիս, տարի)	

Անուն Ազգանուն

(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)

Ստորագրություն

* Ներդրողի կողմից ներկայացված էլեկտրոնային հասցեին է ուղարկվում ներկայացված հայտ-հանձնարարականի հաստատումը, ինչպես նաև արժեթղթերի հաշվից քաղվածքը:

** Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները հատուկ բանկային հաշվին են փոխանցվում են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

**«Ինեկոբանկ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի
 ձեռքբերման
 Հայտ-հանձնարարական / ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր/**

Հայտը Բանկ ներկայացման ամսաթիվը և Ժամը (օր, ամիս, տարի, ժամ)	
Հայտ ներկայացնողի անունը (անուն, ազգանուն)	
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ (անձնագրի համար)	
Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվը (Անձնագրի տրման ամսաթիվը)	
Գրանցման վայրը (Գրանցման վայրի հասցեն)	
Ռեզիդենտությունը (ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)	
Հեռախոս, էլեկտրոնային հասցե*	
Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել Բանկի թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝	
Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ քանակը թվերով (տառերով)	
Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման գինը գինը թվերով (տառերով)	
Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը ընդհանուր գումարը** թվերով (տառերով)	
Բանկային տվյալներ	
Բանկի անվանումը	
Անձի բանկային հաշվի համարը / ՀՀ դրամով /	
Անձի բանկային հաշվի համարը/ԱՄՆ դոլարով/	
Դեպո հաշիվ	
Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը	
Արժեթղթերի հաշվի համարը	

Սույնով հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:

Հաստատում եմ, որ Ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տեղեկացված էմ, որ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով***:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված պայմանագրի համաձայն, Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում

500,000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթ:

Սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու պահից, այն կհանդիսանա մեր Կողմերիս միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ	
Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ քանակը թվերով (տառերով)	
Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը (ժամ, օր, ամիս, տարի)	

Անուն Ազգանուն

(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)

Ստորագրություն

* Ներդրողի կողմից ներկայացված էլեկտրոնային հասցեին է ուղարկվում ներկայացված հայտ-հանձնարարականի հաստատումը, ինչպես նաև արժեթղթերի հաշվից քաղվածքը:

** Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները հատուկ բանկային հաշվին են փոխանցվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

***ՀՀ օրենսդրության համաձայն, անհատ ձեռնարկատերեր չի օգտվում իր պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելու հնարավորությունից:

Թողարկման վերջնական պայմաններ

_____ 2021թ.

Ինեկոբանկ ՓԲԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի
պարտատոմսեր

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ----- 2021թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են www.inecobank.am հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը)	Ինեկոբանկ ՓԲԸ
2.	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր:
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման	Մանրամասն ներկայացված է «Պարտատոմսերի

	հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	դասակարգման մասին տեղեկատվություն» կետում
6.	Թողարկման արժույթը	ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ
7.	Առաջարկի գինը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
8.	Անվանական արժեքը	100 (հարյուր) ԱՄՆ դոլար / 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
9.	Քանակը	համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի, այսինքն Թողարկման ծավալի հարաբերությունը անվանական արժեքին
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ իրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	Ինտերբանկ ՓԲԸ 2021թ. հոկտեմբերի 27-ի Խորհրդի Որոշում թիվ 260.4
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		

14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	ոչ կիրառելի
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
22.	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100 (հարյուր) ԱՄՆ դոլար / 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ

23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում են այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Չի նախատեսվում
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ոչ կիրառելի
	Ժամկետ(ներ)ը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	Ոչ կիրառելի
	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	Չի նախատեսվում
	Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ / փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ոչ կիրառելի
	Ժամկետ(ներ)ը	
	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	
	Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
	Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ	
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	Ինեկոբանկ ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Այլ տեղեկություններ	
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրին

29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող Օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է Իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Առևտրի թույլտվության հարցը կարող է նաև չբավարարվել Բորսայի կողմից: Այդ դեպքում դոլարային պարտատոմսերի տեղաբաշխումը կհամարվի չեղյալ: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ:
30.	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը չունեն վարկանիշ
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

**Գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ
Արեն Նալթակյան**

(ստորագրություն)

(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

**Ֆինանսական տնօրեն, տնօրինության անդամ
Հայկ Ոսկանյան**

(ստորագրություն)

(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ
Արտեմ Չիչյան

(ստորագրություն)

(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Ռիսկերի տնօրեն, տնօրինության անդամ
Վաղինակ Խաչատրյան

(ստորագրություն)

(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Մանրածախ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ
Լևոն Ռուբինյան

(ստորագրություն)

(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Գործառնական տնօրեն, տնօրինության անդամ
Լիլիթ Գրիգորյան

(ստորագրություն)

(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ
Արշալույս Սահակյան

(ստորագրություն)

(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում եմ
Արեն Նալբախյան Գործադիր տնօրեն

(անուն, ազգանուն)

(պաշտոն)

(ստորագրություն)

(ամսաթիվ)

«Ինեկորանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններ
Սեպտեմբերի 30, 2021թ.**

Բովանդակություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	4
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն.....	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	6
Հիմնական տնտեսական նորմատիվների մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	9

հազ. դրամ	Ծնթգ.	01/07/2021- 30/09/2021	01/01/2021- 30/09/2021	01/07/2020- 30/09/2020	01/01/2020- 30/09/2020
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	4	8,531,953	26,048,051	8,832,120	26,202,058
Տոկոսային ծախս	4	(3,831,496)	(11,182,996)	(3,864,361)	(10,957,187)
Զուտ տոկոսային եկամուտ		4,700,457	14,865,055	4,967,759	15,244,871
Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ	5	1,094,838	2,944,396	860,804	2,147,052
Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս	6	(558,620)	(1,480,804)	(417,970)	(1,198,234)
Զուտ եկամուտ միջնորդավճարների և այլ վճարների գծով		536,218	1,463,592	442,834	948,818
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով		224,359	261,887	68,740	164,506
Զուտ օգուտ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով		-	3,308	-	-
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	7	702,187	1,729,280	487,824	1,354,453
Զուտ այլ գործառնական եկամուտ	8	157,439	235,051	174,803	331,162
Գործառնական եկամուտ		6,320,660	18,558,173	6,141,960	18,043,810
Արժեզրկումից զուտ կորուստներ ֆինանսական գործիքների գծով	9	(577,637)	(4,982,741)	(3,640,334)	(7,881,507)
Գործառնական եկամուտն արժեզրկումից հետո		5,743,023	13,575,432	2,501,626	10,162,303
Անձնակազմի գծով ծախսեր		(1,227,199)	(3,751,892)	(977,761)	(3,225,837)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	10	(732,075)	(2,209,633)	(828,132)	(2,293,950)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		3,783,751	7,613,907	695,733	4,642,516
Շահութահարկի գծով ծախս		(760,631)	(1,461,901)	(138,361)	(868,613)
Ժամանակաշրջանի շահույթ		3,023,120	6,152,006	557,372	3,773,903
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ՝ առանց շահութահարկի					
<i>Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետազայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>					
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.					
- իրական արժեքի զուտ փոփոխություն		(181,190)	(341,229)	(41,818)	(144,235)
- շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար		18,897	18,897	-	-
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետազայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		(162,293)	(322,332)	(41,818)	(144,235)
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ ժամանակաշրջանի համար առանց շահութահարկի		(162,293)	(322,332)	(41,818)	(144,235)
Ընդամենը համապարփակ եկամուտ ժամանակաշրջանի համար		2,860,827	5,829,674	515,554	3,629,668

3-ից 64-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Տնօրինության կողմից 2021թ. հոկտեմբերի 15-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Հաշվետվության վավերացման ամսաթիվ



Ա. Նալբախյան

Ա. Սահակյան

15/10/2021

հազ. դրամ

	Ծնթգ.	2021թ.	2020թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	62,739,707	69,090,934
Ներդրումային արժեթղթեր	12		
-Բանկի կողմից պահվող		54,513,748	58,929,428
-Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		31,299,030	11,676,412
Բանկերի նկատմամբ այլ պահանջներ	13	8,506,604	10,923,190
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	14	2,055,745	3,724,166
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	15	205,470,325	216,462,240
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		-	77,619
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	7,674,283	7,389,430
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	17	2,037,949	1,921,338
Այլ ակտիվներ	18	7,791,227	7,630,905
Ընդամենը ակտիվներ		382,088,618	387,825,662
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Բանկերի ավանդներ և մնացորդներ		3,170	12,466
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	19	28,611,994	11,037,131
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	20	230,754,650	220,478,528
Թողարկված պարտքային արժեթղթեր	21	5,527,482	10,961,859
Այլ փոխառություններ	22	46,796,074	72,134,597
Ստորադաս փոխառություններ	22	7,316,557	8,092,844
Ընթացիկ հարկային պարտավորություն		583,396	1,561,678
Հետաձգված հարկային պարտավորություն		481,051	461,574
Վարձակալության գծով պարտավորություններ	17	2,226,224	2,074,462
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		15,207	1,385
Այլ պարտավորություններ	23	3,657,463	3,223,345
Ընդամենը պարտավորություններ		325,973,267	330,039,869
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	24		
Բաժնետիրական կապիտալ		14,545,680	14,545,680
Էմիսիոն եկամուտ		7,753,923	7,753,923
Գլխավոր պահուստ		3,500,000	3,500,000
Ծենքերի վերագնահատման պահուստ		1,718,938	1,737,869
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ		179,385	501,717
Զբաղիված շահույթ		28,417,425	29,746,604
Ընդամենը սեփական կապիտալ		56,115,351	57,785,793
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		382,088,618	387,825,662

հազ. դրամ	Ծնթգ.	01/01/2021- 30/09/2021	01/01/2020- 30/09/2020
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		25,987,822	26,175,790
Վճարված տոկոսներ		(11,162,506)	(8,868,041)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ		2,953,843	2,138,977
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ		(1,486,726)	(1,197,864)
Չուտ մուտքեր իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից		353,328	197,142
Չուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից		1,953,626	1,531,914
Այլ գործառնական մուտքեր		213,693	327,491
Այլ ընդհանուր վարչական ծախսերի և անձնակազմի գծով ծախսերի վճարումներ		(4,789,605)	(4,465,026)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		1,492,485	(2,666,530)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ		(6,574,404)	288,160
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		(769,701)	13,346,086
Այլ ակտիվներ		(248,597)	619,419
Գործառնական պարտավորությունների (նվազում)/աճ			
Բանկերի ավանդներ և մնացորդներ		381,580	(4,381,695)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		17,566,171	13,000,000
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		18,373,051	18,114,891
Այլ պարտավորություններ		659,235	(1,290,465)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը		28,654,236	12,267,711
Վճարված շահութահարկ		(2,389,946)	(772,027)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր		26,264,290	11,495,684
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,116,093)	(858,072)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք		23,208	-
Ներդրումային արժեթղթեր		(16,249,059)	(40,602,538)
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր		(17,341,944)	(41,460,610)
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Վճարված շահաբաժիններ		(7,500,116)	-
Այլ փոխառություններ և ստորադաս պարտավորություններ		(23,258,833)	7,506,881
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր		(5,017,551)	-
Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ		(479,237)	(423,700)
Ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված)/ ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր		(36,255,737)	7,083,181
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		(11,084,332)	17,720,793
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(4,027,982)	410,267
Արժեզրկման գծով պահուստի փոփոխությունների ազդեցություն		(6,487)	(6,839)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ		77,858,508	49,816,056
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	11	62,739,707	67,940,277

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Հոդատարածքի և շենքերի վերագնահա- տումից աճ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	14,545,680	7,753,923	3,500,000	1,737,869	501,717	29,746,604	57,785,793
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք							
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	-	-	-	6,152,006	6,152,006
Այլ համապարփակ վնաս							
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս							
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.							
– իրական արժեքի գույտ փոփոխություն՝ առանց շահութահարկի	-	-	-	-	(341,229)	-	(341,229)
– շահույթ կամ վնաս վերադասակարգված գույտ գումար	-	-	-	-	18,897	-	18,897
Ընդամենը այլ համապարփակ վնաս	-	-	-	-	(322,332)	-	(322,332)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք ժամանակաշրջանի համար	-	-	-	-	(322,332)	6,152,006	5,829,674
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում							
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-	(7,500,116)	(7,500,116)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	-	-	-	-	-	(7,500,116)	(7,500,116)
Հոդվածներ, որոնք երբեք հետագայում չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս							
Փոխանցում վերագնահատումից աճից չբաղիված շահույթ	-	-	-	(18,931)	-	18,931	-
Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2021թ.	14,545,680	7,753,923	3,500,000	1,718,938	179,385	28,417,425	56,115,351

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Հոդատարածքի և շենքերի վերագնահա- տումից աճ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	14,545,680	7,753,923	3,500,000	1,763,111	1,049,193	27,671,710	56,283,617
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք							
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	-	-	-	3,773,903	3,773,903
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս							
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.							
– իրական արժեքի գույտ փոփոխություն՝ առանց շահութահարկի	-	-	-	-	(144,235)	-	(144,235)
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	(144,235)	-	(144,235)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք ժամանակաշրջանի համար	-	-	-	-	(144,235)	3,773,903	(3,629,668)
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում							
Վճարված շահաբաժիններ	-	-	-	-	-	(2,823,680)	(2,823,680)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	-	-	-	-	-	(2,823,680)	(2,823,680)
Հոդվածներ, որոնք երբևէ հետագայում չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս							
Փոխանցում վերագնահատումից աճից չբաղխված շահույթ	-	-	-	(18,931)	-	18,931	-
Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2020թ.	14,545,680	7,753,923	3,500,000	1,744,180	904,958	28,640,864	57,089,605

ՀՐԱՊԱՐԱԿՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ		(եռամսյակային)		
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ		Բանկի անվանումը 01/07/2021	ԻՆԵԿՈԲԱՆԿ թ-ից 30/09/2021 թ.	
Նորմատիվներ		Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը, հազ.դրամ		22,299,603	50,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը, հազ.դրամ		58,919,019	30,000,000	Խախտում առկա չէ
Ն11 Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը		15.9%	9.0%	Խախտում առկա չէ
Ն12 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը		18.3%	12.0%	Խախտում առկա չէ
Ն21 Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը		36.1%	15.0%	Խախտում առկա չէ
Ն211 Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը		41.2%	4.0%	Խախտում առկա չէ
Ն22 Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցախանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը		112.1%	60.0%	Խախտում առկա չէ
Ն221 Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ցախանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը		109.3 %	10.0%	Խախտում առկա չէ
Ն23 Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)		215.2%	100.0%	Խախտում առկա չէ
Ն23 (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)		359.4%	80.0%	Խախտում առկա չէ
Ն23 (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (յուրաքանչյուր երկրորդ խմբի նշանակալի արժույթի գծով)		-	80.0%	Խախտում առկա չէ
Ն24 Բանկի հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև սահմանային հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)		139.9%	100.0%	Խախտում առկա չէ
Ն24 (FX) Բանկի հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև սահմանային հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)		163.9%	60.0%	Խախտում առկա չէ
Ն24 (FX) Բանկի հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև սահմանային հարաբերակցությունը (յուրաքանչյուր երկրորդ խմբի նշանակալի արժույթի գծով)		-	60.0%	Խախտում առկա չէ
Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը		12.3%	20.0%	Խախտում առկա չէ
Ն32 Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը		50.8%	500.0%	Խախտում առկա չէ
Ն41 Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը		0.2%	5.0%	Խախտում առկա չէ
Ն42 Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը		3.3%	20.0%	Խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը				
ՀՀ դրամով		X	4.0%	Խախտում առկա չէ
ԱՄՆ դոլարով		X	10% դրամով 8% ԱՄՆ դոլարով	Խախտում առկա չէ Խախտում առկա չէ
Եվրոյով		X	10% դրամով 8% Եվրոյով	Խախտում առկա չէ Խախտում առկա չէ
Այլ Արժույթով		X	10% դրամով 8% ԱՄՆ դոլարով	Խախտում առկա չէ Խախտում առկա չէ
Արտարժույթային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը (առանց ածանցյալի)*		2.14%	10.0%	Խախտում առկա չէ
Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը՝				
ԱՄՆ դոլարով		2.09%	7.0%	Խախտում առկա չէ
Եվրոյով		0.09%	7.0%	Խախտում առկա չէ
Ռուսական ռուբլիով		-	7.0%	Խախտում առկա չէ
Այլ		X	X	Խախտում առկա չէ

*) Ածանցյալով կազմում է համապատասխանաբար 2.14%, 2.09%, 0.09%, - :

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Ինեկոբանկ» ՓԲԸ-ն («Բանկ») հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն 1996թ-ին: Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի, երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով և արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և Հայաստանի Հանրապետության ավանդների երաշխավորման համակարգի անդամ է:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0001, Թումանյան փ. 17:

Բանկն ունի 25 մասնաճյուղ և գլխամասային գրասենյակ: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկի բաժնետերերն են՝ պրն. Ավետիս Բալյանը (35.40%), պրն. Կարեն Սաֆարյանը (30.60%) և agRIF Cooperatief U.A. (10.00%): Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները բացահայտված են Ծանոթագրություն 29-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Բացի այդ, Լեռնային Ղարաբաղում 2020թ. սեպտեմբերին վերսկսված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, և COVID-19 համավարակն էլ ավելի են մեծացրել գործարար միջավայրում գործունեություն իրականացնելու պայմանների հետ կապված անորոշությունը:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

(բ) Զափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով, և հողատարածքի և շենքերի, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով:

(զ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: 2021թ. սեպտեմբերի 30-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն էին համապատասխանաբար 484.20 դրամ և 561.43 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և 589.68 դրամ և 641.11 դրամ 1 եվրոյի համար:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 4 (ե) (i),
- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն և հաստատում – Ծանոթագրություն 25 (զ):

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալներն ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի համար, այդ թվում՝ ապագայամետ տեղեկատվության ներառումը – Ծանոթագրություն 25 (զ),
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի գնահատում – Ծանոթագրություն 30:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների ու վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, որոնց հետ կապված որոշում է կայացվել իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ են կանխիկը և ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): ՀՀ ԿԲ-ում պահվող պարտադիր պահուստային ավանդը չի համարվում դրամական միջոցների համարժեք, քանի որ դրանից միջոցների ելքագրումը սահմանափակված է: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը գեղջում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 3 (ե) (iv) կետում:

Ներկայացում

Ծախսերի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Ծախսերի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

(դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում (տես Ծանոթագրություն 3 (գ)):

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները և վաճառքների գծով միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

i. Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները.

- արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
- ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
- արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և վնասներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այս բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այսպես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՛ հավաքված դրամական հոսքերի վրա):

- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվներ վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այս պայմանը: Գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
- հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

Բանկն ունի ֆիքսված տոկոսադրույքով երկարաժամկետ վարկերի պորտֆել, որոնց հետ կապված հնարավորություն ունի վերանայել տոկոսադրույքը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հիմնական տոկոսադրույքի փոփոխության դեպքում: Վարկառուներն հնարավորություն ունենում են կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Բանկը որոշել է, որ այս վարկերի պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, քանի որ այս հնարավորությունից օգտվելու դեպքում տոկոսադրույքն այնպես է փոփոխվում, որ դառնում է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի համար հատուցում: Փոխարենը, Բանկն այս վարկերը դիտարկում է որպես ըստ իրենց էության լողացող տոկոսադրույքով վարկեր (տես Ծանոթագրություն 4 (ե) (iii)):

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների, դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններին դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

ii. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Բանկը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

iii. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է, արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորուստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Բանկի կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Բանկն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Բանկը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը կիրառում է կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը:

Եթե դրամական հոսքերի փոփոխությունը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն փոփոխության նպատակն է առավելագույն չափով հետ ստանալ/վերականգնել ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Բանկը մտադիր է այնպես փոփոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրսգրվի նախքան փոփոխությունը կատարելը (տես՝ ստորև դուրսգրման քաղաքականություն): Այս մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ չեն որ բավարարվում են նման դեպքերում: Բանկն իրականացնում է նաև որակական գնահատում գնահատելու համար փոփոխության նշանակալի լինելը:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես փոփոխումից օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում: Լողացող

տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Փոփոխման շրջանակում ցանկացած կրած ծախսում կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման փոփոխությունն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատում տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Բանկը հաշվառում է տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապահանջում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր փոփոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի գեղջված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները գուտ ստացված վճարներով և գեղջված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի գեղջված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության փոփոխությունը չի բավարարում ապահանջման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, գեղջելով փոփոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացորդային ժամանակահատվածում: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

iv. Արժեզրկում

Տես նաև Ծանոթագրություն 25 (գ):

Բանկը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար.

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր և
- փոխատվության հանձնառություններ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Բանկը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով.

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ և
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր (տես Ծանոթագրություն 25 (գ)):

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտագանգման դեպքերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտագանգման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, բայց ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված չեն) և 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված են):

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ.

- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ*՝ որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (դրամական պակասորդը պայմանագրին համապատասխան Բանկին հասանելիք դրամական հոսքերի և Բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ*՝ որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերություն,
- *չօգտագործված փոխատվության հանձնառություններ*՝ որպես հետևյալ նշվածների միջև տարբերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վնասման Բանկին, եթե օգտագործում է փոխառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Բանկն ակնկալում է ստանալ,
- *ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք փոխհատուցում են տիրապետողին կրած պարտքային կորուստը՝ հանած այն գումարները, որոնք Բանկն ակնկալում է հետ ստանալ:

Տես նաև Ծանոթագրություն 25 (գ):

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվն ապաճանաչելու անհրաժեշտությունը (տես Ծանոթագրություն 3 (ե) (ii)), և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում (տես Ծանոթագրություն 25 (գ)):
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը գեղջվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտագանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսննկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, ֆիզիկական անձանց տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Պետական պարտատոմսերում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկունակության վարկանիշային գործակալությունների գնահատումները:
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանականությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով:
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը: Մա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- *ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝* որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- *փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր՝* սովորաբար որպես պահուստ,
- *երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին՝* Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և
- *իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝* ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Բանկը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեքկույմից գուտ կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ/պարտքերի գանձման միջոցներ՝ վճարման ենթակա գումարների փոխհատուցման Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

Ֆինանսական ակտիվի անբաժանելի մաս չհանդիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բանկը գնահատում է, արդյոք ֆինանսական երաշխավորության պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, որը հաշվառվում է որպես այդ գործիքի բաղադրիչ, թե առանձին հաշվառվող պայմանագիր: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- արդյոք երաշխավորությունը նախատեսված է պարտքային գործիքի պայմանագրի պայմաններով,
- արդյոք երաշխավորությունը պահանջվում է պարտքային գործիքի պայմանագիրը կարգավորող օրենքներով և կանոնակարգերով,
- արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և
- արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ փոխառուի խմբի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված վճարվելիք ցանկացած հավելավճար հաշվառվում է որպես այդ ակտիվի ձեռքբերման գործարքի գծով ծախսում: Պարտքային գործիքի իրական արժեքը և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Բանկը հաշվի է առնում երաշխավորությամբ ապահովվող պաշտպանության ազդեցությունը:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը, որի համար ստացվել է երաշխավորությունը, ոչ պարտքային առումով արժեզրկված է և ոչ էլ ենթարկվել է պարտքային ռիսկի նշանակալի աճի երաշխավորությունը ստանալու պահին: Այս ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը փոխհատուցման իրավունքի գծով օգուտները կամ կորուստները ներկայացնում է շահույթում կամ վնասում՝ «ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ» հոդվածում:

(գ) Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» հոդվածը ներառում է.

- ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերը (տես Ծանոթագրություն 3 (ե) (i)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(ե) Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «ներդրումային արժեթղթեր» հոդվածը ներառում է.

- ամորտիզացված արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերը (տես Ծանոթագրություն 3 (դ) (i)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերը (տես Ծանոթագրություն 3 (դ) (i)) և
- բաժնային ներդրումային արժեթղթերը, որոնք նախորոշված են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող (տես Ծանոթագրություն 3 (դ) (i)):

(ը) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր, այլ փոխառություններ և ստորադաս պարտավորություններ

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը, այլ փոխառությունները և ստորադաս պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, դ:

(թ) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դերքիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ նշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՄ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից (տես Ծանոթագրություն 3 (ե) (iv)) և սկզբնապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՄ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Բանկը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Բանկը ճանաչում է կորստի պահուստ (տես Ծանոթագրություն 3 (ե) (iv)) ՖՀՄՄ 9-ի համաձայն:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են պահուստների կազմում:

(ժ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով կրեդիտորական պարտքերի կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(ի) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Վերագնահատում

Հոդատարածքը և շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հոդատարածքի և շենքերի իրական արժեքների փոփոխություններից: Եթե հոդատարածքի և շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե հոդատարածքի և շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(iii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով առանձին ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

– շենքեր	50 տարի
– համակարգիչներ և կապի սարքավորումներ	5-ից 7 տարի
– վարձակալված գույքի բարելավում	5 տարի
– փոխադրամիջոցներ	7 տարի
– այլ	5-ից 7 տարի

(i) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման և ներդրման ծախսումները կապիտալացվում են համապատասխան ոչ նյութական արժեքի ինքնարժեքին:

Ձեռք բերված համակարգչային ծրագրերի լիցենզիաները կապիտալացվում են հիմք ընդունելով համապատասխան ծրագրի ձեռքբերման և գործարկման համար կատարված ծախսումները:

Ոչ նյութական ակտիվների գծով հետագա ծախսումները կապիտալիզացվում են միայն այն դեպքում, երբ ավելացնում են այն ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են:

Համակարգչային ծրագրերի մշակման կամ սպասարկման հետ կապված ծախսումները ճանաչվում են որպես կրած ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները կազմում են 10 տարի:

(իւ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են գեղջելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը գեղջման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը հատուկ ռիսկերը:

(ծ) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները, ներառյալ հարկերը, ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

(ii) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես Էմիսիոն եկամուտ:

(iii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(կ) Առգրավված գրավ

Առգրավված գույքը հաշվառվում է սկզբնական արժեքից և գույք իրացման արժեքից նվազագույնով:

(հ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը գեղջվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով գեղջման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ձ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային գեղջերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր

տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

(դ) Սեզմենտային հաշվետվություններ

Գործառնական սեզմենտը Բանկի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեությունում, որից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեզմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Ղեկավարությունը գտնում է, որ Բանկը բաղկացած է մեկ գործառնական սեզմենտից:

(ե) Հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ

Մի շարք նոր ստանդարտներ և ստանդարտների մկնաբանություններ գործում են 2021թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների և մեկնաբանությունների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

4 Չուտ տոկոսային եկամուտ

հազ. դրամ	01/07/2021- 30/09/2021	01/01/2021- 30/09/2021	01/07/2020- 30/09/2020	01/01/2020- 30/09/2020
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ				
Հանախորդներին տրված վարկեր և փոխառություններ	6,870,694	21,251,358	7,433,480	23,223,505
Ներդրումային արժեթղթեր	1,600,785	4,569,713	1,314,230	2,712,855
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	58,498	221,633	80,400	220,431
Այլ	1,976	5,347	4,010	45,267
Ընդամենը տոկոսային եկամուտ	8,531,953	26,048,051	8,832,120	26,202,058
Տոկոսային ծախս				
Հանախորդներին ընթացիկ հաշիվներ և ավանդներ	2,061,284	6,184,024	2,305,650	6,498,406
Այլ փոխառություններ	1,001,238	3,091,496	1,078,443	3,104,319
Ստորադաս փոխառություններ	188,188	582,436	186,341	553,376
Թողարկված պարտքային արժեթղթեր	134,787	477,046	168,994	504,061
Վարձակալության գծով պարտավորություններ	58,006	171,859	60,079	177,334
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	386,544	674,686	64,768	101,213
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,449	1,449	86	18,478
Ընդամենը տոկոսային ծախս	3,831,496	11,182,996	3,864,361	10,957,187
Չուտ տոկոսային եկամուտ	4,700,457	14,865,055	4,967,759	15,244,871

5 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ

	01/07/2021- 30/09/2021	01/01/2021- 30/09/2021	01/07/2020- 30/09/2020	01/01/2020- 30/09/2020
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	608,461	1,592,407	409,461	1,009,779
Դրամական փոխանցումներ	183,682	497,582	158,700	414,806
Հաշիվների սպասարկում և հեռավար համակարգի ծառայություններ	121,751	329,883	120,702	303,783
Երաշխավորությունների և ակրեդիտիվների տրամադրում	43,064	131,427	61,416	139,130
Դրամական միջոցների կանխիկացում	67,236	183,688	46,813	118,572
Այլ	70,644	209,409	63,712	160,982
	1,094,838	2,944,396	860,804	2,147,052

6 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս

	01/07/2021- 30/09/2021	01/01/2021- 30/09/2021	01/07/2020- 30/09/2020	01/01/2020- 30/09/2020
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	404,848	1,149,421	286,447	812,505
Միջնորդավճարների տեսքով ծախսեր տերմինալների գծով	-	1	43,907	128,908
Հաշիվների սպասարկման ծառայության վճար	50,891	140,458	47,508	129,027
Այլ	102,881	190,924	40,108	127,794
	558,620	1,480,804	417,970	1,198,234

7 Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

	01/07/2021- 30/09/2021	01/01/2021- 30/09/2021	01/07/2020- 30/09/2020	01/01/2020- 30/09/2020
Զուտ օգուտ արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից	848,892	1,953,629	542,573	1,531,914
Զուտ կորուստ արտարժույթի վերագնահատումից	(146,705)	(224,349)	(54,749)	(177,461)
	702,187	1,729,280	487,824	1,354,453

8 Զուտ այլ գործառնական եկամուտ

	01/07/2021- 30/09/2021	01/01/2021- 30/09/2021	01/07/2020- 30/09/2020	01/01/2020- 30/09/2020
Եկամուտ տույժերից և տուգանքներից	74,930	225,654	173,940	323,474
Այլ զուտ գործառնական եկամուտ/(ծախս)	82,509	9,397	863	7,688
	157,439	235,051	174,803	331,162

9 Արժեզրկումից զուտ կորուստներ ֆինանսական գործիքների գծով

	01/07/2021- 30/09/2021	01/01/2021- 30/09/2021	01/07/2020- 30/09/2020	01/01/2020- 30/09/2020
Հաճախորդներին տրված վարկեր	548,455	4,943,293	3,496,714	7,735,032
Ներդրումային արժեթղթեր	16,645	27,920	81,906	101,885
Փոխատվության հանձնառություններ	13,412	19,393	57,650	47,950
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(2,083)	(1,317)	2,980	(533)
Բանկերից ստացվելիք գումարներ	-	-	863	863
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	1,662	(6,564)	(1,783)	(1,885)
Այլ ֆինանսական ակտիվներ	(453)	17	2,004	(1,805)
	577,637	4,982,741	3,640,334	7,881,507

10 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	01/07/2021- 30/09/2021	01/01/2021- 30/09/2021	01/07/2020- 30/09/2020	01/01/2020- 30/09/2020
Մաշվածություն և ամորտիզացիա*	394,307	1,171,920	366,699	1,054,761
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	50,623	189,124	90,831	270,019
Վնասումներ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	84,254	245,016	85,062	250,411
Շուկայավարում և հասարակայնության հետ կապեր	26,472	66,231	22,461	91,700
Գրասենյակային ծախսեր	17,308	45,076	23,759	84,903
Ապահովագրություն	7,896	23,413	26,263	76,669
Մասնագիտական ծառայություններ	15,548	51,603	18,173	59,762
Կապի ծառայություններ	16,938	49,631	20,384	60,684
Անվտանգության ծառայություն	19,188	57,828	17,712	51,961
Գործառնական վարձակալության գծով ծախս	4,489	15,628	5,380	15,674
Այլ	95,052	294,163	151,408	277,406
	732,075	2,209,633	828,132	2,293,950

* 2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ժամանակաշրջանի մաշվածության և ամորտիզացիայի գումարում ներառված 342,529 հազար դրամ գումարը (2020թ-ին՝ 339,841 հազար դրամ) վերաբերում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ամորտիզացիային՝ ՖՀՄՄ 16 «Վարձակալություններ» պահանջների համաձայն (տես Ծանոթագրություն 17):

11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	30/09/2021	31/12/2020
Կանխիկը դրամարկղում	20,222,545	13,740,264
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	36,694,740	48,072,786
Նոստրո հաշիվներ այլ բանկերում	5,828,909	7,285,688
Ընդամենը համախառն դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	62,746,194	69,098,738
Պարտքային կորստի գծով պահուստ	(6,487)	(7,804)
Ընդամենը զուտ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	62,739,707	69,090,934

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2021թ. սեպտեմբերի 30-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2021թ. սեպտեմբերի 30-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի բանկերում տեղաբաշխված միջոցներ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում

ՀՀ ԿԲ-ում պահվող նոստրո հաշիվները վերաբերում են վճարահաշվարկային գործունեությանը (տես Ծանոթագրություն 13) և անհրաժեշտության դեպքում կարող են ելքագրվել:

12 Ներդրումային արժեթղթեր

(ա) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

հազ. դրամ	30/09/2021	31/12/2020
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ կառավարության արժեթղթեր	280,884	4,969,969
Ընդամենը պետական պարտատոմսեր	280,884	4,969,969
Կորպորատիվ պարտատոմսեր		
- առանց վարկանիշի	1,701,077	345,962
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	1,701,077	345,962
Բաժնային գործիքներ		
Կորպորատիվ բաժնետոմսեր	30,946	31,055
Ընդամենը Բանկի կողմից պահվող արժեթղթեր	2,012,907	5,346,986
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ կառավարության արժեթղթեր	6,994,053	6,104,461
Ընդամենը վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված արժեթղթեր	6,994,053	6,104,461
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	9,006,960	11,451,447

(բ) Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

հազ. դրամ	30/09/2021	31/12/2020
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ կառավարության արժեթղթեր	39,905,804	45,020,177
- Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	10,654,713	6,999,909
Ընդամենը պետական պարտատոմսեր	50,560,517	52,020,086
Կորպորատիվ պարտատոմսեր		
ՀՀ Կորպորատիվ պարտատոմսեր	2,112,473	1,690,937
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	2,112,473	1,690,937
Ընդամենը Բանկի կողմից պահվող արժեթղթեր	52,672,990	53,711,023
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ կառավարության արժեթղթեր	24,304,977	5,584,796
Ընդամենը վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված արժեթղթեր	24,304,977	5,584,796
Ընդամենը համախառն ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	76,977,967	59,295,819
Պարտքային կորստի գծով պահուստ	(172,149)	(141,426)
Ընդամենը զուտ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	76,805,818	59,154,393

Բանկը վաճառում է արժեթղթեր հետգնման պայմանագրերի շրջանակում և ձեռք է բերում արժեթղթեր վերավաճառքի պայմանագրերի շրջանակում:

Հետգնման պայմանագրերի շրջանակում վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին, և Բանկը ստանում է դրամական միջոցներ դրա դիմաց: Պայմանագրային կողմերը կարող են վերագրավադրել կամ վերավաճառել այս ֆինանսական ակտիվները Բանկի կողմից պարտագանցման բացակայության դեպքում, սակայն պայմանագրային կողմը պարտավոր է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ժամկետի ավարտին: Բանկը որոշել է, որ պահպանում է այս արժեթղթերի հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, այդ իսկ պատճառով, չի ապահովում դրանք: Ստացված դրամական միջոցները ճանաչվում են որպես ֆինանսական ակտիվ, իսկ գրավի ձեռքբերման գինը մարելու պարտականության գծով ճանաչվում է ֆինանսական պարտավորություն և ներառվում է հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներում (Ծանոթագրություն 19):

Այս գործարքներն իրականացվում են փոխառության, արժեթղթերի փոխառության և փոխառություն ստանդարտ գործառնություններին բնորոշ պայմաններով:

Բոլոր ներդրումային արժեթղթերը ամբողջությամբ դասված են 1-ին փուլ:

13 Բանկերի նկատմամբ այլ պահանջներ

հազ. դրամ

	30/09/2021	31/12/2020
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ—ում	8,477,281	10,811,270
Բանկերին տրված փոխառություններ	22,405	101,865
Կանոնավոր կերպով գնման պայմանագիր. սիդթ գործարքներ արտարժույթի	6,918	10,055
Ընդամենը բանկերին նկատմամբ այլ պահանջներ	8,506,604	10,923,190

(ա) Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում

Մնացորդները ՀՀ ԿԲ-ում ներառում են վարկային քարտերով գործառնությունների համար ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցը, որը ոչ տոկոսակիր ավանդ է, որը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն և որի ելքագրումը սահմանափակված է:

Համաձայն ՀՀ օրենսդրության Բանկերից պահանջվում է ՀՀ ԿԲ-ում իրականացնել պարտադիր պահուստավորում ներգրավված միջոցների համար: ՀՀ դրամով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստը կազմում է 2% և ամբողջությամբ պահվում է ՀՀ դրամով: Արտարժույթով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստը կազմում է 18%, որից 10%-ը պահվում է ՀՀ դրամով, իսկ 8%-ը՝ ներգրավված միջոցների համապատասխան արտարժույթով (2019թ-ին՝ 12%՝ ՀՀ դրամով և 6%՝ ներգրավված միջոցների համապատասխան արտարժույթով): ՀՀ դրամով պահվող ավանդը ելքագրելու Բանկի իրավունքը չի սահմանափակվում օրենսդրությամբ, սակայն եթե Բանկը չի ապահովում պահուստի նվազագույն միջին օրական գումարը, վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ: ՀՀ դրամով պահվող պարտադիր պահուստները դասակարգվում են որպես դրամական միջոցներ և դրանց դրամական համարժեքներ (տես Ծանոթագրություն 12), քանի որ կարող են ելքագրվել անհրաժեշտության դեպքում:

Արտարժույթով պահվող պարտադիր պահուստի համար Բանկն պարտավոր է ապահովել նվազագույն օրական մնացորդ: Այս պահուստները չեն համարվում դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և ներառված են բանկերի նկատմամբ այլ պահանջների կազմում: Պարտադիր օրական նվազագույն պահուստ ապահովելու պահանջն ուժի մեջ է մտել 2019թ-ին:

(բ) Բանկերի նկատմամբ այլ պահանջների կենտրոնացում

2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ, Բանկը չունի պայմանագրային կողմ հանդիսացող բանկեր (2020թ-ին նման բանկեր չկային), բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, որոնց գծով մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

(զ) Բանկերի նկատմամբ այլ պահանջների պարտքային որակ

Բանկերի նկատմամբ այլ պահանջները ժամկետանց կամ արժեզրկված չեն և ամբողջությամբ դասված են 1-ին փուլ: Այլ պահանջները չափվում են ամորտիզացված արժեքով: Այս մնացորդների գծով ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից էական գումար չեն ներկայացնում, այդ իսկ պատճառով, Բանկը չի ճանաչել պարտքային կորստի պահուստ:

14 Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

հազ. դրամ

	30/09/2021	31/12/2020
Հայկական բանկերից ստացվելիք գումարներ, առանց վարկանիշի	1,339,280	3,209,502
Փոքր և միջին չափի հայկական ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարներ, առանց վարկանիշի	720,899	525,662
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք համախառն գումարներ	2,060,179	3,735,164
Պարտքային կորստի գծով պահուստ	(4,434)	(10,998)
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գույք գումարներ	2,055,745	3,724,166

2021թ. սեպտեմբերի 30-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի պայմանագրային կողմ հանդիսացող բանկ կամ ֆինանսական կազմակերպություն, որի գծով մնացորդները գերազանցեն Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դերիտորական պարտքերը վերագրելի են խոշոր հայկական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին: Բոլոր գումարները դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով:

(ա) Ակտիվների համար որպես ապահովություն ընդունված գրավ

2021թ. սեպտեմբերի 30-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված էին հետևյալ իրական արժեքով արժեթղթերը:

հազ. դրամ

	30/09/2021	31/12/2020
ՀՀ կառավարության արժեթղթեր	2,259,156	3,843,418
Կորպորատիվ պարտատոմսեր	103,850	96,786
Ընդամենը արժեթղթերի իրական արժեք	2,363,006	3,940,204

15 Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվածություններ

հազ. դրամ	30/09/2021	31/12/2020
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր		
Վարկեր խոշոր ընկերություններին	63,945,118	63,667,064
Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	51,968,058	57,284,491
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	115,913,176	120,951,555
Ֆիզիկական անձանց տրված վարկեր		
Սպառողական վարկեր	46,683,493	64,623,958
Հիփոթեքային վարկեր	33,896,919	26,972,293
Վարկային քարտեր	8,093,568	8,609,572
Ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր	7,703,700	6,190,336
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված վարկեր	96,377,680	106,396,159
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված համախառն վարկեր	212,290,856	227,347,714
Պարտքային կորստի գծով պահուստ	(6,820,531)	(10,885,474)
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված զուտ վարկեր	205,470,325	216,462,240

(ա) Գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների վերլուծություն

Իրավաբանական անձանց տրված վարկեր

Բանկը որպես կանոն գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական անձանց տրված վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների բնույթի վերաբերյալ (առանց արժեզրկման):

	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	
հազ. դրամ	30/09/2021	31/12/2020
Դրամական միջոցներ և ավանդներ	1,232,627	1,601,043
Անշարժ գույք	103,556,795	106,979,595
Փոխադրամիջոցներ	594,351	613,996
Սարքավորումներ	3,618,730	3,738,338
Պաշարներ	1,138,731	1,176,369
Անձնական երաշխավորություններ	3,882,808	4,011,144
Այլ գրավ	515,874	532,925
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	114,539,916	118,653,410

Ղեկավարությունը գտնում է, որ վարկերի, այդ թվում՝ 3-րդ փուլ դասված վարկերի իրական արժեքը պակաս չէ առանձին վարկերի հաշվեկշռային արժեքից:

Բանկն ունի վարկեր, որոնց համար գրավի իրական արժեքը գնահատվել է վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ և չի վերանայվել՝ հետագա փոփոխություններն արտացոլելու համար, ինչպես նաև վարկեր, որոնց գրավի իրական արժեքը չի որոշվել: Որոշ վարկերի համար գրավի իրական արժեքը վերանայվել է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գրավի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է կախված այն փաստից, թե երբ է այն գնահատվել, եթե նման գնահատում իրականացվել է:

Մի քանի տեսակի գրավով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել տեղին է արժեզրկման գնահատման համար: Ֆիզիկական անձանցից, օրինակ՝ ՓՄՁ վարկառուների բաժնետերերից ստացված երաշխավորությունները չեն դիտարկվում արժեզրկման գնահատման նպատակների համար:

Ոչ ժամկետանց և չարժեզրկված վարկերի վերադարձելիությունը հիմնականում կախված է վարկառուների վճարունակությունից, այլ ոչ գրավի արժեքից, և Բանկի համար պարտադիր չէ վերանայել գրավի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆիզիկական անձանց տրված վարկեր

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներառում են սպառողական վարկերը, վարկային քարտերը, հիփոթեքային և այլ վարկերից: Սպառողական վարկերը, վարկային քարտերը և այլ վարկերը (բացառությամբ ոսկու գրավով վարկերի) հիմնականում գրավով ապահովված չեն:

Հիփոթեքային վարկեր

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Բանկի քաղաքականության համաձայն՝ հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 70% վարկ/արժեք հարաբերակցությամբ՝ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ: Անշարժ գույքի գրավով հիփոթեքային վարկերի իրական արժեքը առնվազն հավասար է առանձին վարկերի հաշվեկշռային արժեքներին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման ամսաթվին որոշված արժեքները:

(բ) Պարտքային կորստի գծով պահուստի գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրություններ և դատողություններ

Պարտքային կորստի գծով պահուստի գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրությունները և դատողությունները ներկայացված են Ծանոթագրություն 25 (բ) կետում:

հազ. դրամ				30 Սեպտեմբեր, 2021
	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Չամբյուղ 1	197,444,954	(1,948,804)	195,496,150	1.0%
Չամբյուղ 2	8,399,394	(1,905,358)	6,494,036	22.7%
Չամբյուղ 3	6,446,508	(2,966,369)	3,480,139	46.0%
Ընդամենը	212,290,856	(6,820,531)	205,470,325	3.21%

հազ. դրամ				31 Դեկտեմբեր, 2020
	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Չամբյուղ 1	202,988,428	(1,920,831)	201,067,597	0.9%
Չամբյուղ 2	12,473,901	(3,171,812)	9,302,089	25.4%
Չամբյուղ 3	11,885,386	(5,792,832)	6,092,554	48.7%
Ընդամենը	227,347,715	(10,885,475)	216,462,240	4.7%

(գ) Գրավադրված ակտիվներ

2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ 17,280,995 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 16,053,004 հազար դրամ) ծառայում են որպես գրավ այլ փոխառությունների համար (տես Ծանոթագրություն 23):

(դ) Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության հետևյալ ճյուղերում.

հազ. դրամ

	30/09/2021	31/12/2020
Առևտուր	51,921,620	57,388,551
Արդյունաբերություն	15,165,923	14,546,316
Սննդի և խմիչքի արտադրություն	16,538,540	17,266,297
Տուրիզմ, հյուրանոցային և ռեստորանային ծառայություններ	3,152,764	4,004,593
Տրանսպորտ և կապ	7,445,508	7,211,698
Էներգետիկայի ոլորտ	1,972,091	1,739,873
Շինարարություն	8,501,272	7,033,201
Գյուղատնտեսություն, անտառապահություն և փայտամշակում	845,869	1,149,058
Այլ	10,369,589	10,611,968
Ֆիզիկական անձանց տրված վարկեր	96,377,680	106,396,160
	212,290,856	227,347,714
Պարտքային կորստի գծով պահուստ	(6,820,531)	(10,885,474)
	205,470,325	216,462,240

(ե) Պարտքային ռիսկին ենթարկվածություն

2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկը չունի վարկառուներ կամ կապակցված վարկառուների խմբեր (2020թ-ին՝ ոչինչ), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

(զ) Վարկերի մարման ժամկետներ

Վարկային պորտֆելի մարման ժամկետների վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 35-ի (դ) կետում, որն արտացոլում է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի՝ պայմանագրով նախատեսված մարման ժամկետը մնացած ժամանակահատվածը:

16 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Հոդատա- րածք և շենքեր	Վարձակա- ված գույքի բարելավում	Սարքա- վորումներ	Փոխադրա- միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք/ վերագնահատված արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	3,035,216	357,293	3,975,630	373,781	4,369,924	1,557,395	13,719,422
Ավելացումներ	17,114	-	527,828	18,400	500,424	52,331	1,116,097
Օտարումներ	-	-	-	-	-	(23,212)	(23,212)
Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2021թ.	3,052,330	357,293	4,503,458	392,181	4,920,531	1,586,514	14,812,307
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	(106,996)	(217,272)	(2,886,835)	(271,062)	(1,546,407)	(1,301,420)	(6,329,992)
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	(40,927)	(20,556)	(237,872)	(30,231)	(423,358)	(76,447)	(829,391)
Օտարումներ	-	-	-	-	-	21,359	21,359
Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2021թ.	(147,923)	(237,828)	(3,124,707)	(301,293)	(1,969,765)	(1,356,508)	(7,138,024)
Հաշվեկշռային արժեք Առ 30 սեպտեմբերի 2021թ.	2,904,407	119,465	1,378,751	90,888	2,950,766	230,006	7,674,283
հազ. դրամ	Հոդատա- րածք և շենքեր	Վարձակա- ված գույքի բարելավում	Սարքա- վորումներ	Փոխադրա- միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք/ վերագնահատված արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	3,035,016	301,046	3,617,661	366,356	3,401,201	1,524,878	12,246,158
Ավելացումներ	200	56,247	358,326	10,925	1,018,906	35,743	1,480,347
Օտարումներ	-	-	(357)	(3,500)	-	(3,226)	(7,083)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	3,035,216	357,293	3,975,630	373,781	4,420,107	1,557,395	13,719,422
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	(52,569)	(183,735)	(2,639,220)	(235,609)	(1,053,672)	(1,187,027)	(5,351,832)
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	(54,427)	(33,537)	(247,972)	(37,961)	(492,735)	(117,620)	(984,252)
Օտարումներ	-	-	357	2,508	-	3,227	6,092
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	(106,996)	(217,272)	(2,886,835)	(271,062)	(1,546,407)	(1,301,420)	(6,329,992)
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2020թ.	2,928,220	140,021	1,088,795	102,719	2,873,700	255,975	7,389,430
Առ 1 հունվարի 2020թ.	2,982,447	117,311	978,441	130,747	2,347,529	337,851	6,894,326

Վերագնահատված ակտիվներ

Եթե շենքերը չվերագնահատվեին, 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ հողատարածքի և շենքերի հաշվեկշռային արժեքը կկազմեր 797,044 հազար դրամ (2020թ-ին՝ 808,867 հազար դրամ):

Հողատարածքի և շենքերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին կիրառված գնահատման մեթոդի դիտելի ելակտեային տվյալների նշանակալի ոչ դիտելի ճշգրտումների (գործակիցների) պատճառով:

Հիմք ընդունելով անշարժ գույքի գների փոփոխությունների վերլուծությունը՝ ղեկավարությունը գտնում է, որ հողատարածքի և շենքերի իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

17 Վարձակալություններ

Բանկը վարձակալում է ակտիվներ, մասնավորապես, մասնաճյուղերի և այլ տարածքներ, որոնց վարձակալության ժամկետը որպես կանոն կազմում է 5 տարի:

Ստորև ներկայացված է այն վարձակալությունների մասին տեղեկատվությունը, որոնց շրջանակում Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ:

(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

հազ. դրամ	30/09/2021	31/12/2020
Մնացորդը առ 1 հունվարի	1,921,338	2,128,882
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ավելացումներ	459,140	245,128
Ժամանակաշրջանի մաշվածության գումար	(342,529)	(452,672)
Մնացորդը հաշվետու ամսաթվին	2,037,949	1,921,338

(բ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

հազ. դրամ	30/09/2021	31/12/2020
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն	342,529	452,672
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ	171,859	236,646

(գ) Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի համադրում

հազ. դրամ	30/09/2021	31/12/2020
Մնացորդը առ 1 հունվարի	2,074,462	2,194,824
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		
Վարձակալության գծով պարտավորությունների վճարում	(479,237)	(602,136)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	(479,237)	(602,136)
Այլ փոփոխություններ		
Նոր վարձակալություններ	459,140	245,128
Տոկոսային ծախս	171,859	236,646
Մնացորդը հաշվետու ամսաթվին	2,226,224	2,074,462

18 Այլ ակտիվներ

հազ. դրամ

	30/09/2021	31/12/2020
Վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպություններից ստացվելիք գումարներ	1,700,813	2,032,775
Պարտքային կորստի գծով պահուստ	(6,986)	(7,862)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	1,693,826	2,024,913
Առգրավված ակտիվներ	4,842,788	4,883,480
Մատակարարներին տրված կանխավճարներ	613,891	501,958
Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ	408,888	157,457
Պաշարներ	218,144	49,407
Այլ	13,689	13,690
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	6,097,400	5,605,992
Ընդամենը այլ ակտիվներ	7,791,227	7,630,905

Այլ ակտիվները արժեզրկված կամ ժամկետանց չեն: Բոլոր ֆինանսական ակտիվները դասվում են 1-ին փուլ:

19 Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

հազ. դրամ

	30/09/2021	31/12/2020
Հետգնման պայմանագրերի գծով ՀՀ կենտրոնական բանկին վճարվելիք գումարներ	28,611,994	6,001,785
Հետգնման պայմանագրերի գծով տեղական բանկերին վճարվելիք գումարներ	-	5,035,346
	28,611,994	11,037,131

Հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված են այլ համապատասխան ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող 6,675,608 հազար դրամ գումարով Բանկի սեփական արժեթղթերը (2020թ-ին՝ համապատասխան ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող 6,104,461 հազար դրամ գումարով և ամորտիզացված արժեքով չափվող 5,312,957 հազար դրամ իրական արժեքով):

20 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

հազ. դրամ

	30/09/2021	31/12/2020
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
- Ֆիզիկական անձիք	62,290,842	55,329,036
- Իրավաբանական անձինք	46,391,046	46,931,158
Ժամկետային ավանդներ		
- Ֆիզիկական անձիք	96,006,567	93,200,640
- Իրավաբանական անձինք	26,066,195	25,017,694
	230,754,650	220,478,528

2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկի հաճախորդների ընթացիկ հաշիվներից և ավանդներից 8,341,414 հազար դրամ (2020թ-ին՝ 7,273,345 հազար դրամ) գումարով մնացորդները ծառայում են որպես գրավ Բանկի կողմից տրամադրված վարկերի և փոխառվածքային հանձնառությունների դիմաց:

21 Թողարկված պարտքային արժեթղթեր

հազ. դրամ

	30/09/2021	31/12/2020
ՀՀ դրամով թողարկված տեղական պարտատոմսեր	3,058,474	3,059,389
ԱՄՆ դոլարով թողարկված տեղական պարտատոմսեր	2,469,009	7,902,470
	5,527,482	10,961,859

Բանկի կողմի թողարկված պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի արժեթղթերի ֆոնդային բորսայում:

22 Այլ փոխառություններ և ստորադաս փոխառություններ

հազ. դրամ

	30/09/2021	31/12/2020
Գրավով չապահովված փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	27,802,835	55,471,559
Գրավով ապահովված փոխառություններ ՀՀ կառավարությունից և ՀՀ ԿԲ-ից	16,072,565	13,456,339
Գրավով ապահովված փոխառություններ հայկական ֆինանսական կազմակերպություններից	2,920,674	3,201,179
Այլ փոխառություններ	-	5,520
	46,796,074	72,134,597
Ստորադաս փոխառություններ միկրոֆինանսավորման միջազգային հիմնադրամից	7,316,557	8,092,844
	54,112,631	80,227,441

Ստորադաս փոխառություններ իրենից ներկայացնում է կապակցված կողմ չհանդիսացող միկրոֆինանսավորման միջազգային հիմնադրամից ստացված փոխառությունը, որի մարման ժամկետը լրանում է 2026թ. փետրվարին:

Ստացված փոխառությունները Բանկը դիտարկում է որպես ստորադաս փոխառություններ, եթե սնանկության դեպքում փոխառությունը մարվում է Բանկի մյուս բոլոր այլ պարտավորությունների ամբողջական կատարումից հետո:

Բանկը համապատասխանում է արտաքին սահմանափակումներին (կովենանտներին) փոխառության պայմանագրերի հետ կապված 2021թ. սեպտեմբերի 30-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

23 Այլ պարտավորություններ

հազ. դրամ

	30/09/2021	31/12/2020
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	1,055,978	900,000
Այլ ֆինանսական պարտավորություններ	988,586	901,120
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	2,044,564	1,801,120
Պահուստներ	587,563	549,750
Վճարվելիք հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	344,470	291,415
Ակնկալվող կորուստների գծով պահուստ ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար	277,157	257,764
Այլ կանխավճարներ	291,678	218,849
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	112,030	104,447
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	1,612,898	1,422,225
Ընդամենը այլ պարտավորություններ	3,657,462	3,223,345

24 Բաժնետիրական կապիտալ

(ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 181,821 սովորական բաժնետոմսից (2020թ-ին՝ 181,821): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 80,000 դրամ (2020թ-ին՝ 80,000):

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Հոդատարածքի և շենքերի վերագնահատումից աճ

Հոդատարածքի և շենքերի վերագնահատումից աճը ներառում է հոդատարածքի և շենքերի վերագնահատված կուտակային դրական արժեքը մաշվածությունը չբաշխված շահույթ փոխանցելուց հետո՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային գուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը (արժեզրկումը կիրառելի է միայն պարտքային ներդրումային արժեթղթերի համար):

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրության համաձայն որոշվող Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

2021թ-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկը հայտարարել է և վճարել 7,500,116 հազար դրամ գումարով շահաբաժիններ (2020թ-ին՝ 2,823,680 հազար դրամ գումարով շահաբաժիններ):

25 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և Բանկի գործառնությունների կենսական տարրն է: Ծուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող արտադրանքն ու ծառայությունների և ընդունված լավագույն պրակտիկան արտացոլելու նպատակով:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկերի կառավարման կենտրոնը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացմանն ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն Վարչությանը և անուղղակիորապես՝ Տնօրենների խորհրդին:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության տեսակից և չափից:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Ռիսկերի կառավարման կենտրոնը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:

(բ) Ծուկայական ռիսկ

Ծուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Ծուկայական ռիսկը ներառում է արժույթային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Ծուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Ծուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Ծուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն, որը գլխավորում է Գլխավոր տնօրենը: Ծուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Վարչության կողմից՝ Ռիսկերի կառավարման կենտրոնի առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր, որոնք

կանոնավոր կերպով մշտադիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

Բացի այդ, Բանկն իրականացնում է մեծ թվով սթրես թեստեր առանձին պորտֆելների և Բանկի ընդհանուր դիրքի վրա շուկայի բազմաթիվ բացառիկ սցենարների ֆինանսական ազդեցությունը մոդելավորելու համար: Սթրեսի թեստերը ցույց են տալիս կորուստների հավանական չափը, որոնք կարող են առաջանալ ծայրահեղ պայմաններում:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա շուկայում գերակշռող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել կորուստների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխությունների դեպքում:

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքի հսկողության միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների ճեղքվածքի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
30 սեպտեմբերի 2021թ.							
ԱՎՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	749,296	-	-	-	-	61,990,411	62,739,707
Ներդրումային արժեթղթեր	2,420,877	1,209,739	460,021	14,602,191	67,089,004	30,946	85,812,778
Բանկերի նկատմամբ ալ պահանջներ	-	-	-	-	-	8,506,604	8,506,604
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	1,717,835	337,910	-	-	-	-	2,055,745
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	24,543,155	22,222,174	33,689,649	122,144,471	2,870,876	-	205,470,325
	29,431,163	23,769,823	34,149,670	136,746,662	69,959,880	70,527,961	364,585,159
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	-	-	-	-	-	3,170	3,170
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	28,611,994	-	-	-	-	-	28,611,994
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	84,127,488	23,166,762	49,488,226	12,290,107	851	61,681,216	230,754,650
Թողարկված պարտքային արժեթղթեր	4,024,252	3,230	1,500,000	1,500,000	-	-	5,527,482
Այլ փոխառություններ	9,624,166	7,242,621	10,599,750	16,186,050	3,143,487	-	46,796,074
Ստորադաս փոխառություններ	-	100,987	-	7,215,570	-	-	7,316,557
Վարձակալության գծով պարտավորություններ	75,409	103,898	197,673	1,260,345	588,899	-	2,226,224
	129,463,309	30,617,498	61,785,649	36,952,072	3,733,237	61,684,386	321,236,151
	(97,032,146)	(6,847,675)	(27,635,979)	99,794,590	66,226,643	8,843,575	43,349,008

Տոկոսադրույքի ճեղքվածքի բացասական կարճաժամկետ դիրքը կառավարելու համար Բանկը հիմնվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի վրա, որոնք կարող են վաճառվել կամ գրավադրվել հետգնման պայմանագրերի շրջանակում, և այն ենթադրության վրա, որ ժամկետային ավանդները կերկարաձգվեն մարման ժամկետի ավարտից հետո:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2020թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,156,919	-	-	-	-	65,934,015	69,090,934
Ներդրումային արժեթղթեր	745,676	4,555,946	-	12,924,432	52,348,731	31,055	70,605,840
Բանկերի նկատմամբ ալ պահանջներ	-	-	-	-	-	10,923,190	10,923,190
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,632,959	-	91,207	-	-	-	3,724,166
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվություններ	20,757,202	21,194,866	36,346,676	109,984,925	28,178,571	-	216,462,240
	28,292,756	25,750,812	36,437,883	122,909,357	80,527,302	76,888,260	370,806,370
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	12,466	-	-	-	-	-	12,466
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	11,037,131	-	-	-	-	-	11,037,131
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	55,713,005	28,188,321	47,331,945	17,776,329	1,607	71,467,321	220,478,528
Թողարկված պարտքային արժեթղթեր	78,296	2,657,663	6,725,900	1,500,000	-	-	10,961,859
Այլ փոխառություններ	4,516,105	4,836,427	17,753,201	42,218,423	2,810,441	-	72,134,597
Ստորադաս փոխառություններ	307,447	-	-	3,892,698	3,892,699	-	8,092,844
Վարձակալության գծով պարտավորություններ	149,889	139,961	259,945	1,174,263	350,404	-	2,074,462
	71,814,339	35,822,372	72,070,991	66,561,713	7,055,151	71,467,321	324,791,887
	(43,521,583)	(10,071,560)	(35,633,108)	56,347,644	73,472,151	5,420,939	46,014,483

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2021թ. սեպտեմբերի 30-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	30/09/2021			31/12/2020		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	0.01%	0.64%	-	0.05%	0.83%
Ներդրումային արժեթղթեր	9.18%	4.45%	-	10.48%	6.50%	-
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	-	3.00%	3.00%	6.50%	3.00%	3.00%
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	14.36%	8.44%	7.23%	14.72%	8.43%	6.78%
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	-	-	-	-	-	-
Հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	7.16%	-	-	5.46%	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ցայահանջ ավանդներ	1.80%	0.29%	0.13%	2.00%	0.02%	0.01%
Հաճախորդների ժամկետային ավանդներ	8.61%	3.22%	1.97%	9.01%	3.64%	2.40%
Թողարկված պարտքային արժեթղթեր	9.75%	5.25%	-	9.75%	5.25%	-
Ստորադաս փոխառություններ	-	10.01%	-	-	10.01%	-
Այլ փոխառություններ	7.93%	4.68%	-	8.03%	4.63%	2.75%

(ii) Արժույթային ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժույթային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արժույթային ռիսկին, սակայն այս գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն՝ ՖՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	29,269,341	8,258,322	823,126	38,350,789
Ներդրումային արժեթղթեր	13,399,971	765	-	13,400,736
Բանկերի նկատմամբ ալ պահանջներ	6,817,205	971,919	61,714	7,850,838
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	96,951	337,910	1,339,280	1,774,141
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	67,760,514	5,675,701	988,416	74,424,631
Այլ ակտիվներ	339,122	72,967	410,358	822,447
Ընդամենը ակտիվներ	117,683,104	15,317,583	3,622,895	136,623,582
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,297	1,841	14	3,152
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	87,972,294	13,293,183	3,508,773	104,774,250
Թողարկված պարտքային արժեթղթեր	2,469,009	-	-	2,469,009
Ստորադաս փոխառություններ	7,316,557	-	-	7,316,557
Այլ փոխառություններ	14,423,787	-	-	14,423,787
Այլ պարտավորություններ	348,062	5,086	176	353,324
Ընդամենը պարտավորություններ	112,531,006	13,300,110	3,508,963	129,340,079
Զուտ դիրքը	5,152,098	2,017,473	113,932	7,283,503
Ածանցյալ գործիքների ազդեցությունը (արժույթային սկոպ)	(3,159,195)	(2,039,321)	(127,683)	(5,326,199)
Զուտ դիրքը	1,992,903	(21,848)	(13,751)	1,957,304

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	45,807,806	2,503,430	736,287	49,047,523
Ներդրումային արժեթղթեր	8,271,276	874	-	8,272,150
Բանկերի նկատմամբ ալ պահանջներ	7,796,018	1,034,940	37,183	8,868,141
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	90,939	3,200,052	-	3,290,991
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	79,401,295	7,128,636	187,209	86,717,140
Այլ ակտիվներ	769,561	69,888	23,179	862,628
Ընդամենը ակտիվներ	142,136,895	13,937,820	983,858	157,058,573
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	11,565	416	466	12,447
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	79,156,067	12,337,074	4,045,710	95,538,851
Թողարկված պարտքային արժեթղթեր	7,902,470	-	-	7,902,470
Ստորադաս փոխառություններ	8,092,844	-	-	8,092,844
Այլ փոխառություններ	40,798,971	167,364	-	40,966,335
Այլ պարտավորություններ	157,222	9,886	869	167,977
Ընդամենը պարտավորություններ	136,119,139	12,514,740	4,047,045	152,680,924
Զուտ դիրքը	6,017,756	1,423,080	(3,063,187)	4,377,649
Ածանցյալ գործիքների ազդեցությունը (արժույթային սկոպ)	(1,177,326)	(1,455,320)	3,119,429	486,783
Զուտ դիրքը	4,840,430	(32,240)	56,242	4,864,432

Ստորև աղյուսակում ներկայացված 2021թ. սեպտեմբերի 30-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս նախքան հարկումը հիմունքով և հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Բանկը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունից առաջացող եկամուտը (ծախսը) ենթակա չէ հարկման (ենթակա չէ նվազեցման): Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

հազ. դրամ	30/09/2021	31/12/2021
ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով	260,077	484,043
ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով	4,099	(3,240)

2021թ. սեպտեմբերի 30-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Բանկում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար), ներառյալ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները և Վարկային կոմիտեի և Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրինության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ գործիքների, որոնց գծով Բանկը ենթարկված է պարտքային ռիսկին, շարունակական հսկողության և մշտադիտարկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող համապատասխան մենեջերների կողմից և փոխանցվում են ռիսկերի կառավարման բաժնին, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Բաժնի ղեկավարի կողմից: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը ռիսկերի կառավարման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա:

Բանկը շարունակաբար վերահսկում է պարտքային ռիսկին ենթարկվող առանձին գործիքների կատարողականը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և փոխառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Ֆիզիկական անձանց վարկային դիմումներն ուսումնասիրվում են Ֆիզիկական անձանց վարկավորման բաժնի կողմից Ռիսկերի կառավարման բաժնի հետ մեկտեղ մշակված գնահատման մոդելների և տվյալների ստուգման ընթացակարգերի միջոցով:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման բաժնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը, որպես կանոն, արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառությունների գումարներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Որպես կանոն գրավ չի պահանջվում անանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում ներդրումների, բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխառությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գոծառությունների մաս:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գրավի և այդ վարկերի և փոխառությունների գծով պարտքային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 15-ում:

Չճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 28-ում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների պարտքային որակի վրա Covid-19 ազդեցությունը գնահատելու համար Բանկն առանձին վերլուծել է իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պորտֆելները:

Իրավաբանական անձանց տրված վարկերը գնահատվել են անհատական հիմունքով՝ պարզելու համար, թե արդյոք Covid-19 հետևանքները հանգեցրել են վարկառուների պարտքային ռիսկի նշանակալի աճի: Գնահատման նպատակների համար Բանկը հաշվի է առել հետևյալ գործոնները.

- վարկերի պայմանների վերանայման նշանակալիությունը/մասշտաբը Covid-19 հետևանքով,
- վարկերի փաստացի մարումները պայմանների վերանայումից հետո,
- արդյոք վարկառուն գործում է Covid-19-ից առավել տուժած ոլորտներում,
- կառավարության կողմից տնտեսության համար սահմանված սահմանափակումների երկարատևությունը:

Ֆիզիկական անձանց տրված վարկերը վերլուծվել են խմբային հիմունքով՝ հիմք ընդունելով ժամկետանցությունը:

Պարտքային ռիսկ. Ակնկալվող պարտքային կորստների գումարները

Արժեզրկման գնահատման համար օգտագործվող ելակետային տվյալներ, ենթադրություններ և մեթոդներ

Տես հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Ծանոթագրություն 3 (ե) (iv) կետում:

Արժեզրկման գնահատում

Բանկն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու համար ակնկալվող դրամական պակասությունները՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան կազմակերպությանը հասանելիք թողր պայմանագրային դրամական հոսքերի և կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է: Ստորև ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մեթոդները և առանցքային տարրերը:

Պարտագանցման տեղի ունենալու հավանականության	<i>Պարտագանցման տեղի ունենալու հավանականությունը որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտագանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտագանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապստանաչվել և դեռևս պորտֆելում է:</i>
Պարտքի գումարը պարտագանցման պահին	<i>Պարտքի գումարը պարտագանցման պահին ապագա պարտագանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարքտի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:</i>
Կորուստը պարտագանցման դեպքում	<i>Կորուստը պարտագանցման դեպքում դա այն կորստի գնահատված գումարն է, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտագանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտագանցման պահին պարտքի գումարի տոկոս</i>

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հիմնված է այն պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում (ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ կամ ԱԺԱՊԿ), եթե տեղի չի ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որի դեպքում պահուստը հիմնվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների վրա:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից

հետո 12 ամսում հնարավոր պարտագանցման դեպքերից: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները և 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ կախված ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում պարտագանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերը նշված գործընթացի հիման վրա Բանկը խմբավորում է իր վարկերն ըստ փուլերի՝ 1-ին փուլի, 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, ինչպես ներկայացված է ստորև.

- | | |
|---|--|
| 1-փուլ | Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը ճանաչում է պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: 1-ին փուլի վարկերը ներառում են նաև գործիքներ, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից: |
| 2-րդ փուլ | Երբ վարկի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է սկզբնական ճանաչումից ի վեր, սակայն չկա պարտքային առումով արժեզրկված լինելու վկայություն, Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: 2-րդ փուլի վարկերը ներառում են նաև գործիքներ, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից: |
| 3-րդ փուլ | Վարկերը համարվում են պարտքային առումով արժեզրկված: Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: |
| Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված | Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Սկզբնական ճանաչման պահին ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: Ակնկալվող պարտքային կորուստների ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով հետագայում փոխվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները: |

Պարտագանցման սահմանում

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտագանցում և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտավորությունները դառնում են 90 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից, բացառությամբ պարտքային արժեթղթերի և բանկային ավանդների:

Հաճախորդի կողմից պարտականությունների չկատարման որակական գնահատման շրջանակում Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքերը, որոնք կարող են վկայել վճարման անհավանականության մասին՝ ելնելով ղեկավարության դատողությունից: Եթե այդ դեպքը տեղի է ունենում, Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք դրա արդյունքում հաճախորդը պետք է դիտարկվի որպես պարտականությունները չկատարած և դասվի 3-րդ փուլ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, կամ արդյոք 2-րդ փուլ դասելը տեղին է:

Պարտագանցման տեղի ունենալու հավանականության գնահատման գործընթաց

Պահառուական և միջբանկային հարաբերություններ

Բանկի պահառուական և միջբանկային հարաբերությունները և պայմանագրային կողմերն իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ և դիլերներ, ֆոնդային բորսաներ և քլիրինգային կազմակերպություններ: Այս հարաբերությունների հետ կապված Բանկը վերլուծում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և արտաքին աղբյուրներից ստացված այլ տվյալները, օրինակ՝ արտաքին վարկանիշները:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով պարտագանգման տեղի ունենալու հավանականությունը հիմնված է անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվության վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցների միջոցով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվությունը: Հավանականությունը հաշվարկվում է որպես ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ընդհանուր վարկերի ժամկետանց դասերի միջև տեղափոխվող վարկերի մասնաբաժինը: Պարտագանգման տեղի ունենալու հավանականությունը հաշվարկելիս Բանկը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք էական ազդեցություն ունեն պարտագանգման տեղի ունենալու հավանականության վրա:

Պարտքի գումարը պարտագանգման պահին

Պարտքի գումարը պարտագանգման պահին իրենից ներկայացնում է արժեզրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը՝ հաշվի առնելով թե՛ պարտքի գումարը մեծացնելու հաճախորդի հնարավորությունը առաջիկա պարտագանգման դեպքում և թե՛ հնարավոր վաղաժամ մարումը: 1-ին փուլի վարկի գծով պարտագանգման պահին պարտքի գումարը հաշվարկելու նպատակով՝ Բանկը գնահատում է 12 ամսում հնարավոր պարտագանգման դեպքերը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելու համար: 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտագանգման պահին պարտքի գումարը դիտարկվում է գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտքի գումարը պարտագանգման պահին հավասար է այդ վարկերի հաշվեկշռային արժեքին:

Պարտքի գումարը պարտագանգման պահին որոշվում է նախքան պարտագանգման տեղի ունենալու ամսաթիվը չկատարված պարտականություններով վարկերի վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալների հիման վրա:

Կորուստը պարտագանգման դեպքում

Հաճախորդներին տրված 1-ին փուլի վարկերի, ինչպես նաև անհատական հիմունքով ոչ էական 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար, Բանկը պարտագանգման դեպքում կորուստը հաշվարկում է պորտֆելի մակարդակով: Բանկը պարտագանգման դեպքում կորստի չափը հաշվարկելու համար օգտագործում է պարտագանգման ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալները չկատարված պարտականություններով բոլոր վարկերի կտրվածքով: Հավաքագրվում է պարտագանգման ամսաթվից հետո դրամական հոսքերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը և զեղչվում է պարտագանգման ամսաթվի դրությամբ՝ յուրաքանչյուր վարկի արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է չկատարված պարտականություններով վարկերի գծով ստացված բոլոր տեսակի դրամական միջոցները (վարկերի մարումից ստացված դրամական միջոցներ, երաշխավորից ստացված դրամական միջոցներ, գրավի վաճառքից ստացված դրամական միջոցներ և այլն):

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Որպես հիմնական չափանիշ Բանկն օգտագործում է վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Բանկը համարում է, որ պարտքային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, եթե ակտիվների գծով վճարումներն ավելի քան 30 օր ժամկետանց են, սակայն ոչ ավել քան 90 օր բոլոր ակտիվների համար, բացառությամբ պարտքային ներդրումային արժեթղթերի և բանկային ավանդների:

Պարտքային ռիսկի աճը գնահատելիս Բանկի ղեկավարությունը դիտարկում է նաև հետևյալ գործոնները՝

- տվյալ վարկառուի ժամկետանց օրերի քանակը Հայաստանի այլ ֆինանսական կազմակերպություններում,
- վարկառուի զգալի ֆինանսական դժվարությունները,
- վարկի պայմանների վերանայումը վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման պատճառով,
- մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացումը և դրանց հնարավոր ազդեցությունը վարկառուի ֆինանսական արդյունքների վրա:

Ապագայամետ տեղեկատվություն և տարբեր տնտեսական սցենարներ

Ակնկալվող պարտքային կորուստների մոդելներում Բանկը որպես տնտեսական ելակետային տվյալներ օգտագործում է ապագայամետ տեղեկատվության լայն շրջանակ: Բանկն ակնկալվող պարտքային կորուստների մոդելում ներառում է տնտեսական ցուցանիշները, որոնք սերտորեն փոխկապակցված են պորտֆելի անցյալ ժամակաշրջանների պարտագանցման ցուցանիշների հետ, այդ թվում՝

- սպառողական գների ինդեքսը,
- արտահանման ծավալները,
- ներմուծման ծավալները,
- զուտ ներմուծումը/արտահանումը,
- ներհոսքը Ռուսաստանից:

Հիմնական խթաններն են սպառողական գների ինդեքսը և ներմուծման ծավալներն են: 2021թ. համար ըստ կանխատեսումների սպառողական գների ինդեքսը կկազմի 2.5%, իսկ ներմուծման ծավալները կնվազեն 18%-ով:

Բանկը կիրառել հետևյալ FLI գործակիցները. 1՝ իրավաբանական անձանց տրված վարկերի համար և 0.9-1.1՝ ֆիզիկական անձանց տրված վարկերի համար:

Ապագայամետ տեղեկատվությունը Բանկը ստանում էրրորդ կողմ հանդիսացող աղբյուրից (Հայաստանի վիճակագրական գործակալություն և ՀՀ կենտրոնական բանկ): Բանկի ռիսկերի կառավարման բաժնի փորձագետները որոշում են տարբեր սցենարներին վերագրելի կշիռները/մեծությունները: Աղյուսակներում ներկայացված է ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների յուրաքանչյուր տնտեսական սցենարում օգտագործված հիմնական ապագայամետ տնտեսական փոփոխականները/ենթադրությունները: Բանկը գնահատում է պարտագանցման դրույքի/մակարդակի և մակրոտնտեսական գործոնների միջև հարաբերությունները հիմնվելով սովորական փոքրագույն քառակուսիների ռեգրեսիայի մոդելների վրա: Մոդելում օգտագործված ընտրված փոփոխականները տարբեր են՝ կախված վարկային պորտֆելից:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ գործիքների քլիրինգի պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության գլխավոր պայմանագրերը: Համանման ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի փոխառության և փոխատվության պայմանագրերը: Ֆինանսական գործիքները, այդ թվում՝ վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և ընդունում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով:

Այս գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտագանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում: Բացի այդ Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը մտադիր չեն հաշվարկն իրականացնել գույտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը կազմված է այլ բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերից, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդներից, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելներ՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Գանձապետարանը գործարար ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի և ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Գանձապետարանն իրականացնում է իրացվելիության դիրքի հսկողություն օրական կտրվածքով և իրացվելիության կանոնավոր «ստրեսային թեսթեր»՝ շուկայական սովորական և ավելի խիստ պայմանները ներառող տարբեր սցենարների շրջանակում: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս դեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Գանձապետարանի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չգեղջված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չգեղջված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով: Ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերի համար երաշխավորության առավելագույն գումարը բաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանում, որի ընթացքում երաշխավորությունը կարող է օգտագործվել:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցածկանշ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	(Ներհոսքի)/ արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ֆինանսական պարտավորություններ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	3,170	-	-	-	-	-	3,170	3,170
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	28,641,979	-	-	-	-	-	28,641,979	28,611,994
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	123,450,951	22,784,662	23,837,720	51,827,075	13,273,136	986	235,174,530	230,754,650
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	4,057,676	73,125	1,573,125	-	-	5,703,926	5,527,482
Ստորադաս փոխառություններ	-	-	-	369,937	9,982,291	-	10,352,228	7,316,557
Այլ փոխառություններ	974,779	2,474,817	3,289,593	13,137,154	30,236,238	3,475,324	53,587,905	46,796,074
Այլ ֆինանսական պարտավորություններ	988,586	-	-	-	-	989,084	1,977,670	1,977,670
Վարձակալության գծով պարտավորություններ	6,634	107,200	160,156	320,699	1,798,150	699,212	3,092,051	3,092,051
Չուտ մարված ածանցյալ պարտավորություններ	15,207	-	-	-	-	-	15,207	15,207
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	154,081,306	29,424,355	27,360,594	67,227,990	55,289,815	5,164,606	338,548,666	324,094,855
Փոխատվության հանձնառություններ	29,917,054	-	-	-	-	-	-	14,453,811

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	(Ներհոսքի)/ արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ֆինանսական պարտավորություններ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	12,466	-	-	-	-	-	12,466	12,466
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	11,054,133	-	-	-	-	-	11,054,133	11,037,131
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	111,420,965	16,099,796	29,071,173	49,523,388	19,319,905	1,792	225,437,019	220,478,528
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	92,125	2,744,719	7,077,459	1,708,955	-	11,623,258	10,961,859
Ստորադաս փոխառություններ	-	401,097	-	394,558	7,104,226	4,119,974	12,019,855	8,092,844
Այլ փոխառություններ	2,261,730	2,505,840	5,846,793	19,753,354	46,932,549	3,096,454	80,396,720	72,134,597
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,505,422	-	-	-	-	-	1,505,422	1,505,422
Վարձակալության գծով պարտավորություններ	50,924	101,847	146,781	284,028	1,750,746	745,879	3,080,205	2,074,462
Զուտ մարված ածանցյալ պարտավորություններ	1,385	-	-	-	-	-	1,385	1,385
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	126,307,025	19,200,705	37,809,466	77,032,787	76,816,381	7,964,099	345,130,463	326,298,694
Փոխատվության հանձնառություններ	26,342,612	-	-	-	-	-	-	-

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	62,739,707	-	-	-	-	-	-	62,739,707
Ներդրումային արժեթղթեր	2,333,932	86,945	1,669,761	14,602,191	67,089,004	30,946	-	85,812,778
Բանկերի նկատմամբ ալ պահանջներ	29,323	-	-	-	-	8,477,281	-	8,506,604
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	1,717,835	-	337,910	-	-	-	-	2,055,745
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	8,850,621	15,692,534	55,911,823	94,530,092	28,567,779	-	1,917,476	205,470,325
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	7,674,283	-	7,674,283
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	-	2,037,949	-	2,037,949
Այլ ակտիվներ	2,102,714	-	-	-	-	5,688,513	-	7,791,227
Ընդամենը ակտիվներ	77,774,132	15,779,479	57,919,494	109,132,283	95,656,783	23,908,972	1,917,476	382,088,618
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ	15,207	-	-	-	-	-	-	15,207
Բանկերի ավանդներ և մնացորդներ	3,170	-	-	-	-	-	-	3,170
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	28,611,994	-	-	-	-	-	-	28,611,994
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	120,997,398	24,811,306	72,654,988	12,290,107	851	-	-	230,754,650
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	4,024,252	1,503,230	-	-	-	-	5,527,482
Ստորադաս փոխառություններ	-	-	100,987	7,215,570	-	-	-	7,316,557
Այլ փոխառություններ	868,939	2,194,482	14,645,844	25,943,322	3,143,487	-	-	46,796,074
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	-	481,051	-	481,051
Վարձակալության գծով պարտավորություններ	7,883	67,526	301,571	1,260,345	588,899	-	-	2,226,224
Այլ պարտավորություններ	1,722,244	-	583,396	-	-	1,935,218	-	4,240,858
Ընդամենը պարտավորություններ	152,226,835	31,097,567	89,790,016	46,709,344	3,733,237	2,416,270	-	325,973,267
Զուտ դիրքը	(74,108,233)	(15,318,088)	(31,870,522)	62,422,939	91,923,546	21,492,703	1,917,476	56,115,351

Աղյուսակում ներկայացված մարման ժամկետների վերլուծությունն արտացոլում է անցյալ ժամանակաշրջանների օրինաչափությունը և հաճախորդների ընթացիկ հաշիվների փաստացի մարումների ծավալը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	69,090,934	-	-	-	-	-	-	69,090,934
Ներդրումային արժեթղթեր	116,379	629,296	4,555,946	12,924,432	52,348,731	31,056	-	70,605,840
Բանկերի նկատմամբ ալ պահանջներ	101,468	-	-	10,452	-	10,811,270	-	10,923,190
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,632,959	-	91,207	-	-	-	-	3,724,166
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	1,159,737	14,029,423	57,541,542	109,984,925	28,178,571	-	5,568,042	216,462,240
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	7,339,247	-	7,339,247
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	-	1,921,338	-	1,921,338
Այլ ակտիվներ	1,938,235	-	-	-	-	5,692,670	-	7,630,905
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	77,619	-	-	-	-	-	-	77,619
Ընդամենը ակտիվներ	76,117,331	14,658,719	62,188,695	122,919,809	80,527,302	25,795,581	5,568,042	387,775,479
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ	1,385	-	-	-	-	-	-	1,385
Բանկերի ավանդներ և մնացորդներ	12,466	-	-	-	-	-	-	12,466
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	11,037,131	-	-	-	-	-	-	11,037,131
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	111,378,405	15,801,923	75,520,265	17,776,329	1,606	-	-	220,478,528
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	78,296	9,383,563	1,500,000	-	-	-	10,961,859
Ստորադաս փոխառություններ	-	307,447	-	3,892,698	3,892,699	-	-	8,092,844
Այլ փոխառություններ	2,190,176	2,325,902	22,589,498	42,218,595	2,810,426	-	-	72,134,597
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	-	461,574	-	461,574
Ընթացիկ հարկային պարտավորություն	-	1,606,737	-	-	-	-	-	1,606,737
Վարձակալության գծով պարտավորություններ	50,440	99,449	399,906	1,174,263	350,404	-	-	2,074,462
Այլ պարտավորություններ	1,505,422	-	-	-	-	1,422,225	-	2,927,647
Ընդամենը պարտավորություններ	126,175,425	20,219,754	107,893,232	66,561,885	7,055,135	1,883,799	-	329,789,230
Զուտ դիրքը	(50,058,094)	(5,561,035)	(45,704,537)	56,357,924	73,472,167	23,911,782	5,568,042	57,986,249

Աղյուսակում ներկայացված մարման ժամկետների վերլուծությունն արտացոլում է անցյալ ժամանակաշրջանների օրինաչափությունը և հաճախորդների ընթացիկ հաշիվների փաստացի մարումների ծավալը:

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական ուղենիշը բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունն է: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները, նոստրո հաշիվները, ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված պարտքային արժեթղթերը և այն կորպորատիվ պարտքային արժեթղթերը, որոնց համար գործում է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն և որոնց օգտագործումը ոչ մի կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ըստ պահանջի վճարման ենթակա այլ պարտավորությունները: Ստորև ներկայացված է բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը:

	30/09/2021 Աուդիտի չենթարկված	31/12/2020 Աուդիտի չենթարկված
Բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցություն	112.1%	135.9%

Վերը ներկայացված հարաբերակցությունը կիրառվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափի հետ համապատասխանությունը գնահատելու համար, որը չպետք է պակաս լինի 60%-ից:

26 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են ապահովել համապատասխանություն Բանկի կապիտալի համար գործող արտաքին պահանջներին և պահպանել բարձր պարտքային վարկանիշ ու կապիտալի լավ ցուցանիշներ՝ գործունեությանն աջակցելու և բաժնետիրական արժեքը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ տնտեսական պայմանների փոփոխությունների ու իր գործունեության ռիսկային բնույթին համապատասխան: Կապիտալը կառուցվածքը պահպանելու կամ դրա հետ կապված ճշգրտումներ կատարելու համար Բանկը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Կապիտալի կառավարման նպատակներում, քաղաքականությունում և ընթացակարգերում տեղի չի ունեցել որևէ փոփոխություն նախորդ տարիների համեմատությամբ:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն՝ բանկերի նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 30,000,000 հազար դրամ (2020թ-ին՝ 30,000,000 հազար դրամ): 2021թ. սեպտեմբերի 30-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի չափը համապատասխանում էր ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն կապիտալի պահանջներին:

Բանկը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2021թ. սեպտեմբերի 30-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում էր 12%: 2021թ. սեպտեմբերի 30-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր օրենսդրությամբ սահմանված ցուցանիշին (աուդիտի չենթարկված):

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության ցուցանիշը 2021թ. սեպտեմբերի 30-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	30.09.2021 Աուդիտի չենթարկված	31.12.2020 Աուդիտի չենթարկված
Նորմատիվային կապիտալ	53,267,091	60,960,576
Ռիսկով կշռված ակտիվներ՝ ներառյալ պարտքային, շուկայական և գործառնական ռիսկերը	290,563,385	304,259,270
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	18.33%	20.04%

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկի կշիռների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականը՝ հաշվի առնելով պահանջներին համապատասխանող ցանկացած գրավ կամ երաշխավորություն: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր կորուստների առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

27 Փոխատվության հանձնառություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու հանձնառություններ: Այս հանձնառությունները նախատեսում են վարկային ռեսուրսների տրամադրում հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների տեսքով:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ երրորդ անձանց հանդեպ հաճախորդների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Փոխատվության հանձնառությունների, ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են փոխատվության հանձնառությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի:

Աղյուսակում փոխատվության հանձնառությունների գծով արտացոլված գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջությամբ տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները:

հազ. դրամ

	<u>30/09/2021</u>	<u>31/12/2020</u>
Պայմանագրային գումար		
Վարկերի և վարկային գծերի հետ կապված հանձնառություններ	15,223,795	11,068,015
Վարկային քարտերի գծով հանձնառություններ	6,539,484	7,158,226
Ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ	8,153,775	8,116,371
	<u>29,917,054</u>	<u>26,342,612</u>
 Պարտքային կորստի գծով պահուստ	 <u>277,157</u>	 <u>257,764</u>

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային փոխառության հանձնառությունները պարտադիր չէ որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս հանձնառությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել մինչև կատարվելը:

28 Պայմանական դեպքեր

(ա) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(բ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

29 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը:

հազ. դրամ	01/01/2021- 30/09/2021	01/01/2020- 30/09/2020
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	462,117	479,731

Այս գումարները ներառում են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների դրամային հատուցումները:

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

	30/09/2021 հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	31/12/2020 հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	236,539	11.1%	119,438	10.90%
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	337,754	4.2%	283,732	4.30%

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները:

հազ. դրամ	01/01/2021- 30/09/2021	01/01/2020- 30/09/2020
Ծախսեր կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	13,580	6,885
Տոկոսային ծախս	(9,700)	(7,971)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(3)	(64)

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը հիմնականում իրենցից ներկայացնում են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ կապակցված կողմերը:

Ստորև ներկայացված են 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2021թ. սեպտեմբերի 30-ին ավարտված տարվա շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Այլ կապակցված կողմեր	
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
ԱԿՏԻՎՆԵՐ				
Տրված վարկեր (համախառն)	1,113	9.2%	55,588	10.34%
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	(40)	-	(126)	-
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	1,876,446	3.0%	517,092	5.22%
Շահույթ (վնաս)				
Տոկոսային եկամուտ	2	-	25,145	-
Տոկոսային ծախս	(46,054)	-	(190,750)	-

Ստորև ներկայացված են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Այլ կապակցված կողմեր	
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
ԱԿՏԻՎՆԵՐ				
Տրված վարկեր (համախառն)	-	-	27,716	10.30%
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	-	-	(101)	-
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	891,120	5.60%	877,655	3.10%
Շահույթ (վնաս)				
Տոկոսային եկամուտ	25,144	-	1,103	-
Տոկոսային ծախս	(169,696)	-	(8,308)	-

30 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների և հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, իսկ այլ փոխառությունների, ստորադաս փոխառությունների, թողարկված պարտքային արժեթղթերի և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
- Ներդրումային արժեթղթեր	-	9,006,960	-	9,006,960
	-	9,006,960	-	9,006,960

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերաբերյալ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
- Ներդրումային արժեթղթեր	-	11,451,447	-	11,451,447
	-	11,451,447	-	11,451,447

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են գուտ ներկա արժեքի և գեղչված դրամական հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայական դիտելի գները, և գնահատման այլ մոդելները: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ոչ թիսկային և ուղենիշային տոկոսադրույքները, վարկային սփռեղերը և այլ հավելավճարները, որոնք օգտագործվում են գեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնային գործիքների և բաժնային գործիքների ինդեքսի գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»:

«Ինեկորանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

**2020թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	10
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	11
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	12
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	14



«Բեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ինեկոբանկ» ՓԲԸ-ի Բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից թիուղ մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների Եթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների Եթիկայի միջազգային կանոնագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրը) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի Եթիկայի պահանջների, և կատարել ենք Եթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել քավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցեր են հանդիսանում այն հարցերը, որոնք ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Մենք անդրադարձել ենք այս հարցերին ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընդհանուր շրջանակում և վերջիններին վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելիս և չենք արտահայտում առանձին կարծիք այս հարցերի վերաբերյալ:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստներ

Տեղեկատվությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 16-ում:

Աուդիտի առանցքային հարց	Աուդիտի առանցքային հարցի հետ կապված իրականացված աուդիտորական ընթացակարգեր
Հաճախորդներին տրված վարկերը և փոխառությունները կազմում են ընդհանուր ակտիվների ավելի քան 56%-ը և ներառում են ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը, որը կանոնավոր հիմունքով գնահատվում է և զգայուն է ստորև ներկայացված կիրառվող ենթադրությունների նկատմամբ: Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման մոդելը ղեկավարությունից պահանջում է կատարել մասնագիտական դատողություններ և ենթադրություններ հետևյալ առանցքային հարցերի հետ կապված. - պարտքային ռիսկի նշանակալի աճի և պարտագանցման ռեպքերի ժամանակին բացահայտում հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների հետ կապված (բաշխում 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի միջև՝ ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» (այսուհետ՝ ՖՀՄՍ 9) համաձայն); - պարտագանցման տեղի ունենալու հավանականության և պարտագանցման ռեպքում առաջացող կորստի գնահատում, - ակնկալվող դրամական հոսքերի, այդ թվում՝ գրավի իրացումից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսում 3-րդ փուլ դասված հաճախորդներին տրված վարկերի համար: Ընթացիկ տարում գոյություն ունի ակնկալվող պարտքային կորուստների էական խեղաթյուրման մեծ ռիսկ, որը պայմանավորված է պահանջվող նշանակալի դատողություններով և գնահատման անորոշությամբ Covid-19-ի հետևանքով:	Մենք վերլուծել ենք ակնկալվող պարտքային կորուստների գնահատմանը վերաբերող Բանկի մեթոդաբանության և քաղաքականության առանցքային դրույթները ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ համապատասխանության տեսանկյունից՝ գործընթացում ներգրավելով նաև ֆինանսական ռիսկերի կառավարման գծով մասնագետներին: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հետ կապված ղեկավարության կողմից կատարված մասնագիտական դատողությունների և ենթադրությունների տեղին լինելը վերլուծելու համար մենք իրականացրել ենք հետևյալ աուդիտորական ընթացակարգերը. - իրավաբանական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք վարկերի փուլերի միջև բաշխումը վերահսկող համակարգի կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը: - ֆիզիկական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք ժամկետանց օրերի հաշվարկը վերահսկող համակարգի կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը: - իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք, թե արդյոք փուլերը ճիշտ են որոշված Բանկի կողմից՝ վերլուծելով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև Բանկի կողմից կատարված ենթադրությունները և մասնագիտական դատողությունները: - 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերին բաշխված հաճախորդներին տրված վարկերի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են խմբային հիմունքով, հիմք ընդունելով մեզ հայտնի տեղեկատվությունը, գնահատել ենք համապատասխան մոդելների տեղին լինելը և համադրել ենք մոդելի ելակետային տվյալներն առաջնային փաստաթղթերի տվյալների հետ ընտրանքային կարգով:

Բացի այդ, Բանկն ունի հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների պորտֆել, որոնց պայմանները փոխվել են պայմանավորված Covid-19 հետևանքներով, ինչը լրացուցիչ բարդություն է ստեղծում պարտքային ռիսկի նշանակալի աճի բացահայտման հետ կապված: Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների մեծ ծավալի և ակնկալվող պարտքային կորուստների ժամկետների և գումարների գնահատման բարդության և սուբյեկտիվության պատճառով, այս հարցը դիտարկվում է որպես աուդիտի առանցքային հարց:	- իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված 2-րդ և 3-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք պարտազանցման դեպքում առաջացող կորստի և պարտազանցման տեղի ունենալու հավանականության հաշվարկում օգտագործված ելակետային տվյալների տեղին լինելը: - վարկերի պորտֆելի համար, որոնց պայմանները փոխվել են Covid-19 հետևանքով, անհատական հիմունքով ուսումնասիրել ենք իրավաբանական անձանց տրված խոշոր վարկերը, գնահատելու համար Covid-19-ի հետ կապված Բանկի կողմից վարկերի մայր գումարների մարումների ժամանակավորապես հետաձգելու հաճախորդներին ընձեռած հնարավորության ռոջամտությունը՝ պարտքային ռիսկի նշանակալի աճի տեսանկյունից: - ֆիզիկական անձանց տրված 2-րդ և 3-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք Բանկի կողմից կիրառված ենթադրությունները, ներառյալ գրավի իրացումից ակնկալվող մուտքերը և իրացման ակնկալվող պայմանները: - գնահատել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի Բանկի մեթոդաբանության կանխատեսման կարողությունը՝ համեմատելով 2020թ. հունվարի 1-ի դրությամբ կատարած գնահատումները 2020թ. փաստացի արդյունքների հետ: - գնահատել ենք նաև, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունների բացահայտումներն ըստ պատշաճի արտացոլում են Բանկի ենթարկվածությունը պարտքային ռիսկին:
--	---

Այլ նշում

Բանկի 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2020թ. ապրիլի 27-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է տարեկան հաշվետվությունում պարունակվող տեղեկատվությունը, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը կտրամադրվի մեզ այս աուդիտորական եզրակացության ստորագրման ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացությունը չի անդրադառնում այլ տեղեկատվությանը, և մենք չենք արտահայտի որևէ հավաստիացում այդ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պատասխանատվությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն դառնա հասանելի, և այդ տեղեկատվությանը ծանոթանալիս դիտարկել, թե արդյոք այլ տեղեկատվությունն էականորեն չի համապատասխանում ֆինանսական հաշվետվություններին կամ աուդիտի ընթացքում մեր կողմից ձեռք բերված տեղեկատվությանը կամ կարող է այլ կերպ էականորեն խեղաթյուրված լինել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ Բանկը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամոռեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և կիրառելի լինելու դեպքում, ռիսկերը վերացնելու կամ անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:


Կառավարման օղակներում գտնվող անձանց տեղեկացված հարցերից մենք ընտրում ենք այն հարցերը, որոնք առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք ներկայացնում ենք այս հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող Նորմերով արգելվում է հարցի հրապարակային բացահայտումը, կամ երբ խիստ հազվագյուտ դեպքերում, մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացնել:



«Ինտելլեքտուալ» ՓԲԸ
Անկախ աուդիտորական եզրակացություն
Էջ 6

աուդիտորական եզրակացությունում, քանի որ ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ըստ ողջամիտ ակնկալիքների կարող են գերակշռել ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝


Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «ԲԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի տնօրեն

KPMG Armenia LLC

«ԲԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ
30 ապրիլի 2021թ.

	Ծնթգ.	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	4	35,097,562	34,658,625
Տոկոսային ծախս	4	(14,723,538)	(13,188,536)
Չուտ տոկոսային եկամուտ		20,374,024	21,470,089
Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ	5	3,021,995	2,892,882
Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս	6	(1,653,333)	(1,895,106)
Չուտ եկամուտ միջնորդավճարների և այլ վճարների գծով		1,368,662	997,776
Չուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով		455,564	181,841
Չուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	7	1,806,649	1,552,019
Չուտ օգուտ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով		-	140,760
Չուտ այլ գործառնական եկամուտ	8	476,410	647,022
Գործառնական եկամուտ		24,481,309	24,992,507
Արժեզրկումից զուտ կորուստներ ֆինանսական գործիքների գծով	9	(10,245,815)	(5,578,230)
Գործառնական եկամուտն արժեզրկումից հետո		14,235,494	19,414,277
Անձնակազմի գծով ծախսեր		(4,826,634)	(4,820,354)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	10	(3,120,232)	(2,958,159)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		6,288,628	11,635,764
Շահութահարկի գծով ծախս	11	(1,214,840)	(2,222,984)
Շահույթ տարվա համար		5,073,788	9,412,780
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ՝ առանց շահութահարկի			
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կայտոլ են հետազայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.			
- իրական արժեքի զուտ փոփոխություն		(547,476)	488,383
- շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար		-	(112,609)
Ընդամենը հոդվածներ, որոնք չեն կարող հետազայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		(547,476)	375,774
Հոդվածներ, որոնք երբեք հետազայում չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս			
Հոդատարածքի և շենքերի վերազնահատման պահուստ		-	43,003
Ընդամենը հոդվածներ, որոնք երբեք հետազայում չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս		-	43,003
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ տարվա համար՝ առանց շահութահարկի		(547,476)	418,777
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		4,526,312	9,831,557

9-ից 86-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Տնօրինության կողմից 2021թ. ապրիլի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արեն Նալթալյան
Գործադիր տնօրեն



Արշալույս Մահակյան
Գլխավոր հաշվապահ

	Ծնթգ.	2020թ. հազ. դրամ	2019թ.* հազ. դրամ
ԱՆՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	69,090,934	44,132,044
Ներդրումային արժեթղթեր	13		
- Բանկի կողմից պահվող		58,929,428	29,470,717
- Վանառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		11,676,412	-
Բանկերի նկատմամբ այլ պահանջներ	14	10,923,190	6,750,185
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	15	3,724,166	3,132,214
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	16	216,462,240	238,649,450
Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		77,619	3,418
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	17	7,339,247	6,894,326
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	18	1,921,338	2,128,882
Այլ ակտիվներ	19	7,630,905	7,952,232
Ընդամենը ակտիվներ		387,775,479	339,113,468
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Բանկերի ավանդներ և մնացորդներ		12,466	4,027,490
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	20	11,037,131	-
Հաճախորդներին ընթացիկ հաշիվներ և ավանդներ	21	220,478,528	195,656,532
Թողարկված պարտքային արժեթղթեր	22	10,961,859	10,312,640
Այլ փոխառություններ	23	72,134,597	57,750,600
Ստորադաս փոխառություններ	23	8,092,844	7,413,205
Ընթացիկ հարկային պարտավորություն		1,606,737	142,035
Հետաձգված հարկային պարտավորություն	11	461,574	1,889,150
Վարձակալության գծով պարտավորություններ	18	2,074,462	2,194,824
Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		1,385	4,400
Այլ պարտավորություններ	24	2,927,647	3,438,975
Ընդամենը պարտավորություններ		329,789,230	282,829,851
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	25		
Բաժնետիրական կապիտալ		14,545,680	14,545,680
Էմիսիոն եկամուտ		7,753,923	7,753,923
Գլխավոր պահուստ		3,500,000	3,500,000
Ծնեքերի վերագնահատման պահուստ		1,737,869	1,763,111
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ		501,717	1,049,193
Զբաղիված շահույթ		29,947,060	27,671,710
Ընդամենը սեփական կապիտալ		57,986,249	56,283,617
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		387,775,479	339,113,468

* 2019թ. որոշ հոդվածներ վերադասակարգվել են 2020թ. ներկայացման հետ համապատասխանություն ապահովելու համար (տես Ծանոթագրություն 3 (դ)):

	Ծնթգ.	2020թ. հազ. դրամ	2019թ.* հազ. դրամ
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		36,071,568	32,455,116
Վճարված տոկոսներ		(12,938,860)	(12,935,111)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ		3,011,117	2,856,616
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ		(1,670,832)	(1,933,516)
Զուտ մուտքեր իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից		378,348	185,823
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից		2,395,286	1,588,348
Այլ գործառնական (վճարումներ)/մուտքեր		468,489	636,010
Այլ ընդհանուր վարչական ծախսերի և անձնակազմի գծով ծախսերի վճարումներ		(6,160,269)	(6,510,116)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		62,846	(373,937)
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ		(3,404,109)	5,618,385
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ		18,649,818	(36,781,309)
Այլ ակտիվներ		404,793	(1,376,177)
Գործառնական պարտավորությունների (նվազում)/աճ			
Բանկերի ավանդներ և մնացորդներ		(5,217,763)	4,272,602
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		11,033,829	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		14,632,863	31,746,737
Այլ պարտավորություններ		(1,160,133)	131,050
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը		56,556,991	8,343,751
Վճարված շահութահարկ		(1,057,537)	(2,153,921)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր		55,499,454	6,189,830
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,430,164)	(1,941,713)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք		1,604	2,733
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(43,322,890)	(11,974,857)
Մուտքեր ներդրումային արժեթղթերի մարումից		2,613,300	11,155,485
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր		(42,138,150)	(2,758,352)
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Ստացված շահաբաժիններ		3,637	-
Վճարված շահաբաժիններ	25	(2,823,680)	(4,000,062)
Ստացված այլ փոխառություններ և ստորադաս պարտավորություններ	23	32,250,046	17,050,440
Այլ փոխառությունների և ստորադաս պարտավորությունների մարում	23	(21,068,651)	(18,819,042)
Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից	22	-	4,695,477
Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ	28	(602,136)	(572,827)
Ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված)/ ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր		7,759,216	(1,646,014)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		21,120,520	1,785,464
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		3,846,174	(275,438)
Արժեզրկման գծով պահուստի փոփոխությունների ազդեցություն		(7,804)	(7,372)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		44,132,044	42,629,390
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	12	69,090,934	44,132,044

* 2019թ. որոշ հոդվածներ վերադասակարգվել են 2020թ. ներկայացման հետ համապատասխանություն ապահովելու համար (տես Ծանոթագրություն 3 (դ)):

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Հոդատարածքի և շենքերի վերազնադա- տումից աճ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի	Գրաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	14,545,680	7,753,923	3,500,000	1,763,111	1,049,193	27,671,710	56,283,617
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	-	5,073,788	5,073,788
Այլ համապարփակ վնաս							
Հորիզոններ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս							
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.							
- իրական արժեքի գույտ փոփոխություն՝ առանց շահութանարկի	-	-	-	-	(547,476)	-	(547,476)
Ընդամենը այլ համապարփակ վնաս	-	-	-	-	(547,476)	-	(547,476)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	-	-	-	-	(547,476)	5,073,788	4,526,312
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում վճարված շահարաժիհներ							
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	-	-	-	-	-	(2,823,680)	(2,823,680)
Հորիզոններ, որոնք երբեք հետագայում չեն վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս							
Փոխանցում վերազնադատումից աճից ցրաշխված շահույթ							
-	-	-	-	(25,242)	-	25,242	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	14,545,680	7,753,923	3,500,000	1,737,869	501,717	29,947,060	57,986,249

Մեխիական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Հոդատարածքի և շենքերի վերագնահա- տումից աճ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Խազ. դրամ	14,545,680	7,753,923	3,500,000	1,744,734	1,500,999	22,234,366	51,279,702
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	-	-	-	-	-	9,412,780	9,412,780
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	-	-	-
Շահույթ տարվա համար	-	-	-	-	-	-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	-	-	-
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	-	-	-	-
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.	-	-	-	-	(451,806)	-	(451,806)
- իրական արժեքի գույտ փոփոխություն՝ առանց շահութահարկի	-	-	-	-	-	-	-
Հոդվածներ, որոնք երբեք հետագայում չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս	-	-	-	43,003	-	-	43,003
Հոդատարածքի և շենքերի վերագնահատման պահուստ	-	-	-	43,003	(451,806)	-	(408,803)
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	43,003	(451,806)	9,412,780	9,003,977
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	-	-	-	-	-	-	-
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում	-	-	-	-	-	-	-
Վճարված շահաբաժիններ	-	-	-	-	-	(4,000,062)	(4,000,062)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	-	-	-	-	-	(4,000,062)	(4,000,062)
Հոդվածներ, որոնք երբեք հետագայում չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս	-	-	-	-	-	-	-
Փոխանցում վերագնահատումից աճից չբաշխված շահույթ	-	-	-	(24,626)	-	24,626	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	14,545,680	7,753,923	3,500,000	1,763,111	1,049,193	27,671,710	56,283,617

Մեխական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Ինելորանկ» ՓԲԸ-ն («Բանկ») հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն 1996թ-ին: Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի, երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով և արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (<< ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և Հայաստանի Հանրապետության ավանդների երաշխավորման համակարգի անդամ է:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0001, Թումանյան փ. 17:

Բանկն ունի 25 մասնաճյուղ և գլխամասային գրասենյակ: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկի բաժնետերերն են՝ պրն. Ավետիս Բաղդասարյանը (38.10%), պրն. Կարեն Սաֆարյանը (33.00%) և agRIF Cooperatief U.A. (10.00%): Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները բացահայտված են Ծանոթագրություն 30-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Բացի այդ, Լեռնային Ղարաբաղում 2020թ. սեպտեմբերին վերսկսված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, և COVID-19 համավարակն էլ ավելի են մեծացրել գործարար միջավայրում գործունեություն իրականացնելու պայմանների հետ կապված անորոշությունը:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ) պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով, և հողատարածքի և շենքերի, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն էին համապատասխանաբար 522.59 դրամ և 479.7 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և 641.11 դրամ և 537.26 դրամ 1 եվրոյի համար:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 4 (ե) (i),
- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի ան սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն և հաստատում – Ծանոթագրություն 26 (գ):

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալներն ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի համար, այդ թվում՝ ապագայամետ տեղեկատվության ներառումը – Ծանոթագրություն 26 (գ),
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի գնահատում – Ծանոթագրություն 31:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջաններին համար:

(ա) Արտաբաժնային գործառնություններ

Արտաբաժնային գործառնությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտաբաժնային դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտաբաժնային գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների ու վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտաբաժնային ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտաբաժնային ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, որոնց հետ կապված որոշում է կայացվել իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ են կանխիկը և ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): ՀՀ ԿԲ-ում պահվող պարտադիր պահուստային ավանդը չի համարվում դրամական միջոցների համարժեք, քանի որ դրանից միջոցների ելքագրումը սահմանափակված է: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը գեղջում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հաճախ մայր գումարի վճարումները, գումարած կամ հաճախ արդյունավետ տոկոսադրույքի մեջնորդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լրացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 3 (ե) (iv) կետում:

Ներկայացում

Ծախսերի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեջնորդով հաշվարկված տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Ծախսերի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

(դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում (տես Ծանոթագրություն 3 (գ)):

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները և վաճառքների գծով միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխառվողի հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխառվողի հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեղմողով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

i. Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները.

- արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
- ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
- արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և վնասներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է ամենինչ յուրաքանչյուր ներդրման համար:

Այս բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այսպես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՛ հավաքված դրամական հոսքերի վրա):

- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվներ վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այս պայմանը: Գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեզրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
- հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

Բանկն ունի ֆիքսված տոկոսադրույքով երկարաժամկետ վարկերի պորտֆել, որոնց հետ կապված հնարավորություն ունի վերանայել տոկոսադրույքը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հիմնական տոկոսադրույքի փոփոխության դեպքում: Վարկառուն հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Բանկը որոշել է, որ այս վարկերի պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, քանի որ այս հնարավորությունից օգտվելու դեպքում տոկոսադրույքն այնպես է փոփոխվում, որ դառնում է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի համար հատուցում: Փոխարենը, Բանկն այս վարկերը դիտարկում է որպես ըստ իրենց էության լողացող տոկոսադրույքով վարկեր (տես Ծանոթագրություն 4 (ե) (iii)):

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների, դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

ii. Ապահանջում

Ֆինանսական ակտիվներ

Բանկն ապահանջում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապահանջելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապահանջված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապահանջման ժամանակ: Ապահանջման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապահանջվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Բանկը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապահանջում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

iii. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է, արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորուստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Բանկի կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Բանկն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Բանկը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը կիրառում է կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությունը:

Եթե դրամական հոսքերի փոփոխությունը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն փոփոխության նպատակն է առավելագույն չափով հետ ստանալ/վերականգնել ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Բանկը մտադիր է այնպես փոփոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրսգրվի նախքան փոփոխությունը կատարելը (տես՝ ստորև դուրսգրման քաղաքականություն): Այս մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Բանկն իրականացնում է նաև որակական գնահատում գնահատելու համար փոփոխության նշանակալի լինելը:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես փոփոխումից օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում: Լողացող

տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Փոփոխման շրջանակում ցանկացած կրած ծախսում կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման փոփոխությունն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Բանկը հաշվառում է տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապահանայում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր փոփոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի գեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և գեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի գեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության փոփոխությունը չի բավարարում ապահանջման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, գեղչելով փոփոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացորդային ժամանակահատվածում: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

iv. Արժեզրկում

Տես նաև Ծանոթագրություն 26 (գ):

Բանկը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չհասնող հետևյալ ֆինանսական գործիքների համար.

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր և
- փոխատվության հանձնառություններ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Բանկը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով.

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ և
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր (տես Ծանոթագրություն 26 (գ)):

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման ռեպերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման ռեպերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, բայց ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված չեն) և 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված են):

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ.

- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ*, որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (դրամական պակասորդը պայմանագրին համապատասխան Բանկին հասանելիք դրամական հոսքերի և Բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ*, որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերություն,
- *օգտագործված փոխատվության հանձնառություններ*, որպես հետևյալ նշվածների միջև տարբերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման Բանկին, եթե օգտագործում է փոխառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Բանկն ակնկալում է ստանալ,
- *ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*, որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք փոխառուցում են տիրապետողին կրած պարտքային կորուստը՝ հանած այն գումարները, որոնք Բանկն ակնկալում է հետ ստանալ:

Տես նաև Ծանոթագրություն 26 (գ):

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվն ապահանջելու անհրաժեշտությունը (տես Ծանոթագրություն 3 (ե) (ii)), և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապահանջմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում (տես Ծանոթագրություն 26 (գ)):
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապահանջմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապահանջման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը գեղջվում է ապահանջման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտագանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հաժմանակալությունը, որ փոխառուն կսննկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, ֆիզիկական անձանց տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Պետական պարտատոմսերում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկունակության վարկանիշային գործակալությունների գնահատումները:
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանակությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով:
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը: Սա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- *ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- *փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ սովորաբար որպես պահուստ,
- *երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին*՝ Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և
- *իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ*՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Բանկը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ/պարտքերի գանձման միջոցներ՝ վճարման ենթակա գումարների փոխհատուցման Բանկի ընդացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Ֆինանսական ակտիվի անբաժանելի մաս չհանդիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բանկը գնահատում է, արդյոք ֆինանսական երաշխավորության պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, որը հաշվառվում է որպես այդ գործիքի բաղադրիչ, թե առանձին հաշվառվող պայմանագիր: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- արդյոք երաշխավորությունը նախատեսված է պարտքային գործիքի պայմանագրի պայմաններով,
- արդյոք երաշխավորությունը պահանջվում է պարտքային գործիքի պայմանագիրը կարգավորող օրենքներով և կանոնակարգերով,
- արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և
- արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ փոխառուի խմբի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված վճարվելիք ցանկացած հավելավճար հաշվառվում է որպես այդ ակտիվի ձեռքբերման գործարքի գծով ծախսում: Պարտքային

գործիքի իրական արժեքը և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Բանկը հաշվի է առնում երաշխավորությամբ ապահովվող պաշտպանության ազդեցությունը:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը, որի համար ստացվել է երաշխավորությունը, ոչ պարտքային առումով արժեզրկված է և ոչ էլ ենթարկվել է պարտքային ռիսկի նշանակալի աճի երաշխավորությունը ստանալու պահին: Այս ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը փոխհատուցման իրավունքի գծով օգուտները կամ կորուստները ներկայացնում է շահույթում կամ վնասում «ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ» հոդվածում:

(գ) Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» հոդվածը ներառում է.

- ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերը (տես Ծանոթագրություն 3 (ե) (i)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(ե) Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «ներդրումային արժեթղթեր» հոդվածը ներառում է.

- ամորտիզացված արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերը (տես Ծանոթագրություն 3 (դ) (i)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերը (տես՝ Ծանոթագրություն 3 (դ) (i)) և
- բաժնային ներդրումային արժեթղթերը, որոնք նախորդված են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող (տես՝ Ծանոթագրություն 3 (դ) (i)):

(ը) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր, այլ փոխառություններ և ստորադաս պարտավորություններ

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը, այլ փոխառությունները և ստորադաս պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հաճաճ գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, դ:

(թ) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դերիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ նշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից (տես Ծանոթագրություն 3 (ե) (iv)) և սկզբնապես ճանաչված գումարից՝ հաճաճ, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Բանկը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Բանկը ճանաչում է կորստի պահուստ (տես Ծանոթագրություն 3 (ե) (iv)) ՖՀՄՄ 9-ի համաձայն:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են պահուստների կազմում:

(ժ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով կրեդիտորական պարտքերի կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակով չափվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(ի) Հիմնական միջոցներ

(i) Մեխանիկական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Վերագնահատում

Հողատարածքը և շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հողատարածքի և շենքերի իրական արժեքների փոփոխություններից: Եթե հողատարածքի և շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե հողատարածքի և շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(iii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով առանձին ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- շենքեր	50 տարի
- համակարգիչներ և կապի սարքավորումներ	5-ից 7 տարի
- վարձակալված գույքի բարելավում	5 տարի
- փոխադրամիջոցներ	7 տարի
- այլ	5-ից 7 տարի

(i) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման և ներդրման ծախսումները կապիտալացվում են համապատասխան ոչ նյութական արժեքի ինքնարժեքին:

Ձեռք բերված համակարգչային ծրագրերի լիցենզիաները կապիտալացվում են հիմք ընդունելով համապատասխան ծրագրի ձեռքբերման և գործարկման համար կատարված ծախսումները:

Ոչ նյութական ակտիվների գծով հետագա ծախսումները կապիտալիզացվում են միայն այն դեպքում, երբ ավելացնում են այն ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են:

Համակարգչային ծրագրերի մշակման կամ սպասարկման հետ կապված ծախսումները ճանաչվում են որպես կրած ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները կազմում են 10 տարի:

(ի) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են գեղջելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը գեղջման միջև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը հատուկ ռիսկերը:

(ծ) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները, ներառյալ հարկերը, ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

(ii) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես Էմիսիոն եկամուտ:

(iii) Ծահաբաժիններ

Ծահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(կ) Առգրավված գրավ

Առգրավված գույքը հաշվառվում է սկզբնական արժեքից և գույք իրացման արժեքից նվազագույնով:

(հ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը գնդվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով գեղջման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ձ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային գեղջերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք

կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Զնանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

(դ) Համադրելի տեղեկատվություն

(i) Դրամական հոսքերի մասին հաշվետվության ներկայացման փոփոխություն

2020թ-ին Բանկի ղեկավարությունը որոշել է փոխել դրամական հոսքերի մասին հաշվետվությանը ներկայացումը՝ ներդրումային արժեթղթերի առք ու վաճառքից ստացվող դրամական հոսքերը ներկայացնելով ներդրումային գործունեության, այլ ոչ՝ գործառնական գործունեության կազմում: Բանկի ղեկավարությունը գտնում է, որ ներկայացման փոփոխությունը ապահովում է Բանկի գործառնությունների առավել պատշաճ ներկայացում:

Դրամական հոսքերի մասին հաշվետվության ներկայացման փոփոխության արդյունքում 2019թ. որոշ հոդվածներ վերադասակարգվել են 2020թ. ներկայացման հետ համապատասխանություն ապահովելու համար:

հազ. դրամ	Ըստ 2019թ. ֆինանսական հաշվետվությունների	Վերադասակարգում	2019թ. վերադասակարգված
Ներդրումային արժեթղթերի նվազում	(819,372)	819,372	-
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	58,255	(5,676,640)	(5,618,385)
Չուտ մուտքեր իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից	-	185,823	185,823
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը	13,015,196	(4,671,445)	8,343,751
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր	10,861,275	(4,671,445)	6,189,830
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	-	(11,974,857)	(11,974,857)
Մուտքեր այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի մարումից	-	11,155,485	11,155,485
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր	(1,938,980)	(819,372)	(2,758,352)

(ii) Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ներկայացման փոփոխություն

ՀՀ կենտրոնական բանկում պահվող ներգրավված միջոցների գծով պարտադիր պահուստը դրամական միջոցներից և դրանց համարժեքներից դասակարգվել է բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխառությունների կազմ, քանի որ այս մնացորդների ելքագրումը սահմանափակված է: Պարտադիր օրական նվազագույն պահուստ ապահովելու պահանջն ուժի մեջ է մտել 2019թ-ին, այդ իսկ պատճառով, ներկայացման փոփոխությունն ազդեցություն չի ունեցել 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա:

հազ. դրամ	Ըստ 2019թ. ֆինանսական հաշվետվությունների	Վերադասա- կարգում	2019թ. վերադասակարգված
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	49,808,684	(5,676,640)	44,132,044
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	1,073,545	5,676,640	6,750,185

(ն) Սեզմենային հաշվետվություններ

Գործառնական սեզմենտը Բանկի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեությունում, որից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեզմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Ղեկավարությունը գտնում է, որ Բանկը բաղկացած է մեկ գործառնական սեզմենտից:

(մ) Հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ

Մի շարք նոր ստանդարտներ և ստանդարտների մեղմաբանություններ գործում են 2020թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների և մեղմաբանությունների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

Ա. Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)

Փոփոխությունները հստակեցնում են, թե որ ծախսումներն է Բանկը ներառում պայմանագրի անբարենպաստ լինելը գնահատելու համար պայմանագրի կատարման ծախսումները որոշելիս: Փոփոխությունները գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ փոփոխություններն առաջին անգամ կիրառելու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար: Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ փոփոխությունների կիրառման կուտակային հետևանքը ճանաչվում է որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների սկզբնական մնացորդի ճշգրտում՝ ըստ կիրառելիության: Համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում: Բանկը չունի նման պայմանագրեր 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Բ. Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխում. Փուլ 2 (ՀՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՀՀՄՍ 7, ՀՀՄՍ 4 և ՀՀՄՍ 16 փոփոխություններ)

Փոփոխություններն անդրադառնում են այն հարցերին, որոնք կարող են ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում, ներառյալ փոփոխությունների ազդեցությունը պայմանագրային դրամական հոսքերի կամ հեջավորման հարաբերությունների վրա՝ ուղենիշային տոկոսադրույքն այլընտրանքային ուղենիշային

տոկոսադրույքով փոխարինելու դեպքում: Փոփոխությունները նախատեսում են ազատում ԹՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ԹՀՄՍ 7, ԹՀՄՍ 4 և ԹՀՄՍ 16 որոշակի պահանջներից, որոնք վերաբերում են.

- ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և վարձակալության գծով պարտավորությունների հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություններին և
- հեջի հաշվառմանը:

(i) *Դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություն*

Փոփոխությունները Բանկից կպահանջեն հաշվառել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գծով պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխությունը՝ թարմացնելով ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման հետ կապված:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի LIBOR դրույքով 9,413,093 հազար դրամ գումարով գրավով չապահովված փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից, որոնք ենթակա են բարեփոխման IBOR դրույքով: Բանկն ակնկալում է, որ 2021թ-ին այս փոխառությունների ուղենիշային տոկոսադրույքը կփոխվի SOFR դրույքի և որ այս փոփոխությունների գծով ճշգրտումներ կատարելու արդյունքում չի առաջանա նշանակալի օգուտ կամ կորուստ փոփոխումից:

(ii) *Հեջի հաշվառում*

Փոփոխությունները նախատեսում են բացառություններ հեջի հաշվառման պահանջների հետ կապված հետևյալ ոլորտներում.

- Թույլ տալ փոփոխություն հեջավորման հարաբերության նախորդման հետ կապված բարեփոխմամբ պահանջվող փոփոխություններն արտացոլելու համար:
- Բարեփոխմամբ պահանջվող փոփոխություններն արտացոլելու համար դրամական հոսքերի հեջում հեջավորված հոդվածի գծով փոփոխություն կատարելիս՝ դրամական հոսքերի հեջի պահուստում կուտակված գումարը կդիտարկվի որպես հիմնված այն այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքի վրա, որով որոշվում են հեջավորված ապագա դրամական հոսքերը:
- Երբ հոդվածների խումբը նախորդվում է որպես հեջավորված հոդված, և խմբի հոդվածի հետ կապված կատարվում է փոփոխություն բարեփոխմամբ պահանջվող փոփոխություններն արտացոլելու համար, հեջավորված հոդվածները բաշխվում են ենթախմբերի հեջավորվող ուղենիշային տոկոսադրույքների հիման վրա:
- Եթե Բանկը ողջամտորեն ակնկալում է, որ այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքն առանձին նույնականացվող է 24 ամսվա ընթացքում, ապա չի արգելվում տոկոսադրույքը նախորդել որպես պայմանագրորեն չհատկորոշված ռիսկային բաղադրիչ, եթե այն առանձին նույնականացվող չէ նախնորման ամսաթվի դրությամբ:

Հեջի հաշվառման բացակայության հետևանքով Բանկը չի ակնկալում որևէ ազդեցություն IBOR դրույքին անցման հետ կապված:

(iii) *Բացահայտում*

Փոփոխությունները Բանկից կպահանջեն բացահայտել լրացուցիչ տեղեկատվություն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում առաջացող ռիսկերին Բանկի ենթարկվածության և ռիսկերի կառավարման համար իրականացվող համապատասխան գործունեության վերաբերյալ:

(iv) *Անցում*

Բանկը մտադիր է կիրառել փոփոխությունները 2021թ. հունվարի 1-ից: Փոփոխությունների կիրառումն ազդեցություն չի ունենա 2020թ. կամ նախորդ ժամանակաշրջանների համար ներկայացված գումարների վրա:

Գ. Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվություններին վրա:

- Վարձակալության գծով զիջումները COVID-19 համավարակի հետ կապված (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Հիմնական միջոցներ. Մուտքեր նախքան նպատակային օգտագործումը (ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ)
- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» և ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխություններ

4 Չուտ տոկոսային եկամուտ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	30,648,293	31,805,398
Ներդրումային արժեթղթեր	4,149,569	2,613,121
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	251,243	45,261
Այլ	48,457	194,845
Ընդամենը տոկոսային եկամուտ	35,097,562	34,658,625
Ցուկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	8,601,734	6,901,934
Այլ փոխառություններ	4,215,654	4,589,569
Ստորադաս փոխառություններ	746,604	644,158
Թողարկված պարտքային արժեթղթեր	678,287	464,238
Վարձակալության գծով պարտավորություններ	236,646	192,326
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	225,726	323,339
Բանկերի ավանդներ և մնացորդներ	18,887	72,972
Ընդամենը տոկոսային ծախս	14,723,538	13,188,536
Չուտ տոկոսային եկամուտ	20,374,024	21,470,089

9 Արժեզրկումից զուտ կորուստներ ֆինանսական գործիքների գծով

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր	10,002,654	5,689,812
Ներդրումային արժեթղթեր	102,295	(141,939)
Փոխառվածքային հանձնառություններ	144,251	23,960
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	432	(16,280)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	943	10,055
Այլ ֆինանսական ակտիվներ	(4,760)	12,622
	10,245,815	5,578,230

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է հաճախորդներին տրված վարկերի գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2020թ. և 2019թ. համար:

հազ. դրամ

	2020թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք				
Մնացորդը առ 1 հունվարի	187,453	266,947	2,321,038	2,775,438
Տեղափոխում 1-ին փուլ	1,714	(1,714)	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(144,589)	144,589	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	(95,664)	95,664	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	155,494	152,819	(769,441)	(461,128)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	165,718	-	-	165,718
Զուտ դուրսգրումներ	-	-	(181,883)	(181,883)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	365,790	466,977	1,465,378	2,298,145

հազ. դրամ

	2020թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – ֆիզիկական անձիք				
Մնացորդը առ 1 հունվարի	1,044,539	893,418	1,703,131	3,641,088
Տեղափոխում 1-ին փուլ	43,328	(43,328)	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(482,987)	482,987	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	(4,217,294)	4,217,294	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(819,318)	5,570,621	3,578,852	8,330,155
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	1,967,909	-	-	1,967,909
Զուտ դուրսգրումներ	-	-	(5,351,823)	(5,351,823)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	1,753,471	2,686,404	4,147,454	8,587,329

հազ. դրամ

	2019թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք				
Մնացորդը առ 1 հունվարի	647,432	770,474	1,063,634	2,481,540
Տեղափոխում 1-ին փուլ	14,485	(14,485)	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(49,984)	49,984	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	(613,710)	613,710	-
Կորստի պահուստի գույտ վերաչափում	(600,090)	74,684	1,018,728	493,322
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	175,610	-	-	175,610
Չուտ դուրսգրումներ	-	-	(375,034)	(375,034)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	187,453	266,947	2,321,038	2,775,438

հազ. դրամ

	2019թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – ֆիզիկական անձիք				
Մնացորդը առ 1 հունվարի	923,067	511,446	1,837,778	3,272,291
Տեղափոխում 1-ին փուլ	32,105	(29,000)	(3,105)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(160,434)	201,272	(40,838)	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	(1,810,301)	1,810,301	-
Կորստի պահուստի գույտ վերաչափում	(1,883,318)	2,020,001	2,751,078	2,887,761
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	2,133,119	-	-	2,133,119
Չուտ դուրսգրումներ	-	-	(4,652,083)	(4,652,083)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	1,044,539	893,418	1,703,131	3,641,088

Մտորեն բերվող աղյուսակում ներկայացված է հետևյալ երկու մեծությունների համադրումը.

- վերը աղյուսակներում ներկայացված կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդներն ըստ ֆինանսական գործիքների դասերի և
- «արժեզրկումից զուտ կորուստներ ֆինանսական գործիքների գծով» հոդվածը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

2020թ.

հազ. դրամ	Կորստի պահուստի զուտ վերաչափում	Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(7,372)	7,804	432
Ամորտիզացված արժեքով չափվող հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(10,055)	10,998	943
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր. իրավաբանական անձիք	(461,128)	165,718	(295,410)
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր. ֆիզիկական անձիք	8,330,155	1,967,909	10,298,064
Այլ ֆինանսական ակտիվներ	(12,622)	7,862	(4,760)
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր	963	105,235	106,198
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր	(4,706)	803	(3,903)
Արտահաշվեկշռային հանձնառություններ	144,251	-	144,251
Ընդամենը	7,979,486	2,266,329	10,245,815

2019թ.

հազ. դրամ	Կորստի պահուստի զուտ վերաչափում	Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(23,652)	7,372	(16,280)
Ամորտիզացված արժեքով չափվող հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	-	10,055	10,055
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր. իրավաբանական անձիք	493,322	175,610	668,932
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր. ֆիզիկական անձիք	2,887,761	2,133,119	5,020,880
Այլ ֆինանսական ակտիվներ	-	12,622	12,622
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր	7,308	27,920	35,228
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր	(177,167)	-	(177,167)
Արտահաշվեկշռային հանձնառություններ	23,960	-	23,960
Ընդամենը	3,211,532	2,366,698	5,578,230

10 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա*	1,436,924	1,155,824
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	390,723	382,517
Վճարումներ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	330,368	283,808
Շուկայավարում և հասարակայնության հետ կապեր	119,535	255,550
Գրասենյակային ծախսեր	105,500	95,041
Ապահովագրություն	103,444	101,880
Մասնագիտական ծառայություններ	96,453	138,097
Կապի ծառայություններ	83,585	92,707
Անվտանգության ծառայություն	70,167	72,621
Զփոխհատուցվող հարկեր	33,196	21,118
Վարկային բյուրո վճարված վճարներ	29,410	27,817
Գործառնական վարձակալության գծով ծախս	22,404	22,400
Այլ	298,523	308,779
	3,120,232	2,958,159

* 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա մաշվածության և ամորտիզացիայի գումարումներն 452,672 հազար դրամ գումարը (2019թ-ին՝ 464,443 հազար դրամ) վերաբերում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ամորտիզացիային՝ ՖՀՄՍ 16 «Հարձակալություններ» պահանջների համաձայն (տես Ծանոթագրություն 18):

11 Շահութահարկի գծով ծախս

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	2,527,369	1,831,326
Ճշգրտումներ նախորդ տարվա ընթացիկ շահութահարկի գծով	(5,130)	-
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների փոփոխություններ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման հետևանքով	(1,307,399)	391,658
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	1,214,840	2,222,984

2020թ-ին ընթացիկ հարկի կիրառելի դրույքաչափը կազմում է 18% (2019թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2020թ. հազ. դրամ	%	2019թ. հազ. դրամ	%
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	6,288,628		11,635,764	
Շահութահարկ՝ հարկի կիրառելի դրույքաչափով	1,131,953	18.0	2,327,153	20.0
Հարկի դրույքաչափի նվազեցման հետևանք	-	0.0	(91,651)	(0.8)
Զնվազեցվող ծախսեր/(չհարկվող եկամուտ)	88,017	1.4	(12,518)	(0.1)
Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում	(5,130)	(0.1)	-	0.0
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	1,214,840	19.3	2,222,984	19.1

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են գուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Ստորև ներկայացված են ժամանակավոր տարբերությունների փոփոխությունները 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.
Ներդրումային արժեթղթեր	(219,512)	12,289	120,175	(87,048)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,327	78	-	1,405
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	(6,327)	(6,787)	-	(13,114)
Հաճախորդներին տրված վարկեր	(1,201,341)	1,192,184	-	(9,157)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(574,098)	(3,745)	-	(577,843)
Այլ ակտիվներ	(52,852)	78,714	-	25,862
Այլ պարտավորություններ	163,653	34,666	-	198,319
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(1,889,150)	1,307,399	120,175	(461,576)

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված հարկի դրույքա- յափի փոփոխու- թյան հետևանքները	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հարկի դրույքաչափի փոփոխության հետևանքները	Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.
Ներդրումային արժեթղթեր	(333,853)	(25,550)	-	(87,741)	24,805	202,827	(219,512)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,730	(2,930)	(473)	-	-	-	1,327
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	(22,301)	13,744	2,230	-	-	-	(6,327)
Հաճախորդներին տրված վարկեր	(890,296)	(400,075)	89,030	-	-	-	(1,201,341)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(553,310)	(33,116)	12,328	-	-	-	(574,098)
Այլ ակտիվներ	(52,236)	(48,843)	5,224	-	43,003	-	(52,852)
Այլ պարտավորություններ	166,880	13,461	(16,688)	-	-	-	163,653
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(1,680,386)	(483,309)	91,651	(87,741)	67,808	202,827	(1,889,150)

12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Կանխիկը դրամարկղում	13,740,264	15,691,890
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	48,072,786	24,932,635
Նոստրո հաշիվներ այլ բանկերում		
- A1-ից A3 վարկանիշով	3,568,880	1,325,718
- Baa1-ից Baa3 վարկանիշով	3,104,418	1,233,126
- Ba1-ից Ba3 վարկանիշով	493,961	796,519
- Ba1-ից ցածր վարկանիշով	531	115,790
- առանց վարկանիշի	117,898	43,738
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում	7,285,688	3,514,891
Ընդամենը համախառն դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	69,098,738	44,139,416
Պարտքային կորստի գծով պահուստ	(7,804)	(7,372)
Ընդամենը զուտ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	69,090,934	44,132,044

Պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշներից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի բանկերում տեղաբաշխված միջոցներ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում

ՀՀ ԿԲ-ում պահվող նոստրո հաշիվները վերաբերում են վճարահաշվարկային գործունեությանը (տես Ծանոթագրություն 14) և անհրաժեշտության դեպքում կարող են ելքագրվել:

13 Ներդրումային արժեթղթեր

(ա) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ կառավարության արժեթղթեր	4,969,969	13,865,514
Ընդամենը պետական պարտատոմսեր	4,969,969	13,865,514
Կորպորատիվ պարտատոմսեր		
- առանց վարկանիշի	345,962	342,461
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	345,962	342,461
Բաժնային գործիքներ		
Կորպորատիվ բաժնետոմսեր	31,055	30,914
Ընդամենը Բանկի կողմից պահվող արժեթղթեր	5,346,986	14,238,889
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ կառավարության արժեթղթեր	6,104,461	-
Ընդամենը վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված արժեթղթեր	6,104,461	-
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	11,451,447	14,238,889

(բ) Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ կառավարության արժեթղթեր	45,020,177	10,725,640
- Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	6,999,909	4,541,416
Ընդամենը պետական պարտատոմսեր	52,020,086	15,267,056
Կորպորատիվ պարտատոմսեր		
- B-ից B+ վարկանիշով	1,133,046	-
- առանց վարկանիշի	557,891	-
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	1,690,937	-
Ընդամենը Բանկի կողմից պահվող արժեթղթեր	53,711,023	15,267,056
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ կառավարության արժեթղթեր	5,584,796	-
Ընդամենը վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված արժեթղթեր	5,584,796	-
Ընդամենը համախառն ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	59,295,819	15,267,056
Պարտքային կորստի գծով պահուստ	(141,426)	(35,228)
Ընդամենը զուտ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	59,154,393	15,231,828

Բանկը վաճառում է արժեթղթեր հետգնման պայմանագրերի շրջանակում և ձեռք է բերում արժեթղթեր վերավաճառքի պայմանագրերի շրջանակում:

Հետգնման պայմանագրերի շրջանակում վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին, և Բանկը ստանում է դրամական միջոցներ դրա դիմաց: Պայմանագրային կողմերը կարող են վերագրավադրել կամ վերավաճառվել այս ֆինանսական ակտիվները Բանկի կողմից պարտագանցման բացակայության դեպքում, սակայն պայմանագրային կողմը պարտավոր է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ժամկետի ավարտին: Բանկը որոշել է, որ պահպանում է այս արժեթղթերի հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, այդ իսկ պատճառով, չի ապահանջել դրանք: Ստացված դրամական միջոցները ճանաչվում են որպես ֆինանսական ակտիվ, իսկ գրավի ձեռքբերման գինը մարելու պարտականության գծով ճանաչվում է ֆինանսական պարտավորություն և ներառվում է հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներում (Ծանոթագրություն 20):

Այս գործարքներն իրականացվում են փոխառության, արժեթղթերի փոխառության և փոխառություն ստանդարտ գործառնություններին բնորոշ պայմաններով:

Բոլոր ներդրումային արժեթղթերը ամբողջությամբ դասված են 1-ին փուլ 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

14 Բանկերի նկատմամբ այլ պահանջներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց ՀՀ ԿԲ-ում	2,051,500	947,000
Ավանդ ՀՀ ԿԲ-ում, պարտադիր պահուստներ	8,759,770	5,676,640
Բանկերին տրված փոխառություններ		
A1-ից A3 վարկանիշով	44,052	-
Baa1-ից Baa3 վարկանիշով	10,452	9,594
B1-ից B3 վարկանիշով	47,361	109,970
Կանոնավոր կերպով գնման պայմանագիր. սփռված գործարքներ արտարժույթի		
A1-ից A3 վարկանիշով	5,082	3,251
Baa1-ից ցածր վարկանիշով	4,973	3,730
Ընդամենը բանկերին նկատմամբ այլ պահանջներ	10,923,190	6,750,185

Պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշներից:

(ա) Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում

Մնացորդները ՀՀ ԿԲ-ում ներառում են վարկային քարտերով գործառնությունների համար ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցը, որը ոչ տոկոսակիր ավանդ է, որը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն և որի ելքագրումը սահմանափակված է:

Համաձայն ՀՀ օրենսդրության Բանկերից պահանջվում է ՀՀ ԿԲ-ում իրականացնել պարտադիր պահուստավորում ներգրավված միջոցների համար: ՀՀ դրամով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստը կազմում է 2% և ամբողջությամբ պահվում է ՀՀ դրամով: Արտարժույթով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստը կազմում է 18%, որից 10%-ը պահվում է ՀՀ դրամով, իսկ 8%-ը՝ ներգրավված միջոցների համապատասխան արտարժույթով (2019թ-ին՝ 12%՝ ՀՀ դրամով և 6%՝ ներգրավված միջոցների համապատասխան արտարժույթով): ՀՀ դրամով պահվող ավանդը ելքագրելու Բանկի իրավունքը չի սահմանափակվում օրենսդրությամբ, սակայն եթե Բանկը չի ապահովում պահուստի նվազագույն միջին օրական գումարը, վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ: ՀՀ դրամով պահվող պարտադիր պահուստները դասակարգվում են որպես դրամական միջոցներ և դրանց դրամական համարժեքներ (տես Ծանոթագրություն 12), քանի

որ կարող են ելքագրվել անհրաժեշտության դեպքում:

Արտարժույթով պահվող պարտադիր պահուստի համար Բանկն պարտավոր է ապահովել նվազագույն օրական մնացորդ: Այս պահուստները չեն համարվում դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և ներառված են բանկերի նկատմամբ այլ պահանջների կազմում: Պարտադիր օրական նվազագույն պահուստ ապահովելու պահանջն ուժի մեջ է մտել 2019թ-ին:

(բ) Բանկերին կատմամբ այլ պահանջների կենտրոնացում

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Բանկը չունի պայմանագրային կողմ հանդիսացող բանկեր (2019թ-ին նման բանկեր չկային), բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, որոնց գծով մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

(գ) Բանկերի նկատմամբ այլ պահանջների պարտքային որակ

Բանկերի նկատմամբ այլ պահանջները ժամկետանց կամ արժեզրկված չեն և ամբողջությամբ դասված են 1-ին փուլ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (ինչպես նաև 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) այլ պահանջները չափվում են ամորտիզացված արժեքով 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս մնացորդների գծով ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից էական գումար չեն ներկայացնում, այդ իսկ պատճառով, Բանկը չի ճանաչել պարտքային կորստի պահուստ:

15 Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Հայկական բանկերից ստացվելիք գումարներ, առանց վարկանիշի	3,209,502	2,686,723
Փոքր և միջին չափի հայկական ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարներ, առանց վարկանիշի	525,662	455,546
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք համախառն գումարներ	3,735,164	3,142,269
Պարտքային կորստի գծով պահուստ	(10,998)	(10,055)
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գույտ գումարներ	3,724,166	3,132,214

2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի պայմանագրային կողմ հանդիսացող բանկ կամ ֆինանսական կազմակերպություն, որի գծով մնացորդները գերազանցեն Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերը վերագրելի են խոշոր հայկական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին: Բոլոր գումարները դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(ա) Ակտիվների համար որպես ապահովություն ընդունված գրավ

2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված էին հետևյալ իրական արժեքով արժեթղթերը.

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
ՀՀ կառավարության արժեթղթեր	3,843,418	3,478,556
Կորպորատիվ պարտատոմսեր	96,786	84,511
Ընդամենը արժեթղթերի իրական արժեք	3,940,204	3,563,067

16 Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվածություններ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր		
Վարկեր խոշոր ընկերություններին	63,667,064	63,835,132
Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	57,284,491	66,211,803
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	120,951,555	130,046,935
Ֆիզիկական անձանց տրված վարկեր		
Սպառողական վարկեր	64,623,958	78,128,732
Հիփոթեքային վարկեր	26,972,293	21,682,894
Վարկային քարտեր	8,609,572	8,617,094
Ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր	6,190,336	6,590,321
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված վարկեր	106,396,159	115,019,041
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված համախառն վարկեր	227,347,714	245,065,976
Պարտքային կորստի գծով պահուստ	(10,885,474)	(6,416,526)
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված զուտ վարկեր	216,462,240	238,649,450

(ա) Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պարտքային որակը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Վարկեր խոշոր ընկերություններին				
- ոչ ժամկետանց	61,120,599	1,710,503	78,389	62,909,491
- մինչև 30 օր ժամկետանց	-	-	-	-
- 30-90 օր ժամկետանց	-	-	-	-
- ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	757,573	757,573
Ընդամենը համախառն վարկեր խոշոր ընկերություններին	61,120,599	1,710,503	835,962	63,667,064
Պարտքային կորստի գծով պահուստ	(190,759)	(54,490)	(353,944)	(599,193)
Ընդամենը զուտ վարկեր խոշոր ընկերություններին	60,929,840	1,656,013	482,018	63,067,871
Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին				
- ոչ ժամկետանց	49,052,050	4,233,475	-	53,285,525
- մինչև 30 օր ժամկետանց	48,488	224,466	-	272,954
- 30-90 օր ժամկետանց	-	482,953	-	482,953
- ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	3,243,059	3,243,059
Ընդամենը համախառն վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	49,100,538	4,940,894	3,243,059	57,284,491
Պարտքային կորստի գծով պահուստ	(175,031)	(412,487)	(1,111,434)	(1,698,952)
Ընդամենը զուտ վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	48,925,507	4,528,407	2,131,625	55,585,539
Ընդամենը իրավաբանական անձանց տրված համախառն վարկեր	110,221,137	6,651,397	4,079,021	120,951,555
Ընդամենը իրավաբանական անձանց տրված զուտ վարկեր	109,855,347	6,184,420	2,613,643	118,653,410
Ֆիզիկական անձանց տրված վարկեր				
Սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	51,589,825	2,347,680	-	53,937,505
- մինչև 30 օր ժամկետանց	1,013,233	1,167,286	-	2,180,519
- 30-90 օր ժամկետանց	-	2,349,728	-	2,349,728
- ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	6,156,206	6,156,206
Ընդամենը համախառն սպառողական վարկեր	52,603,058	5,864,694	6,156,206	64,623,958
Պարտքային կորստի գծով պահուստ	(1,442,362)	(2,439,182)	(3,545,526)	(7,427,070)
Ընդամենը զուտ սպառողական վարկեր	51,160,696	3,425,512	2,610,680	57,196,888

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	26,486,405	112,283	-	26,598,688
- մինչև 30 օր ժամկետանց	11,250	21,759	-	33,009
- 30-90 օր ժամկետանց	-	56,633	-	56,633
- ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	283,963	283,963
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	26,497,655	190,675	283,963	26,972,293
Պարտքային կորստի գծով պահուստ	(9,330)	(12,614)	(42,819)	(64,763)
Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր	26,488,325	178,061	241,144	26,907,530
Վարկային քարտեր				
- ոչ ժամկետանց	7,052,410	418,455	-	7,470,865
- մինչև 30 օր ժամկետանց	115,207	44,063	-	159,270
- 30-90 օր ժամկետանց	-	210,088	-	210,088
- ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	769,349	769,349
Ընդամենը համախառն վարկային քարտեր	7,167,617	672,606	769,349	8,609,572
Պարտքային կորստի գծով պահուստ	(271,479)	(219,786)	(404,863)	(896,128)
Ընդամենը զուտ վարկային քարտեր	6,896,138	452,820	364,486	7,713,444
Ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր				
- ոչ ժամկետանց	5,339,993	90,608	-	5,430,601
- մինչև 30 օր ժամկետանց	53,675	15,109	-	68,784
- 30-90 օր ժամկետանց	-	94,103	-	94,103
- ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	596,848	596,848
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված համախառն այլ վարկեր	5,393,668	199,820	596,848	6,190,336
Պարտքային կորստի գծով պահուստ	(30,300)	(14,822)	(154,246)	(199,368)
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված զուտ այլ վարկեր	5,363,368	184,998	442,602	5,990,968
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված համախառն այլ վարկեր	91,661,998	6,927,795	7,806,366	106,396,159
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված զուտ վարկեր	89,908,527	4,241,391	3,658,912	97,808,830
Ընդամենը հաճախորդներին տրված համախառն վարկեր	201,883,135	13,579,192	11,885,387	227,347,714
Ընդամենը հաճախորդներին տրված զուտ վարկեր	199,763,874	10,425,811	6,272,555	216,462,240

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Վարկեր խոշոր ընկերություններին				
- ոչ ժամկետանց	60,721,096	-	2,590,950	63,312,046
- մինչև 30 օր ժամկետանց	-	-	-	-
- 30-90 օր ժամկետանց	-	139,167	-	139,167
- ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	383,919	383,919
Ընդամենը համախառն վարկեր խոշոր ընկերություններին	60,721,096	139,167	2,974,869	63,835,132
Պարտքային կորստի գծով պահուստ	(92,182)	(8,350)	(1,386,932)	(1,487,464)
Ընդամենը զուտ վարկեր խոշոր ընկերություններին	60,628,914	130,817	1,587,937	62,347,668
Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին				
- ոչ ժամկետանց	63,483,337	411,616	-	63,894,953
- մինչև 30 օր ժամկետանց	30,779	9,525	-	40,304
- 30-90 օր ժամկետանց	-	198,442	584	199,026
- ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	2,077,520	2,077,520
Ընդամենը համախառն վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	63,514,116	619,583	2,078,104	66,211,803
Պարտքային կորստի գծով պահուստ	(95,271)	(258,597)	(934,106)	(1,287,974)
Ընդամենը զուտ վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	63,418,845	360,986	1,143,998	64,923,829
Ընդամենը իրավաբանական անձանց տրված համախառն վարկեր	124,235,212	758,750	5,052,973	130,046,935
Ընդամենը իրավաբանական անձանց տրված զուտ վարկեր	124,047,759	491,803	2,731,935	127,271,497
Ֆիզիկական անձանց տրված վարկեր				
Սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	71,363,392	1,888,507	64,417	73,316,316
- մինչև 30 օր ժամկետանց	833,601	372,297	23,704	1,229,602
- 30-90 օր ժամկետանց	-	977,614	114,332	1,091,946
- ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	2,490,868	2,490,868
Ընդամենը համախառն սպառողական վարկեր	72,196,993	3,238,418	2,693,321	78,128,732
Պարտքային կորստի գծով պահուստ	(919,382)	(766,037)	(1,289,278)	(2,974,697)
Ընդամենը զուտ սպառողական վարկեր	71,277,611	2,472,381	1,404,043	75,154,035

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	21,290,505	40,883	-	21,331,388
- մինչև 30 օր ժամկետանց	9,003	8,652	-	17,655
- 30-90 օր ժամկետանց	-	23,978	-	23,978
- ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	309,873	309,873
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	21,299,508	73,513	309,873	21,682,894
Պարտքային կորստի գծով պահուստ	(1,901)	(1,779)	(110,474)	(114,154)
Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր	21,297,607	71,734	199,399	21,568,740
Վարկային քարտեր				
- ոչ ժամկետանց	7,935,985	396,753	4,079	8,336,817
- մինչև 30 օր ժամկետանց	53,332	43,633	3,763	100,728
- 30-90 օր ժամկետանց	-	85,152	9,153	94,305
- ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	85,244	85,244
Ընդամենը համախառն վարկային քարտեր	7,989,317	525,538	102,239	8,617,094
Պարտքային կորստի գծով պահուստ	(103,669)	(109,456)	(53,680)	(266,805)
Ընդամենը զուտ վարկային քարտեր	7,885,648	416,082	48,559	8,350,289
Ֆիզիկական անձանց տրված այլ վարկեր				
- ոչ ժամկետանց	5,915,974	62,032	306	5,978,312
- մինչև 30 օր ժամկետանց	25,546	3,214	1,084	29,844
- 30-90 օր ժամկետանց	-	37,679	882	38,561
- ավելի քան 90 օր ժամկետանց	-	-	543,604	543,604
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված համախառն այլ վարկեր	5,941,520	102,925	545,876	6,590,321
Պարտքային կորստի գծով պահուստ	(19,587)	(16,146)	(249,699)	(285,432)
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված զուտ այլ վարկեր	5,921,933	86,779	296,177	6,304,889
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված համախառն այլ վարկեր	107,427,338	3,940,394	3,651,309	115,019,041
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված զուտ վարկեր	106,382,799	3,046,976	1,948,178	111,377,953
Ընդամենը հաճախորդներին տրված համախառն վարկեր	231,662,550	4,699,144	8,704,282	245,065,976
Ընդամենը հաճախորդներին տրված զուտ վարկեր	230,430,558	3,538,779	4,680,113	238,649,450

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ֆիզիկական և իրավաբանական անձանց տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի նշանակալի փոփոխությունները, որոնք հանգեցրել կորստի պահուստի փոփոխությունների:

հազ. դրամ	2020թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք – համախառն հաշվեկշռային արժեք				
Մնացորդը առ 1 հունվարի	124,235,212	758,750	5,052,973	130,046,935
Տեղափոխում 1-ին փուլ	62,975	(62,975)	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(8,199,156)	8,199,156	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	(1,856,645)	1,856,645	-
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	42,479,521	-	-	42,479,521
Ամբողջությամբ կամ մասնակի մարված ֆինանսական ակտիվներ	(48,357,415)	(386,889)	(2,648,714)	(51,393,018)
Զուտ դուրսգրումներ	-	-	(181,883)	(181,883)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	110,221,137	6,651,397	4,079,021	120,951,555

հազ. դրամ	2020թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – ֆիզիկական անձիք – համախառն հաշվեկշռային արժեք				
Մնացորդը առ 1 հունվարի	107,427,338	3,940,394	3,651,310	115,019,042
Տեղափոխում 1-ին փուլ	247,097	(247,097)	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(15,157,381)	15,157,381	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	(10,312,094)	10,312,094	-
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	38,912,354	-	-	38,912,354
Ամբողջությամբ կամ մասնակի մարված ֆինանսական ակտիվներ	(39,767,410)	(1,610,789)	(805,215)	(42,183,414)
Զուտ դուրսգրումներ	-	-	(5,351,823)	(5,351,823)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	91,661,998	6,927,795	7,806,366	106,396,159

հազ. դրամ	2019թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք – համախառն հաշվեկշռային արժեք				
Մնացորդը առ 1 հունվարի	118,060,740	3,440,870	3,176,492	124,678,102
Տեղափոխում 1-ին փուլ	90,457	(90,457)	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(966,610)	966,610	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	(3,362,580)	3,362,580	-
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	53,980,367	-	-	53,980,367
Ամբողջությամբ կամ մասնակի մարված ֆինանսական ակտիվներ	(46,929,742)	(195,693)	(1,111,065)	(48,236,500)
Զուտ դուրսգրումներ	-	-	(375,034)	(375,034)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	124,235,212	758,750	5,052,973	130,046,935

հազ. դրամ

	2019թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – ֆիզիկական անձիք – համախառն հաշվեկշռային արժեք				
Մնացորդը առ 1 հունվարի	80,065,445	3,879,083	3,547,732	87,492,260
Տեղափոխում 1-ին փուլ	354,708	(349,756)	(4,952)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(8,150,958)	8,237,506	(86,548)	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	(5,593,518)	5,593,518	-
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	76,274,402	-	-	76,274,402
Ամորտիզացված կամ մասնակի մարված ֆինանսական ակտիվներ	(41,116,259)	(2,232,921)	(746,357)	(44,095,537)
Զուտ դուրսգրումներ	-	-	(4,652,083)	(4,652,083)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	107,427,338	3,940,394	3,651,310	115,019,042

(բ) Պարտքային կորստի գծով պահուստի գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրություններ և դատողություններ

Պարտքային կորստի գծով պահուստի գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրությունները և դատողությունները ներկայացված են Ծանոթագրություն 26 (բ) կետում:

(գ) Գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների վերլուծություն

Իրավաբանական անձանց տրված վարկեր

Բանկը որպես կանոն գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական անձանց տրված վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների բնույթի վերաբերյալ (առանց արժեզրկման):

	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	
	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Դրամական միջոցներ և ավանդներ	3,278,674	1,044,770
Անշարժ գույք	98,339,947	112,192,453
Փոխադրամիջոցներ	613,996	662,120
Սարքավորումներ	3,738,338	4,031,342
Պաշարներ	1,176,369	1,268,571
Անձնական երաշխավորություններ	2,333,512	4,325,530
Այլ գրավ	326,023	492,194
Ընդամենը հաճախորդներին տրված արժեզրկման անհատական հայտանիշ չունեցող վարկեր	109,806,859	124,016,980
Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր		
Անշարժ գույք	8,639,648	3,172,015
Այլ գրավ	206,903	82,502
Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր	8,846,551	3,254,517
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	118,653,410	127,271,497

Ղեկավարությունը գտնում է, որ վարկերի, այդ թվում՝ 3-րդ փուլ դասված վարկերի իրական արժեքը պակաս չէ առանձին վարկերի հաշվեկշռային արժեքից:

Բանկն ունի վարկեր, որոնց համար գրավի իրական արժեքը գնահատվել է վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ և չի վերանայվել՝ հետագա փոփոխություններն արտացոլելու համար, ինչպես նաև վարկեր, որոնց գրավի իրական արժեքը չի որոշվել: Որոշ վարկերի համար գրավի իրական արժեքը վերանայվել է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գրավի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է կախված այն փաստից, թե երբ է այն գնահատվել, եթե նման գնահատում իրականացվել է:

Մի քանի տեսակի գրավով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել տեղին է արժեզրկման գնահատման համար: Ֆիզիկական անձանցից, օրինակ՝ ՓՄՁ վարկառուների բաժնետերերից ստացված երաշխավորությունները չեն դիտարկվում արժեզրկման գնահատման նպատակների համար:

Ոչ ժամկետանց և չարժեզրկված վարկերի վերադարձելիությունը հիմնականում կախված է վարկառուների վճարունակությունից, այլ ոչ գրավի արժեքից, և Բանկի համար պարտադիր չէ վերանայել գրավի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆիզիկական անձանց տրված վարկեր

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներառում են սպառողական վարկերը, վարկային քարտերը, հիփոթեքային և այլ վարկերից: Սպառողական վարկերը, վարկային քարտերը և այլ վարկերը (բացառությամբ ոսկու գրավով վարկերի) հիմնականում գրավով ապահովված չեն:

Այլ վարկերը ներառում են 2,173,587 հազար դրամ (2019թ-ին՝ 2,300,719 հազար դրամ) համախառն հաշվեկշռային արժեքով ոսկու գրավով վարկերը: Ոսկու գրավով վարկերի իրական արժեքը առնվազն հավասար է առանձին վարկերի հաշվեկշռային արժեքներին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման ամսաթվին որոշված արժեքները:

Հիփոթեքային վարկեր

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Բանկի քաղաքականության համաձայն՝ հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 70% վարկ/արժեք հարաբերակցությամբ՝ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ: Անշարժ գույքի գրավով հիփոթեքային վարկերի իրական արժեքը առնվազն հավասար է առանձին վարկերի հաշվեկշռային արժեքներին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման ամսաթվին որոշված արժեքները:

(դ) Առգրավված գրավ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել 1,587,064 հազար դրամ (2019թ-ին՝ 515,094 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով ակտիվներ՝ հաճախորդներին տրված վարկերի դիմաց գրավադրված միջոցների առգրավման միջոցով: Առգրավված գրավից 341,365 հազար դրամ գումարով գրավը վաճառվել է 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում (2019թ-ին՝ 319,856 հազար դրամ): 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առգրավված գրավը ներառում է.

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Անշարժ գույք	4,915,346	3,670,657
Այլ	44,976	49,351
Նվազեցում մինչև իրացման գուտ արժեք	(76,842)	(82,226)
Ընդամենը առգրավված գրավ	4,883,480	3,637,782

Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները հնարավորինս սեղմ ժամկետներում:

(ե) Գրավադրված ակտիվներ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 16,053,004 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 18,655,572 հազար դրամ) ծառայում են որպես գրավ այլ փոխառությունների համար (տես Ծանոթագրություն 23):

(զ) Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության հետևյալ ճյուղերում.

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Առևտուր	57,388,551	64,141,076
Արդյունաբերություն	17,266,297	17,468,074
Մենդի և խմիչքի արտադրություն	14,546,316	16,003,817
Տուրիզմ, հյուրանոցային և ռեստորանային ծառայություններ	4,004,593	3,091,871
Տրանսպորտ և կապ	7,211,698	7,410,049
Էներգետիկայի ոլորտ	7,033,201	5,668,232
Շինարարություն	1,739,873	1,585,641
Գյուղատնտեսություն, անտառապահություն և փայտամշակում	1,149,058	1,200,085
Այլ	10,611,968	13,478,090
Ֆիզիկական անձանց տրված վարկեր	106,396,159	115,019,041
	227,347,714	245,065,976
Պարտքային կորստի գծով պահուստ	(10,885,474)	(6,416,526)
	216,462,240	238,649,450

(է) Պարտքային ռիսկին ենթարկվածություն

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի վարկառուներ կամ կապակցված վարկառուների խմբեր (2019թ-ին՝ մեկ), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկերի ընդհանուր գումարը (առանց դրամական միջոցների տեսքով ստացված գրավի) կազմում էր 6,336,292 հազար դրամ:

(ը) Վարկերի մարման ժամկետներ

Վարկային պորտֆելի մարման ժամկետների վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 36-ի (դ) կետում, որն արտացոլում է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի՝ պայմանագրով նախատեսված մարման ժամկետը մնացած ժամանակահատվածը:

17 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Հոդատա- րաձք և շենքեր	Վարձակա- ված գույքի բարելավում	Սարքա- վորումներ	Փոխադրա- միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք/ վերագնահատված արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	3,035,016	301,046	3,617,661	366,356	3,401,201	1,524,878	12,246,158
Ավելացումներ	200	56,247	358,326	10,925	968,723	35,743	1,430,164
Օտարումներ	-	-	(357)	(3,500)	-	(3,226)	(7,083)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	3,035,216	357,293	3,975,630	373,781	4,369,924	1,557,395	13,669,239
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	(52,569)	(183,735)	(2,639,220)	(235,609)	(1,053,672)	(1,187,027)	(5,351,832)
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	(54,427)	(33,537)	(247,972)	(37,961)	(492,735)	(117,620)	(984,252)
Օտարումներ	-	-	357	2,508	-	3,227	6,092
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	(106,996)	(217,272)	(2,886,835)	(271,062)	(1,546,407)	(1,301,420)	(6,329,992)
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2020թ.	2,928,220	140,021	1,088,795	102,719	2,823,517	255,975	7,339,247
հազ. դրամ	Հոդատա- րաձք և շենքեր	Վարձակա- ված գույքի բարելավում	Սարքա- վորումներ	Փոխադրա- միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք/ վերագնահատված արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	2,955,985	243,605	3,207,042	366,356	2,105,520	1,429,033	10,307,541
Ավելացումներ	79,031	59,196	411,485	-	1,296,156	95,845	1,941,713
Օտարումներ	-	(1,755)	(866)	-	(475)	-	(3,096)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	3,035,016	301,046	3,617,661	366,356	3,401,201	1,524,878	12,246,158
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	-	(157,019)	(2,399,734)	(197,836)	(820,544)	(1,067,681)	(4,642,814)
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	(52,569)	(26,716)	(239,796)	(37,773)	(233,181)	(119,346)	(709,381)
Օտարումներ	-	-	310	-	53	-	363
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	(52,569)	(183,735)	(2,639,220)	(235,609)	(1,053,672)	(1,187,027)	(5,351,832)
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2019թ.	2,982,447	117,311	978,441	130,747	2,347,529	337,851	6,894,326
Առ 1 հունվարի 2019թ.	2,955,985	86,586	807,308	168,520	1,284,976	361,352	5,664,727

Վերագնահատված ակտիվներ

Եթե շենքերը չվերագնահատվեին, 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հողատարածքի և շենքերի հաշվեկշռային արժեքը կկազմեր 808,867 հազար դրամ (2019թ-ին՝ 832,312 հազար դրամ):

Հողատարածքի և շենքերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին կիրառված գնահատման մեթոդի դիտելի ելակետային տվյալների նշանակալի ոչ դիտելի ճշգրտումների (գործակիցների) պատճառով:

Հիմք ընդունելով անշարժ գույքի գների փոփոխությունների վերլուծությունը՝ ղեկավարությունը գտնում է, որ հողատարածքի և շենքերի իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

18 Վարձակալություններ

Բանկը վարձակալում է ակտիվներ, մասնավորապես, մասնաճյուղերի և այլ տարածքներ, որոնց վարձակալության ժամկետը որպես կանոն կազմում է 5 տարի:

Ստորև ներկայացված է այն վարձակալությունների մասին տեղեկատվությունը, որոնց շրջանակում Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ:

(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	2,128,882	2,448,698
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ավելացումներ	245,128	126,627
Ժամանակաշրջանի մաշվածության գումար	(452,672)	(446,443)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	1,921,338	2,128,882

(բ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն	452,672	446,443
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ	236,646	192,326

(գ) Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի համադրում

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	2,194,824	2,448,698
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		
Վարձակալության գծով պարտավորությունների վճարում	(602,136)	(572,827)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	(602,136)	(572,827)
Այլ փոփոխություններ		
Նոր վարձակալություններ	245,128	126,627
Տոկոսային ծախս	236,646	192,326
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	2,074,462	2,194,824

19 Այլ ակտիվներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպություններից ստացվելիք գումարներ	2,032,775	2,189,711
Պարտքային կորստի գծով պահուստ	(7,862)	(12,622)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	2,024,913	2,177,089
Առգրավված ակտիվներ	4,883,480	3,637,782
Մատակարարներին տրված կանխավճարներ	501,958	1,440,694
Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ	157,457	606,097
Պաշարներ	49,407	76,880
Այլ	13,690	13,690
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	5,605,992	5,775,143
Ընդամենը այլ ակտիվներ	7,630,905	7,952,232

Այլ ակտիվները արժեքը կամ ժամկետաց չեն: Բոլոր ֆինանսական ակտիվները դասվում են 1-ին փուլ:

20 Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Հետգնման պայմանագրերի գծով ՀՀ կենտրոնական բանկին վճարվելիք գումարներ	6,001,785	-
Հետգնման պայմանագրերի գծով տեղական բանկերին վճարվելիք գումարներ	5,035,346	-
	11,037,131	-

Հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված են այլ համապատասխան ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող 6,104,461 հազար դրամ գումարով և ամորտիզացված արժեքով չափվող 5,312,957 հազար դրամ իրական արժեքով Բանկի սեփական արժեթղթերը (2019թ-ին նման արժեթղթեր չկային):

21 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ և ցրահանջ ավանդներ		
- Ֆիզիկական անձիք	55,329,036	41,751,791
- Իրավաբանական անձինք	46,931,158	39,458,594
Ժամկետային ավանդներ		
- Ֆիզիկական անձիք	93,200,640	101,576,521
- Իրավաբանական անձինք	25,017,694	12,869,626
	220,478,528	195,656,532

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հաճախորդների ընթացիկ հաշիվներից և ավանդներից 7,273,345 հազար դրամ (2019թ-ին՝ 6,041,207 հազար դրամ) գումարով մնացորդները ծառայում են որպես գրավ Բանկի կողմից տրամադրված վարկերի և փոխատվության հանձնառությունների դիմաց:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երկու հաճախորդ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նման հաճախորդներ չկային), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 14,217,700 հազար դրամ:

22 Թողարկված պարտքային արժեթղթեր

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
ՀՀ դրամով թողարկված տեղական պարտատոմսեր	3,059,389	3,059,062
ԱՄՆ դոլարով թողարկված տեղական պարտատոմսեր	7,902,470	7,253,578
	10,961,859	10,312,640

2020թ. դեկտեմբերի դրությամբ Բանկը թողարկել և տեղաբաշխել է պարտքային արժեթղթեր ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով՝ համապատասխանաբար 3,000 միլիոն դրամ և 15 միլիոն ԱՄՆ դոլար անվանական արժեքով (2019թ-ին՝ պարտքային արժեթղթեր ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով՝ համապատասխանաբար 3,000 միլիոն դրամ և 10 միլիոն ԱՄՆ դոլար անվանական արժեքով):

Բանկի կողմի թողարկված պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի արժեթղթերի ֆոնդային բորսայում:

Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	10,312,640	5,567,815
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մուտքեր թողարկումից	-	4,881,300
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	-	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	-	4,881,300
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	652,784	(29,925)
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	678,287	464,238
Վճարված տոկոսներ	(681,852)	(570,788)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	10,961,859	10,312,640

23 Այլ փոխառություններ և ստորադաս փոխառություններ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Գրավով չապահովված փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	55,471,559	39,095,028
Գրավով ապահովված փոխառություններ ՀՀ կառավարությունից և ՀՀ ԿԲ-ից	13,456,339	15,289,250
Գրավով ապահովված փոխառություններ հայկական ֆինանսական կազմակերպություններից	3,201,179	3,350,014
Այլ փոխառություններ	5,520	16,308
	72,134,597	57,750,600
Ստորադաս փոխառություններ միկրոֆինանսավորման միջազգային հիմնադրամից	8,092,844	7,413,205
	80,227,441	65,163,805

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի չորս ֆինանսական կազմակերպությունից (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ չորս) ստացված փոխառություններ, որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 54,010,582 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 36,921,251 հազար դրամ):

Ստորադաս փոխառություններ իրենից ներկայացնում է կապակցված կողմ չհանդիսացող միկրոֆինանսավորման միջազգային հիմնադրամից ստացված փոխառությունը, որի մարման ժամկետը լրանում է 2026թ. փետրվարին:

Ստացված փոխառությունները Բանկը դիտարկում է որպես ստորադաս փոխառություններ, եթե սնանկության դեպքում փոխառությունը մարվում է Բանկի մյուս բոլոր այլ պարտավորությունների ամբողջական կատարումից հետո:

Բանկը համապատասխանում է արտաքին սահմանափակումներին (կովենանտներին) փոխառության պայմանագրերի հետ կապված 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	Այլ փոխառություններ	Ստորադաս փոխառություններ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	57,750,601	7,413,205	65,163,806
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ			
Մուտքեր	32,250,046	-	32,250,046
Մարումներ	(21,068,651)	-	(21,068,651)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	11,181,395	-	11,181,395
Վերադարձված փոփոխությունների և փոփոխությունների ազդեցությունը	3,294,779	732,876	4,027,655
Այլ փոփոխություններ			
Այլ շարժ	(173,136)	10,883	(162,253)
Տեկոսային ծախս	4,215,654	746,604	4,962,258
Վճարված տոկոսներ	(4,134,696)	(810,724)	(4,945,420)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	72,134,597	8,092,844	80,227,441

հազ. դրամ	Այլ փոխառություններ	Ստորադաս փոխառություններ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	67,469,916	-	67,469,916
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ			
Մուտքեր	9,706,140	7,344,300	17,050,440
Մարումներ	(18,819,042)	-	(18,819,042)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	(9,112,902)	7,344,300	(1,768,602)
Արտաբժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	(481,791)	(207,052)	(688,843)
Այլ փոփոխություններ			
Այլ շաշժ	(132,972)	(8,894)	(141,866)
Տոկոսային ծախս	4,589,569	644,158	5,233,727
Վճարված տոկոսներ	(4,581,219)	(359,307)	(4,940,526)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	57,750,601	7,413,205	65,163,806

24 Այլ պարտավորություններ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	900,000	500,000
Այլ ֆինանսական պարտավորություններ	605,422	1,625,906
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	1,505,422	2,125,906
Պահուստներ	549,750	627,067
Վճարվելիք հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	291,415	319,369
Ակնկալվող կորուստների գծով պահուստ ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար	257,764	113,513
Այլ կանխավճարներ	218,849	131,485
Ակտիվներին վերաբերող շնորհներ	-	3,671
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	104,447	117,964
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	1,422,225	1,313,069
Ընդամենը այլ պարտավորություններ	2,927,647	3,438,975

25 Բաժնետիրական կապիտալ

(ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 181,821 սովորական բաժնետոմսից (2019թ-ին՝ 181,821): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 80,000 դրամ (2019թ-ին՝ 80,000):

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Հողատարածքի և շենքերի վերագնահատումից աճ

Հողատարածքի և շենքերի վերագնահատումից աճը ներառում է հողատարածքի և շենքերի վերագնահատված կուտակային դրական արժեքը մաշվածությունը չբաշխված շահույթ փոխանցելուց հետո՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ

Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային գուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը (արժեզրկումը կիրառելի է միայն պարտքային ներդրումային արժեթղթերի համար):

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրության համաձայն որոշվող Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

2020թ-ին Բանկը հայտարարել և վճարել է 2,823,680 հազար դրամ գումարով շահաբաժիններ (2019թ-ին՝ 4,000,062 հազար դրամ գումարով շահաբաժիններ): Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինները կազմում են 15,530 դրամ (2019թ-ին՝ 22,000 դրամ):

26 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և Բանկի գործառնությունների կենսական տարրն է: Ծուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող արտադրանքն ու ծառայությունների և ընդունված լավագույն պրակտիկան արտացոլելու նպատակով:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկերի կառավարման կենտրոնը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն Վարչությանը և անուղղակիորաբար Տնօրենների խորհրդին:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱԴԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության տեսակից և չափից:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Ռիսկերի կառավարման կենտրոնը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:

(բ) **Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժույթային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոփոխությունների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն, որը գլխավորում է Գլխավոր տնօրենը: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Վարչության կողմից՝ Ռիսկերի կառավարման կենտրոնի առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր, որոնք կանոնավոր կերպով մշտադիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

Բացի այդ, Բանկն իրականացնում է մեծ թվով սթրես թեստեր առանձին պորտֆելների և Բանկի ընդհանուր դիրքի վրա շուկայի բազմաթիվ բացառիկ սցենարների ֆինանսական ազդեցությունը մոդելավորելու համար: Սթրեսի թեստերը ցույց են տալիս կորուստների հավանական չափը, որոնք կարող են առաջանալ ծայրահեղ պայմաններում:

(i) **Տոկոսադրույքի ռիսկ**

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա շուկայում գերակշռող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել կորուստների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխությունների դեպքում:

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքի հսկողության միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների ճեղքվածքի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2020թ.							
ԱՆՑԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,156,919	-	-	-	-	65,934,015	69,090,934
Ներդրումային արժեթղթեր	745,676	4,555,946	-	12,924,432	52,348,731	31,055	70,605,840
Բանկերի նկատմամբ ալ պահանջներ	-	-	-	-	-	10,923,190	10,923,190
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,632,959	-	91,207	-	-	-	3,724,166
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	20,757,202	21,194,866	36,346,676	109,984,925	28,178,571	-	216,462,240
	28,292,756	25,750,812	36,437,883	122,909,357	80,527,302	76,888,260	370,806,370
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	12,466	-	-	-	-	-	12,466
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	11,037,131	-	-	-	-	-	11,037,131
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	55,713,005	28,188,321	47,331,945	17,776,329	1,607	71,467,321	220,478,528
Թողարկված պարտքային արժեթղթեր	78,296	2,657,663	6,725,900	1,500,000	-	-	10,961,859
Այլ փոխառություններ	4,516,105	4,836,427	17,753,201	42,218,423	2,810,441	-	72,134,597
Մտորադաս փոխառություններ	307,447	-	-	3,892,698	3,892,699	-	8,092,844
Վարձակալության գծով պարտավորություններ	149,889	139,961	259,945	1,174,263	350,404	-	2,074,462
	71,814,339	35,822,372	72,070,991	66,561,713	7,055,151	71,467,321	324,791,887
	(43,521,583)	(10,071,560)	(35,633,108)	56,347,644	73,472,151	5,420,939	46,014,483

Տոկոսադրույքի ճեղքվածքի բացասական կարճաժամկետ դիրքը կառավարելու համար Բանկը հիմնվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի վրա, որոնք կարող են վաճառվել կամ գրավադրվել հետգնման պայմանագրերի շրջանակում, և այն ենթադրության վրա, որ ժամկետային ավանդները կերկարաձգվեն մարման ժամկետի ավարտից հետո:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2020թ.							
ԱՆՑԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,530,198	-	-	-	-	42,601,846	44,132,044
Ներդրումային արժեթղթեր	84	2,614,913	-	11,926,686	14,898,120	30,914	29,470,717
Բանկերի նկատմամբ պ պահանջներ	-	-	-	-	-	6,750,185	6,750,185
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,132,214	-	-	-	-	-	3,132,214
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	26,031,986	24,276,133	35,437,130	126,187,616	26,716,585	-	238,649,450
	30,694,482	26,891,046	35,437,130	138,114,302	41,614,705	49,382,945	322,134,610
ՊԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	4,001,236	-	-	-	-	26,254	4,027,490
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	-	-	-	-	-	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	53,026,511	19,329,914	47,459,967	23,922,097	1,384	51,916,659	195,656,532
Թողարկված պարտքային արժեթղթեր	74,772	42,368	-	10,195,500	-	-	10,312,640
Այլ փոխառություններ	6,941,155	12,019,896	13,104,935	24,323,717	1,360,897	-	57,750,600
Ստորադաս փոխառություններ	284,138	-	-	-	7,129,067	-	7,413,205
Վարձակալության գծով պարտավորություններ	46,528	93,231	184,553	1,075,435	795,077	-	2,194,824
	64,374,340	31,485,409	60,749,455	59,516,749	9,286,425	51,942,913	277,355,291
	(33,679,858)	(4,594,363)	(25,312,325)	78,597,553	32,328,280	(2,559,968)	44,779,319

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2020թ.			2019թ.		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	0.05%	0.83%	-	0.51%	0.41%
Ներդրումային արժեթղթեր						
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	8.42%	4.56%	-	7.82%	4.02%	-
- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	10.88%	6.64%	-	11.62%	6.50%	-
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6.50%	5.37%	1.50%	6.10%	3.00%	0.25%
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	14.72%	8.43%	6.78%	14.05%	8.40%	6.80%
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	-	-	-	5.50%	-	-
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	5.46%	-	-	-	-	-
Հաճախորդներին ժամկետային ավանդներ	9.01%	3.64%	2.40%	8.86%	4.03%	2.63%
Թողարկված պարտքային արժեթղթեր	9.75%	5.25%	-	9.75%	5.25%	-
Ստորադաս փոխառություններ	-	10.01%	-	-	10.01%	-
Այլ փոխառություններ	8.03%	4.63%	2.75%	8.57%	5.52%	-
Վարձակալության գծով պարտավորություններ	11.5%	-	-	11.5%	-	-

Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների, բացառությամբ տոկոսակիր դրամական միջոցների և դրանց համարժեքների, հաճախորդների բնթացիկ հաշիվների և ցախանջ ավանդների, եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի հիման վրա:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
100 բկ զուգահեռ աճ	(5,243,184)	(3,805,072)
100 բկ զուգահեռ նվազում	5,243,184	3,805,072

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունների նկատմամբ, որն իրականացվել է 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2020թ. Սեփական կապիտալ հազ. դրամ	2019թ. Սեփական կապիտալ հազ. դրամ
100 բկ զուգահեռ աճ	(257,911)	(262,966)
100 բկ զուգահեռ նվազում	257,911	262,966

(ii) Արժույթային ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժույթային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արժույթային ռիսկին, սակայն այս գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն՝ ՖՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	45,807,806	2,503,430	736,287	49,047,523
Ներդրումային արժեթղթեր	8,271,276	874	-	8,272,150
Բանկերի նկատմամբ սկսված պահանջներ	7,796,018	1,034,940	37,183	8,868,141
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	90,939	3,200,052	-	3,290,991
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	79,401,295	7,128,636	187,209	86,717,140
Այլ ակտիվներ	769,561	69,888	23,179	862,628
Ընդամենը ակտիվներ	142,136,895	13,937,820	983,858	157,058,573
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	11,565	416	466	12,447
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	79,156,067	12,337,074	4,045,710	95,538,851
Թողարկված պարտքային արժեթղթեր	7,902,470	-	-	7,902,470
Ստորադաս փոխառություններ	8,092,844	-	-	8,092,844
Այլ փոխառություններ	40,798,971	167,364	-	40,966,335
Այլ պարտավորություններ	157,222	9,886	869	167,977
Ընդամենը պարտավորություններ	136,119,139	12,514,740	4,047,045	152,680,924
Զուտ դիրքը	6,017,756	1,423,080	(3,063,187)	4,377,649
Աձանցյալ գործիքների ազդեցությունը (արժույթային սկսված)	(1,177,326)	(1,455,320)	3,119,429	486,783
Զուտ դիրքը	4,840,430	(32,240)	56,242	4,864,432

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6,170,416	15,354,921	1,508,126	23,033,463
Ներդրումային արժեթղթեր	4,628,189	733	-	4,628,922
Բանկերի նկատմամբ ալ պահանջներ	5,006,582	685,432	61,359	5,753,373
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	81,597	2,677,704	-	2,759,301
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	94,136,323	8,272,352	425,849	102,834,524
Այլ ակտիվներ	556,186	30,343	101,947	688,476
Ընդամենը ակտիվներ	110,579,293	27,021,485	2,097,281	139,698,059
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	3	25,352	894	26,249
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	79,286,333	12,537,914	2,218,358	94,042,605
Թողարկված պարտքային արժեթղթեր	7,253,578	-	-	7,253,578
Ստորադաս փոխառություններ	7,413,205	-	-	7,413,205
Այլ փոխառություններ	25,960,565	-	-	25,960,565
Այլ պարտավորություններ	139,689	3,215	6,844	149,748
Ընդամենը պարտավորություններ	120,053,373	12,566,481	2,226,096	134,845,950
Չուտ դիրքը	(9,474,080)	14,455,004	(128,815)	4,852,109
Ածանցյալ գործիքների ազդեցությունը (արժույթային սկսի)	10,952,643	(14,428,669)	(357,174)	(3,833,200)
Չուտ դիրքը	1,478,563	26,335	(485,989)	1,018,909

Ստորև աղյուսակում ներկայացված 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս նախքան հարկումը հիմունքով և հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Բանկը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունից առաջացող եկամուտը (ծախսը) ենթակա չէ հարկման (ենթակա չէ նվազեցման): Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով	478,091	147,856
ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով	(4,333)	2,634

2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հավասար ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Բանկում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար), ներառյալ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները և Վարկային կոմիտեի և Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը՝ պարտքային ռիսկին ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրինության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ գործիքների, որոնց գծով Բանկը ենթարկված է պարտքային ռիսկին, շարունակական հսկողության և մշտադիտարկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող համապատասխան մենեջերների կողմից և փոխանցվում են ռիսկերի կառավարման բաժնի, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Բաժնի ղեկավարի կողմից: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը ռիսկերի կառավարման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա:

Բանկը շարունակաբար վերահսկում է պարտքային ռիսկին ենթարկվող առանձին գործիքների կատարողականը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և փոխառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Ֆիզիկական անձանց վարկային դիմումներն ուսումնասիրվում են Ֆիզիկական անձանց վարկավորման բաժնի կողմից Ռիսկերի կառավարման բաժնի հետ մեկտեղ մշակված գնահատման մոդելների և տվյալների ստուգման ընթացակարգերի միջոցով:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման բաժնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը, որպես կանոն, արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառությունների գումարներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Որպես կանոն գրավ չի պահանջվում ամանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում ներդրումների, բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխառությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գծառնությունների մաս:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գրավի և այդ վարկերի և փոխառությունների գծով պարտքային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 16-ում:

Չճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 28-ում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառվածությունների պարտքային որակի վրա Covid-19 ազդեցությունը գնահատելու համար Բանկն առանձին վերլուծել է իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պորտֆելները:

Իրավաբանական անձանց տրված վարկերը գնահատվել են անհատական հիմունքով՝ պարզելու համար, թե արդյոք Covid-19 հետևանքները հանգեցրել են վարկառուների պարտքային ռիսկի նշանակալի աճի: Գնահատման նպատակների համար Բանկը հաշվի է առել հետևյալ գործոնները.

- վարկերի պայմանների վերանայման նշանակալիությունը/մասշտաբը Covid-19 հետևանքով,
- վարկերի փաստացի մարումները պայմանների վերանայումից հետո,
- արդյոք վարկառուն գործում է Covid-19-ից առավել տուժած ոլորտներում,
- կառավարության կողմից տնտեսության համար սահմանված սահմանափակումների երկարատևությունը:

Ֆիզիկական անձնաց տրված վարկերը վերլուծվել են խմբային հիմունքով՝ հիմք ընդունելով ժամկետանցությունը:

Պարտքային ռիսկ. Ակնկալվող պարտքային կորստների գումարները

Արժեզրկման գնահատման համար օգտագործվող ելակետային տվյալներ, ենթադրություններ և մեթոդներ

Տես հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Ծանոթագրություն 3 (ե) (iv) կետում:

Արժեզրկման գնահատում

Բանկն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու համար ակնկալվող դրամական պակասությունները՝ գեղջված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական պակասությունը պայմանագրին համապատասխան կազմակերպությանը հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է: Ստորև ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մեթոդները և առանցքային տարրերը:

Պարտագանցման տեղի ունենալու հավանականության	<i>Պարտագանցման տեղի ունենալու հավանականությունը որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտագանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտագանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապանանաչվել և դեռևս պորտֆելում է:</i>
--	---

Պարտքի գումարը պարտագանցման պահին	<i>Պարտքի գումարը պարտագանցման պահին ապագա պարտագանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարքտի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:</i>
--	---

Կորուստը պարտագանցման դեպքում	<i>Կորուստը պարտագանցման դեպքում դա այն կորստի գնահատված գումարն է, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտագանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտագանցման պահին պարտքի գումարի տոկոս</i>
--------------------------------------	--

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հիմնված է այն պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում (ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ կամ ԱԺԱՊԿ), եթե տեղի չի ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որի դեպքում պահուստը հիմնվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների վրա:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտագանցման դեպքերից: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները և 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ կախված ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում պարտագանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերը նշված գործընթացի հիման վրա Բանկը խմբավորում է իր վարկերն ըստ փուլերի՝ 1-ին փուլի, 2-րդ փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, ինչպես ներկայացված է ստորև.

1-փուլ Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը ճանաչում է պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: 1-ին փուլի վարկերը ներառում են նաև գործիքներ, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:

2-րդ փուլ Երբ վարկի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է սկզբնական ճանաչումից ի վեր, սակայն չկա պարտքային առումով արժեզրկված լինելու վկայություն, Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: 2-րդ փուլի վարկերը ներառում են նաև գործիքներ, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:

3-րդ փուլ Վարկերը համարվում են պարտքային առումով արժեզրկված: Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Սկզբնական ճանաչման պահին ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: Ակնկալվող պարտքային կորուստների ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով հետագայում փոխվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները:

Պարտագանցման սահմանում

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտագանցում և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտավորությունները դառնում են 90 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից, բացառությամբ պարտքային արժեթղթերի և բանկային ավանդների:

Հաճախորդի կողմից պարտականությունների չկատարման որակական գնահատման շրջանակում Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են վկայել վճարման անհավանականության մասին՝ ելնելով դեկավարության դատողությունից: Եթե այդ դեպքը տեղի է ունենում, Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք դրա արդյունքում հաճախորդը պետք է դիտարկվի որպես պարտականությունները չկատարած և դասվի 3-րդ փուլ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, կամ արդյոք 2-րդ փուլ դասելը տեղին է:

Պարտագանգման տեղի ունենալու հավանականության գնահատման գործընթաց

Պահառուական և միջբանկային հարաբերություններ

Բանկի պահառուական և միջբանկային հարաբերությունները և պայմանագրային կողմերն իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ և դիլերներ, ֆոնդային բորսաներ և քլիրինգային կազմակերպություններ: Այս հարաբերությունների հետ կապված Բանկը վերլուծում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և արտաքին աղբյուրներից ստացված այլ տվյալները, օրինակ՝ արտաքին վարկանիշները:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով պարտագանգման տեղի ունենալու հավանականությունը հիմնված է անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվության վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցների միջոցով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվությունը: Հավանականությունը հաշվարկվում է որպես ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ընդհանուր վարկերի ժամկետանց դասերի միջև տեղափոխվող վարկերի մասնաբաժինը: Պարտագանգման տեղի ունենալու հավանականությունը հաշվարկելիս Բանկը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք էական ազդեցություն ունեն պարտագանգման տեղի ունենալու հավանականության վրա:

Պարտքի գումարը պարտագանգման պահին

Պարտքի գումարը պարտագանգման պահին իրենից ներկայացնում է արժեզրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը՝ հաշվի առնելով թե՛ պարտքի գումարը մեծացնելու հաճախորդի հնարավորությունը առաջիկա պարտագանգման դեպքում և թե՛ հնարավոր վաղաժամ մարումը: 1-ին փուլի վարկի գծով պարտագանգման պահին պարտքի գումարը հաշվարկելու նպատակով՝ Բանկը գնահատում է 12 ամսում հնարավոր պարտագանգման դեպքերը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելու համար: 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտագանգման պահին պարտքի գումարը դիտարկվում է գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտքի գումարը պարտագանգման պահին հավասար է այդ վարկերի հաշվեկշռային արժեքին:

Պարտքի գումարը պարտագանգման պահին որոշվում է նախքան պարտագանգման տեղի ունենալու ամսաթիվը չկատարված պարտականություններով վարկերի վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալների հիման վրա:

Կորուստը պարտագանգման դեպքում

Հաճախորդներին տրված 1-ին փուլի վարկերի, ինչպես նաև անհատական հիմունքով ոչ էական 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար, Բանկը պարտագանգման դեպքում կորուստը հաշվարկում է պորտֆելի մակարդակով: Բանկը պարտագանգման դեպքում կորստի չափը հաշվարկելու համար օգտագործում է պարտագանգման ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալները չկատարված պարտականություններով բոլոր վարկերի կտրվածքով: Հավաքագրվում է պարտագանգման ամսաթվից հետո դրամական հոսքերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը և զեղչվում է պարտագանգման ամսաթվի դրությամբ՝ յուրաքանչյուր վարկի արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է չկատարված պարտականություններով վարկերի գծով ստացված բոլոր տեսակի դրամական միջոցները (վարկերի մարումից ստացված դրամական միջոցներ, երաշխավորից ստացված դրամական միջոցներ, գրավի վաճառքից ստացված դրամական միջոցներ և այլն):

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Որպես հիմնական չափանիշ Բանկն օգտագործում է վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Բանկը համարում է, որ պարտքային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, եթե ակտիվների գծով վնարումներն ավելի քան 30 օր ժամկետանց են, սակայն ոչ ավել քան 90 օր բոլոր ակտիվների համար, բացառությամբ պարտքային ներդրումային արժեթղթերի և բանկային ավանդների:

Պարտքային ռիսկի աճը գնահատելիս Բանկի ղեկավարությունը դիտարկում է նաև հետևյալ գործոնները՝

- տվյալ վարկառուի ժամկետանց օրերի քանակը Հայաստանի այլ ֆինանսական կազմակերպություններում,
- վարկառուի զգալի ֆինանսական դժվարությունները,
- վարկի պայմանների վերանայումը վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման պատճառով,
- մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացումը և դրանց հնարավոր ազդեցությունը վարկառուի ֆինանսական արդյունքների վրա:

Ապագայամետ տեղեկատվություն և տարբեր տնտեսական սցենարներ

Ակնկալվող պարտքային կորուստների մոդելներում Բանկը որպես տնտեսական երկնային տվյալներ օգտագործում է ապագայամետ տեղեկատվության լայն շրջանակ: Բանկն ակնկալվող պարտքային կորուստների մոդելում ներառում է տնտեսական ցուցանիշները, որոնք սերտորեն փոխկապակցված են պորտֆելի անցյալ ժամակաշրջանների պարտազանցման ցուցանիշների հետ, այդ թվում՝

- սպառողական գների ինդեքսը,
- արտահանման ծավալները,
- ներմուծման ծավալները,
- զուտ ներմուծումը/արտահանումը,
- ներհոսքը Ռուսաստանից:

Հիմնական խթաններն են սպառողական գների ինդեքսը և ներմուծման ծավալներն են: 2021թ. համար ըստ կանխատեսումների սպառողական գների ինդեքսը կկազմի 2.5%, իսկ ներմուծման ծավալները կնվազեն 18%-ով:

Բանկը կիրառել հետևյալ FLI գործակիցները. 1՝ իրավաբանական անձանց տրված վարկերի համար և 0.9-1.1՝ ֆիզիկական անձանց տրված վարկերի համար:

Ապագայամետ տեղեկատվությունը Բանկը ստանում երրորդ կողմ հանդիսացող աղբյուրից (Հայաստանի վիճակագրական գործակալություն և ՀՀ կենտրոնական բանկ): Բանկի ռիսկերի կառավարման բաժնի փորձագետները որոշում են տարբեր սցենարներին վերագրելի կշիռները/մեծությունները: Աղյուսակներում ներկայացված է ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների յուրաքանչյուր տնտեսական սցենարում օգտագործված հիմնական ապագայամետ տնտեսական փոփոխականները/ենթադրությունները: Բանկը գնահատում է պարտազանցման դրույքի/մակարդակի և մակրոտնտեսական գործոնների միջև հարաբերությունները հիմնվելով սովորական փոքրագույն քառակուսիների ռեգրեսիայի մոդելների վրա: Մոդելում օգտագործված ընտրված փոփոխականները տարբեր են՝ կախված վարկային պորտֆելներից:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ գործիքների քլիրինգի պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության գլխավոր պայմանագրերը: Համանման ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի փոխառության և փոխատվության պայմանագրերը: Ֆինանսական գործիքները, այդ թվում՝ վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և ընդունում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով:

Այս գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտազանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում: Բացի այդ Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը մտադիր չեն հաշվարկն իրականացնել գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ	Զուտ գումար
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դերժիտորական պարտքեր	3,724,166	-	3,724,166	(3,724,166)	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվածություններ	4,821,942	-	4,821,942	(4,821,942)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	8,546,108	-	8,546,108	(8,546,108)	-	-
Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր	(11,037,131)	-	(11,037,131)	11,037,131	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(9,007,760)	-	(9,007,760)	4,821,942	(4,185,818)	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(20,044,891)	-	(20,044,891)	11,037,131	-	-

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ	Զուտ գումար
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դերժիտորական պարտքեր	3,132,214	-	3,132,214	(3,132,214)	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվածություններ	2,089,957	-	2,089,957	(2,089,957)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	5,222,171	-	5,222,171	(5,222,171)	-	-
Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր	-	-	-	-	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(6,041,207)	-	(6,041,207)	2,089,957	(3,951,250)	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(6,041,207)	-	(6,041,207)	6,041,207	-	-

Վերը աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը կազմված է այլ բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերից, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդներից, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելներ՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Գանձապետարանը գործարար ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի և ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Գանձապետարանն իրականացնում է իրացվելիության դիրքի հսկողություն օրական կտրվածքով և իրացվելիության կանոնավոր «ստրեսային թեսթեր»՝ շուկայական սովորական և ավելի խիստ պայմանները ներառող տարբեր սցենարների շրջանակում: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Գանձապետարանի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չգեղջկված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չգեղջկված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով: Ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերի համար երաշխավորության առավելագույն գումարը բաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանում, որի ընթացքում երաշխավորությունը կարող է օգտագործվել:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցայահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	(Ներհոսքի)/ արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ֆինանսական պարտավորություններ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	12,466	-	-	-	-	-	12,466	12,466
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	11,054,133	-	-	-	-	-	11,054,133	11,037,131
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	111,420,965	16,099,796	29,071,173	49,523,388	19,319,905	1,792	225,437,019	220,478,528
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	92,125	2,744,719	7,077,459	1,708,955	-	11,623,258	10,961,859
Ստորադաս փոխառություններ	-	401,097	-	394,558	7,104,226	4,119,974	12,019,855	8,092,844
Այլ փոխառություններ	2,261,730	2,505,840	5,846,793	19,753,354	46,932,549	3,096,454	80,396,720	72,134,597
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,505,422	-	-	-	-	-	1,505,422	1,505,422
Վարձակալության գծով պարտավորություններ	50,924	101,847	146,781	284,028	1,750,746	745,879	3,080,205	2,074,462
Չուտ մարված ածանցյալ պարտավորություններ	1,385	-	-	-	-	-	1,385	1,385
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	126,307,025	19,200,705	37,809,466	77,032,787	76,816,381	7,964,099	345,130,463	326,298,694
Փոխատվության հանձնառություններ	26,342,612	-	-	-	-	-	-	-

Վերը և ստորև ներկայացված աղյուսակներում հաճախորդներից ներգրավված միջոցներում ներառված են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Բանկը պարտավոր է վճարել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներն ըստ ավանդատուի պահանջի՝ կորցնելով հաշվեգրված տոկոսները: Վերը ներկայացված աղյուսակում այս ավանդները դասակարգված են ըստ պայմանագրային մարման ժամկետների: Ստորև առանձին ներկայացված է այս ավանդների դասակարգումն ըստ մարման ժամկետների:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Ցայահանջ և մինչև 1 ամիս ժամկետով	9,115,373	7,921,099
1-ից 3 ամիս ժամկետով	14,735,230	14,908,192
3-ից 6 ամիս ժամկետով	18,631,746	18,932,428
6-ից 12 ամիս ժամկետով	41,028,419	44,733,618
Ավելի քան 1 տարի ժամկետով	13,191,201	19,521,631
	96,701,969	106,016,968

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	(Ներհոսքի)/ արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ֆինանսական պարտավորություններ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	4,031,768	-	-	-	-	-	4,031,768	4,027,490
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	-	-	-	-	-	-	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	89,355,846	15,919,025	19,925,159	49,668,474	26,573,569	-	201,442,073	195,656,532
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	136,086	199,046	335,132	10,949,053	-	11,619,317	10,312,640
Ստորադաս փոխառություններ	-	366,100	-	362,121	2,906,912	8,064,153	11,699,286	7,413,205
Այլ փոխառություններ	2,608,064	2,761,720	5,066,050	17,075,918	35,717,087	1,503,307	64,732,146	57,750,600
Այլ ֆինանսական պարտավորություններ	2,125,906	-	-	-	-	-	2,125,906	2,125,906
Վարձակալության գծով պարտավորություններ	48,878	97,089	149,643	290,931	1,806,304	747,291	3,140,136	2,194,824
Զուտ մարված ածանցյալ պարտավորություններ	4,400	-	-	-	-	-	4,400	4,400
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	98,174,862	19,280,020	25,339,898	67,732,576	77,952,925	10,314,751	298,795,032	279,489,876
Փոխատվության հանձնառություններ	33,850,157	-	-	-	-	-	-	-

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունը՝ ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս					1-ից 3 ամիս		3-ից 12 ամիս		1-ից 5 տարի		Ավելի քան 5 տարի		Ժամկետանց	Ընդամենը
	1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի										
ԱԿՏԻՎՆԵՐ	69,090,934	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	69,090,934
	116,379	629,296	4,555,946	12,924,432	52,348,731	-	-	-	-	-	-	-	-	-	70,605,840
	101,468	-	-	10,452	-	-	-	-	-	-	-	-	-	-	10,923,190
	3,632,959	-	-	-	-	91,207	-	-	-	-	-	-	-	-	3,724,166
	1,159,737	14,029,423	57,541,542	109,984,925	28,178,571	-	-	-	-	-	-	-	-	5,568,042	216,462,240
	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	7,339,247
	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1,921,338
	1,938,235	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	7,630,905
	77,619	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	77,619
	76,117,331	14,658,719	62,188,695	122,919,809	80,527,302	25,795,581	5,568,042	387,775,479							
ՊԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1,385	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1,385
	12,466	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	12,466
	11,037,131	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	11,037,131
	111,378,405	15,801,923	75,520,265	17,776,329	1,606	-	-	-	-	-	-	-	-	-	220,478,528
	-	78,296	9,383,563	1,500,000	-	-	-	-	-	-	-	-	-	-	10,961,859
	-	307,447	-	3,892,698	3,892,699	-	-	-	-	-	-	-	-	-	8,092,844
	2,190,176	2,325,902	22,589,498	42,218,595	2,810,426	-	-	-	-	-	-	-	-	-	72,134,597
	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	461,574
	-	1,606,737	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1,606,737
	50,440	99,449	399,906	1,174,263	350,404	-	-	-	-	-	-	-	-	-	2,074,462
1,505,422	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	2,927,647	
126,175,425	20,219,754	107,893,232	66,561,885	7,055,135	1,883,799	-	329,789,230								
(50,058,094)	(5,561,035)	(45,704,537)	56,357,924	73,472,167	23,911,782	5,568,042	57,986,249								
Զուտ դիրքը															

Աղյուսակում ներկայացված մարման ժամկետների վերլուծությունն արտացոլում է անցյալ ժամանակաշրջանների օրինաչափությունը և հաճախորդների ընթացիկ հաշիվների փաստացի մարումների ծավալը:

Ստորև, բերվող աղյուսակում ներկայացված է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծություն ըստ ակնկալող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցյախանջ և մինչև 1 ամիս					1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
	1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի					
ԱԿՏԻՎՆԵՐ										
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	44,132,044	-	-	-	-	-	-	-	-	44,132,044
Ներդրումային արժեթղթեր	-	84	2,614,913	11,926,686	14,898,120	30,914	-	-	-	29,470,717
Բանկերի նկատմամբ ալ պահանջներ	126,545	-	-	-	-	-	-	6,623,640	-	6,750,185
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,132,214	-	-	-	-	-	-	-	-	3,132,214
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	1,069,105	17,802,211	59,713,263	126,187,616	26,716,585	-	-	-	7,160,670	238,649,450
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	-	-	6,894,326	-	6,894,326
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	-	-	-	2,128,882	-	2,128,882
Այլ ակտիվներ	2,102,845	-	-	-	78,908	-	-	5,770,479	-	7,952,232
Ընդամենը ակտիվներ	50,562,753	17,802,295	62,328,176	138,114,302	41,693,613	21,448,241	7,160,670	339,110,050		
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ										
Բանկերի ավանդներ և մնացորդներ	4,027,490	-	-	-	-	-	-	-	-	4,027,490
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	89,318,171	15,624,999	66,789,881	23,922,097	1,384	-	-	-	-	195,656,532
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	74,772	42,368	10,195,500	-	-	-	-	-	10,312,640
Ստորադաս փոխառություններ	-	284,138	-	-	7,129,067	-	-	-	-	7,413,205
Այլ փոխառություններ	2,585,155	2,596,696	19,370,580	31,837,263	1,360,906	-	-	-	-	57,750,600
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	-	-	-	1,889,150	-	1,889,150
Ընթացիկ հարկային պարտավորություն	-	142,035	-	-	-	-	-	-	-	142,035
Այլ պարտավորություններ	1,406,208	-	-	-	1,324,404	-	-	708,363	-	3,438,975
Զուտ մարված ածանցյալ ակտիվներ	4,400	-	-	-	-	-	-	-	-	4,400
Ընդամենը պարտավորություններ	97,341,424	18,722,640	86,202,829	65,954,860	9,815,761	2,597,513	7,160,670	276,607,537		
Զուտ դիրքը	(46,778,671)	(920,345)	(23,874,653)	72,159,442	31,877,852	18,850,728		62,502,513		

Աղյուսակում ներկայացված մարման ժամկետների վերլուծությունն արտացոլում է անցյալ ժամանակաշրջանների օրինաչափությունը և հաճախորդների ընթացիկ հաշիվների փաստացի մարումների ծավալը:

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական ուղենիշը բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունն է: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները, նոստրո հաշիվները, ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված պարտքային արժեթղթերը և այն կորպորատիվ պարտքային արժեթղթերը, որոնց համար գործում է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն և որոնց օգտագործումը ոչ մի կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ըստ պահանջի վճարման ենթակա այլ պարտավորությունները: Ստորև ներկայացված է բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2020թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	2019թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված
Առ 31 դեկտեմբերի	132.5%	98.6%
Դեկտեմբեր ամսվա միջին ցուցանիշ	135.9%	93.6%

Վերը ներկայացված հարաբերակցությունը կիրառվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափի հետ համապատասխանությունը գնահատելու համար, որը չպետք է պակաս լինի 60%-ից:

27 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են ապահովել համապատասխանություն Բանկի կապիտալի համար գործող արտաքին պահանջներին և պահպանել բարձր պարտքային վարկանիշ ու կապիտալի լավ ցուցանիշներ՝ գործունեությանն աջակցելու և բաժնետիրական արժեքը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ տնտեսական պայմանների փոփոխությունների ու իր գործունեության ռիսկային բնույթին համապատասխան: Կապիտալը կառուցվածքը պահպանելու կամ դրա հետ կապված ճշգրտումներ կատարելու համար Բանկը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Կապիտալի կառավարման նպատակներում, քաղաքականությունում և ընթացակարգերում տեղի չի ունեցել որևէ փոփոխություն նախորդ տարիների համեմատությամբ:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում են վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն՝ բանկերի նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 30,000,000 հազար դրամ (2019թ-ին՝ 30,000,000 հազար դրամ): 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի չափը համապատասխանում էր ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն կապիտալի պահանջներին:

Բանկը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակից 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր օրենսդրությամբ սահմանված ցուցանիշին (աուդիտի չենթարկված):

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության ցուցանիշը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2020թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	2019թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված
Հիմնական կապիտալ		
Հիմնական կապիտալ	57,454,865	47,533,065
Նվազեցումներ	(6,623,445)	(5,851,271)
Ընդամենը հիմնական կապիտալ	50,831,420	41,681,794
Լրացուցիչ կապիտալ		
Լրացուցիչ կապիտալ	2,342,719	3,777,901
Մտորադաս փոխառություն	7,786,437	7,174,548
Ընդամենը լրացուցիչ կապիտալ	10,129,156	10,952,449
Ընդամենը կապիտալ	60,960,576	52,634,243
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ՝ ներառյալ պարտքային, շուկայական և գործառնական ռիսկերը	304,259,270	345,062,064
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	20.04%	15.25%

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկի կշիռների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականը՝ հաշվի առնելով պահանջներին համապատասխանող ցանկացած գրավ կամ երաշխավորություն: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր կորուստների առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

28 Փոխատվության հանձնառություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու հանձնառություններ: Այս հանձնառությունները նախատեսում են վարկային ռեսուրսների տրամադրում հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների տեսքով:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ երրորդ անձանց հանդեպ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Փոխատվության հանձնառությունների, ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են փոխատվության հանձնառությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի:

Աղյուսակում փոխատվության հանձնառությունների գծով արտացոլված գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջությամբ տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Վարկերի և վարկային գծերի հետ կապված հանձնառություններ	11,068,015	18,124,610
Վարկային քարտերի գծով հանձնառություններ	7,158,226	7,115,445
Ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ	8,116,371	8,610,102
	26,342,612	33,850,157
Պարտքային կորստի գծով պահուստ	257,764	113,513

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային փոխատվության հանձնառությունները պարտադիր չէ որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս հանձնառությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել մինչև կատարվելը:

Հանձնառությունների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար ներկայացված է Ծանոթագրություն 9-ում:

29 Պայմանական դեպքեր

(ա) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(բ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

30 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	635,283	706,604

Այս գումարները ներառում են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների դրամային հատուցումները:

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2020թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	2019թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվածություններ	119,438	10.90%	96,315	10.20%
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	283,732	4.30%	441,639	5.30%

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Ծախյոթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	9,890	5,759
Տոկոսային ծախս	(10,817)	(21,411)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(64)	(19,577)

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը հիմնականում իրենցից ներկայացնում են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ կապակցված կողմերը:

Ստորև ներկայացված են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2020թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Այլ կապակցված կողմեր	
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական փնճակի մասին հաշվետվություն				
ԱԿՏԻՎՆԵՐ				
Տրված վարկեր (համախառն)	-	-	27,716	10.30%
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	-	-	(101)	-
ՊԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	891,120	5.60%	877,655	3.10%
Շահույթ (վնաս)				
Տոկոսային եկամուտ	25,148	-	5,668	-
Տոկոսային ծախս	(208,823)	-	(20,780)	-

Ստորև ներկայացված են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2019թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Այլ կապակցված կողմեր	
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական փնճակի մասին հաշվետվություն				
ԱԿՏԻՎՆԵՐ				
Տրված վարկեր (համախառն)	1,043	9.20%	18,498	10.90%
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	(12)	-	(86)	-
ՊԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	2,844,047	4.66%	265,371	6.00%
Այլ փոխառություններ	7,456,761	7.70%	-	-
Շահույթ (վնաս)				
Տոկոսային եկամուտ	29	-	1,375	-
Տոկոսային ծախս	(631,885)	-	(15,640)	-
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,504)	-	(8,251)	-

31 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների և հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, իսկ այլ փոխառությունների, ստորադաս փոխառությունների, թողարկված պարտքային արժեթղթերի և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
- Ներդրումային արժեթղթեր	-	11,451,447	-	11,451,447
	-	11,451,447	-	11,451,447

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում նախաշված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
- Ներդրումային արժեթղթեր	-	14,238,889	-	14,238,889
	-	14,238,889	-	14,238,889

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են գուտ ներկա արժեքի և զեղչված դրամական հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայական դիտելի գները, և գնահատման այլ մոդելները: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ոչ ռիսկային և ուղենիշային տոկոսադրույքները, վարկային սփռելները և այլ հավելավճարները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնային գործիքների և բաժնային գործիքների ինդեքսի գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»:

32 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

2020թ. դեկտեմբերի 31-ից հետո Բանկի բաժնետերերի կազմը փոխվել է հետևյալ կերպ.

	Բաժնեմաս (%)	
	31 դեկտեմբերի 2020թ.	19 ապրիլի 2021թ.
Պրն. Ավետիս Բադյան	38.1%	35.4%
Պրն. Կարեն Սաֆարյան	33.0%	30.6%
agRIF Cooperatief U.A.	10.0%	10.0%
Փոքրամասնություն կազմող այլ բաժնետերեր	18.9%	23.9%

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորական եզրակացություն
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Բովանդակություն

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2019 թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	1
ԱՆԿԱԽ ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	2
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2019 թ. Դեկտեմբերի 31-ի համար	7
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2019 թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2019թ. Դեկտեմբերի 31-ի համար	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 2019 թ. Դեկտեմբերի 31-ի համար	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	
1. Բանկը	11
2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն	11
3. Կարևոր հաշվապահական դատողությունների և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները	34
4. Չուտ տոկոսային եկամուտ	37
5. Չուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	37
6. Չուտ օգուտ արտարժույթով առեվտրից և փոխարկումից	37
7. Չուտ այլ գործառնական (ծախս) /եկամուտ	37
8. Արժեզրկումից կորուստներ	38
9. Այլ ընդհանուր վարչական ծախսեր	38
10. Շահութահարկ	38
11. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	40
12. Ներդրումային արժեթղթեր	41
13. Բանկերից ստացվելիք գումարներ	42
14. Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	42
15. Հաճախորդներին տրված վարկեր	43
16. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	47
17. Վարձակալված միջոցների օգտագործման իրավունք	48
18. Այլ ակտիվներ	49
19. Բանկերի ավանդներ և մնացորդներ	50
20. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	50
21. Այլ փոխառություններ	50
22. Թողարկված պարտքային արժեթղթեր	51
23. Այլ պարտավորություններ	51
24. Ստորադաս փոխառություն	52
25. Բաժնետիրական կապիտալ	52
26. Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	52
27. Ռիսկի կառավարում	53
28. Կապիտալի կառավարում	74
29. Հետհաշվեկշռային հոդվածների գծով բանկի պայմանական պարտավորությունները	74
30. Պայմանական դեպքեր	75
31. Գործարքներ կապակցված կողմերի հետ	76
32. Ֆինանսական գործունեության հետևանքով առաջացած պարտավորությունների համադրում ...	77
33. Ֆինանսական գործիքների իրական արժեք	78
34. Հետհաշվեկշռային իրադարձություններ	81

«Ինեկոբանկ» ՓԲԸ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2019 թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման բաղաբաղականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման բաղաբաղականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Բանկի ֆինանսական վիճակի և կատարողականի վրա որոշակի գործարքների, այլ իրադարձությունների և պայմանների ունեցած ազդեցության մասին
- Բանկի գործունեության անընդհատության ապահովման կարողությունը գնահատելու համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Բանկի ներքին վերահսկողության արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Բանկի գործառնություններն արտացոլելու և ներկայացնելու, և ցանկացած ժամանակ ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու Բանկի ֆինանսական վիճակը, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Բանկի ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Բանկի ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են Բանկի ղեկավարության կողմից 2020 թ. ապրիլի 23-ին:

Ստորագրված է ղեկավարության կողմից:



Արեն Նալթալյան
Գործադիր տնօրեն

Արշալույս Սահակյան
Գլխավոր հաշվապահ

23 ապրիլ, 2020 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՆԿԱՆ ԱՌՈՂԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին՝

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2019 թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների Եթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված՝ *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԵՄՍ կանոնագիրք)* Հայաստանում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին համապատասխան էթիկական պահանջներին զուգահեռ և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԵՄՍ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Առանցքային աուդիտորական հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն՝ առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

Ինչու է հարցը սահմանվել աուդիտի առումով առանցքային

Հաճախորդներին տրված վարկերի ակնկալվող կորուստների չափում

Մենք ուշադրություն ենք հրավիրել այս հարցին, քանի որ վարկային ռիսկի նշանակալի աճի գնահատումը և ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) չափումը ներառում է էական դատողություններ, գնահատման անորոշություններ: Ինչպես նաև, ՖՀՄՍ 9 ստանդարտը կապված է բարդ պահանջների և տեխնիկաների կիրառման հետ, որոնք պահանջում են ԱՎԿ գնահատման բարդ մոդելներ:

Հավաքական հիմունքով գնահատված վարկերի գծով ԱՎԿ չափումը ներառում է ռիսկի վարկանշման բարդ համակարգ՝ հիմնված պատմական տվյալների վրա՝ ճշգրտված՝ համապատասխան կանխատեսումների համար:

Անհատական հիմունքով գնահատված վարկերի գծով ԱՎԿ չափումը հիմնված է ապագա դրամական հոսքերի գնահատման վրա, ինչը պահանջում է վարկառուի ընթացիկ և ապագա ֆինանսական վիճակի, գրավի արժեքի և հնարավոր հետևանքների հետագա իրադարձությունների գնահատականի վերլուծություն:

Մասնավորապես, մենք առանձնացրել ենք հետևյալը՝

- ԱՎԿ գնահատման հիմքում կիրառվող հիմնական ենթադրությունները և նշանակալի տվյալները և գործող վարկերի ռիսկի համապատասխան վարկանիշային համակարգը և այս հաշվարկների մոդելների ամբողջականությունը;
- Վարկային ռիսկերի նշանակալի աճի ժամանակին բացահայտում՝ հիմք ընդունելով քանակական և որակական գործոնները;
- Դեֆոլտում (Փուլ 3) գտնվող վարկերի ԱՎԿ գնահատման հիմքում կիրառվող հիմնական ենթադրությունները և նշանակալի տվյալները:

Տես սույն ֆինանսական հաշվետվությունների ծան. 2,3 և 27:

Ինչպես է հարցը հաշվի առնվել աուդիտի ընթացքում

Մենք ստուգել ենք անհատական և հավաքական հիմունքներով գնահատված վարկերի գծով ԱՎԿ-ի՝ ղեկավարության կողմից իրականացվող գնահատման, չափման և որակի վերահսկման գործընթացների նկատմամբ համապատասխան վերահսկողությունների կառուցվածքը և իրականացումը, ներառյալ վարկային ռիսկերի նշանակալի աճի և դեֆոլտի իրադարձությունների ժամանակին բացահայտմանն ուղղված վերահսկողությունները:

Մենք ստուգել ենք հավաքական և անհատական հիմունքով կատարված գնահատականներում և համապատասխան ռիսկերի վարկանիշային համակարգերում կիրառվող ենթադրությունները, ինչպես նաև մոտեցային տվյալները և վերլուծել ենք համապատասխան գնահատման մոդելների ամբողջականությունը: Մեր աշխատանքներում ներառվել են հետևյալ գործընթացները՝

- Մենք վերլուծել ենք արժեզրկման մեթոդաբանության փոփոխությունները, որոնք չեն արտացոլվել ղեկավարության կողմից կիրառվող մոդելներում, և դիտարկել ենք վերջիններիս հնարավոր ազդեցությունը վարկային ռիսկի աճի և ԱՎԿ-ի չափման վրա;
- Մենք վերլուծել ենք վարկերի դեֆոլտային դառնալու հավանականության գնահատականները, ինչպես նաև դեֆոլտ գնացած վարկերից ակնկալվող վերականգնումների մասով հիմնական ենթադրությունները՝ հիմնվելով ոլորտում մեր գիտելիքների, Բանկի փաստացի փորձի, համապատասխան հասանելի կանխատեսումների վրա
- Հավաքական և անհատական հիմունքով գնահատված վարկերի ընտրանքի համար մենք համոզվել ենք, արդյոք վարկային ռիսկի նշանակալի աճը ժամանակին է բացահայտվել, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, վարկային պայմանների վերանայման հաշվի առնելը:

Հավաքական հիմունքով գնահատված վարկերի համար ընտրանքային հիմունքներով մենք ստուգել ենք հաշվարկների հիմքում կիրառվող նշանակալի մոտեցային տվյալները (ժամկետայնություն, դեֆոլտի պահին ակնկալվող արժեք, դեֆոլտից հետո վարկերի

վերականգնում): Մենք նաև ստուգել ենք ակնկալվող վարկային կորուստները հաշվարկելիս օգտագործված վարկային մոդելների ամբողջականությունը, հնարավորության դեպքում իրականացրել ենք ընտրովի վերահաշվարկ և համեմատել ենք արդյունքները:

Անհատական հիմունքով գնահատված վարկերի ընտրանքի համար մենք ստուգել ենք ապագա դրամական հոսքերի վերաբերյալ կանխատեսումները, պատրաստված ղեկավարության կողմից ԱՎԿ-ների չափման նպատակով, ներառյալ արված ենթադրությունների և մուտքային տվյալների ստուգումը, ինչպես նաև արտաքին համապատասխան հավաստիացումների հետ համեմատումը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բայց չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունը: Մենք ակնկալում ենք ձեռք բերել տարեկան հաշվետվությունը աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրում կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ այլ տեղեկատվությանը, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ: Եթե մեր կատարած աշխատանքը հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ այլ տեղեկատվությունը պարունակում է էական խեղաթյուրումներ, մենք պարտավոր ենք տեղեկացնել այդ փաստի մասին: Մենք այդպիսի փաստերի մասին տեղեկություն չունենք: Մեր պարտավորությունն է ծանոթանալ տարեկան հաշվետվությանը, և եթե մեր կատարած աշխատանքը հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ տարեկան հաշվետվությունը պարունակում է էական խեղաթյուրումներ, մենք պարտավոր ենք տեղեկացնել այդ փաստի մասին կառավարման օղակներում գտնվող անձանց:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝

անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Բանկի ֆինանսական ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրման ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման բաղաբաղականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզնից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և ուստի աուդիտի առումով առանցքային հարցեր են:

Մենք նկարագրում ենք այս հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, եթե օրենքը կամ կարգավորումը չի արգելում հարցի հանրայնացումը կամ, երբ ծայրահեղ հազվադեպ դեպքերում մենք որոշում ենք, որ չենք անդրադառնալու հարցին մեր եզրակացությունում, քանի որ խելամտորեն ակնկալվում է, որ դրա բացասական հետևանքներով կգերակշռի հանրային շահը:

Սրբուհի Յակոբյան
Գործադիր տնօրեն



Արփինե Ղևոնդյան
Աուդիտի տնօրեն

27 ապրիլ, 2020 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

«Ինեկորբանկ» ՓԲԸ

ՀԱՅՈՒՅԹԻ ԿԱՄ ՎԼԱՍԻ Լ ԱՅԼ ՀԱՄԱԴԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ՀԱՄԱՐ

Հազար ՀՀ դրամով

	Ծան□	2019թ.	2018թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	4	34,658,625	29,620,471
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	4	(13,188,536)	(12,098,351)
Չուտ տոկոսային եկամուտ		21,470,089	17,522,120
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	5	2,892,882	2,141,883
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	5	(1,895,106)	(1,247,007)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		997,776	894,876
Չուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից		146,901	3,800
Չուտ օգուտ արտարժույթով առևտրից և փոխարկումից	6	1,589,959	1,342,728
Չուտ օգուտ ներդրումային արժեթղթերից		140,760	(6,162)
Չուտ այլ գործառնական եկամուտ	7	647,022	1,287,619
Գործառնական եկամուտ		24,992,507	21,044,981
Ձեռքբերման զեղչի վերաչափումից օգուտներ		-	24,913
Արժեզրկումից կորուստներ	8	(5,578,230)	(4,168,865)
Աշխատակազմի գծով ծախսեր		(4,820,354)	(4,124,104)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	9	(2,958,159)	(2,863,606)
Հափույթ նախքան շահութահարկով հարկումը		11,635,764	9,913,319
Հափութահարկի գծով ծախս	10	(2,222,984)	(1,909,720)
Ժամանակաշրջանի զուտ շահույթ		9,412,780	8,003,599
Այլ համապարփակ օգուտ/(վնաս)՝ առանց շահութահարկի			
Ներդրումային արժեթղթերի վերագնահատումներ	26	375,774	(305,381)
Հարկային դրույքաչափի փոփոխության ազդեցություն հողի և շենքի վերագնահատման վրա	10	43,003	-
Հողի ու շենքի վերագնահատում	16	-	200,885
Ընդամենը համապարփակ եկամուտ		9,831,557	7,899,103



Արեն Նաթանյան
Գործադիր տնօրեն

23 ապրիլ, 2020 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Արշալույս Սահակյան
Գլխավոր հաշվապահ

11-81. Էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՏԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
Հազար ՀՀ դրամով

	Ծան.	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	49,808,684	42,605,738
Ներդրումային արժեթղթեր	12	29,470,717	28,999,460
Բանկերից ստացվելիք գումարներ	13	1,073,545	1,061,361
Հակադարձ հետգնման պայմանագրերով ստացվելիք գումարներ	14	3,132,214	2,718,140
Հաճախորդներին տրված վարկեր	15	238,649,450	206,416,531
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	6,894,326	5,664,727
Վարձակալված տարածքների օգտագործման իրավունք	17	2,128,882	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով		3,418	-
չափվող ֆինանսական ակտիվներ			
Այլ ակտիվներ	18	7,952,232	5,274,767
Ընդամենը ակտիվներ		339,113,468	292,740,724
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Բանկերի ավանդներ և մնացորդներ	19	4,027,490	7,196
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	20	195,656,532	164,377,527
Այլ փոխառություններ	21	57,750,600	67,460,916
Թողարկված պարտքային արժեթղթեր	22	10,312,640	5,567,815
Վարձակալության գծով պարտավորություն	17	2,194,824	-
Ստորադաս փոխառություններ	24	7,413,205	-
Ընթացիկ հարկային պարտավորություններ		142,035	501,953
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	1,889,150	1,680,386
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով		4,400	-
չափվող ֆինանսական պարտավորություններ			
Այլ պարտավորություններ	23	3,438,975	1,865,229
Ընդամենը պարտավորություններ		282,829,851	241,461,022
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	25	14,545,680	14,545,680
Էմիսիոն եկամուտ		7,753,923	7,753,923
Գլխավոր պահուստ		3,500,000	3,500,000
Հողի և շենքերի վերազնահատման պահուստ		1,763,111	1,744,734
Ներդրումային արժեթղթերի վերազնահատման պահուստ	26	1,049,193	1,500,999
Զբաղիված շահույթ		27,671,710	22,234,366
Ընդամենը սեփական կապիտալ		56,283,617	51,279,702
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		339,113,468	292,740,724

11 - 81 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ՀԱՄԱՐ

Հազար ՀՀ դրամով

Հազար ՀՀ դրամով	Ծան.	Բաժնե- տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Հիմնական միջոցների վերագն. պահուստ	Ներդրումային արժեթղթերի վերագն. պահուստ	Զբաղիսված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2018 թ. հունվարի դրությամբ, վերահաշվարկված (ստուգված)		14,545,680	7,753,923	3,500,000	1,562,516	1,806,380	18,412,147	47,580,646
Ժամանակահատվածի շահույթ		-	-	-	-	-	8,003,599	8,003,599
Ժամանակահատվածի այլ համապարփակ եկամուտ, առանց հարկի		-	-	-	200,885	(305,381)	-	(104,496)
Հիմնական միջոցների վերագնահատումից աճի մաշվածություն		-	-	-	(18,667)	-	18,667	-
Շահաբաժիններ		-	-	-	-	-	(4,200,047)	(4,200,047)
Մնացորդը 2018 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ		14,545,680	7,753,923	3,500,000	1,744,734	1,500,999	22,234,366	51,279,702
Ժամանակահատվածի շահույթ		-	-	-	-	-	9,412,780	9,412,780
Ժամանակահատվածի այլ համապարփակ եկամուտ, առանց հարկի		-	-	-	43,003	375,774	-	418,777
Վերադասակարգման արդյունքում պահուստի ճշգրտում	26	-	-	-	-	(827,580)	-	(827,580)
Հիմնական միջոցների վերագնահատումից աճի մաշվածություն	25	-	-	-	(24,626)	-	24,626	-
Շահաբաժիններ		-	-	-	-	-	(4,000,062)	(4,000,062)
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ		14,545,680	7,753,923	3,500,000	1,763,111	1,049,193	27,671,710	56,283,617

11-81 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ՀԱՄԱՐ Հազար ՀՀ դրամով

	Ծան.	2019թ.	2018թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		32,455,116	29,710,200
Վճարված տոկոսներ		(12,935,111)	(11,960,439)
Ստացված կոմիսիոն գումարներ		2,856,616	2,141,883
Վճարված կոմիսիոն գումարներ		(1,933,516)	(1,247,007)
Չուտ օգուտ/(վնաս) արտարժույթով առևտրից և փոխարկումից		1,588,348	1,338,901
Այլ ստացված եկամուտ		636,010	1,276,606
Այլ ընդհանուր վարչական ծախսեր և աշխատակազմի գծով վճարումներ		(6,510,116)	(6,215,382)
Գործառնական ակտիվների (ավելացում) /նվազում			
Ներդրումային արժեթղթեր		(819,372)	1,930,127
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		(373,937)	9,417,524
Բանկերից ստացվելիք գումարներ		58,255	1,611,791
Հաճախորդներին տրված վարկեր		(36,781,309)	(38,908,856)
Այլ ակտիվներ		(1,376,177)	(792,611)
Գործառնական պարտավորությունների ավելացում/(նվազում)			
Բանկերի ավանդներ և մնացորդներ		4,272,602	51,521
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		31,746,737	23,736,934
Այլ պարտավորություններ		131,050	(23,940)
Չուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից՝ նախքան հարկումը		13,015,196	12,067,252
Վճարված շահութահարկ		(2,153,921)	(2,696,661)
Չուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		10,861,275	9,370,591
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	16	(1,941,713)	(1,108,359)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	16	2,733	1,766
Չուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		(1,938,980)	(1,106,593)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Վճարված շահաբաժիններ		(4,000,062)	(4,200,047)
Ստացված փոխառությունների ավելացում		17,050,440	6,499,259
Ստացված փոխառությունների մարում		(19,011,368)	(22,369,612)
Բանկի կողմից թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր		4,881,300	5,569,316
Վարձակալության գծով պարտավորություն		(380,501)	-
Չուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		(1,460,191)	(14,501,084)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ / (նվազում)		7,462,104	(6,237,086)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(275,438)	(145,761)
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեկան դրությամբ	11	42,629,390	49,012,237
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ՝ տարեկան դրությամբ	11	49,816,056	42,629,390

11-81 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

1. ԲԱՆԿԸ

«Ինեկոբանկ» ՓԲԸ-ն հիմնվել է 1996թ Հայաստանի Հանրապետությունում: Նրա հիմնական գործունեությունն ավանդների ներգրավումն է, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկավորումը, երաշխիքների տրամադրումը, վճարահաշվարկային, ինչպես նաև արժեթղթերով և արտարժույթով գործառնությունների իրականացումը: Բանկը, իր գործունեությունը ծավալելով համաձայն Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից տրամադրված արտոնագրի, կարգավորվում է ՀՀ օրենքներով: Բանկը նաև ավանդների երաշխավորման ՀՀ պետական համակարգի անդամ է:

Բանկի իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 375001, Թումանյան 17: Բանկն ունի 25 մասնաճյուղ: Բանկի ակտիվները և պարտավորությունները հիմնականում գտնվում են ՀՀ-ում:

Առ 31 դեկտեմբերի 2019թ և 2018թ. Բանկի բաժնետերեր էին.

	2019 թ. դեկտեմբերի 31: %	2018 թ. դեկտեմբերի 31 %
Ավետիս Բալոյան	32.3	30.0
Կարեն Սաֆարյան	27.9	25.9
ՎՇԵԲ	12.7	22.7
ՍԳՐԻՖ ԿՈՌՊԵՐԱՏԻՖ ՅՈՒ ԷՅ	10.0	10.0
ԴԻՎԵԼՈՓԻՆԳ ՎՈՐԼԴ ՍՄԱՐՔԵԹՍ	5.1	-
Այլ բաժնետերեր	12.0	11.4
	100.0	100.0

2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի աշխատակիցների թիվը կազմում է 834 և 794 համապատասխանաբար:

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԶԱՐԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համապատասխանության մասին հայտարարություն. սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) համաձայն:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության վրա, որ Բանկը գործում է անընդհատության սկզբունքով և կշարունակի գործել տեսանելի ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ Դրամն է: Բոլոր արժեքները կլորացված են հազար ՀՀ դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Պատրաստման հիմունքներ. Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ որոշ հիմնական միջոցների և ֆինանսական գործիքների:

Բանկի գործառնություններում կիրառվող արտարժույթների փոխարժեքները ներկայացված են ստորև.

	2019 թ. դեկտեմբերի 31	2018 թ. դեկտեմբերի 31
Փոխարժեք՝ օրվա վերջի դրությամբ՝ [ՀՀ դրամ]		
1 ԱՄՆ դոլար	479.70	483.75
1 Եվրո	537.26	553.65

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Նոր և փոփոխված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք ուժի մեջ են մտել ընթացիկ տարում

ՖՀՄՍ 16 Վարձակալություն

ՖՀՄՍ 16 Վարձակալություն ստանդարտի կիրառման ընդհանուր ազդեցությունը.

Ընթացիկ տարում Բանկը կիրառել է ՖՀՄՍ 16-ը (ինչպես հրապարակվել է ՄՀՄԽ- ի կողմից 2016թ.-ի հունվարին), որն ուժի մեջ է 2019 թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 16-ը ներկայացնում է նոր կամ փոփոխված պահանջներ վարձակալության հաշվառման վերաբերյալ: Այն ներկայացնում է վարձակալի կողմից հաշվառման իրականացման էական փոփոխություններ՝ հեռացնելով գործառնական և ֆինանսական վարձակալության միջև տարբերությունը, և պահանջում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և վարձակալության գծով պարտավորության ճանաչում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ և փոքրածախ ակտիվների վարձակալության: Ի տարբերություն վարձակալի՝ վարձատուի կողմից իրականացվող հաշվառման պահանջները հիմնականում մնացել են անփոփոխ:

Բանկի համար ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթիվը 2019 թվականի հունվարի 1-ն է:

Բանկը կիրառել է ՖՀՄՍ 16-ը՝ օգտագործելով ձևափոխված հետընթաց մոտեցումը՝ ՖՀՄՍ 16-ի կիրառման կուտակային ազդեցությունը ճանաչելով սեփական կապիտալում՝ որպես ընթացիկ ժամանակաշրջանի կուտակված շահույթի բացվող մնացորդի ճշգրտում: Նախորդ ժամանակահատվածները չեն վերաներկայացվել:

Վարձակալության նոր սահմանման ազդեցությունը.

Բանկն, որպես գործնական մոտեցում, օգտվել է ՖՀՄՍ 16-ի ընձեռած հնարավորությունից՝ կրկին չգնահատելու արդյոք պայմանագիրը վարձակալության պայմանագիր է կամ պարունակում է վարձակալություն՝ սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ: Համապատասխանաբար, վարձակալության սահմանումը, համաձայն ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի, կշարունակվի կիրառել այն վարձակալական պայմանագրերի նկատմամբ, որոնք կնքվել են կամ փոփոխվել են մինչև 2019 թվականի հունվարի 1-ը:

Վարձակալության սահմանման փոփոխությունը հիմնականում վերաբերում է վերահսկողության հայեցակարգին: ՖՀՄՍ 16-ը տարբերակում է վարձակալության և սպասարկման պայմանագրերը՝ հիմք ընդունելով, որ նույնականացված ակտիվի օգտագործումը վերահսկվում է հաճախորդի կողմից: Վերահսկումը համարվում է գոյություն ունեցող, եթե հաճախորդը ունի.

- հայտնաբերված ակտիվի օգտագործումից էականորեն բոլոր տնտեսական օգուտները ստանալու իրավունք, և
- այդ ակտիվի օգտագործումը ուղղորդելու իրավունք:

Բանկի կողմից ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթիվը 2019 թվականի հունվարի 1-ն է՝ օգտագործելով ձևափոխված հետընթաց մոտեցումը: Հետևաբար, ՖՀՄՍ 16-ի կիրառման կուտակային էֆեկտը ճանաչվում է որպես կուտակված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում՝ 2019 թվականի հունվարի 1-ին, առանց համեմատական տեղեկատվության վերաներկայացման:

Ազդեցությունը վարձատուի հաշվառման վրա

ՖՀՄՍ 16-ը փոխում է Բանկի հաշվառումը այն արտահաշվեկշռում հաշվառվող վարձակալական պայմանագրերի մասով, որոնք նախկինում դասակարգվել էին որպես գործառնական վարձակալություններ՝ համաձայն ՀՀՄՍ 17-ի:

Կիրառելով ՖՀՄՍ 16-ը՝ բոլոր վարձակալությունների համար (բացառությամբ ներքոնշյալների) Բանկը՝

- ա) ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները և վարձակալության գծով պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, որն ի սկզբանե չափվում է ապագա վարձակալության վճարների ներկա արժեքով,

«ԻՆՆԵԿՐԱՆՆԻ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

- (բ) ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածության և վարձակալության գծով պարտավորությունների տոկոսային ծախսերը շահույթում կամ վնասում,
- (գ) բաժանում է դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում հիմնական գումարի (ներկայացված է ֆինանսական գործունեությունից հոսքերում) և տոկոսների (ներկայացված են գործառնական գործունեությունից հոսքերում) վճարված ընդհանուր գումարը:

Վարձակալության գծով խրախուսումները (օրինակ՝ վարձավճարների ազատման ժամանակահատվածը) ճանաչվում են որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և վարձակալության գծով պարտավորությունների չափման մաս, մինչդեռ ՀՀՄՍ 17-ի համաձայն դրանք հանգեցնում էին վարձակալության խթանի ճանաչմանը՝ մաշեցնելով դրանք գծային հիմունքով:

ՀՀՄՍ 16-ի համաձայն պետք է կիրառի ՀՀՄՍ 36-ը՝ որոշելու համար, թե արդյոք օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկված է:

Կարճաժամկետ վարձակալության (վարձակալության ժամկետը՝ ոչ ավելի քան 12 ամիս) և փոքրարժեք ակտիվների (օրինակ՝ պլանշետային և անձնական համակարգիչներ, գրասենյակային կահույք և հեռախոսներ) վարձակալության համար, Բանկը որոշել է վարձակալության գծով ծախսը ճանաչել գծային հիմունքով, ինչպես թույլատրվում է ՀՀՄՍ 16-ով: Այս ծախսերը ներկայացված են «Այլ ընդհանուր վարչական ծախսերի» մեջ՝ շահույթում կամ վնասում:

ՀՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ֆինանսական ազդեցությունը. 2019 թ.-ի հունվարի 1-ի ֆինանսական դրության մասին հաշվետվությունում ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գծով լրացուցիչ փոխառության դրույք կազմում է 11.5%: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ՀՀՄՍ 17-ով հաշվարկված գործառնական վարձակալության գծով ձևավորված պայմանական պարտավորությունների գեղջումը փոխառության դրույքով ստանդարտի սկզբնական կիրառման ժամանակ և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վարձակալության պարտավորություններ ճանաչումը:

Ընդամենը գործառնական վարձակալության գծով պայմանական պարտավորություններ առ 01 հունվարի, 2019թ.	2,599,660
• Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների գծով վարձակալություն	(22,400)
• Շեղման ազդեցություն	(128,562)
Վարձակալության գծով պարտավորություններ առ 01 հունվարի, 2019թ.	2,448,698

Ընթացիկ տարում Բանկը կիրառել է մի շարք ՀՀՄՍ ստանդարտների փոփոխություններ և ՄՀՍԽ-ի կողմից թողարկված մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2019 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսված ժամանակահատվածի համար: Դրանց կիառումը որևէ էական ազդեցություն չի ունեցել բացահայտումների կամ այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդների վրա:

ՀՀՄՍ 9 (փոփոխություններ) Կանխավճարների առանձնահատկու թյունները՝ բացասական փոխհատուցմամբ	Բանկն առաջին անգամ կիրառել է «ՀՀՄՍ 9» -ում կատարված փոփոխությունները ընթացիկ տարվա ընթացքում: ՀՀՄՍ 9-ի փոփոխությունները պարզաբանում են, որ կանխավճարների՝ «բացառապես մայր գումարի և տոկոսների վճարումները» (SPPI) բավարարելու համար կիրառվում է օպցիոնը՝ կարող է վճարել կամ ստանալ ողջամիտ փոխհատուցում կանխավճարի համար՝ անկախ դրա պատճառներից: Այլ կերպ ասած, բացասական փոխհատուցմամբ կանխավճարային հատկություններ ունեցող ֆինանսական ակտիվները ինքնաբերաբար անկիրառելի չեն համարվում SPPI-ի համար:
Տարեկան բարեփոխումներ 2015- 2017. ՀՀՄՍ 12 Շահութահարկ և ՀՀՄՍ 23 Փոխառության ծախսումներ	Բանկն առաջին անգամ ընթացիկ տարում կիրառել է ՀՀՄՍ 2015-2017 թվականի ցիկլի տարեկան բարեփոխումների մեջ ներառված փոփոխությունները: Տարեկան բարեփոխումները ներառում են չորս ստանդարտների փոփոխություններ. ՀՀՄՍ 12 Շահութահարկ Փոփոխությունները հստակեցնում են, որ Բանկը շահաբաժինների գծով շահութահարկի բոլոր հետևանքները ճանաչում է շահույթում կամ վնասում, այլ

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ կապիտալում կախված այն հանգամանքից, թե որտեղ են ի սկզբանե ճանաչվել բաշխման ենթական շահույթ առաջացնող տվյալ գործարքները կամ իրադարձությունները: Սա անկախ այն հանգամանքից, թե արդյոք հարկերի տարբեր դրույթաչափեր են կիրառվում բաշխված և չբաշխված շահույթների նկատմամբ:

ՀՀՄՍ 23 Փոխառության ծախսումներ

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ եթե որոշակի փոխառություն մտնում է չմարված այն բանից հետո, երբ տվյալ ակտիվը պատրաստ է նպատակային օգտագործման կամ վաճառքի համար, ապա այդ փոխառությունը դառնում է այն միջոցների մասը, որը կազմակերպությունը փոխառել է ընդհանուր փոխառությունների կապիտալացման տոկոսադրույթը հաշվարկելիս:

ՀՀՄՍ 19
(փոփոխություններ).

Աշխատակիցների հատուցումների պլանների փոփոխություն, դադարեցում կամ ներդրում

Բանկն առաջին անգամ կիրառել է ՀՀՄՍ 19-ի փոփոխությունները ընթացիկ տարում: Փոփոխությունները պարզաբանում են, որ նախկինում ճանաչված ծառայության արժեքը (կամ հաշվեկշռում շահույթի կամ վնասի հաշվարկը) հաշվարկվում է՝ չափելով որոշակի հատուցումների գծով պարտավորությունը (ակտիվ)՝ օգտագործելով վերանայված ենթադրությունները և առաջարկվող օգուտները և պլանավորված ակտիվները համեմատելով ծրագրի փոփոխություններին (կամ նվազեցմանը կամ մարմանը), բայց անտեսելով ակտիվի առաստաղի ազդեցությունը (դա կարող է առաջանալ, երբ սահմանված հատուցումների պլանը հավելավճարային դիրքում է): Այժմ պարզ է, որ ակտիվի առաստաղի էֆեկտի փոփոխությունը, որը կարող է պայմանավորված լինել պլանի փոփոխությամբ (կամ կրճատմամբ կամ հաշվարկով), որոշվում է երկրորդ փուլով և նորմալ կերպով ճանաչվում է այլ համապարփակ եկամուտներում:

Փոփոխվել են նաև այն կետերը, որոնք վերաբերում են ընթացիկ ծառայության արժեքի չափմանը և սահմանված հատուցումների գծով պարտավորության (ակտիվի) զուտ տոկոսներին: Այժմ Բանկից կապահանջվի օգտագործել վերազնահատումից ստացված վերանայված ենթադրությունները՝ պլանի փոփոխությունից հետո հաշվետու ժամանակաշրջանի մնացորդի սպասարկման արժեքը և զուտ տոկոսը որոշելու համար: Հետագա պլանի փոփոխության համար զուտ տոկոսագումարները հաշվարկվում են ՀՀՄՍ 19: 99-ի համաձայն վերամշակված զուտ սահմանված հատուցումների գծով պարտավորությունը (ակտիվ) բազմապատկելով գեղջային տոկոսադրույթով (հաշվի առնելով նաև ներդրումների և հատուցումների վճարների ազդեցությունը զուտ սահմանված շահույթի պարտավորության (ակտիվի) վրա):

ՓՀՄՍ ՄԿ 23
Շահութահարկով հարկման մոտեցումների վերաբերյալ անորոշություն

Ընթացիկ տարվա ընթացքում Բանկն առաջին անգամ որդեգրել է ՓՀՄՍ ՄԿ 23 - ը: Այն սահմանում է, թե ինչպես կարելի է որոշել հաշվապահական հաշվառման հարկի դիրքը, երբ անորոշություն կա շահութահարկով հարկման մոտեցումների վերաբերյալ: Մեկնաբանությունը Բանկից պահանջում է.

- որոշել, թե անորոշ հարկային դիրքերը գնահատվում են առանձին կամ խմբով և
- Գնահատել, արդյոք հավանական է, որ հարկային մարմինը կընդունի կազմակերպության կողմից ներկայացված շահութահարկի հաշվետվության մեջ օգտագործված կամ օգտագործման նպատակով առաջարկվող անորոշ հարկային մոտեցումը :
- Եթե այո, ապա կազմակերպությունը պետք է որոշի հաշվապահական հաշվառման հարկային դիրքորոշումը՝ իր կողմից ներկայացվող շահութահարկի հաշվետվության մեջ օգտագործված կամ օգտագործման նպատակով հարկային մոտեցմանը համապատասխան
- Եթե ոչ, ապա կազմակերպությունը պետք է անորոշության ազդեցությունը արտացոլի իր հաշվապահական հաշվառման հարկային դիրքորոշումը որոշելու ժամանակ:

«ԻՆԵԼՈՐԱՆԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Ընթացիկ տարում Բանկը չի կիրառել մի շարք ՖՀՄՍ ստանդարտների փոփոխություններ և ՄՀՄԽ-ի կողմից թողարկված մեկնաբանություններ, որոնք կիրառելի չեն հաշվետու ժամանակահատվածի համար:

ՀՀՄՍ 17	Ապահովագրական պայմանագրեր
ՀՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28 (փոփոխություններ)	Ակտիվների վաճառք կամ ներդրում ներդրող և ասոցիացված կամ համատեղ ձեռնարկությունների միջև
ՀՀՄՍ 3 (փոփոխություններ)	Բիզնեսի բնորոշում
ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 (փոփոխություններ)	Էականության սահմանում
Տարեկան բարեփոխումներ 2010-2012 . ՀՀՄՍ 1	Ակտիվների դասակարգումը ընթացիկի և ոչ ընթացիկի
Փոփոխություններ ՀՀՄՍ 9, ՀՀՄՍ 39 և ՀՀՄՍ 7	Ուղենիշային տոկոսադրույքի փոփոխությունը և դրա ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա
Հայեցակարգ	ՀՀՄՍ-ի ստանդարտներում հայեցակարգային շրջանակի վերաբերյալ հղումների փոփոխություններ

Բանկի ղեկավարությունը չի բացառում, որ փոփոխությունների կիրառումն ապագայում կազդի Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հաշվապահական հաշվառման բաղաբաղականության հիմնական դրույթներ

Եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներ և ծախսեր . Բոլոր ֆինանսական գործիքների տոկոսային եկամուտն ու ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես «զուտ տոկոսային եկամուտ», «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս» տողերում՝ կրառելով հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքը (USԴ - EIR) այն տոկոսադրույքն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ ավելի կարճ ժամանակահատվածում, որտեղ այն կիրառելի է, ճշգրտորեն բերվում են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքին: Ապագա դրամական հոսքերի հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր այն վճարները և կետերը, որոնք լրացուցիչ ծախս են կազմում և ուղղակիորեն վերագրելի են հատուկ վարկային համաձայնագրին, ինչպես նաև գործարքի հետ կապված ծախսերը և բոլոր այլ պարզապահարներն ու զեղչերը:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում գործարքի հետ կապված ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ սկզբնական ճանաչման ժամանակ:

Տոկոսային եկամուտը/տոկոսային ծախսը հաշվարկվում է՝ արդյունավետ տոկոսադրույքը (EIR) կիրառելով ոչ վարկային տեսանկյունից արժեզրկված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (այսինքն՝ ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքով՝ նախքան ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի մասով ճշգրտումները) կամ կիրառելով ֆինանսական պարտավորությունների ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Վարկային տեսանկյունից արժեզրկված ֆինանսական ակտիվների դեպքում տոկոսային եկամուտը հաշվարկվում է վարկային տեսանկյունից արժեզրկված՝ ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքի նկատմամբ արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ (այսինքն՝ համախառն հաշվեկշռային արժեքից հանած ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) գծով պահուստը):

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Գնված կամ ի սկզբանե արժեզրկված (ԳԻՍԱ - POCI) ֆինանսական ակտիվների դեպքում արդյունավետ տոկոսադրույքն արտացոլում է ակնկալվող վարկային կորուստները, երբ սահմանվում են ֆինանսական ակտիվից ստացվելիք ապագա դրամական միջոցների հոսքերը:

Բանկի շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում տոկոսային եկամուտը և ծախսը ներառում են նաև տոկոսադրույքի ռիսկերի դրամական միջոցների հոսքերի հեջում որպես հեջավորման գործիքներ նախորոշված ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխության արդյունավետ մասը: Տոկոսադրույքի ռիսկի իրական արժեքի հեջի տոկոսային եկամտի և ծախսի դեպքում որպես հեջավորման գործիքներ նախորոշված ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխության արդյունավետ մասը, ինչպես նաև հեջավորված հոդվածի նախորոշված ռիսկի իրական արժեքի փոփոխությունները ևս ներառված են տոկոսային եկամտում և ծախսում:

Միջնորդավճարներ և կոմիսիոն եկամուտներ/ծախսեր. վճարները և կոմիսիոն ծախսերն ու եկամուտներն են, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժան մաս չեն հանդիսացել, ինչպես նաև այլ վճարներ: Բանկի շահույթի կամ վնասի մասին հաշվետվության այս մասում ընդգրկված վճարները, ի թիվս այլ վճարների, ներառում են վարկային համաձայնագրի սպասարկման վճարներ, վարկային պարտավորությունների գծով չօգտագործման վճարներ, երբ քիչ հավանական է, որ այդ վճարները կառաջացնեն հատուկ վարկային պարտավորություններ և վարկային սինդիկացիոն վճարներ:

Ծառայությունների գծով վճարները և կոմիսիոն ծախսերը հաշվարկվում են ծառայությունների մատուցման ժամանակ:

Չուտ օգուտ/(վնաս) առևտրային նպատակներով պահվող ակտիվներից և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներից և առևտրային նպատակներով պահվող պարտավորություններից. առևտրային նպատակներով պահվող ակտիվներից և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներից և առևտրային նպատակներով պահվող պարտավորություններից զուտ օգուտը/(վնասը) ներառում են առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխություններից առաջացած բոլոր օգուտները և վնասները:

Հահաբաժիններից ստացված եկամուտ. Հահաբաժիններից եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճար ստանալու իրավունքը հաստատված է: Սա ցուցակված բաժնային արժեթղթերի նախորդ Հահաբաժնի ամսաթիվն է, ինչպես նաև այն ամսաթիվը, երբ սովորաբար բաժնետերերը հաստատում են չցուցակված բաժնային արժեթղթերի Հահաբաժինը:

Հահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում Հահաբաժնից ստացված եկամտի ներկայացումը կախված է բաժնեմասային ներդրումների դասակարգումից և գնահատումից, այսինքն՝

- Առևտրային նպատակով պահվող բաժնային գործիքների դեպքում Հահաբաժնից ստացվող եկամուտը ներկայացվում է որպես առևտրային նպատակով պահվող եկամուտ,
- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող իրական արժեքով նախորոշված բաժնային գործիքների դեպքում Հահաբաժնից ստացվող եկամուտը ներկայացվում է այլ եկամտում, և
- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող իրական արժեքով չնախորոշված և առևտրային նպատակով չափվող բաժնային գործիքների դեպքում Հահաբաժնից ստացվող եկամուտը ներկայացվում է որպես Հահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից զուտ եկամուտ:

Ֆինանսական գործիքներ

2018թ. հունվարի 1-ից Բանկը կիրառել է ՀՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ» ստանդարտը (2014 թվականի հուլիսին կատարված փոփոխություններով) և դրանից բխող համապատասխան փոփոխությունները, որոնք կատարվել են այլ ՀՀՄՍ ստանդարտներում և գործողության մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսող հաջորդող տարեկան ժամանակաշրջանում:

Ի հավելումս, Բանկն ընդունել է ՀՀՄՍ 7-ի «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» ստանդարտում տեղ գտած հետագա փոփոխությունը, որոնք առաջին անգամ կիրառվել են 2018 թվականի բացահայտումների նկատմամբ:

«ԻՆԵԿՈՐԱՆՆԻ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Ֆինանսական ակտիվներ. Բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում և ապահանջվում են առևտրի օրվա դրությամբ, երբ ֆինանսական ակտիվի ձեռքբերումը կամ վաճառքը համաձայնեցվում է պայմանագրով, և ըստ այդ պայմանագրի պայմանների անհրաժեշտ է ապահովել ֆինանսական ակտիվի մատակարարումը համապատասխան շուկայում սահմանված ժամանակահատվածում, և սկզբնապես գնահատվում են իրական արժեքով, գումարած գործարքի գծով ծախսերը, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների, որոնք դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

ՖՀՄՍ 9 շրջանակներում բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները հետագայում պետք է չափվեն ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով, հիմք ընդունելով կազմակերպության ֆինանսական ակտիվների և ֆինանսական ակտիվների դրամային հոսքերի հատկանիշների կառավարման բիզնես մոդելը:

Մասնավորապես՝

- Բիզնես մոդելում առկա պարտքային գործիքները, որոնց նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI), հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:
- Բիզնես մոդելում առկա պարտքային գործիքները, որոնց նպատակն է ոչ միայն հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, այլև վաճառել պարտքային գործիքները և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, հետագայում չափվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով,
- Բոլոր այլ պարտքային գործիքները (օրինակ՝ իրական արժեքի հիմունքով կառավարվող կամ վաճառքի համար պահվող պարտքային գործիքները) և բաժնային գործիքներում ներդրումները հետագայում գնահատվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով:

Պարտքային գործիքներ ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող. Բանկը գնահատում է ֆինանսական ակտիվի դասակարգումը և չափումը՝ հիմք ընդունելով ակտիվի՝ պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերի հատկանիշները և Բանկի՝ ակտիվի կառավարման բիզնես մոդելը:

Ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով դասակարգվող և գնահատվող ակտիվի պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI).

SPPI թեստի նպատակներով մայր գումարը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք դրա սկզբնական ճանաչման պահին: Այդ մայր գումարը կարող է փոփոխվել ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ընթացքում (օրինակ՝ եթե առկա են մայր գումարի մարումներ): Տոկոսն իրենից ներկայացնում է հատուցումներ՝ փողի ժամանակային արժեքի մասով, որոշակի ժամանակահատվածի ընթացքում չմարված մայր գումարի գծով վարկային ռիսկի և այլ հիմնական վարկային ռիսկերի և ծախսերի, ինչպես նաև շահույթի սահմանաչափի մասով: SPPI գնահատումը իրականացվում է այն արժույթով, որով արտահայտվում է ֆինանսական ակտիվը:

Պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, որոնք միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են (SPPI), համապատասխանում են հիմնական վարկային համաձայնագրին: Պայմանագրային պայմանները, որոնք ներկայացնում են պայմանագրով նախատեսված այն դրամական միջոցների հոսքերի ռիսկերին կամ անկայունությանը ենթարկվածությունը, որոնք չեն վերաբերում հիմնական վարկային համաձայնագրին, ինչպիսիք են սեփական կապիտալի կամ ապրանքների գների ռիսկերի ենթարկվածությունը, չեն առաջացնում պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ: Ստեղծված կամ ձեռք բերված ֆինանսական ակտիվը կարող է հանդիսանալ հիմնական վարկային համաձայնագիր, անկախ նրանից, թե այն իրավաբանորեն վարկ է համարվում, թե ոչ:

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելների գնահատումը կատարվում է ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառման ամսաթվով՝ ֆինանսական ակտիվի դասակարգումը որոշելու նպատակով:

Բիզնես մոդելը կիրառվում է հետադարձ կերպով՝ ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառման ամսաթվին առկա բոլոր ֆինանսական ակտիվների նկատմամբ: Բանկը որոշում է բիզնես մոդելների մակարդակ, որն արտացոլում է ֆինանսական ակտիվների խմբերի համատեղ կառավարման ձևը՝ որոշակի բիզնես նպատակի իրականացման դեպքում: Բանկի բիզնես մոդելը կախված է առանձին գործիքի վերաբերյալ ղեկավարության մտադրություններից, հետևաբար, բիզնես մոդելի գնահատումն իրականացվում է խմբավորման ավելի բարձր մակարդակով, այլ ոչ գործիք առ գործիք հիմունքով:

Բանկն ունի մեկից ավելի բիզնես մոդել՝ իր ֆինանսական գործիքների կառավարման համար, որն արտացոլում է Բանկի՝ իր ֆինանսական ակտիվների կառավարման մեթոդները դրամական միջոցների հոսքեր ստեղծելու նպատակով: Բանկի բիզնես մոդելներով որոշվում են, թե արդյոք դրամական միջոցների հոսքերն առաջանում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ այս երկու բաղադրիչների կիրառումից: Բիզնես մոդելի գնահատում կատարելիս Բանկը հաշվի է առնում համապատասխան հասանելի բոլոր տեղեկությունները: Այնուամենայնիվ, բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատթարագույն սցենար» կամ «սթրեսային սցենար» տարբերակները:

Բանկը հաշվի է առնում հետևյալ հասանելի ողջ տեղեկատվության վրա, այն է՝

- Ինչպես է գնահատվում և կազմակերպության առանցքային ղեկավար անձնակազմին ներկայացվում բիզնես մոդելի և այդ բիզնես մոդելում առկա ֆինանսական ակտիվների արդյունավետության արդյունքները,
- Բիզնես մոդելի արդյունավետության (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների) վրա ազդող ռիսկերը, մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մեխանիզմները,
- Բիզնեսի կառավարիչների փոխհատուցման եղանակները (օրինակ՝ փոխհատուցումը հիմնված է կառավարվող ակտիվների իրական արժեքների կամ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի վրա):

Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը որոշում է, թե արդյոք նոր ճանաչված ֆինանսական ակտիվներն գործող բիզնես մոդելի մաս են, կամ արտացոլում են նոր բիզնես մոդելի առաջացման սկիզբը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում Բանկը վերագնահատում է իր բիզնես մոդելները՝ որոշելու համար, արդյոք բիզնես մոդելները փոփոխություններ են կրել նախորդ ժամանակաշրջանից հետո, թե ոչ: Ընթացիկ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Բանկն իր բիզնես մոդելներում փոփոխություններ չի հայտնաբերել:

Այն դեպքում, երբ ապաճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքը, ապա նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը/վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում: Ի տարբերություն դրան, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային ներդրումային գործիքների կուտակային օգուտը/վնասը, որը նախկինում ճանաչվել է համապարփակ ֆինանսական արդյունքում, հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում, այլ տեղափոխվում է սեփական կապիտալ: Պարտքային գործիքները, որոնք հետագայում գնահատվում են ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, ենթակա են արժեզրկման:

ՇԿԻԱԶ ֆինանսական ակտիվները հետևյալն են.

- Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր ունեցող ակտիվներ, որոնք SPPI չեն, և/կամ
- Բիզնես մոդելում պահվող ակտիվներ, բացի պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու, կամ հավաքագրելու և վաճառելու համար պահվողներից, կամ
- ՇԿԻԱԶ-ով նախորոշված ակտիվներ՝ կիրառելով իրական արժեքի տարբերակը:

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Այս ակտիվները չափվում են իրական արժեքով, և վերագնահատման արդյունքում առաջացած օգուտը/վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Վերադասակարգում. Եթե փոփոխվում է բիզնես մոդելը, որի շրջանակում Բանկը ֆինանսական ակտիվներ է պահում, ապա այդ փոփոխված ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են: Նոր կատեգորիային վերաբերող դասակարգման և գնահատման պահանջները կիրառվում են հեռանկարային հիմունքներով՝ բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրվանից, ինչը հանգեցնում է Բանկի ֆինանսական ակտիվների վերադասակարգմանը: Պայմանագրային դրամական միջոցների հոսքերը ներկայացվում են ստորև՝ *Ֆինանսական ակտիվների փոփոխության և ապաճանաչման* վերաբերյալ հաշվապահական հաշվառման բաղաբաղանդության մեջ:

Վրժարկում. Բանկը ճանաչում է ԱՎԿ-ի կորուստի պահուստները շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հետևյալ ֆինանսական ակտիվների գծով համար՝

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ ,
- Հաճախորդներին տրվող վարկեր,
- Ներդրումային արժեթղթեր,
- Հակադարձ հետգնման պայմանագրեր.
- Այլ ֆինանսական ակտիվներ. դեբիտորական պարտքեր,
- Այլ ֆինանսական պարտավորություններ. արտահաշվեկշռային պայմանական դեպքեր և պարտավորություններ,
- Տրամադրված ֆինանսական երաշխիքի պայմանագրեր:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով որևէ արժեզրկման կորուստ ճանաչված չէ:

POCI ֆինանսական ակտիվներից բացի (որոնք ստորև առանձին են նշված), ԱՎԿ-ները պետք է չափվեն կորուստների գծով պահուստի հաշվառման միջոցով՝ ստորև նշվածների համարժեք գումարի չափով՝

- Ակնկալվող վարկային կորուստներ (ԱՎԿ) 12 ամսվա ընթացքում, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի արժեզրկման իրադարձությունների, և որոնք կարող են տեղի ունենալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12 ամիսների ընթացքում (ինչպես նշված է փուլ 1-ում), կամ
- Ակնկալվող վարկային կորուստներ (ԱՎԿ) վարկի գործողության ողջ ընթացքում, այսինքն՝ ԱՎԿ, որն արդյունք է ֆինանսական գործիքի գործողության ընթացքում հնարավոր դեֆոլտային իրադարձությունների (ինչպես նշված է փուլ 2-ում և 3-ում):

Փուլերի մասին առավել մանրամասն տես ծան. 27-ը:

Լիարժեք ԱՎԿ-ի դեպքում ֆինանսական գործիքի համար պահանջվում է կորուստների գծով պահուստներ, եթե այդ ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչումից հետո: Բոլոր այլ ֆինանսական գործիքների համար ԱՎԿ-ները չափվում են 12-ամսյա ԱՎԿ-ի չափով:

Ակնկալվող վարկային կորուստները՝ ԱՎԿ-ները վարկային կորուստների ներկա արժեքի՝ հավանականության վրա հիմնված հաշվարկներն են: Դրանք չափվում են որպես Բանկի պայմանագրային հիմունքներով վճարման ենթակա դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության ներկա արժեքի հիման վրա, որը Բանկը ակնկալում է ստանալ տարբեր տևողության սցենարների համեմատության արդյունքում՝ զեղչված ակտիվի արդյունավետ տոկոսադրույքի չափով:

- Զօգտագործված վարկային գծերի դեպքում ԱՎԿ-ն պարտավորություն կրողի կողմից վարկի ներգրավման դեպքում Բանկի ստացման ենթակա պայմանագրային դրամական միջոցների հոսքերի տարբերության ներկա արժեքի և, վարկի ներգրավման դեպքում, Բանկի կողմից ակնկալվող դրամական միջոցների միջև առկա տարբերությունն է, և

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Յազար 33 դրամով**

- Ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում ԱՎԿ-ն իրենից ներկայացնում է երաշխավորված պարտքային գործիքի տիրոջը վճարման ենթակա գումարների տարբերություն է՝ հանած այն գումարները, որը Բանկն ակնկալում է ստանալ վերջինից, պարտապանից կամ որևէ այլ կողմից:

Բանկն ակնկալվող վարկային կորուստները չափում է անհատական հիմունքով, կամ էլ հավաքական հիմունքով, եթե վարկային պորտֆելները ռիսկի նույնանման ռիսկի հատկանիշներ են կրում: Կորուստների գծով պահուստների գնահատումը կիմնվի ակտիվների ակնկալվող դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի վրա՝ կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, անկախ վերջինիս անհատական կամ հավաքական հիմունքով չափվելու հանգամանքից:

Վարկային տեսանկյունից արժեզրկված ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվը վարկային տեսանկյունից արժեզրկվում է այն ժամանակ, երբ տեղի են ունենում ֆինանսական ակտիվի համար ակնկալվող հետագա կանխիկ դրամական հոսքերի վրա շրջադարձային ազդեցություն ունեցող մեկ կամ ավելի իրադարձություններ: Վարկային տեսանկյունից արժեզրկված ֆինանսական ակտիվները համարվում են փուլ 3-ի ակտիվներ: Վարկային տեսանկյունից արժեզրկման փաստը ներառում է հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտարկելի տվյալները՝

- Փոխառուի կամ գործընկերոջ զգալի ֆինանսական դժվարությունները,
- Պայմանագրի խախտումը, մասնավորապես տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը,
- Փոխառուի պարտատերը, փոխառուի ֆինանսական դժվարությունների հետ կապված տնտեսական կամ պայմանագրային պատճառներից ելնելով, նրան տրամադրել է այնպիսի զիջում, որն այլ պայմաններում չէր տրամադրի,
- Ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը, կամ
- Չզալի զեղչով ֆինանսական ակտիվի ձեռքբերում, որն արտացոլում է առաջացած վարկային կորուստները:

Երբեմն անհնար է առանձնացնել մեկ որոշակի իրադարձություն, քանի որ մի քանի իրադարձությունների միասնական ազդեցությունն է հանգեցնում ֆինանսական ակտիվների վարկային տեսանկյունից արժեզրկմանը: Բանկը գնահատում է, թե արդյո՞ք պարտքային գործիքները, որոնք հանդիսանում են ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, համարվում են արժեզրկված յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Պետական և կորպորատիվ պարտքային գործիքները վարկային տեսանկյունից արժեզրկումը գնահատելու համար Բանկը հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են պարտատոմսերի եկամտաբերությունը, վարկունակության ցուցանիշը, ինչպես նաև վարկառուի կողմից միջոցների ներգրավման կարողությունը:

Վարկը համարվում է արժեզրկված այն ժամանակ, երբ վարկառուի ֆինանսական դրության վատթարացման արդյունքում նրան զիջումներ են տրամադրվում, եթե չկան փաստեր այն մասին, որ զիջումների արդյունքում զգալիորեն նվազել են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի չստացման հավանականության ռիսկերը և բացակայում են արժեզրկման այլ հայտանիշներ: Այն ֆինանսական ակտիվները, որոնց համար դիտարկվում, սակայն չեն տրամադրվում զիջումներ, համարվում են վարկային տեսանկյունից արժեզրկված, երբ առկա են դիտարկելի ապացույցներ վարկային տեսանկյունից արժեզրկման վերաբերյալ, ներառյալ դեֆոլտի սահմանման պահանջներին համապատասխանությունը: Դեֆոլտի սահմանումը (տես ստորև) ներառում է վճարունակության անհավանական լինելու հայտանիշները, ինչպես նաև գումարների 90 օր կամ ավել ժամկետանց լինելու հավանականությունը:

Զևված կամ ի սկզբանե արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվներ. POCI ֆինանսական ակտիվների նկատմամբ այլ մոտեցում է ցուցաբերվում, քանի որ դրանք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Այսպիսի ակտիվների համար բարենպաստ փոփոխությունն առաջացնում է արժեզրկման գծով օգուտ:

Դեֆոլտի սահմանումը. ԱՎԿ-ի սահմանման համար կարևոր է սահմանել դեֆոլտը: Վերջինիս սահմանումը օգտագործվում է ԱՎԿ-ի չափը և կորուստների գծով պահուստները 12-ամսյա կամ ամբողջական ԱՎԿ-ի վրա հիմնված լինելը որոշելու համար, քանի որ դեֆոլտը արժեզրկման

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

հնարավորության (PD - ԴՅ) բաղադրիչ է, որն ազդում է ԱՎԿ-ի գնահատման, ինչպես նաև վարկային ռիսկի զգալի աճի հայտնաբերման վրա:

Բանկը ստորև նշված հանգամանքների դեպքում արձանագրում է դեֆոլտ, երբ՝

- Փոխառուն ունի ավելի քան 90 օր ժամկետանց ցանկացած նյութական վարկային պարտավորություն Բանկին, կամ
- Հավանական է, որ փոխառուն ամբողջությամբ չի վճարի իր վարկային պարտավորությունները:

Դեֆոլտի սահմանումը համապատասխանեցվում է տարբեր տեսակի ակտիվների տարբեր առանձնահատկություններն արտացոլելու նպատակով: Օվերդրաֆտները համարվում են ժամկետանց այն դեպքում, երբ հաճախորդը խախտել է նշված սահմանաչափը, կամ եթե նրան չվճարված գումարից պակաս սահմանաչափ են նշել:

Վարկառուի՝ իր վարկային պարտավորությունների չկատարման հավանականության գնահատման նպատակով Բանկը հաշվի է առնում որակական և քանակական ցուցանիշները, օրինակ, կորպորատիվ վարկավորման մեջ օգտագործվող որակական ցուցանիշը հանդիսանում է վարկի պայմանների խախտումը, որը չի վերաբերում մանրածախ վարկավորմանը: Գնահատված տեղեկատվությունը կախված է ակտիվի տեսակից: Քանակական տեղեկատվությունը ներառում է նույն վարկառուի այլ պարտավորությունների չկատարման կամ վճարի ուշացման մասին տվյալներ, որոնք այս վերլուծության կարևոր մասն են հանդիսանում: Դեֆոլտը գնահատելիս Բանկը հաշվի է առնում տեղեկատվության տարբեր աղբյուրներ, որոնք ստացվել են ներքին ուղիներով կամ կամ արտաքին աղբյուրներից:

Վարկային ռիսկի նշանակալի աճ. Բանկը վերահսկում է արժեզրկման պահանջներին ենթակա բոլոր ֆինանսական ակտիվները, թողարկված վարկային պարտավորությունները և ֆինանսական երաշխիքի պայմանագրերը՝ գնահատելու դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի հնարավոր աճը: Վարկային ռիսկի նշանակալի աճի դեպքում Բանկը կչափի կորուստների գծով պահուստները՝ հիմնվելով գործողության ողջ ընթացքում, այլ ոչ 12-ամսյա ԱՎԿ-ի վրա:

Սկզբնական ճանաչումից ի վեր ֆինանսական գործիքի վարկային ռիսկի նշանակալի աճը գնահատման նպատակով Բանկը համեմատում է հետևյալը. ֆինանսական գործիքի դեֆոլտի ռիսկը հաշվետու ամսաթվի դրությամբ՝ հիմնված գործիքի գծով մարման պարտավորության վրա, և ֆինանսական գործիքի տեղի ունեցած դեֆոլտի հետ, որն ակնկալվում էր պարտավորության մարման գծով՝ գործիքի սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ: Այս գնահատումը կատարելիս Բանկը հաշվի է առնում որակական և քանակական տեղեկությունները, որոնք ողջամիտ և հիմնավորված են, ներառյալ պատմական փորձը և կանխատեսումները՝ առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի, հիմնվելով Բանկի փորձի և վարկերի փորձագիտական գնահատման վրա, այդ թվում՝ կանխատեսումներին:

Հաշվի առնելով, որ սկզբնական ճանաչումից հետո վարկային ռիսկի զգալի աճը հարաբերական չափորոշիչ է, դեֆոլտի հավանականության (PD) տվյալ փոփոխությունը առավել նշանակալից կլինի ֆինանսական գործիքի համար ավելի ցածր սկզբնական արժեզրկման հավանականությամբ, քան համեմատած արժեզրկման բարձր հավանականություն ունեցող ֆինանսական գործիքի հետ: Բազմաթիվ տնտեսական սցենարները հիմք են հանդիսանում նախնական ճանաչման և հետագա հաշվետու ժամանակաշրջանում դեֆոլտի հավանականության կանխատեսման համար: Տարբեր տնտեսական սցենարներ դեֆոլտի տարբեր հավանականության են հանգեցնում: Այս տարբեր սցենարների կշռադատումը հիմք է կազմում դեֆոլտի միջին կշռված հավանականության համար, որը կիրառվում է վարկային ռիսկի զգալի աճը որոշելու նպատակով:

Կորպորատիվ վարկավորման վերաբերյալ կանխատեսումները ներառում են այն ոլորտների ապագա հեռանկարները, որտեղ գործում են Բանկի գործընկերները, տնտեսական փորձագետների զեկույցներից, ֆինանսական վերլուծաբաններից, պետական մարմիններից և այլ նմանատիպ կազմակերպություններից ձեռք բերված տեղեկությունները, ինչպես նաև հաշվի են առնում փաստացի ու կանխատեսված տնտեսական տեղեկությունների տարբեր ներքին և արտաքին աղբյուրներ:

Մանրածախ վարկավորման վերաբերյալ կանխատեսումները ներառում են ոչ միայն կորպորատիվ վարկավորման դեպքում կիրառվող տնտեսական ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումները, այլև տեղական տնտեսական ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումները, մասնավորապես՝ այն շրջանների վերաբերյալ, որտեղ կենտրոնացած են տնտեսության որոշ ոլորտներ, ինչպես նաև հաճախորդների վարկունակության վերաբերյալ ներքին տեղեկություններ:

«ԻՆԵԼԻՐԱՆՆԻ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Բանկն իր գործընկերներին դասակարգում է ըստ համապատասխան ներքին վարկային ռիսկի աստիճանի՝ հիմնվելով նրանց վարկային որակի վրա: Քանակական տեղեկատվությունը վարկային ռիսկի զգալի աճի հիմնական ցուցանիշն է և հիմնված է վարկի ամբողջ գործողության ընթացքում հաշվառվող ԴՀ-ի փոփոխության վրա՝ համեմատելով՝

- վարկի ամբողջ գործողության ընթացքում հաշվառվող մնացած ԴՀ-ն հաշվետու ամսաթվի դրությամբ, և
- վարկի ամբողջ գործողության ընթացքում հաշվառվող մնացած ԴՀ-ն այն ժամանակահատվածի համար, երբ այն գնահատվել է՝ հիմք ընդունելով ռիսկերի սկզբնական ճանաչման ժամանակ առկա փաստերը և հանգամանքները:

Օգտագործվող ԴՀ-ները հանդիսանում են կանխատեսումներ և Բանկն օգտագործում է ԱՎԿ գծով պահուստների գնահատման ժամանակ կիրառված նույն մեթոդաբանությունը և տվյալները:

Վարկային ռիսկի զգալի աճ ցույց տվող որակական գործոններն արտացոլվում են ԴՀ մոդելներում՝ ճիշտ ժամանակին: Այնուամենայնիվ, Բանկը դեռևս որոշակի որակական գործոններ է հաշվի առնում, երբ գնահատում է, թե արդյոք վարկային ռիսկի զգալի աճ է գրանցվել, թե ոչ:

Կորպորատիվ վարկավորման դեպքում հատուկ ուշադրություն է դարձվում այն ակտիվների վրա, որոնք ներառված են «հսկողության ցանկում», քանի որ ներառումը ցույց է տալիս կոնտրագենտի վարկունակության վատթարացման մտահոգության առկայությունը: Մանրածախ վարկավորման դեպքում Բանկը հաշվի է առնում հետաձգված վճարումների հնարավորությունները, վճարման արձակուրդների ակնկալիքները, վարկային միավորները և այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են գործազրկությունը, սնանկությունը, ամուսնալուծությունը, կամ մահը:

Հաշվի առնելով, որ սկզբնական ճանաչումից հետո վարկային ռիսկի զգալի աճը հարաբերական չափորոշիչ է, դեֆոլտի հավանականության (PD) տվյալ փոփոխությունը առավել նշանակալից կլինի ֆինանսական գործիքի համար ավելի ցածր սկզբնական արժեզրկման հավանականությամբ, քան համեմատած արժեզրկման բարձր հավանականություն ունեցող ֆինանսական գործիքի հետ:

Ի հավելումս, երբ ակտիվը դառնում է 30 օր ժամկետանց, Բանկը համարում է, որ վարկային ռիսկի զգալի աճ է տեղի ունեցել և ակտիվը գտնվում է արժեզրկման մոդելի 2-րդ փուլում, այսինքն՝ կորուստների գծով պահուստները գնահատվում են ամբողջական ԱՎԿ/ECL:

Ֆինանսական ակտիվների փոփոխություն և ապաճանաչում. Ֆինանսական ակտիվների փոփոխությունները տեղի են ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական միջոցների հոսքերը կառավարող պայմանագրային պայմանները վերանայվում կամ այլ կերպ փոփոխվում են ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման և ժամկետայնության միջև: Փոփոխությունն ազդում է պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերի գումարի և/կամ ժամկետների վրա անմիջապես կամ ապագայում:

Ի լրումս, ընթացիկ վարկային պայմանագրում դրույթների ներմուծումը կամ առկա դրույթների ճշգրտումները հանդիսանում են փոփոխություններ, եթե անգամ այդ նոր և ճշգրտված դրույթները դեռևս ուղղակի ազդեցություն չունեն դրամական միջոցների հոսքերի վրա, սակայն կարող են ազդել՝ կախված այն հանգամանքից, թե այդ դրույթների պահանջները կատարվում են, թե ոչ (օրինակ՝ չկատարման արդյունքում տոկոսադրույքի աճի փոփոխություն):

Բանկը վերանայում է ֆինանսական դժվարություններ ունեցող հաճախորդների վարկային պայմանագրի պայմանները, որպեսզի ապահովի ստացման ենթակա գումարների առավելագույն հավաքագրումը և նվազագույնի հասցնի դեֆոլտի ռիսկերը: Վարկի պայմանները վերանայվում են այն դեպքում, երբ չնայած վարկառուին հնարավոր ամեն ինչ արել է սկզբնական պայմանագրային վճարման պայմանները կատարելու համար, սակայն առկա է վճարումների չկատարման մեծ ռիսկ կամ դա արդեն տեղի է ունեցել, և ակնկալվում է, որ վարկառուին կկարողանա կատարել իր արդեն վերանայված պարտավորությունները: Վերանայված պայմանները հիմնականում ներառում են վարկի մարման ժամկետների երկարաձգում, վարկի դրամական միջոցների հոսքերի ժամկետների փոփոխություն (մայր գումարի և տոկոսների մարում), վճարման ենթակա գումարների կրճատում (մայր գումարի և տոկոսային գումարների համաձայն) և պայմանագրային դրույթների փոփոխություններ:

Ֆինանսական ակտիվի փոփոխման դեպքում Բանկը գնահատում է, թե արդյոք այս փոփոխության արդյունքում առաջանում է ապաճանաչում: Բանկի քաղաքականության համաձայն, փոփոխությունն

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

հանգեցնում է ապաճանաչման, երբ այդ փոփոխության արդյունքում էապես տարբերվող այլ պայմանագրային պայմաններ են ստեղծվում: Որոշելու համար, թե արդյոք փոփոխված պայմանները էապես տարբերվում են սկզբնական պայմանագրային պայմաններից, Բանկը հաշվի է առնում հետևյալը՝

- Որակական գործոններ, ինչպիսիք են այն պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, որոնք փոփոխությունից հետո չեն հանդիսանում միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, ինչպես նաև փոխարժեքի կամ պայմանագրային կողմի փոփոխությունը, տոկոսադրույքների, ժամկետայնության, պայմանագրային դրույթների փոփոխությունը,

Եթե այս փոփոխությունները հստակ էական փոփոխություններ ցույց չեն տալիս, ապա՝

- Կատարվում է քանակական գնահատում, որպեսզի համեմատվեն սկզբնական պայմաններով մնացած պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքը և վերանայված պայմաններով պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, և երկու գումարներն էլ գեղջվում են սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով:

Եթե ներկա արժեքի տարբերությունը 10 տոկոսից ավել է, ապա Բանկը որոշում է, որ առկա է վարկային պայմանագրի նշանակալի տարբերություն, ինչն էլ հանգեցնում է ապաճանաչման: Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ԱՎԿ գծով պահուստները վերագնահատվում են՝ ապաճանաչման օրվա դրությամբ ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը այդ օրվա դրությամբ որոշելու նպատակով: Այս վերանայված հաշվեկշռային արժեքի և նոր պայմաններով նոր ֆինանսական ակտիվի իրական արժեքի միջև տարբերությունը առաջացնում է ապաճանաչման մասով օգուտ կամ վնաս: Նոր ֆինանսական ակտիվը կունենա 12-ամսյա ԱՎԿ-ի հիմունքներով չափվող կորուստների գծով պահուստ, բացառությամբ առանձին դեպքերի, երբ նոր վարկը համարվում է սկզբնապես վարկային տեսանկյունից արժեզրկված ակտիվ: Սա կիրառվում է միայն այն դեպքում, երբ նոր վարկի իրական արժեքը ճանաչվում է իր վերանայված անվանական արժեքի նշանակալի գեղջով, քանի որ դեռ առկա է դեֆոլտի բարձր ռիսկը, ինչը փոփոխությունների արդյունքում չի նվազել: Բանկը վերահսկում է փոփոխված ֆինանսական ակտիվների վարկային ռիսկը՝ գնահատելով որակական և քանակական տեղեկատվությունը (օրինակ՝ արդյոք վարկառուն ունի ժամկետանց օրեր նոր պայմանների պարագայում):

Երբ ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները փոփոխվում են և դա ապաճանաչման չի հանգեցնում, Բանկը որոշում է, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, համեմատելով՝

- Սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ և սկզբնական պայմանագրային պայմաններով գնահատված ամբողջական ԴՀ-ն, և
- Հաշվետու ամսաթվի դրությամբ փոփոխված պայմանագրային պայմաններով ամբողջական ԴՀ-ն:

Ինչ վերաբերում է Բանկի՝ վարկային պայմանների վերանայման քաղաքականության շրջանակում փոփոխված ֆինանսական ակտիվներին, երբ այդ փոփոխության արդյունքում ապաճանաչում չի առաջացել, ապա ԴՀ-ի գնահատումն արտացոլում է Բանկի՝ փոփոխված պայմաններով դրամական հոսքերի հավաքագրման կարողությունը՝ հիմք ընդունելով Բանկի նախկին փորձը նմանատիպ ներման գործընթացների պարագայում, ինչպես նաև տարբեր վարքագծային ցուցանիշներ, որոնք են՝ վարկառուի պարտաճանաչ վճարման կարողությունը փոփոխված պայմանագրային պայմաններում: Եթե վարկային ռիսկը շարունակում է մնալ զգալիորեն ավելի բարձր, քան ակնկալվում էր սկզբնական ճանաչման ժամանակ, ապա կորուստների գծով պահուստը կրկին չափվելու է ամբողջական ԱՎԿ-ին համարժեք գումարով: Վերանայված պայմաններով վարկերի մասով կորուստների գծով պահուստը հիմնականում կչափվի 12-ամսյա ԱՎԿ-ի հիմունքով, երբ առկա է վարկառուի վճարունակության բարելավման փաստ, ինչն առաջացնում է նախկին վարկային ռիսկի նշանակալի աճի նվազեցում:

Այն դեպքում, երբ փոփոխություններն ապաճանաչման չեն հանգեցնում, Բանկը հաշվարկում է այդ փոփոխությունների օգուտը/վնասը՝ համեմատելով համախառն հաշվեկշռային արժեքը փոփոխությունից առաջ և հետո (բացառությամբ ԱՎԿ գծով պահուստը): Այնուհետև, Բանկը գնահատում է ԱՎԿ-ն փոփոխված ակտիվի մասով, երբ փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացած ակնկալվող դրամական միջոցների հոսքերը ներառվում են սկզբնական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների նվազեցման հաշվարկում:

«Ինտեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (ներառյալ՝ էապես տարբեր պայմանագրային պայմանների փոփոխման արդյունքում ուժը կորցնելը) կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ ռիսկերն ու օգուտները:

Եթե Բանկը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ:

Եթե Բանկը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, ապա Բանկը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական ակտիվն ամբողջությամբ ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի և ստացված և ստացման ենթակա հատուցումների և կուտակային օգուտի/վնասի գումարի տարբերությունը, որը ճանաչվել էր այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվել սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ բաժնային ներդրումների, որոնք դասակարգվել են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքով չափվող, երբ կուտակային օգուտը/վնասը, նախկինում ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվը մասնակի ապաճանաչելիս (օրինակ՝ երբ Բանկը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), ապա Բանկը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության պարագայում, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակային որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակային օգուտը/վնասը բաշխվում է այն մասի, որը շարունակում է ճանաչվել, և այն մասին միջև, որն այլևս չի ճանաչվում՝ հիմնվելով այդ մասերի հարաբերական իրական արժեքների վրա: Սա չի տարածվում որպես «այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող» նախորոշված բաժնային ներդրումների վրա, քանի որ նախկինում այլ համապարփակ եկամուտ ճանաչված կուտակային օգուտը/վնասը հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում:

Դուրսգրում. Վարկերը և պարտքային գործիքները դուրս են գրվում այն ժամանակ, երբ Բանկը չունի ֆինանսական ակտիվի վերականգնման (ամբողջական կամ մասնակի) ողջամիտ ակնկալիքներ: Այս դեպքում Բանկը որոշում է, որ վարկառուն չունի համապատասխան ակտիվներ կամ եկամտի բավարար աղբյուրներ դուրս գրման ենթակա գումարների մարման նպատակով բավարար դրամական միջոցներ ստեղծելու համար: Դուրսգրումը ներառում է ապաճանաչման իրադարձություն: Բանկը կարող է դուրս գրված ֆինանսական ակտիվների նկատմամբ հարկադիր միջոցներ կիրառել: Բանկի գործադրած հարկադիր միջոցների արդյունքում հավաքագրված գումարները արժեգրկման գծով օգուտ կառաջացնեն:

ԱՎԿ գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում. ԱՎԿ գծով պահուստները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ՝

- Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում,
- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների դեպքում կորուստների գծով ոչ մի պահուստ չի ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ հաշվեկշռային արժեքը չափվում է իրական արժեքով: Այնուամենայնիվ, կորուստների գծով պահուստը ներառվում է ներդրումների վերազնահատման պահուստի վերազնահատման արժեքում,
- Վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում՝ որպես պահուստ, և

«ԻՆԵԿՈՐԱՆՆԻ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

- Երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված, թե՛ չօգտագործված բաղադրիչ, ապա Բանկը չի կարող առանձին-առանձին բացահայտել վարկային պարտավորության բաղադրիչի ԱՎԿ-ի և օգտագործված պարտավորության ԱՎԿ-ն, ուստի Բանկը ներկայացնում է երկու բաղադրիչների համատեղ կորուստների պահուստը: Համատեղ գումարը ներկայացվում է որպես օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից նվազեցում:
Օգտագործված բաղադրիչի համախառն գումարի կորստի պահուստների մասով ավելացող գումարները ներկայացվում է որպես պահուստ:

Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են կամ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ «այլ ֆինանսական պարտավորություններ»:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը (i) պահվում է վաճառքի համար կամ (ii) դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Բանկի կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից կամ պայմանական վճարից, որը կարող է վճարվել ձեռք բերողի կողմից որպես ձեռնարկատիրական գործունեության միավորի մաս, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- Նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ
- Ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, խմբի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- Այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՀՄՍ 9 ստանդարտը թույլ է տալիս ողջ համակցված պայմանագիրը (համախմբված) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները սահմանվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են շահույթում կամ վնասում ճանաչվող վերագնահատման արդյունքում՝ այն չափով, որքանով նրանք նախորոշված հեջային գործիքների մաս չեն կազմում: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ֆինանսական պարտավորության համար վճարված ցանկացած տոկոս և շահույթի կամ վնասի այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում դասակարգվում որպես «զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներ» տողում:

Այնուամենայնիվ, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների դեպքում, երբ ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխության գումարը, որը վերագրելի է այդ պարտավորության վարկային ռիսկի փոփոխությանը, ճանաչվում է այլ համապարփակ եկամտում, եթե այլ համապարփակ եկամտում ճանաչված պարտավորության վարկային ռիսկի փոփոխության ազդեցության ճանաչումը չի ստեղծում կամ մեծացնում հաշվառման անհամապատասխանությունը շահույթում կամ վնասում:

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Յազար 33 դրամով**

Պարտավորության իրական արժեքի փոփոխության մնացած գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ եկամտում ճանաչված ֆինանսական պարտավորության վարկային ռիսկերին վերագրելի իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, այլ փոխանցվում են չբաշխված շահույթին՝ ֆինանսական պարտավորությունը ապաճանաչելիս:

Թողարկված վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում, որոնք չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով, բոլոր օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Երբ Բանկը որոշում է, արդյոք այլ համապարփակ եկամտում ճանաչված պարտավորության վարկային ռիսկերի փոփոխությունների ճանաչումը շահույթում կամ վնասում հաշվապահական հաշվառման անհամապատասխանություն կառաջացնի կամ կմեծացնի անհամապատասխանությունը, ապա Բանկը գնահատում է, արդյոք պարտավորության վարկային ռիսկերի փոփոխության ազդեցությունը կհաշվանցվի շահույթում կամ վնասում՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքի իրական արժեքի փոփոխությամբ պայմանավորված: Այս որոշումը կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները (ներառյալ վարկերը և փոխառությունները) սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքի ծախսերը: Դրանք այնուհետև չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի և տոկոսային ծախսը համապատասխան ժամանակաշրջանում տեղաբաշխման մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն ավելի մանրամասն ներկայացված է վերոնշյալ «գուտ տոկոսային եկամուտ» բաժնում:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը. Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Բանկի պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Երբ Բանկը միևնույն փոխատուի ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, ապա նմանատիպ փոխանակումը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, Բանկը հաշվի է առնում գոյություն ունեցող պարտավորության պայմանների կամ դրա մի մասի նշանակալի փոփոխությունը որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանագրային պայմանները զգալիորեն տարբերվում են այն դեպքում, երբ նոր պայմաններով դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը (ներառյալ վճարված գումարները, հանած յուրաքանչյուր վճար, ստացված և զեղչված՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը) առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե փոփոխությունն էական չէ, ապա (1) նախքան փոփոխությունը՝ պարտավորության հաշվեկշռային արժեքի, և (2) փոփոխությունից հետո դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև առկա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում՝ որպես փոփոխության արդյունքում օգուտ կամ վնաս՝ այլ օգուտների և վնասների կազմում:

Ածանցյալ պարտքային գործիքներ. Բանկը կնքում է գործարքներ տարբեր ածանցյալ ֆինանսական գործիքներով, որոնցից մի քանիսը դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, մինչդեռ մյուսները պահվում են տոկոսադրույքի ռիսկին, վարկային ռիսկին և արտարժույթի դրույքաչափի ռիսկին ենթարկվածությունը կառավարելու նպատակով: Պահվող ածանցյալ գործիքները ներառում են արտարժույթի փոխանակման պայմանագրեր, տոկոսադրույքի սվոփեր և վարկային արժեգրվման սվոփեր: Ածանցյալ գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ածանցյալ գործիքի պայմանագրի կնքման ամսաթվով, և հետագայում վերաչափվում իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվեկշռային ամսաթվի դրությամբ: Դրանից բխող օգուտը/վնասն անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

«ԻՆԵԼՈՐԱՆՆԻ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Յազար 33 դրամով**

Ածանցյալ ֆինանսական գործիքները համարվում են ակտիվներ, եթե դրանց իրական արժեքը դրական է, և համարվում են պարտավորություններ, եթե դրանց իրական արժեքը բացասական է: Գործարքների շահույթը և վնասը վերոնշյալ գործիքների դեպքում գրանցվում են համապարփակ եկամտի մասին հաշվետվություններում՝ որպես իրական արժեքով շահույթի և վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների (պարտավորությունների) գործարքներից առաջացած զուտ օգուտ կամ վնաս:

Ածանցյալ գործիքը ներկայացվում է որպես ոչ ընթացիկ ակտիվ կամ ոչ ընթացիկ պարտավորություն, եթե գործիքի մնացորդային ժամկետը գերազանցում է 12 ամիսը և չի ակնկալվում, որ կիրականացվի կամ կկարգավորվի 12 ամսվա ընթացքում: Այլ ածանցյալ գործիքներ ներկայացվում են որպես ընթացիկ ակտիվներ կամ ընթացիկ պարտավորություններ:

Ֆյուչերսներ և ֆորվարդներ: Ֆյուչերսներն ու ֆորվարդները պայմանագրային համաձայնություններ են՝ ապագա ամսաթվին վաճառելու կամ գնելու նախապես սահմանված գործիքը սահմանված գնով: Ֆորվարդները կարգավորվող շուկայից դուրս կնքվող չստանդարտացված պայմանագրեր են: Ֆյուչերսները կնքվում են կարգավորվող շուկաներում՝ ստանդարտացված պայմաններով և ենթակա են դրամային օրական մնացորդների պահանջների: Ֆորվարդային և ֆյուչերսային պայմանագրերի հետ կապված ռիսկի հիմնական տարբերությունները արտացոլվում են վարկային ու իրացվելիության ռիսկերում:

Ֆորվարդ պայմանագրի կողմերը ենթադրում են վարկային ռիսկ Բանկի համար: Ֆյուչերս պայմանագրերի հետ կապված վարկային ռիսկը համարվում է աննշան, քանի որ շուկայի դրամային մնացորդի պահանջները մշտապես ապահովվում են պայմանագրերի կատարումը: Ֆորվարդ պայմանագրերը մարվում են համախառն և, այդ պատճառով, ունեն ավելի բարձր իրացվելիության ռիսկ, քան ֆյուչերս պայմանագրերը, որոնք մարվում են զուտ: Երկու տեսակի պայմանագրերն էլ առաջացնում են շուկայական ռիսկեր:

Սվոփ: Սվոփը երկու կողմերի միջև պայմանագրային համաձայնություն է՝ որոշակի ժամանակահատվածում փոխանակել պայմանագրով սահմանված գումարներին համաձայն վճարումների հոսքեր՝ կախված սվոփի հիմքում ընկած ցուցանիշի (օրինակ՝ տոկոսադրույք, պարտաժույթի փոխարժեք կամ սեփական կապիտալի ցուցանիշ) տատանումներից: Տոկոսադրույքի սվոփերը կապված են այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված այն պայմանագրերի հետ, որոնց համաձայն Բանկը ստանում կամ վճարում է լոգացող տոկոսադրույք համապատասխանաբար ֆիքսված տոկոսադրույք վճարելու կամ ստանալու դիմաց: Սվոփաբար հաշվվում է վճարման հոսքերի տարբերությունը և կողմերից մեկը մյուսին վճարում է այն: Արժույթային սվոփում Բանկը վճարում է սահմանված գումար մեկ արժույթով և դրա դիմաց ստանում է սահմանված գումար մեկ այլ արժույթով: Արժույթային սվոփերը սվոփաբար մարվում են համախառն:

Օպցիոններ: Օպցիոնները պայմանագրային համաձայնություններ են, որոնք տալիս են իրավունք, բայց ոչ պարտականություն՝ գնելու կամ վաճառելու սահմանված ֆինանսական գործիքը ֆիքսված գնով և ֆիքսված ապագա ամսաթվին կամ ցանկացած պահի սահմանված ժամկետի ընթացքում: Բանկը գնում կամ վաճառում է օպցիոններ կարգավորվող շուկայում և կարգավորվող շուկայից դուրս: Ածանցյալ գործիքները ճանաչվում են պայմանագրի առաջին օրվա դրությամբ իրական արժեքով և այնուհետև վերաչափվում են յուրաքանչյուր ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքով: Առաջացած շահույթը կամ կորուստը անմիջապես ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական երաշխիքի պայմանագրեր: Ֆինանսական երաշխիքի պայմանագիրն այն պայմանագիրն է, որը թողարկողից պահանջում է որոշակի վճարումներ կատարել, որպեսզի փոխհատուցի իր առաջացրած կորուստը, քանի որ նշված պարտապանը ժամանակին վճարումներ չի կատարում, ինչպես նախատեսված՝ պարտքային գործիքի պայմաններում:

Բանկի կողմից թողարկված ֆինանսական երաշխիքի պայմանագրերը սկզբնապես չափվում են իրական արժեքով և եթե չեն նախորոշվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և չեն առաջացել ֆինանսական ակտիվի փոխանցման արդյունքում, ապա հետագայում չափվում են ստորև բերվածներից ավելի բարձրով՝

- ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորուստների պահուստի գումար և
- Բանկի եկամտի ճանաչման քաղաքականության համաձայն ճանաչված եկամտի կուտակային գումարից սկզբնապես պակաս ճանաչված գումար:

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Յազար 33 դրամով**

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չչափվող ֆինանսական երաշխիքի պայմանագրերը ներկայացվում են որպես պահուստ՝ ֆինանսական արդյունքի հաշվետվությունում, իսկ հատուցումը ներկայացվում է այլ եկամտում:

Բանկը ֆինանսական երաշխիքի որևէ պայմանագիր չի նախորոշել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրման պարտավորություններ:

Շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրման պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով և, եթե չի սահմանվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, հետագայում չափվում են ավելի բարձր՝

- Պահուստի գումարով՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի, և
- Գումարով, որը նախապես ճանաչվել է նվազեցվող, անհրաժեշտության դեպքում Բանկի հասույթի ճանաչման քաղաքականություններով ճանաչված եկամտի կուտակային գումարով:

Հաշվանցում. ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով գուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ, և հստակ բացահայտված չէ Բանկի հաշվապահական քաղաքականության

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցներ, թղթակցային հաշիվների մնացորդներ, որոնք գերծ են սահմանափակումներից և ժամկետային ավանդներ, որոնց մարման նախնական ժամկետը չի գերազանցում 90 օրը, որոնք կարճ ժամկետում կարող են փոխարկվել կանխիկի և որոնք ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

Առգրավված ակտիվներ: Որոշակի հանգամանքներում, ակտիվներն առգրավվում են ժամկետանց վարկերի գծով գրավադրված գույքի վրա արգելանքի կիրառման դեպքում: Առգրավված ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և վաճառքի ինքնարժեքից նվազագույնով:

Հիմնական միջոցներ: Ապրանքների կամ ծառայությունների արտադրության գործընթացում օգտագործելու կամ վարչական նպատակներով պահվող հողը և շենքերը ներկայացվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ վերագնահատված արժեքով, որը վերագնահատման օրվա դրությամբ իրական արժեքի և կուտակված մաշվածության ու արժեզրկման կորուստների տարբերությունն է: Վերագնահատումները կատարվում են բավարար հաճախականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքները եականորեն չտարբերվեն ամեն հաշվետու ժամանակաշրջանի վերջում որոշված իրական արժեքներից:

Հողի և շենքերի վերագնահատման արդյունքում առաջացած արժեքի աճը ճանաչվում է այլ համապարփակ եկամուտում և կուտակվում է կապիտալում, բացառությամբ այն մասի, որը վերականգնում է նույն ակտիվների նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ինչը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ այն չափով, որով նախապես նվազումը կատարվել էր:

Հողի և շենքերի վերագնահատման արդյունքում առաջացած հաշվեկշռային արժեքի նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ այն չափով, որքանով այն գերազանցում է այդ ակտիվի նախորդ վերագնահատման հետ կապված վերագնահատման պահուստի հաշվեկշիռը:

Վերագնահատված ակտիվների մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վերագնահատված գույքի հետագա օտարման ժամանակ այդ ակտիվին վերագրվող վերագնահատման պահուստում եղած ավելցուկը տեղափոխվում է անմիջապես չբաշխված շահույթ:

Մնացած հիմնական միջոցները ներկայացվում են ծախսի և կուտակված մաշվածության ու արժեզրկման կորուստների տարբերությամբ:

«ԻՆՏԵԼԵԿՏԱԿԱՆ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի հիման վրա և նախատեսված է գրոյացնելու ակտիվների արժեքը՝ դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով հետևյալ օգտակար ծառայության հետևյալ ժամկետներով՝

Հիմնական միջոցների դասը	(տարիներ)
Շենքեր	50
Համակարգիչներ	5-7
Մեքենաներ	5
Վարձակալված ակտիվների բարելավումներ	7
Այլ	5-7

Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետներով հաշվվում է նույն կերպ, ինչ սեփական ակտիվների դեպքում: Այնուամենայնիվ, եթե առկա չէ ողջամիտ համոզվածություն այն մասին, որ Բանկը կստանա ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում կամ կերկարաձգի վարձակալության ժամկետը, ակտիվներն ամորտիզացվում են վարձակալության ժամկետից և օգտակար ծառայության ժամկետից նվազագույնով:

Հիմնական միջոցներն են ապաճանաչվում են օտարելիս կամ, երբ այդ ակտիվների շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրսբերումից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի վաճառքից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում ֆինանսական արդյունքում:

Ոչ նյութական ակտիվներ.

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան օգտակար ծառայության ժամանակահատվածում հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով: Օգտակար ծառայության ժամանակահատվածը և ամորտիզացիայի հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում՝ գնահատումներում ցանկացած փոփոխություն հաշվառելով առաջընթաց կերպով: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետը 10 տարի է:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվներ. հետազոտության և մշակման ծախսումներ:

Հետազոտության հետ կապված ծախսերը ծախսագրվում են այն ժամանակահատվածում, երբ առաջանում են:

Ներքին նախագծի զարգացման (կամ հետազոտության փուլի) արդյունքում ներստեղծված ոչ նյութական ակտիվը ճանաչվում է միայն հետևյալ բոլոր պայմանների ապահովման դեպքում.

- Ոչ նյութական ակտիվն այնպիսի ավարտուն վիճակի հասցնելու տեխնիկական իրագործելիությունը, որ այն մատչելի լինի օգտագործման կամ վաճառքի համար,
- Ոչ նյութական ակտիվն ավարտին հասցնելու և այն օգտագործելու կամ վաճառելու մտադրությունը,
- Ոչ նյութական ակտիվն օգտագործելու կամ վաճառելու կարողությունը,
- Այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվն առաջացնելու հնարավոր ապագա տնտեսական օգուտներ:
- Մշակումն ավարտին հասցնելու և ոչ նյութական ակտիվն օգտագործելու կամ վաճառելու համար անհրաժեշտ համապատասխան տեխնիկական, ֆինանսական և այլ միջոցների առկայությունը,
- Ոչ նյութական ակտիվի մշակման ընթացքում վերագրելի ծախսումներն արժանահավատորեն չափելու կարողությունը:

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Ներստեղծված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են այն արժեքով, որն իրենից ներկայացնում է վերը նշված պայմաններին համապատասխանելու օրվանից հետո առաջացած ծախսերի հանրագումարը: Եթե ներստեղծված ակտիվը չի կարող ճանաչվել, հետագոտության հետ կապված ծախսերը ծախսագրվում են շահույթ կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ առաջացել են:

Սկզբնական ճանաչումից հետո ներստեղծված ոչ նյութական ակտիվները ճանաչվում են ծախսի և կուտակված մաշվածության ու արժեզրկման կորուստների տարբերությամբ՝ նույն կերպ, ինչ առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները:

Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում: ոչ նյութական ակտիվներն ապաճանաչվում են դրանք օտարելիս, կամ երբ այլևս դրանց օգտագործումից կամ օտարումից չեն ակնկալվում հետագա տնտեսական օգուտներ: Ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում, բացի գույքից: Յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում Բանկը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար, արդյո՞ք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվների փոխհատուցվող գումարը, որպեսզի որոշվեն արժեզրկումից կորուստները (եթե այդպիսիք կան): Եթե առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Բանկը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման ողջամիտ և հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել խելամիտ և հետևողական հիմունք:

Անորոշ օգտակար ծառայությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության տեսանկյունից առնվազն տարին մեկ անգամ, ինչպես նաև երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել:

Փոխհատուցվող գումարն իրական արժեքից (հանած վաճառքի հետ կապված ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնն է. օգտագործման արժեքը գնահատելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը բերվում են ներկա արժեքի՝ կիրառելով տոկոսադրույք մինչև հարկումը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որոնցով ապագա գնահատված հոսքերը չեն ճշգրտվել:

Եթե ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) փոխհատուցվող գումարը գնահատվում է ավելի քիչ, քան հաշվեկշռային արժեքը, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն իջեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստն անհապաղ ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով: Վերջինիս դեպքում արժեզրկումից կորուստը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում: Եթե հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվել է, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, ինչի դեպքում արժեզրկումից կորստի հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի թանկարժեք մետաղների բորսայի գնանշումների վրա: Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ օգուտ/վնաս հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

«ԻՆԵԿՈՐԱՆՆԻ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Վարձակալություններ (2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար)

Վարձակալությունները դասակարգվում են որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմանները սեփականության գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցում են վարձակալին: Բոլոր այլ տեսակի վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություններ:

Բանկը որպես վարձակալ : Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվները սկզբնապես ճանաչվում են վարձակալության առաջին օրվա դրությամբ իրական արժեքից և վարձակալության նվազագույն վճարների ներկա արժեքից նվազագույնով: Համապատասխան պարտավորությունը վարձատուի հանդեպ ներառվում է ֆինանսական դրության մասին հաշվետվությունում որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն:

Վարձակալության վճարները համամասնորեն բաժանվում են ֆինանսական ծախսերի և վարձակալության գծով պարտավորությունների մարումների միջև՝ պարտավորության մնացորդի նկատմամբ անփոփոխ տոկոսադրույք ստանալու նպատակով: Ֆինանսական ծախսերը անմիջապես ճանաչվում են ֆինանսական արդյունքի մեջ, եթե դրանք ուղղակիորեն վերագրելի չեն որակավորվող ակտիվներին: Հակառակ դեպքում, դրանք կապիտալացվում են համաձայն փոխառության ծախսերի հետ կապված Բանկի ընդհանուր քաղաքականության: Պայմանական վարձավճարները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Գործառնական վարձակալության վճարները ծախսագրվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ այլ պարբերական հիմունք ավելի ճշգրիտ է ներկայացնում վարձակալությունից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը: Գործառնական վարձակալության պայմանագրով նախատեսված պայմանական վարձավճարները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Այն դեպքերում, երբ վարձակալության խրախուսող պայմանները պետք է ներառվեն գործառնական վարձակալության մեջ, դրանք ճանաչվում են որպես պարտավորություն:

Խրախուսող պայմանների գումարային օգուտը ճանաչվում է որպես վարձակալության ծախսից նվազեցում գծային մեթոդով, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ այլ պարբերական հիմունք ավելի ճշգրիտ է ներկայացնում վարձակալությունից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը:

Վարձակալություններ (2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար)

Բանկը սկզբնական ճանաչման ժամանակ գնահատում է՝ արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության իրավունք կամ պարունակում է վարձակալություն: Բանկը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և համապատասխան վարձակալության գծով պարտավորությունը՝ կապված բոլոր վարձակալության պայմանագրերի հետ, որոնցում նա վարձակալ է, բացառությամբ կարճաժամկետ (սահմանվում է որպես վարձակալություն՝ 12 ամիս կամ ավելի ցածր վարձակալության ժամկետով) և փոքրարժեք ակտիվների վարձակալությունից (օրինակ՝ պլանշետներ և անհատական համակարգիչներ, գրասենյակային կահույքի և հեռախոսների փոքր իրեր): Այս վարձակալությունների գծով Բանկը ճանաչում է վարձակալական վճարները գործառնական ծախսերում գծային հիմունքով՝ քանի որ մեկ այլ հաշվառման հիմունք առավել ներկայացուցչական չէ ստացվելիք տնտեսական օգուտները արտացոլելու տեսանկյունից:

Մեկնարկի ամսաթվին վարձակալը պետք է չափի վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է զեղչվեն կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, վարձակալը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորությունը ներկայացվում է որպես առանձին տողով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Վարձակալության գծով պարտավորությունը հետագայում չափվում է դրա սկզբնական ճանաչման արժեքին ավելացնելով տոկոսային համապատասխան ծախսերը և նվազեցնելով համապատասխան մարումների արժեքով:

Բանկը վերաչափում է վարձակալության գծով պարտավորությունը՝ զեղչելով վերանայված վարձավճարները, եթե՝

«ԻՆԵԿՈՐԱՆՍԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

- կամ առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների փոփոխություն: Բանկը պետք է որոշի վերանայված վարձավճարները՝ արտացոլելու մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների փոփոխությունը,
- կամ առկա է ապագա վարձավճարների փոփոխություն, որպես այդ վճարումները որոշելու նպատակով կիրառված ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, ներառյալ, օրինակ՝ փոփոխությունը, որը արտացոլում է վարձակալության շուկայական դրույքների փոփոխությունը՝ կապված վարձակալությունների շուկայի ուսումնասիրության հետ:
- Բանկը պետք է վերաչափի վարձակալության գծով պարտավորությունը՝ արտացոլելու այդ վերանայված վարձավճարները միայն այն դեպքում, եթե առկա է դրամական հոսքերի փոփոխություն (այսինքն՝ երբ վարձավճարների ճշգրտումը ունի ազդեցություն): Վարձակալը պետք է որոշի վերանայված վարձավճարները վարձակալության ժամկետի մնացած մասի համար՝ հիմք ընդունելով վերանայված պայմանագրային վճարումները:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես ճանաչվում է վարձակալության գծով պարտավորությունների համահունչ՝ ճշգրտելով արժեքը առկա կանխավճարների և սկզբավորման ծախսումներ արժեքով: Հետագայում այս ակտիվներ չափվում են սկզբնական արժեքի, կուտակված մաշվածության և արժեզրկման արժեքների տարբերությամբ:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ամորտիզացվում են հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության պայմանագրի ժամկետից նվազագույն ժամանակահատվածում: Եթե Բանկը որոշի կիրառել այդ ակտիվ ձեռքբերման ապցիոնը, ապա ակտիվը պետք է մաշեցվի հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ժամկետում:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են առանձին տողով:

ՖՀՄՍ 16-ի համաձայն, օգտագործման իրավունքով ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության համար՝ հիմնվելով ՀՀՄՍ 36 Ակտիվների արժեզրկում ստանդարտի վրա: Ցանկացած ճանաչված արժեզրկման կորուստ հաշվառում է, ինչպես նկարագրված է հիմնական միջոցների քաղաքականությունում:

Հարկում

Շահութահարկի գծով ծախսն իրենից ներկայացնում է ընթացիկ հարկի և հետաձգված հարկի հանրագումարը:

Ընթացիկ հարկ: Ընթացիկ հարկը ձևավորվում է տարվա հարկվող շահույթի հիման վրա: Շահույթ կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված հարկվող շահույթը տարբերվում է ընթացիկ շահութահարկի հաշվարկման համար հիմք հանդիսացող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Բանկի ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող կամ, ըստ էության գործող հարկի դրույթաչափերը:

Հետաձգված հարկ: Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորություններն, ընդհանուր առմամբ, ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Ինչպես նաև, հետաձգված հարկային պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են գույքի սկզբնական ճանաչումից:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Բանկը կստանա բավարար հարկվող շահույթ, ինչը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային պարտավորությունները և ակտիվները չափվում են այն հարկային դրույքաչափերի հիման վրա, որոնք կիրառելի են տվյալ պարտավորության մարման կամ ակտիվի ձեռքբերման ժամանակաշրջանում՝ համաձայն տվյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող կամ փաստացիորեն ուժի մեջ մտած հարկային օրենսդրության:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Երբ ընթացիկ կամ հետաձգված հարկն առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սկզբնական հաշվառումից, ապա հարկերը ներառվում են ձեռնարկատիրական միավորման մեջ:

Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Բանկն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Բանկից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ երրորդ կողմ ամբողջությամբ, կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ կազմակերպության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Խնդրահարույց պայմանագրեր. Խնդրահարույց պայմանագրերով պայմանավորված ներկա պարտավորությունները ճանաչվում և չափվում են որպես պահուստներ: Պայմանագիրը համարվում է խնդրահարույց այն ժամանակ, երբ պարտավորությունների կատարման համար անխուսափելի ծախսերը գերազանցում են այդ պայմանագրով պայմանավորված ակնկալվող տնտեսական օգուտները:

Վերանայում. Վերանայման գծով պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Բանկը մշակում է վերանայման մանրամասն պլան և արդեն սահմանել է իրական ակնկալիքներ այն կողմերի գծով, ում դա վերաբերվում է, և իրականացնելու է վերանայում՝ սկսելով իրականացնել պլանը կամ ներկայացնելով այն կողմերին, ում դա վերաբերվում է: Վերանայված վարկերի պահուստը ներառում է վերանայման արդյունքում առաջացած ուղղակի ծախսերը, որոնք անհրաժեշտ են վերանայման համար և չեն վերաբերվում կազմակերպության բնականոն գործունեությանը:

Պայմանական պարտավորություններ և ակտիվներ: Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, բայց բացահայտվում են, բացառությամբ երբ դրա մարման նպատակով տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հնարավորությունը շատ փոքր է: Պայմանական ակտիվները չեն ճանաչվում

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, սակայն բացահայտվում են, երբ տնտեսական օգուտների ներհոսքը հավանական է:

Ֆիդուցիար գործունեություն: Բանկը տրամադրում է հավատարմագրային կառավարման ծառայություններ իր հաճախորդներին: Բանկի կողմից մատուցվում են նաև ներդրումային ծառայություններ, այդ թվում՝ արժեթղթերով գործարքների իրականացում ավանդային հաշիվների միջոցով: Ֆիդուցիար գործունեությունից առաջացած ակտիվներն ու պարտավորությունները չեն ներառվում Բանկի ֆինանսական հաշվետվություններում:

Բանկը ընդունում է նման գործունեություն իրականացնելու հետ կապված գործառնական ռիսկեր, սակայն տվյալ գործարքների հետ կապված վարկային և շուկայական ռիսկերը կրում են Բանկի հաճախորդները:

Հավատարմագրային կառավարման ծառայություններից եկամուտը ճանաչվում է այն ժամանակ, երբ ծառայությունը մատուցված է:

Արժեթղթավորման գործարքներ

Գրավ: Անհրաժեշտության դեպքում Բանկը հաճախորդի պարտավորությունների գծով գրավ է պահանջում: Սովորաբար, գրավ են հանդիսանում հաճախորդի ակտիվները, և Բանկը պահանջի իրավունք է ստանում այդ ակտիվների նկատմամբ ներկա և ապագա պարտավորությունների գծով:

Պահուստներ Սեփական կապիտալում

Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության Սեփական Կապիտալում արտացոլվող Պահուստները (այլ համապարփակ եկամուտ) ներառում են.

- Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ որն արտացոլում է իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվի իրական արժեքի փոփոխությունները՝ հաշվառվելով այլ համապարփակ եկամուտում,
- Հոդի ու շենքերի վերագնահատման պահուստ:

3. ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱԴԱՅԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՅՈՒՆՆԵՐԸ

Բանկի հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս Բանկի ղեկավարությանն անհրաժեշտ է լինում կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումներն և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և դրանց հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին, կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Առանցքային հաշվապահական դատողություններ

Քիզնես մոդելի գնահատումը. Ֆինանսական ակտիվների դասակարգումը և չափումը հիմնված են SPPI թեստի և քիզնես մոդելի թեստի արդյունքների վրա: Բանկն իր քիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որն արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որդեգրած մեթոդները: Այս գնահատումը ներառում է դատողություններ, որոնք արտացոլում են համապատասխան փաստարկներ այն մասին, թե ինչպես է գնահատվում և չափվում ակտիվների գործունեությունը, ակտիվների գործունեության վրա նշանակալի ազդեցություն ունեցող ռիսկերը, դրանց կառավարման ձևերը, և ինչպես են փոխհատուցվում ակտիվների կառավարիչները: Բանկը վերահսկում է ամփոփագրված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Ֆինանսական ակտիվները, որոնք ապաճանաչվել են նախքան մարման ժամկետի ավարտը, որպեսզի պարզի դրանց օտարման պատճառները այն, թե արդյոք այդ պատճառները համապատասխանում են այն բիզնես նպատակներին, որոնց համար այդ ակտիվները պահվել են: Մոնիթորինգը հանդիսանում է Բանկի շարունակական գնահատման գործընթացի մաս, որի օգնությամբ որոշվում է, թե արդյոք բիզնես մոդելը, որի համար պահվել են մնացած ֆինանսական ակտիվները, շարունակում է համապատասխան մնալ և, եթե չի համապատասխանում, արդյոք տեղի են ունեցել բիզնես մոդելի փոփոխություններ, և, ըստ այդմ, նաև հետագայում այդ ակտիվների դասակարգման փոփոխություններ:

ՖՀՄՍ 9-ի ընդունումը պահանջում է ղեկավարության դատողությունների կիրառում Բանկի կողմից պահվող ներդրումների պորտֆելի համապատասխան բիզնես մոդելի մասով: 2019թ. ղեկավարությունը վերադասակարգել է ներդրումների պորտֆելը 16,094,636 հազար ՀՀ դրամով իր համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բիզնես մոդելի պորտֆելից ամորտիզացման արժեքի բիզնես պորտֆելում, քանի որ 2019թ. գրեթե չի եղել այս դասի պարտատոմսերի վաճառք և ըստ ղեկավարության ակնկալիքների՝ մոտ ապագայում այս պարտատոմսերի համար չի լինի ակտիվ շուկա: Բանկը փոխել է բիզնես մոդելը և վերադասակարգել դրանք ամորտիզացված արժեքով չափվող գործիքներում:

Վարկային ռիսկի նշանակալի աճ. Ինչպես պարզաբանվում է ծանոթագրություն 2-ում, ԱՎԿ-ները չափվում են որպես պահուստներ, որոնք համարժեք են փուլ 1-ում գտնվող ակտիվների մասով 12-ամսյա ԱՎԿ-ներին կամ փուլ 2 կամ 3-ում գտնվող ակտիվների ամբողջական ԱՎԿ-ներին: Ակտիվը տեղափոխվում է փուլ 2, եթե ակտիվի սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ է գրանցվել: ՖՀՄՍ 9-ը չի սահմանում, թե ինչն է վարկային ռիսկի զգալի աճ համարվում: Ակտիվի զգալի աճի գնահատման նպատակով Բանկը հաշվի է առնում որակական և քանակական ողջամիտ ու կանխատեսումների վրա հիմնված տեղեկությունները: Մանրամասների համար տե՛ս Ծան. 27-ը:

Վարկային ռիսկերի համանման հատկանիշներով ակտիվների խմբերի ստեղծում. ԱՎԿ-ն հավաքական հիմունքով չափելու դեպքում ֆինանսական գործիքները խմբավորվում են՝ ըստ ռիսկի համանման հատկանիշների: Մանրամասների համար տե՛ս Ծան. 27-ը: Բանկը շարունակական հիմունքներով վարկային ռիսկի հատկանիշների համապատասխանության մոնիտորինգ է իրականացնում, որպեսզի գնահատի, թե արդյոք դրանք դեռևս համանման են: Այս մոնիտորինգն անհրաժեշտ է իրականացնել վարկային ռիսկերի հատկանիշների փոփոխության դեպքում ակտիվների համապատասխան վերանգնահատվողում կամ վերաբաշխում ապահովելու համար: Դա կարող է հանգեցնել նոր պորտֆելների ստեղծմանը կամ ակտիվների տեղափոխմանը արդեն գոյություն ունեցող պորտֆելներ, որոնք լավագույնս արտացոլում են այդ ակտիվների խմբին բնորոշ համանման վարկային ռիսկերի հատկանիշները: Պորտֆելների վերաբաշխումը և պորտֆելների միջև շարժը հաճախ տեղի է ունենում այն ժամանակ, երբ առկա է վարկային ռիսկի զգալի աճ (կամ այդ վարկային ռիսկի զգալի աճը հակադարձվում է) և, այսպիսով, ակտիվները տեղափոխվում են 12-ամսյա ԱՎԿ-ից ամբողջական ԱՎԿ, կամ հակառակը: Սակայն, դա կարող է տեղի ունենալ նաև այն պորտֆելներում, որոնք շարունակում են գնահատվել նույն 12-ամսյա կամ ամբողջական ԱՎԿ-ների հիմունքով, սակայն ԱՎԿ-ների գումարը փոփոխվում է, քանի որ պորտֆելների վարկային ռիսկերը տարբերվում են:

Կիրառված մոդելները և ենթադրությունները. Բանկը ԱՎԿ գնահատման և ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափման նպատակով օգտագործում է բազմազան մոդելներ և ենթադրություններ: Անհրաժեշտ է դատողություն կիրառել յուրաքանչյուր տեսակի գործիքի համար առավել հարմար մոդելի հայտնաբերման, ինչպես նաև այս մոդելներում օգտագործված ենթադրությունները որոշելու համար, ներառյալ այն ենթադրությունները, որոնք վերաբերում են վարկային ռիսկի աճի հիմնական խթաններին: ԱՎԿ-ի վերաբերյալ մանրամասները ներկայացված են Ծան. 27-ում, իսկ իրական արժեքով գնահատման մանրամասն նկարագրությունը՝ Ծան. 33-ում:

Անորոշության գնահատման չափանիշների հիմնական աղբյուրները

Ստորև ներկայացված են այն հիմնական գնահատականները, որոնք ղեկավարությունը կիրառել է Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում և որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Յուրաքանչյուր տեսակի շուկայի/արտադրանքի համար հեռանկարային սցենարների թվի և դրանց գնահատման, ինչպես նաև այդ սցենարներից յուրաքանչյուրի համար կանխատեսումների սահմանում

ԱՎԿ-ի չափման ժամանակ Բանկն օգտագործում է ողջամիտ և կանխատեսումներով հիմնավորված տեղեկություններ, որը հիմնված է տարբեր տնտեսական խթանների հետագա տեղաշարժի վերաբերյալ ենթադրությունների, ինչպես նաև նրա վրա, թե ինչպես կփոխազդեն այդ խթանները: Մանրամասների համար տես ծանոթագրություն 27-ը, որտեղ ներկայացված է նաև ԱՎԿ-ի՝ գնահատված կանխատեսումների փոփոխությունների նկատմամբ զգայունության վերլուծությունը:

Դեֆոլտի հավանականությունը. ԴՀ-ն ակնկալվող վարկային կորստի չափման հիմնական ելակետային տվյալն է: ԴՀ-ն որոշակի ժամանակահատվածում դեֆոլտի հավանականությունն է: Հաշվարկը հիմնված է պատմական տվյալների, ենթադրությունների և հետագա հանգամանքների ակնկալիքների վրա: Մանրամասների համար տես ծանոթագրություն 27-ը, որտեղ ներկայացված է նաև ԱՎԿ-ի՝ տնտեսական խթանների փոփոխություններով պայմանավորված ԴՀ-ի փոփոխության նկատմամբ զգայունության վերլուծությունը:

Դեֆոլտի դեպքում կորուստ. Դեֆոլտի դեպքում առաջացած կորուստը (ԴԱԿ - LGD) վարկի արժեզրկումից առաջացած կորստի հաշվարկն է: Այն հիմնված է պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն հույս ունի ստանալ, ներառյալ գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը և այլ վարկային գործիքները: Մանրամասների համար տես ծան. 27-ը, որտեղ ներկայացված է նաև ԱՎԿ-ի՝ տնտեսական խթանների փոփոխություններով պայմանավորված ԴԱԿ-ի փոփոխության նկատմամբ զգայունության վերլուծությունը:

Իրական արժեքի չափման և գնահատման գործընթացը. Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս Բանկը կիրառում է շուկայում դիտարկելի տվյալներ, որոնք առկա են: Այն դեպքում, երբ մակարդակ 1-ի տվյալները հասանելի չեն, Բանկն իր ֆինանսական գործիքների իրական արժեքի որոշման նպատակով կիրառում է գնահատման մոդելներ: Իրական արժեքի չափման անրամասները ներկայացված են ծանոթագրություն 33-ում:

Հիմնական միջոցների և նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետ. Ինչպես վերը նշվեց, Բանկը վերանայում է հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում: Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը ղեկավարության դատողության խնդիր է՝ հիմնված նմանատիպ ակտիվների գծով ունեցած նախկին փորձի վրա: Ակտիվի օգտակար ծառայության ժամկետը որոշելիս ղեկավարությունը հաշվի է առնում ակնկալվող օգտագործումը, գնահատված տեխնիկական կամ բարոյական մաշվածությունը, ֆիզիկական մաշվածքը և ֆիզիկական միջավայրը, որում գործարկվում է ակտիվը: Նշված հանգամանքներում կամ գնահատումներում որևէ փոփոխություն կարող է բերել ապագա մաշվածության և ամորտիզացիայի դրույթաչափերի ճշգրտման:

Վերագնահատված արժեքով հաշվառված հիմնական միջոցներ. Գույքի որոշ տեսակներ (հողեր և շենքեր) կարող են հաշվառվել վերագնահատված արժեքով: Վերջին անգամ գնահատումը կատարվել է 2018 թվականի դեկտեմբերի 31-ին: 2018 դեկտեմբերի 31-ի դրությամբ վերագնահատման հաշվեկշռային արժեքները կազմել են 2,955,985 հազար ՀՀ դրամ և 2,982,447 հազար ՀՀ դրամ 2019 դեկտեմբերի 31-ի դրությամբ: Օգտագործված գնահատման մեթոդների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 16-ում:

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

4. ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ

	2019թ.	2018թ.
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	31,805,398	26,101,349
Ներդրումային արժեթղթեր	2,613,121	2,889,075
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	45,261	417,192
Այլ տոկոսային եկամուտներ	194,845	212,855
Ընդամենը	34,658,625	29,620,471
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	6,901,934	6,676,603
Այլ փոխառություններ	4,589,569	5,325,632
Ստորադաս փոխառություն	644,158	-
Կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր	464,238	80,709
Հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	323,339	1,551
Վարձակալության պարտավորության գծով տոկոսային ծախս	192,326	-
Բանկերի ավանդներ և մնացորդներ	72,972	13,856
Ընդամենը	13,188,536	12,098,351
Զուտ տոկոսային եկամուտ	21,470,089	17,522,120

5. ԶՈՒՏ ԿՈՄԻՍԻՈՆ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԵՐՈՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

	2019թ.	2018թ.
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		
Պլաստիկ քարտեր	1,381,636	1,058,083
Դրամական փոխանցումներ	613,593	512,824
Հաշվների սպասարկում	435,610	214,543
Դրամական միջոցների կանխիկացում	165,390	121,992
Երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրում	114,000	113,490
Այլ	182,653	120,951
Ընդամենը	2,892,882	2,141,883
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		
Պլաստիկ քարտեր սպասարկման ծառայություններ	1,072,699	759,723
Կոմիսիոն ծախսեր տերմինալների գծով	488,254	289,296
Հաշիվների սպասարկման գծով կոմիսիոն վճարներ	211,230	125,156
Այլ	122,923	72,832
Ընդամենը	1,895,106	1,247,007
Զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	997,776	894,876

6. ԶՈՒՏ ՕԳՈՒՏ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԱՌԵՎՏՐԻՑ ԵՎ ՓՈԽԱՐԿՈՒՄԻՑ

	2019թ.	2018թ.
Զուտ օգուտ արտարժույթի առթ ու վաճառքի գործառնություններից	1,588,348	1,338,901
Զուտ օգուտ/վնաս արտարժույթի վերագնահատումից	1,611	3,827
Ընդամենը	1,589,959	1,342,728

7. ԶՈՒՏ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ (ԾԱԽՍ) /ԵԿԱՄՈՒՏ

	2019թ.	2018թ.
Ստացված տույժեր և տուգանքներ	699,592	1,159,359
Այլ գործառնական գույք եկամուտ	(52,570)	128,260
Ընդամենը	647,022	1,287,619

«ԻՆԵԿՈՐԱՆՆԻ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

8. ԱՐԺԵԶԴԿՈՒՄԻՑ ԿՈՐՈՒՄՆԵՐ

	2019թ.	2018թ.
Հաճախորդներին տրված վարկեր (ծնթ. 15)	5,689,813	4,182,073
Հետհաշվեկշռային պարտավորություններ (ծնթ. 23)	23,960	15,819
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (ծնթ. 11)	(16,280)	(14,424)
Ներդրումային արժեթղթեր (ծնթ. 12)	(141,940)	(14,603)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ (ծնթ. 14)	10,055	-
Այլ ակտիվներ (ծնթ. 18)	12,622	-
Ընդամենը	5,578,230	4,168,865

9. ԱՅԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

	2019թ.	2018թ.
Մաշվածություն և ամորտիզացիա (Ծան. 16,17)	1,155,824	587,317
Վերանորոգման և պահպանման ծախսեր	382,517	302,397
Վճարումներ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ	283,808	303,248
Շուկայավարում և հասարակայնության հետ կապերի գծով ծախսեր	255,550	197,820
Մասնագիտական ծառայություններ	138,097	110,434
Ապահովագրություն	101,880	113,304
Գրասենյակային ծախսեր	95,041	91,846
Հաղորդակցության ծառայություններ	92,707	88,230
Անվտանգության ծառայություն	72,621	69,993
Գործառնական վարձակալության գծով ծախս	22,400	566,386
Այլ	357,714	432,631
Ընդամենը	2,958,159	2,863,606

10. ՀԱՅՈՒԹԱՅԱՐԿ

	2019թ.	2018թ.
Ընթացիկ տարվա հարկ	1,831,327	2,081,644
Ժամանակավոր տարբերություններ գծով հետաձգված հարկային (հակադարձում)/ծախս	391,657	(171,924)
Ընդամենա շահութահարկի գծով ծախս	2,222,984	1,909,720

2019 թվականի ընթացքում կիրառվող շահութահարկի դրույթաչափը կազմել է 20%, իսկ հետաձգված հարկինը՝ 18 % (2020՝ 20%) :

Ստորև ներկայացվում է շահութահարկի արդյունավետ դրույթաչափի հաշվարկը 31 դեկտեմբեր 2019թ. և 31 դեկտեմբեր 2018թ. ավարտվող տարիների համար՝

	2019թ.	%	2018թ.	%
Շահույթ մինչև հարկումը	11,635,764		9,913,320	
Շահութահարկ՝ 20% դրույթաչափով	2,327,153	20	1,982,664	20
Հարկվող եկամուտներ և ծախսեր	(12,518)	(0.1)	(72,944)	(1)
Շահութահարկի դրույթաչափի փոփոխության ազդեցություն	(91,651)	(1)	-	-
Շահութահարկի գծով ծախս	2,222,984	20	1,909,720	19

Առ հունվարի 1-ը 2020 թ, իրականացվել է շահութահարկի գծով դրույթաչափի փոփոխություն 20%-ից 18%-ի: Շահութահարկի դրույթաչափի փոփոխության ազդեցությունն տողը արտացոլում է վերոնշյալ փոփոխությունները հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների վրա

«ԻՆԵԿՈՐԱՆՍԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ակտիվների և պարտավորությունների՝ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման նպատակով օգտագործված մնացորդների ժամանակավոր տարբերություններից գոյացել է հետաձգված հարկի գծով զուտ պարտավորություն առ 31 դեկտեմբեր 2019թ. և 2018թ.։ Նվազեցվող ժամանակավոր տարբերությունները չեն լրանում ընթացիկ հարկային օրենսդրությամբ։

Ժամանակավոր տարբերություններում փոփոխությունները 31 դեկտեմբեր 2019թ. և 2018թ. ավարտվող տարիների համար ներկայացված է ստորև.

	Հունվարի 1, 2019	Շահույթ կամ վնասում ճանաչված	Դրույքի փոփոխու- թյուն ճանաչված շահույթում կամ վնասում	Այլ համապար փակ եկամու- տում ճանաչված	Դրույքի փոփոխու- թյուն այլ համապար փակ եկամու- տում ճանաչված	Ամփոփ սեփական կապիտա- լում ճանաչված	Դեկտեմբերի 31, 2019
Ներդրումաին արժեթղթեր	(333,853)	(25,549)	-	(87,742)	24,805	202,827	(219,512)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,730	(2,930)	(473)	-	-	-	1,327
Բանկերից ստացվելիք գումարներ	(22,301)	13,744	2,230	-	-	-	(6,327)
Հաճախորդ-ների տրված վարկեր	(890,296)	(400,075)	89,030	-	-	-	(1,201,341)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(553,310)	(33,116)	12,328	-	43,003	-	(531,095)
Այլ ակտիվներ	(52,236)	(48,843)	5,224	-	-	-	(95,855)
Այլ պարտավորու-թյուններ	166,880	13,461	(16,688)	-	-	-	163,653
	(1,680,386)	(483,308)	91,651	(87,742)	67,808	202,827	(1,889,150)

	Հունվարի 1, 2019	ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցություն	Շահույթ կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ եկամուտում ճանաչված	Դեկտեմբերի 31, 2019
Ներդրումաին արժեթղթեր	(407,276)	-	(2,922)	76,345	(333,853)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	7,615	(2,885)	-	4,730
Բանկերից ստացվելիք գումարներ	(12,099)	-	(10,202)	-	(22,301)
Հաճախորդներին տրված վարկեր	(1,094,765)	143,237	61,232	-	(890,296)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(592,491)	-	89,402	(50,221)	(553,310)
Այլ ակտիվներ	(26,509)	-	(25,727)	-	(52,236)
Այլ պարտավորություններ	89,107	14,747	63,026	-	166,880
	(2,044,033)	165,599	171,924	26,124	(1,680,386)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Հահուժահարկի վճարումներ

Համաձայն ՀՀ հարկային օրենսդրության Բանկը իրավունք ունի այլ հարկերի գծով իրականացված գերավճարների հաշվին փոխմարել Հահուժահարկի գծով պարտավորությունները: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը իրականացրել է այլ հարկերի գծով գերավճարների հաշվին 37,324 հազար դրամի Հահուժահարկի գծով պարտավորության մարում:

11. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկը դրամարկղում	15,691,890	8,056,173
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	30,609,275	23,422,591
Նոստրո հաշիվներ այլ բանկերում		
Ա2 -ից Ա3 վարկանիշով	1,325,718	1,840,462
Բաա1-ից Բաա3 վարկանիշով	1,233,126	4,713,948
Բաա1-ից Բաա3 վարկանիշով	796,519	4,475,504
Բ1-ից ցածր վարկանիշով	115,790	62,802
առանց վարկանիշի	43,738	57,910
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում	3,514,891	11,150,626
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, մինչև մասհանումը	49,816,056	42,629,390
Վարկային կորուստների գծով մասհանում	(7,372)	(23,652)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	49,808,684	42,605,738

	Ընդամենը
Մասհանում առ 31 դեկտեմբեր, 2018թ.	23,652
Մասհանումներից վերադարձ	(16,280)
Մասհանում առ 31 դեկտեմբեր 2019թ.	7,372

	Ընդամենը
Մասհանում առ 31 դեկտեմբեր 2017	-
ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցություն	38,076
Մասհանում առ 01 հունվարի 2018	38,076
Մասհանումներից վերադարձ	(14,424)
Մասհանում առ 31 դեկտեմբեր 2018	23,652

Վարկային ռիսկի գնահատման համար Բանկը հիմնականում կիրառում է Moody's-ի վարկանիշները:

Նոստրո հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են գտման գործարքների հետ կապված մնացորդները, ինչպես նաև ոչ տոկոսակիր պարտադիր նվազագույն պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրավված դրամային և արտարժույթով միջոցների համար. 2%` ՀՀ դրամով միջոցների համար, 18%` արտարժույթային միջոցների համար` Կենտրոնական բանկի կողմից սահմանած կարգի համաձայն: Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը պարբերաբար չպահպանելը կարող է հանգեցնել ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից տույժերի կիրառման:

2019թ և 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքների ողջ մնացորդը դասակարգվել է որպես փուլ 1-ում գտնվող ֆինանսական ակտիվներ:

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

12. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկի կողմից պահվող		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր	13,865,514	23,931,231
Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	-	4,442,076
Կորպորատիվ պարտատոմսեր	342,461	595,217
Բաժնային գործիքներ		
Կորպորատիվ բաժնետոմսեր (սկզբնական արժեքով հաշվառվող)	30,914	30,936
Ընդամենը (իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ)	14,238,889	28,999,460
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		
ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր	10,725,640	-
Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	4,541,416	-
Վարկային կորուստների գծով մասհանում	(35,228)	-
Ընդամենը (Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ)	15,231,828	-
Ընդամենը	29,470,717	28,999,460

	Ընդամենը
Մասհանում առ 31 դեկտեմբեր 2018թ.	-
Մասհանումներից վերադարձ	35,228
Մասհանում առ 31 դեկտեմբեր 2019թ.	35,228

Որոշելի իրական արժեք չունեցող ներդրումներ

Բաժնային գործիքները ներկայացված են սկզբնական արժեքով և ներառում են չգնանշվող բաժնային արժեթղթեր դրամային փոխանցումների և ֆինանսական ծառայությունների ոլորտում: Այս ներդրումների համար գործող շուկա գոյություն չունի, և վերջերս տեղի չեն ունեցել այնպիսի գործարքներ, որոնք կարող էին տրամադրել վկայություն դրանց ընթացիկ իրական արժեքի մասին: Չկան դիտարկելի համադրելի շուկաներ, ավելին, զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդի կիրառման արդյունքում ձևավորվում են մի շարք իրական արժեքներ, ինչը պայմանավորված է այս ոլորտում դրամական միջոցների ապագա հոսքերի առկայության հետ կապված անորոշությամբ:

2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրումային արժեթղթերի ողջ մնացորդը դասակարգվել է որպես փուլ 1-ում գտնվող ֆինանսական ակտիվներ:

Վերադասակարգումներ

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը փոխել է իր բիզնեսի մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման համար և վերադասակարգել է 16,094,636 հազար ՀՀ դրամ իրական արժեքով ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, կատեգորիայից դեպի ամորտիզացված արժեքով հաշվառման կատեգորիա: Ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են իրենց իրական արժեքով՝ վերադասակարգման ամսաթվով: 827,580 հազար ՀՀ դրամ ընդհանուր արժեքով նախկինում ճանաչված կուտակված օգուտը հանվում է սեփական կապիտալից և ճշգրտվում է վերադասակարգման ամսաթվին ֆինանսական ակտիվների իրական արժեքի նկատմամբ: Արդյունքում, ֆինանսական ակտիվները չափվում են վերադասակարգման ամսաթվով, կարծես միշտ չափվել են ամորտիզացված արժեքով: Այս ճշգրտումը ազդել է այլ համապարփակ օգուտների վրա, բայց չի ազդել շահույթի կամ վնասի վրա, հետևաբար վերոնշյալ հոդվածում այն վերադասակարգման ճշգրտում չէ:

«ԻՆՆԵՐԲԱՆԿ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Յազար 33 դրամով

13. ԲԱՆԿԵՐԻՑ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պլաստիկ քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց ՅՅ ԿԲ-ում	947,000	889,500
Բանկերից ստացվելիք գումարներ	109,970	157,556
Բա1-ից Բա3 վարկանիշով	9,594	-
Առանց վարկանիշի	-	-
Կանոնավոր գնման պայմանագրեր – սփոթ գործարքներ արտարժույթով		
Ա2 -ից Ա3 վարկանիշով	3,251	8,361
Բաա1-ից Բաա3 վարկանիշով	3,700	5,944
Բա1-ից Բա3 վարկանիշով	30	
Ընդամենը վարկեր և փոխառություններ	1,073,545	1,061,361

Վարկանիշերը բացահայտելիս Բանկը կիրառում է Moody's-ի կողմից տրված վարկանիշները:

ՅՅ ԿԲ-ում պլաստիկ քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոցները սառեցված են ԱՐՔԱ համակարգի միջոցով իրականացվող հաշվարկային գործառնությունների դիմաց:

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,594 հազ. դրամ իրենից ներկայացնում է ակրեդիտիվների դիմաց Ալֆաբանկում սառեցված ավանդի գումարը:

Առ 31 դեկտեմբերի 2019 թ. և 31 դեկտեմբերի 2018 թ. բանկերից ստացվելիք գումարները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

ԱՎԿ չափման նպատակներով բանկերին տրված վարկերի և կանխավճարների մնացորդները դասակարգվել են փուլ 1-ում: Այս մնացորդների գծով ԱՎԿ-ն իրենից ներկայացնում է աննշան գումար, և, հետևաբար, Բանկը չի ճանաչել բանկերին տրված վարկերի և կանխավճարների մասով վարկային կորուստների գծով պահուստ:

14. ՀԱԿԱՂԱՐՁ ՀԵՏԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՅՅ բանկեր	2,686,723	1,301,222
Միջին և փոքր չափի հայկական ֆինանսական կազմակերպություններ	455,546	1,416,918
Վարկային կորուստների գծով մասհանում	(10,055)	
Ընդամենը	3,132,214	2,718,140
		Ընդամենը
Մասհանում առ 31 դեկտեմբեր 2018		-
Մասհանումներից վերադարձ		10,055
Մասհանում առ 31 դեկտեմբեր 2019		10,055

Գրավ

2019 դեկտեմբերի 31-ի և 2018 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված էին հետևյալ արժեթղթերը.

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ կառավարության պետական գանձապետական պարտատոմսեր	3,478,556	2,895,622
ՀՀ ոչ պետական այլ արժեթղթեր	84,511	-
Ընդամենը	3,563,067	2,895,622

Ավելի չափման նպատակներով հակադարձ հետզնման պայմանագրերով նախատեսված ստացման
ենթակա գումարների մնացորդները դասակարգվել են փուլ 1-ում:

15. ՀԱՃԱԽՈՐՀՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Համախառն վարկեր	Արժեզրկ ման պահուստ	Չուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Իրավաբանական անձանց տրված վարկեր	130,046,935	2,775,439	127,271,496	2.13%
Վարկեր խոշոր				
կազմակերպություններին	63,835,132	1,487,464	62,347,668	2.33%
Անհատապես արժեզրկված վարկեր	3,114,037	1,295,282	1,818,755	41.59%
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	60,721,095	192,182	60,528,913	0.32%
Վարկեր փոքր, միջին և միկրո բիզնեսներին	66,211,803	1,287,975	64,923,828	1.95%
Անհատապես արժեզրկված վարկեր	2,665,852	1,072,557	1,593,295	40.23%
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	63,545,951	215,418	63,330,533	0.34%
Անհատներին տրված վարկեր	115,019,042	3,641,088	111,377,954	3.17%
Անհատապես արժեզրկված վարկեր	981,288	366,080	615,208	37.31%
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	114,037,754	3,275,008	110,762,746	2.87%
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	245,065,977	6,416,527	238,649,450	2.62%

Ստորև ներկայացված է հաճախորդներին տրված վարկերը և արժեզրկման գծով պահուստը
համապատասխան ՖՀՄՍ 9-ի 2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ:

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Չուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Իրավաբանական անձանց տրված վարկեր	124,678,101	2,481,540	122,196,561	1.99%
Վարկեր խոշոր կազմակերպություններին	63,895,513	913,166	62,982,347	1.43%
Անհատապես արժեզրկված վարկեր	2,976,523	647,708	2,328,815	21.76%
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	60,918,990	265,458	60,653,532	0.44%
Վարկեր փոքր, միջին և միկրո բիզնեսներին	60,782,588	1,568,374	59,214,214	2.58%
Անհատապես արժեզրկված վարկեր	3,521,397	1,175,337	2,346,060	33.38%
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	57,261,191	393,037	56,868,154	0.69%
Անհատներին տրված վարկեր	87,492,260	3,272,290	84,219,970	3.74%
Անհատապես արժեզրկված վարկեր	1,636,253	484,926	1,151,327	29.64%
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	85,856,007	2,787,364	83,068,643	3.25%
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	212,170,361	5,753,830	206,416,531	2.71%

Ստորև ներկայացված է հաճախորդներին տրված վարկերը և արժեզրկման գծով պահուստը համապատասխան ՖՀՄՍ 9-ի 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի և 2018 թ դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Չուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Փուլ 1	231,662,550	1,436,791	230,225,759	0.62%
Փուլ 2	4,699,144	1,153,129	3,546,015	24.54%
Փուլ 3	8,704,283	3,826,607	4,877,676	43.96%
Ընդամենը	245,065,977	6,416,527	238,649,450	2.62%

	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Չուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Փուլ 1	198,126,184	1,570,499	196,555,685	0.79%
Փուլ 2	7,319,953	1,281,920	6,038,033	17.51%
Փուլ 3	6,724,224	2,901,411	3,822,813	43.15%
Ընդամենը	212,170,361	5,753,830	206,416,531	2.71%

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2019թ.-ի ընթացքում:

	Իրավաբանական անձանց տրված վարկեր	Անհատներին տրված վարկեր	Ընդամենը
Մնացորդն 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	2,481,540	3,272,290	5,753,830
Արժեզրկման գծով ծախս	668,932	5,020,881	5,689,813
Չուտ դուրսգրում և վերականգնում	(375,033)	(4,652,083)	(5,027,116)
Մնացորդն 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,775,439	3,641,088	6,416,527

«ԻՆԵԿՈՐԱՆՍԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի չարժեքը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2018թ.-ի ընթացքում

	Իրավաբանական անձանց տրված վարկեր	Անհատներին տրված վարկեր	Ընդամենը
Մնացորդն 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	3,034,507	2,186, 375	5,220,882
ՖՀՄՍ 9-ի ազդեցությունը	(248,255)	964,440	716,185
Վերաներկայացված մնացորդ 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	2,786,252	3,150,815	5,937,067
Արժեզրկման գծով ծախս	996,075	3,185,998	4,182,073
Չուտ դուրսգրում և վերականգնում	(1,300,787)	(3,064,523)	(4,365,310)
Մնացորդ 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,481,540	3,272,290	5,753,830

Համախառն վարկերի գծով չարժեքը ըստ դասերի 2019թ. `

	Մնացորդ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	Տրամադրում	Մարում	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Մնացորդ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փուլ 1	198,126,184	129,521,500	(92,369,425)	-	(1,753,521)	(1,862,188)	231,662,550
Փուլ 2	7,319,953	1,567,789	(2,904,280)	1,753,521	-	(3,037,840)	4,699,143
Փուլ 3	6,724,224	1,165,481	(4,085,449)	1,862,188	3,037,840	-	8,704,284
Ընդա- մենը	212,170,361	132,254,770	(99,359,154)	3,615,709	1,284,319	(4,900,028)	245,065,977

Համախառն վարկերի գծով չարժեքը ըստ դասերի 2018թ. `

	Մնացորդ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	Տրամադրում	Մարում	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փուլ 1	163,089,818	119,255,804	(80,149,906)	-	(2,867,998)	(1,201,534)	198,126,184
Փուլ 2	6,637,580	1,737,872	(3,624,459)	2,867,998	-	(299,038)	7,319,953
Փուլ 3	8,559,560	1,149,479	(4,485,387)	1,201,534	299,038	-	6,724,224
Ընդա- մենը	178,286,958	122,143,155	(88,259,752)	4,069,532	(2,568,960)	(1,500,572)	212,170,361

Արժեզրկման գծով չարժեքը ըստ դասերի 2019 թ.

	Մնացորդ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	Տրամադրում	Մարում	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Մնացորդ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փուլ 1	1,570,499	925,797	242,244	-	(411,522)	(890,227)	1,436,791
Փուլ 2	1,281,920	369,118	361,174	411,522	-	(1,270,605)	1,153,129
Փուլ 3	2,901,411	560,636	(1,796,272)	890,227	1,270,605	-	3,826,607
Ընդա- մենը	5,753,830	1,855,551	(1,192,854)	1,301,749	859,083	(2,160,832)	6,416,527

«ԻՆԵԿՈՐԱՆՍԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Հաճախորդներին տրված վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հաճախորդներին, որոնք գործում են տնտեսության հետևյալ ոլորտներում:

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտուր	64,141,076	62,144,376
Սննդի արտադրություն	17,468,074	17,473,737
Արդյունաբերություն	16,003,817	14,108,448
Տուրիզմ և հյուրանոցային ծառայություններ	8,938,921	7,832,060
Տրանսպորտ և կապ	7,410,049	6,974,745
Էներգետիկայի ոլորտ	1,585,641	6,325,284
Շինարարություն	5,668,232	3,966,156
Գյուղատնտեսություն, անտառապահություն և փայտամշակում	1,200,085	772,813
Այլ ոլորտներ	7,631,040	5,080,482
Անհատներին տրված վարկեր	115,019,042	87,492,260
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	245,065,977	212,170,361
Արժեզրկման պահուստ	(6,416,527)	(5,753,830)
Ընդամենը հաճախորդներին տրված զուտ վարկեր	238,649,450	206,416,531

Գրավի վերլուծություն

Ստորև ներկայացված են իրավաբանական անձանց տրված զուտ վարկերը, ըստ գրավի տեսակների:

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ	1,044,770	1,141,172
Անշարժ գույք	115,364,468	104,920,237
Փոխադրամիջոցներ	662,120	2,770,551
Սարքավորումներ	4,031,342	3,338,308
Պաշարներ	1,268,571	1,084,433
Անհատական երաշխիքներ	4,325,530	5,281,785
Այլ գրավ	574,695	3,660,075
Ընդամենը	127,271,496	122,196,561

Վերևի աղյուսակում բերվող գումարներն իրենցից ներկայացնում են վարկերի հաշվեկշռային արժեքը և պարտադիր չէ, որ արտացոլեն գրավի իրական արժեքը:

Վարկային ռիսկին ենթարկվածություն

2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ուներ մեկ փոխառու (), որի մնացորդը գերազանցել է Բանկի սեփական կապիտալի 10%-ը՝ կազմելով 6336,292,547 հազ. Դրամ (2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 5,807,358 հազ. ՀՀ դրամ, գերազանցելով կապիտալի 10%-ը)

Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 27-ում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

Գրավադրած ակտիվներ

2019 թ. Դեկտեմբերի 31-ի ի դրությամբ հաճախորդների տրված վարկերը 18,655,572 հազար դրամ համախառն գումարով (2018 թ.՝ 20,762,261 հազար դրամ) հանդիսացել են գրավ այլ փոխառու միջոցների համար:

«ԻՆԵԿՈՐԱՆՍԿ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

16. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՈՂՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

	Հող և շենքեր	Վարձակալվ. միջոցների բարելավում	Կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական և համակարգչ. տեխնիկա	Փոխադրա- միջոցներ	Ոչ սյուլթակ. ակտիվներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք/ Վերագնահատվ. արժեք							
Առ 1 հունվար 2018թ.	3,226,731	220,101	2,794,823	191,671	1,649,283	1,393,237	9,475,846
Վերագնահատում	251,106	-	-	-	-	-	251,106
Ավելացումներ	-	23,504	412,436	174,685	456,237	41,497	1,108,359
Դուրսգրումներ/Օտարումներ	-	-	-	-	(348)	(5,570)	(5,918)
Փոխանցումներ	-	-	(217)	-	348	(131)	-
Կուտակված մաշվածության հաշվանցում	(521,852)	-	-	-	-	-	(521,852)
Առ 31 Դեկտեմբեր 2018թ.	2,955,985	243,605	3,207,042	366,356	2,105,520	1,429,033	10,307,541
Ավելացումներ	79,031	59,196	411,485	-	1,296,156	95,845	1,941,713
Դուրսգրումներ/Օտարումներ	-	(1,755)	(866)	-	(475)	-	(3,096)
Առ 31 Դեկտեմբեր 2019թ.	3,035,016	301,046	3,617,661	366,356	3,401,201	1,524,878	12,246,158
Մաշվածություն							
Առ 1 հունվար 2018թ.	(477,205)	(136,715)	(2,186,610)	(179,717)	(651,100)	(950,154)	(4,581,501)
Մաշվածության ծախս	(44,647)	(20,304)	(213,124)	(18,119)	(169,624)	(121,499)	(587,317)
Դուրսգրումներ/Օտարումներ	-	-	-	-	180	3,972	4,152
Կուտակված մաշվածության հաշվանցում	521,852	-	-	-	-	-	521,852
Առ 31 Դեկտեմբեր 2018թ.	-	(157,019)	(2,399,734)	(197,836)	(820,544)	(1,067,681)	(4,642,814)
Մաշվածության ծախս	(52,569)	(26,716)	(239,796)	(37,773)	(233,181)	(119,346)	(709,381)
Դուրսգրումներ/Օտարումներ	-	-	310	-	53	-	363
Առ 31 Դեկտեմբեր 2019թ.	(52,569)	(183,735)	(2,639,220)	(235,609)	(1,053,672)	(1,187,027)	(5,351,832)
Առ 31 Դեկտեմբեր 2019թ. Հաշվեկշռային արժեք	2,982,447	117,311	978,441	130,747	2,347,529	337,851	6,894,326
Առ 31 Դեկտեմբեր 2018թ. Հաշվեկշռային արժեք	2,955,985	86,586	807,308	168,520	1,284,976	361,352	5,664,727
Առ 31 Դեկտեմբեր 2017թ. Հաշվեկշռային արժեք	2,749,526	83,386	608,213	11,954	998,183	443,083	4,894,345

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Վերագնահատված ակտիվներ

Բանկի շենքերը ներկայացված են վերագնահատված արժեքով՝ հանած դրանից հետո կուտակված մաշվածության և արժեզրկումից կորուստների գումարները, վերագնահատված արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ հանդիսանում է դրանց իրական արժեքը:

Վերագնահատումն իրականացվել է առ 31 դեկտեմբեր 2018թ., անկախ վերագնահատողի կողմից: Վերագնահատված արժեքը որոշվել է շուկայական, ծախսային և եկամտային մեթոդներով: Շուկայական մեթոդի հիմքում վերագնահատման ամսաթվի դրությամբ համադրելի գույքի հասանելի շուկայական արժեքներն են: Գնահատվող գույքի և համադրելի գույքի բնութագրիչների միջև տարբերությունները հաշվի առնելով՝ կիրառվել են հետևյալ ճշգրտումները. գնառաջարկի պայմանների սակարկություն (-15%), մակերեսի ճշգրտում (մինչև -20%), ներքին հարդարման և կահավորվածության ճշգրտում (5-10%):

Եկամտային մեթոդի դեպքում կիրառվել է ուղղակի կապիտալիզացիան: Այս մեթոդով շենքերի արժեքը որոշելու համար իրականացվել են հետևյալ ենթադրությունները. բոլոր շենքերի զբաղվածության աստիճանն ընդունվել է 90%, գործառնական ծախսերը՝ արդյունավետ համախառն եկամտի 25%, կապիտալիզացիայի գործակիցն ընդունվել է 8.2%-8.4%:

Շենքերի վերագնահատման նպատակով իրական արժեքի որոշումը հանդիսանում է 3-րդ Մակարդակի գնահատում:

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Իրական արժեքը 31 դեկտեմբերի 2019թ դրությամբ
Հող և շենքեր	-	-	2,955,985	2,955,985

31 Դեկտեմբերի 2019 թ. հողի և շենքերի հաշվեկշռային արժեքը չվերագնահատելու դեպքում կկազմեր 884,880 հազ. դրամ (2018թ.՝ 694,823 հազ. դրամ):

17. ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԸ

	Շենք շինություն	Ընդամենը
Սկզբնական արժեք/		
Առ 1 հունվար 2019թ.	2,448,698	2,448,698
Ավելացումներ	126,627	126,627
Առ 31 դեկտեմբեր 2019թ.	2,575,325	2,575,325
Մաշվածություն		
Առ 1 հունվար 2019թ.	-	-
Մաշվածության ծախս	(446,443)	(446,443)
Առ 31 դեկտեմբեր 2019թ.	(446,443)	(446,443)
Հաշվեկշռային արժեք առ 31 դեկտեմբեր 2019թ.	2,128,882	2,128,882

Ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարներ

	2019 թ.	2018 թ.
Վարձակալված տարածքների օգտագործման իրավունքի մաշվածության գծով ծախսեր	446,443	-
Վարձակալության պարտավորության գծով տոկոսային ծախս	192,326	-
Կարճաժամկետ և փոքր արժեք ակտիվների վարձակալության գծով ծախսեր	22,400	-
Ընդամենը	661,169	-

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ	Չվաստակված տոկոսագումար
Ժամկետայնության վերլուծություն		
Տարի 1	586,541	237,824
Տարի 2	520,480	179,786
Տարի 3	423,631	145,377
Տարի 4	344,539	119,859
Տարի 5	319,984	95,394
Տարի 6	292,168	71,432
Տարի 7	282,554	46,117
Տարի 8	138,283	28,138
Տարի 9	123,000	16,694
Տարի 10	108,956	4,692
Ընդամենը	3,140,136	945,312
Վարձակալության գծով պարտավորություններ, առ 31 դեկտեմբերի 2019թ.	2,194,824	

Բանկը բանկային գործունեություն իրականացնելու նպատակով վարձակալել է անշարժ գույքեր իր մասնաճյուղերը տեղակայելու համար միջինում 5 տարի ժամկետով: Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունների դրամական հոսքերի զեղչման դրույք է կիրառվել 11,5%:

18. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ ստացվելիք գումարներ	2,189,711	1,571,583
Վարկային կորուստների գծով մասհանում (7,958)		
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	2,181,753	1,571,583
Բռնագանձված ակտիվներ	3,637,782	3,442,543
Կանխավճարներ	1,440,694	177,020
Նյութեր և պաշարներ	76,880	68,353
Ոսկու ստանդարտացված ձուլակտորներ	606,097	394
Այլ	13,690	14,874
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	5,775,143	3,703,184
Վարկային կորուստների գծով մասհանում (4,664)		-
Ընդամենը այլ ակտիվներ	7,952,232	5,274,767

Այլ ստացվելիք գումարներում ներառված են վճարահաշվարկային համակարգերից ստացվող գումարներ:

2019 թ. դեկտեմբերի 31-ի և 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ ստացվելիք գումարները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

«ԻՆԵԿՈՐԱՆՍԿ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

19. ԲԱՆԿԵՐԻ ԱՎԱՆՂՆԵՐ ԵՎ ՄԱՑՈՐՂՆԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր բանկերից	4,001,222	-
Արտարժույթային սփոթ գործարքներ	25,885	120
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	14	2,600
Այլ	369	4,476
Ընդամենը բանկերի ավանդներ և մանցորդներ	4,027,490	7,196

20. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎՆԵՐ ԵՎ ԱՎԱՆՂՆԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ հաշիվներ և ցապահանջ ավանդներ		
- Անհատներ	41,751,791	30,775,294
- Իրավաբանական անձինք	39,586,320	33,373,834
Ժամկետային ավանդներ		
- Անհատներ	101,576,521	91,866,129
- Իրավաբանական անձինք	12,741,900	8,362,270
	195,656,532	164,377,527

2019 թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների ավանդների և ընթացիկ հաշիվների 6,041,207 հազար դրամ գումարով մնացորդները (2018թ դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,642,194 հազար դրամ) Բանկի կողմից սառեցվել էին որպես գրավ՝ տրված վարկերի և արտահաշվեկշռային վարկային գործիքների դիմաց:

2019թ. Դեկտեմբերի 31-ի և 2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի որևէ հաճախորդ, որի հաշիվների և ավանդների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

2019թ. չորս եռամսյակների ընթացքում Բանկը չի արձանագրել հաճախորդների նկատմամբ պարտավորության որևէ խախտում (2018թ. չի արձանագրվել):

21. ԱՅԼ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գրավով չապահովված փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	39,095,028	46,672,380
Գրավով ապահովված փոխառություններ ՀՀ կառավարությունից և ՀՀ ԿԲ-ից	15,289,250	17,205,498
Գրավով ապահովված փոխառություններ հայկական ֆինանսական կազմակերպություններից	3,350,014	3,556,763
Գրավով չապահովված այլ փոխառություններ	16,308	26,275
Ընդամենը	57,750,600	67,460,916

Առ Դեկտեմբերի 31-ի 2019թ. 18,655,572 հազ.դրամ համախառն արժեքով հաճախորդներին տրված վարկերը (2018թ.՝ 20,762,261 հազ. դրամ) ապահովվություն են հանդիսանում ՀՀ ԿԲ-ից և հայկական ֆինանսական կազմակերպություններից ներգրավված գրավով ապահովված փոխառությունների համար:

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար Հազար ՀՀ դրամով

2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի չորս պարտատերերից ստացված այլ փոխառություններ, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 36,921,251 հազար դրամ (2018թ-ին՝ 53,301,974 հազար դրամ):

2019թ. Դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների ընթացքում Բանկը չի արձանագրել այլ փոխառությունների գծով պարտավորության որևէ խախտում:

Կապակցված կողմերից փոխառությունները մանրամասն ներկայացված են ծան. 31-ում:

22. ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏՔԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Թողարկված պարտքային արժեթղթեր ՀՀ դրամով	3,059,062	1,473,358
Թողարկված պարտքային արժեթղթեր ԱՄՆ դոլարով	7,253,578	4,094,457
Ընդամենը	10,312,640	5,567,815

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված պարտքային արժեթղթեր՝ համապատասխանաբար 1.500,000 հազար ՀՀ դրամ և 5,000 հազար ԱՄՆ դոլար անվանական արժեքով: 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը տեղաբաշխել է համապատասխանաբար 3,000,000,000 ՀՀ դրամ և 10,000 հազար ԱՄՆ դոլար:

Արժեկտրոնը համապատասխանաբար 9,75% և 5,25% է՝ համապատասխանաբար ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով:

Մարման ժամկետը համապատասխանաբար ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով արտահայտված պարտքային արժեթղթերի համար կազմում է 2021 թ. Հունիս, 2021 թ. Նոյեմբեր և 2022 թ. Սեպտեմբեր:

23. ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	1,127,067	990,535
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,603,545	295,746
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	2,730,612	1,286,281
Վճարվելիք հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	319,369	284,087
Հետհաշվեկշռային հոդվածների գծով պահուստ*	113,513	89,553
Այլ կանխավճարներ	139,850	66,771
Ակտիվներին վերաբերող շտրիկներ	3,671	14,684
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	131,960	123,853
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	708,363	578,948
Ընդամենը այլ պարտավորություններ	3,438,975	1,865,229

Արտահաշվեկշռային հոդվածների կորուստների գծով շարժը ներկայացված է ստորև՝

	Ընդամենը
Դեկտեմբեր 31, 2018թ.	89,553
Արժեզրկման ծախս	23,960
Դեկտեմբեր 31, 2019թ.	113,513
Դեկտեմբեր 31, 2017թ.	-
ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցություն	73,734
Հունվարի 01, 2018թ.	73,734
Արժեզրկման ծախս	15,819
Դեկտեմբեր 31, 2018թ.	89,553

«ԻՆԵԿՈՐԱՆՍԿ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

24. ՍՏՈՐԱԴԱՍ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Միջազգային միկրովարկավորման ֆոնդ	7,413,205	-
Ընդամենը ստորադաս փոխառություն	7,413,205	-

Ստորադաս փոխառությունը ներկայացնում է երկարաժամկետ փոխառության պայմանագիր, որը Բանկի դեֆոլտի դեպքում, ստորադասվում է Բանկի այլ պարտավորություններին՝ ներառյալ ավանդները և պարտքային այլ գործիքները:

Ներգրված ստորադաս փոխառության մեջ, միջազգայնորեն միկրոֆինանսավորված՝ ստորադաս փոխառություն է, որը թողարկվել է 2019թ. և կազմել է 15,000 հազար ԱՄՆ դոլար տարեկան 10.01%, որը վճարվում է կիսամյակի կտրվածքով, որի պայմանագրային ժամկետն է 2026թ. փետրվար ամիսը:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի ունեցել մայր գումարների, տոկոսների կամ պայմանագրով սահմանված այլ խախտումների մասով դեֆոլտներ: Դեկավարությունը կարծում է, որ Բանկը համապատասխանում է պայմանագրի պահանջներին 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

25. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

2019 թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմված է 181,821 հատ սովորական բաժնետոմսերից (2018թ. դեկտեմբերի 31-ին՝ 181,821 հատ), յուրաքանչյուրը 80,000 դրամ անվանական արժեքով:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավասու են շահաբաժին ստանալու և Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում քվեարկելու՝ մեկ բաժնետոմս - մեկ ձայն սկզբունքով:

Վճարման ենթակա շահաբաժինների մեծությունը սահմանափակվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով: Բաշխման ոչ ենթական մասը ներկայացվում է որպես պահուստ, որն ստեղծվում է համաձայն օրենսդրական պահանջների՝ պայմանավորված ընդհանուր բանկային ռիսկերով՝ ներառյալ ապագա կորուստները և այլ չնախատեսված ռիսկեր կամ պայմանականություններ:

2019թ-ի ընթացքում հայտարարվել է 4,000,062 հազար դրամ շահաբաժին (2018թ-ին՝ 4,200,047 հազար դրամ):

26. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՅՈՒՄՏ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով վերագնահատման պահուստի շարժը ներկայացված է ստորև՝

	2019 (ՖՀՄՍ 9)	2018 (ՖՀՄՍ 9)
Տարեսկզբին	1,500,999	1,629,109
ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցություն	-	177,271
Տարեվերջին	1,500,999	1,806,380
Վերադասակարգման արդյունքում պահուստի ճշգրտում, առանց հարկերի	(827,580)	-
Վերագնահատումից օգուտ/վնաս	728,488	(358,078)
Շահույթ կամ վնաս վերադասակարգված մաս	(112,609)	(6,163)
Արժեզրկման ծախս	(177,168)	(17,487)
Շահութահարկ	(87,742)	76,347
	350,969	(305,381)
Շահութահարկի դրույթի փոփոխություն	24,805	-
Ընդհանուր վերագնահատման ազդեցություն	(451,806)	(305,381)
Տարեվերջյան մնացորդ	1,049,193	1,500,999

27. ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումը բանկային բիզնեսի համար էական նշանակություն ունի, և այն Բանկի գործունեության կարևոր տարրերից է: Բանկը հիմնականում առնչվում է վարկային ռիսկի, գործառնական ռիսկի, իրացվելիության և շուկայական ռիսկերի հետ:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակը Բանկին առնչվող ռիսկերի բացահայտումը, վերլուծումը և կառավարումն է, համապատասխան ռիսկի սահմանաչափերի և վերահսկողության սահմանումը, ռիսկերի մակարդակի շարունակական մոնիթորինգը և ռիսկի մակարդակներին համապատասխանության վերահսկողությունը: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ արտացոլելով շուկայում առկա պայմանները, առաջարկվող ապրանքի և ծառայությունների սակագները և առկա լավագույն փորձը:

Բանկի խորհուրդը ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման շրջանակների վերահսկողության, հիմնական ռիսկերի կառավարման վերահսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության և ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև զգալիորեն մեծ ռիսկերի հաստատման համար:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը, ինչպես պորտֆելային, այնպես էլ առանձին գործարքների մակարդակում, կառավարվում և վերահսկվում են Ընդհանուր ռիսկերի կառավարման, Վարկային կոմիտեի, Խնդրահարույց վարկերի կոմիտեի, Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) միջոցով: Արդյունավետ որոշումների կայացման նպատակով, Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված վարկայի տեսակից և մնացորդի չափից:

Ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ռիսկի գործոնները բացահայտվում և կառավարվում են կազմակերպության ներսում: Հատուկ ուշադրություն է դարձվում ռիսկի քարտեզների մշակմանը, որոնք օգտագործվում են ռիսկի գործոնների ամբողջական հայտնաբերման համար, որը և հիմք է հանդիսանում ռիսկերի կառավարման գործող ընթացակարգերի արդյունավետության սահմանման համար: Բացի վարկային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություններից, Ռիսկերի կառավարման բաժինը կատարում է նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի մոնիթորինգ, ինչի համար էլ կանոնավոր հանդիպումներ է կազմակերպում այլ ստորաբաժանումների հետ՝ փորձագիտական եզրակացություններ ստանալու:

Շուկայական ռիսկը

Շուկայական ռիսկը շուկայում գների փոփոխության հետ կապված ռիսկն է, որը ներառում է արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների, վարկային սպրեդների և արժեթղթերի գների փոփոխության հետևանքով առաջացած ռիսկը, որը կարող է ազդեցություն ունենալ Բանկի շահույթի կամ պորտֆելի մնացորդի վրա: Շուկայական ռիսկը ներառում է արժույթային ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերից, որոնք կարող են փոփոխվել շուկայական գներում ընդհանուր և մասնակի փոփոխությունների հետևանքով:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է՝ կառավարել և վերահսկել շուկայական ռիսկը Բանկի կողմից ընդունելի սահմաններում, միաժամանակ բարելավելով ռիսկի դիմաց հատույցը:

Շուկայական ռիսկերի կառավարման հիմնական պատասխանատուն Ռիսկերի կառավարման կոմիտեն և ԱՊԿԿ-ն են, որը ղեկավարվում է նախագահի կողմից: Շուկայական ռիսկերի սահմանաչափերը հաստատվում են ԱՊԿԿ-ի կողմից՝ Ռիսկերի կառավարման կոմիտեի առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով ֆինանսական գործիքների, տոկոսադրույքների, ժամկետայնության, արտարժույթի դիրքերի բաց դիրքերի և վնասաբերության կետի սահմանաչափեր: Վերջիններս կանոնավոր կերպով վերահսկվում, վերանայվում և հաստատվում են Խորհրդի կողմից:

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Հավելյալ, Բանկը նաև օգտագործում է սթրես-թեստերի լայն շրջանակ, առանձին առևտրային պորտֆելների և ընդհանուր դիրքի վրա մի շարք բացառիկ շուկայական սցենարների ֆինանսական ազդեցությունը հասկանալու համար: Սթրես թեստերը ցույց են տալիս, թե ինչ չափի կորուստներ կարող է կրել Բանկը ծայրահեղ իրավիճակներում: Բանկի կողմից իրականացվող սթրես-թեստերը ներառում են ռիսկի գործոնների սթրես փորձարկումներ, որտեղ սթրեսային փոփոխությունները կիրառվում են յուրաքանչյուր ռիսկի նկատմամբ, ինչպես նաև հատուկ սթրես-թեստեր, որոնց դեպքում հնարավոր սթրեսային փոփոխություններ կիրառվում են կոնկրետ դիրքերի նկատմամբ:

Տոկոսադրույքի ռիսկը կառավարվում է նաև տոկոսադրույքի ճեղքվածքի, ինչպես նաև տարբեր ստանդարտ և ոչ ստանդարտ տոկոսադրույքային սցենարների նկատմամբ՝ զուտ տոկոսային մարժայի զգայունությունը վերահսկելու միջոցով:

ա) Տոկոսադրույքների ռիսկը

Տոկոսադրույքի ռիսկն այն ռիսկն է, որն առաջանում է տոկոսադրույքների փոփոխության հետևանքով և որը կարող է ազդեցություն ունենալ բանկի շահույթի կամ ֆինանսական գործիքների արժեքի վրա:

Շուկայական տոկոսադրույքների գերակշիռ մասի տատանումները արտացոլվում են Բանկի ֆինանսական վիճակում և դրամական հոսքերում: Նման փոփոխությունների արդյունքում կարող է աճել կամ նվազել տոկոսային մարժան՝ միաժամանակ առաջացնելով շահույթ կամ վնաս:

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն ժամանակ, երբ որոշակի մարման ժամկետի փաստացի կամ կանխատեսված ակտիվները մեծ կամ փոքր են այդ նույն ժամկետի իրական կամ կանխատեսված պարտավորություններից:

Տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծություն

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսա- կիր	Հաշվեկշռա- յին արժեք
Ֆինանսական ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,530,198	-	-	-	-	48,278,486	49,808,684
Ներդրումային արժեթղթեր	84	2,614,913	-	11,926,686	14,898,120	30,914	29,470,717
Բանկերից ստացվելիք գումարներ	-	-	-	-	-	1,073,545	1,073,545
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,132,214	-	-	-	-	-	3,132,214
Հաճախորդներին տրված	26,031,986	24,276,133	35,437,130	126,187,616	26,716,585	-	238,649,450
Շահույթի կամ վնասի	3,418	-	-	-	-	-	3,418
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	2,181,753	2,181,753
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	30,697,900	26,891,046	35,437,130	138,114,302	41,614,705	51,564,698	324,319,781

«ԻՆԵԿՈՐԲԱՆԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսա- կիր	Հաշվեկշռա- յին արժեք
Ֆինանսական պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	4,001,236	-	-	-	-	26,254	4,027,490
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	53,026,511	19,329,914	47,459,967	23,922,097	1,384	51,916,659	195,656,532
Այլ փոխառություններ	6,941,155	12,019,896	13,104,935	24,323,717	1,360,897	-	57,750,600
Հաստատուն տոկոսադրույթով	3,470,987	4,006,228	13,104,935	24,323,717	1,360,897	-	46,266,764
Փոփոխուն տոկոսադրույթով	3,470,168	8,013,668	-	-	-	-	11,483,836
Ստորադաս փոխառություն	284,138	-	-	-	7,129,067	-	7,413,205
Թողարկված արժեթղթեր	74,772	42,368	-	10,195,500	-	-	10,312,640
Վարձակալության գծով պարտավորություններ	46,528	93,231	184,553	1,075,435	795,077	-	2,194,824
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	4,400	-	-	-	-	-	4,400
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	-	2,730,612	2,730,612
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	64,378,740	31,485,409	60,749,455	59,516,749	9,286,425	54,673,525	280,090,303
Զուտ	(33,680,840)	(4,594,363)	(25,312,325)	78,597,553	32,328,280	(3,108,827)	44,229,478

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռա- յին արժեք
31 դեկտեմբեր 2018							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,409,851	-	-	-	-	37,195,887	42,605,738
Ներդրումային արժեթղթեր	89,007	7,141,424	48,386	12,700,082	8,989,625	30,936	28,999,460
Բանկերից ստացվելիք գումարներ	-	-	-	-	-	1,061,361	1,061,361
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,718,140	-	-	-	-	-	2,718,140
Հաճախորդներին տրված վարկեր	22,708,078	22,186,495	33,702,410	111,615,546	16,204,002	-	206,416,531
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	1,571,583	1,571,583
Ընդամենը	30,925,076	29,327,919	33,750,796	124,315,628	25,193,627	39,859,767	283,372,813

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
	մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռային արժեք
Պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	2,600	-	-	-	-	4,596	7,196
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	45,253,615	22,311,422	37,909,072	15,612,458	7,126	43,283,834	164,377,527
Այլ փոխառություններ	5,968,566	14,134,341	6,578,974	39,387,871	1,391,164	-	67,460,916
Հաստատուն տոկոսադրույքով Փոփոխուն	3,926,809	2,270,875	6,578,974	39,387,871	1,391,164	-	53,555,693
տոկոսադրույքով	2,041,757	11,863,466	-	-	-	-	13,905,223
Թողարկված արժեթղթեր	-	37,039	-	5,530,776	-	-	5,567,815
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	-	1,286,281	1,286,281
Ընդամենը	51,224,781	36,482,802	44,488,046	60,531,105	1,398,290	44,574,711	238,699,735
Չուտ	(20,299,705)	(7,154,883)	(10,737,250)	63,784,523	23,795,337	(4,714,944)	44,673,078

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների գծով կիրառվող միջին արդյունավետ տոկոսադրույքները 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

	Դեկտեմբեր 31, 2019թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Դեկտեմբեր 31, 2018 թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արժույթներ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արժույթներ
Տոկոսակիր ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ						
- Նոստրո հաշիվներ	-	0.51%	0.41%		0.26%	0.31%
Բանկերում	-	-	-	-	-	-
- Բանկերում ներդրված ավանդներ	-	-	5.65%	-	2.00%	7.00%
Ներդրումային արժեթղթեր	10.87%	5.05%	-	11.52%	6.03%	-
Հակադարձ հետգնման պայմանագրեր	6.10%	3.00%	0.25%	6.42%	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	14.05%	8.4%	6.8%	14.44%	8.75%	7.32%
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ						
- Լորո հաշիվներ	-	-	-	1.99%	-	-
- Վարկեր Բանկերից	5.5%	-	-	-	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	2.14%	0.33%	0.16%	2.16%	0.34%	0.12%
- Ժամկետային ավանդներ	8.86%	4.03%	2.63%	8.98%	4.27%	2.42%
Այլ փոխառություններ	8.57%	5.52%	-	8.69%	5.84%	-
Թողարկված արժեթղթեր	9.75%	5.25%	-	9.75%	5.25%	-
Ստորադաս փոխառություն	-	10.01%	-	-	-	-

Արժույթային ռիսկ

Բանկը մի քանի արժույթներով սահմանված ակտիվներ և պարտավորություններ ունի:
Արժույթային ռիսկն ի հայտ է գալիս, երբ փաստացի կամ կանխատեսված արտարժույթային
ակտիվները մեծ կամ փոքր են այդ նույն արժույթով սահմանված պարտավորություններից:

Բանկը կառավարում է արժույթային ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ըստ
արժույթների և ըստ առանձին պրոդուկտների: Փաստացի դիրքերի և սահմանաչափերի
վերահսկողությունն իրականացվում և ղեկավարությանն է ներկայացվում օրական կտրվածքով:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արտարժույթային ռիսկի կառուցվածքն առ
Դեկտեմբեր 31-ի 2019 թ. և Դեկտեմբեր 31-ի 2018 թ. ներկայացված է ստորև բերված
աղյուսակում:

«ԻՆԵԿՈՐԱՆՍԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արժույթներ	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21,098,581	11,163,003	16,038,974	1,508,126	49,808,684
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	24,841,795	4,628,189	733	-	29,470,717
Բանկերից ստացվելիք գումարներ	996,812	13,995	1,379	61,359	1,073,545
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	372,337	81,752	2,678,125	-	3,132,214
Հաճախորդներին տրված վարկեր	135,814,926	94,136,323	8,272,352	425,849	238,649,450
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	3,418	-	-	-	3,418
Այլ ֆինանսական ակտիվներ	1,493,277	556,186	30,343	101,947	2,181,753
Ընդամենը ակտիվներ	184,621,146	110,579,448	27,021,906	2,097,281	324,319,781
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Բանկերի ավանդներ և մնացորդներ	4,001,241	3	25,352	894	4,027,490
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	101,613,927	79,286,333	12,537,914	2,218,358	195,656,532
Այլ փոխառություններ	31,790,035	25,960,565	-	-	57,750,600
Թողարկված արժեթղթեր	3,059,062	7,253,578	-	-	10,312,640
Վարձակալության գծով պարտավորություն	2,194,824	-	-	-	2,194,824
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	4,400	-	-	-	4,400
Այլ ֆինանսական պարտավորություններ	2,580,864	139,689	3,215	6,844	2,730,612
Ստորադաս փոխառություն	-	7,413,205	-	-	7,413,205
Ընդամենը պարտավորություններ	145,244,353	120,053,373	12,566,481	2,226,096	280,090,303
Չուտ դիրքեր	39,376,793	(9,473,925)	14,455,425	(128,815)	44,229,478
Համախառն մարվող արժույթային գործաւնքներ	3,833,200	10,952,643	(14,428,669)	(357,174)	-
Չուտ դիրքեր 31 դեկտեմբեր 2019թ դրությամբ	43,209,993	1,478,718	26,756	(485,989)	44,229,478

«ԻՆԵԿՈՐԱՆՍԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արժույթներ	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21,442,872	9,732,107	10,364,495	1,066,264	42,605,738
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	24,410,673	4,588,032	755	-	28,999,460
Բանկերից ստացվելիք գումարներ	901,801	11,452	-	148,108	1,061,361
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,718,140	-	-	-	2,718,140
Հաճախորդներին տրված վարկեր	102,045,080	97,202,523	6,937,443	231,485	206,416,531
Այլ ֆինանսական ակտիվներ	1,276,205	238,861	15,273	41,244	1,571,583
Ընդամենը ակտիվներ	152,794,771	111,772,975	17,317,966	1,487,101	283,372,813
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Բանկերի ավանդներ և մնացորդներ	4,299	8	2,763	126	7,196
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	74,077,557	77,002,704	10,556,270	2,740,996	164,377,527
Այլ փոխառություններ	33,005,628	34,455,288	-	-	67,460,916
Թողարկված արժեթղթեր	1,473,358	4,094,457	-	-	5,567,815
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,238,174	45,649	2,296	162	1,286,281
Ընդամենը պարտավորություններ	109,799,016	115,598,106	10,561,329	2,741,284	238,699,735
Չուտ դիրքեր	42,995,755	(3,825,131)	6,756,637	(1,254,183)	44,673,078
Համախառն մարվող արժույթային գործառնքներ		5,571,238	(6,889,706)	1,318,468	-
Չուտ դիրքեր 31 դեկտեմբեր 2018թ դրությամբ	42,995,755	1,746,107	(133,069)	64,285	44,673,078

Արտարժույթի փոխարժեքների տատանման նկատմամբ տարվար շահույթ կամ վնասի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը՝ հիմնված 31 դեկտեմբեր 2019թ. և 31 դեկտեմբեր 2018թ. փաստացի դիրքերի վրա և ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի, Եվրոյի փոխարժեքների 10% փոփոխության պարզեցված սցենարը ներկայացված է ստորև.

	Դեկտեմբեր 31, 2019թ.		Դեկտեմբեր 31, 2018թ.	
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլարի փոխարժեքի արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	10%	147,872	10%	174,611
Եվրոյի փոխարժեքի արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	10%	2,676	10%	(13,307)

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը կառավարելու համար (ինչպես ճանաչված ֆինանսական ակտիվների, այնպես էլ չճանաչված

«Ինեկորանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

պայմանագրային պարտավորվածությունների համար), ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և վարկային կոմիտեի ու Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը, որոնք ակտիվորեն վերահսկում են վարկային ռիսկը: Բանկի վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Կառավարման խորհրդի կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- կոնտրագենտների, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկային փաստաթղթերի նկատմամբ պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման և մոնիտորինգի ընթացակարգերը:

Կորպորատիվ կամ իրավաբանական անձանց կողմից վարկերի դիմումները պատրաստվում և վերլուծվում են հաճախորդների սպասարկման գծով մենեջերների, ապա փոխանցվում վարկային ռիսկի վարչությանը, որը պատասխանատու է կորպորատիվ վարկային պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և գործունեության ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն վարչության պետի կողմից: Վարկային կոմիտեն ստուգում է վարկի դիմումը վարկային ռիսկի բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Մանրամասն կամ ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող վարկի դիմումներն ուսումնասիրվում են Մանրամասն վարկավորման վարչության կողմից՝ սթորինգային գնահատման մոդելների և դիմումների տվյալների ստուգման ընթացակարգերի կիրառմամբ, որոնք մշակվել են Ռիսկերի կառավարման վարչության հետ միասին: Հաճախորդներին տրվող վարկերի դիմումների գնահատումը հիմնականում ավտոմատացված է: Ստորև հանգամանորեն ներկայացվում է սթորինգային գնահատման համակարգը:

Բացի հաճախորդների անհատական վերլուծությունից, վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Վարկային ռիսկի առավելագույն չափի համակենտրոնացումը

Բանկը համակարգում է իր ստանձնած վարկային ռիսկի մակարդակը, սահմանափակելով մեկ փոխառուի կամ փոխառուների բանկերի հաշվով ստանձնած ռիսկի գումարը, ինչպես նաև արդյունաբերության ճյուղերը (և աշխարհագրական հատվածները): Վարկային ռիսկի սահմանափակումները վարկառուի և վարկավորման տեսակի (ըստ ոլորտի, ըստ տարածաշրջանի) հաստատվում և վերանայվում են Կառավարման խորհրդի կողմից: Փաստացի ռիսկերի և դրանց սահմանաչափերի միջև համեմատությունը ենթարկվում է մոնիտորինգի օրական կտրվածքով:

Ըստ անհրաժեշտության, և վարկերի մեծամասնության դեպքում, Բանկը ձեռք է բերում գրավ, ինչպես նաև կորպորատիվ և անհատական մակարդակի երաշխիքներ: Սակայն վարկերի մի մասը կազմում է ֆիզիկական անձանց վարկավորումը, որտեղ նման գործիքները հնարավոր չէ կիրառել: Նման ռիսկերը վերահսկվում են շարունակական հիմունքներով և ենթակա են տարեկան կամ ավելի հաճախակի վերանայման:

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

Վարկը տրամադրելու պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկի չօգտագործված մասը՝ վարկերի, երաշխիքների կամ ակրեդիտիվների տեսքով: Վարկային ռիսկը արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում սահմանվում է որպես գործընկերոջ կողմից պայմանագրային ժամկետների և պայմանների պահպանման անկարողության հետևանքով կորուստների հավանականություն: Ինչ վերաբերում է վարկ տրամադրելու պարտավորությունների գծով վարկային ռիսկին, Բանկը ենթարկվում է վնաս կրելու ռիսկի՝ ընդհանուր չօգտագործված պարտավորությունների չափով: Սակայն, հավանական վնասի չափն ավելի պակաս է, քան ընդհանուր չօգտագործված պարտավորությունների չափը, քանի որ վարկավորման պարտավորությունների ստանձնումը պայմանավորված է հաճախորդների կողմից վարկավորման որոշակի չափանիշներին պահպանմամբ: Բանկը պայմանական պարտավորությունների նկատմամբ կիրառում է նույն վարկային քաղաքականությունը, ինչ որ հաշվեկշռային ֆինանսական գործիքների նկատմամբ, այսինքն՝ վարկի տրամադրման ընթացակարգերի պահպանում՝ կիրառելով ռիսկի մեղմման սահմանաչափեր և ընթացիկ մոնիտորինգի միջոցառումներ: Բանկն իրականացնում է արտահաշվեկշռային պայմանական պարտավորությունների մոնիտորինգ, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները, ընդհանուր առմամբ, պարունակում են ավելի մեծ վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

Աշխարհագրական համակենտրոնացում

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Հայաստանի Հանրապետություն	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	46,327,931	2,143,231	1,337,522	49,808,684
Բանկերից ստացվելիք գումարներ	1,066,564	3,730	3,251	1,073,545
Ներդրումային արժեթղթեր	29,469,984	-	733	29,470,717
Հակադարձ հետգնման պայմանագրեր	3,132,214	-	-	3,132,214
Հաճախորդներին տրված վարկեր	238,649,450	-	-	238,649,450
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	3,418	-	-	3,418
Այլ ֆինանսական ակտիվներ	2,181,753	-	-	2,181,753
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	320,831,314	2,146,961	1,341,506	324,319,781

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Հայաստանի Հանրապետություն	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	31,505,642	4,925,043	6,175,053	42,605,738
Բանկերից ստացվելիք գումարներ	1,061,361	-	-	1,061,361
Ներդրումային արժեթղթեր	28,998,705	-	755	28,999,460
Հակադարձ հետգնման պայմանագրեր	2,718,140	-	-	2,718,140
Հաճախորդներին տրված վարկեր	206,416,531	-	-	206,416,531
Այլ ֆինանսական ակտիվներ	1,571,583	-	-	1,571,583
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	272,271,962	4,925,043	6,175,808	283,372,813

«ԻՆԵԿՈՐԱՆՆԻ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Բանկի համար վարկային ռիսկ գոյացնող գործընկերները չունեն արտաքին վարկանշում: Բանկն օգտագործում է ներքին գործընթացներ և քաղաքականություն՝ գործընկերների վարկանշման և համապատասխան ռիսկի «ախորժակը» որոշելու համար:

Ռիսկի սահմանաչափերի վերահսկման և մեղմացման քաղաքականություններ

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ վարկառուի կամ վարկառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Ըստ արդյունաբերության ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Բանկի խորհրդի կողմից:

Մեկ վարկառուի, ներառյալ ֆինանսական կազմակերպությունների գծով վարկային ռիսկի չափը, նաև սահմանափակված է Բանկի խորհրդի կողմից սահմանված լրացուցիչ սահմանաչափերով հաշվեկշռային և արտահաշվեկշռային ռիսկերի համար, ինչպես նաև առևտրային գործարքների, օրինակ՝ արտարժույթային ֆորվարդի պայմանագրերի, օրական սահմանաչափերով: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու իրական սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Վարկային ռիսկի ենթարկվելը նաև կառավարվում է վարկառուների և հնարավոր վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծությունների և, անհրաժեշտության դեպքում, վարկի տրամադրման սահմանաչափերի փոփոխման միջոցով:

Գրավ

Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի համար գրավի հիմնական տեսակներն են.

- հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույք,
- կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և այլ հիմնական միջոցներ,
- ֆինանսական գործիքներ՝ պարտքային և բաժնային արժեղթեր
- դրամական միջոցներ և ոսկյա իրեր

Կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են, ֆիզիկական անձանց գծով վերաձևակերպվող վարկային գծերը հիմնականում չեն ապահովվում: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվների ապահովման միջոց հանդիսացող գրավների տեսակները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական կազմակերպություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Գրավի նախնական գնահատումը տեղի է ունենում վարկային հաստատման գործընթացի ընթացքում, երբ Բանկը հավաքում է տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս կատարել հիմնավորված գնահատում: Գրավի առարկայի արժեքը այն գնահատված գումարն է, որով այն կարող է վաճառվել և գնահատման ամսաթիվը՝ ճշգրտված արժեքի նվազեցմամբ: Արժեքի նվազեցմամբ չափվում է այն ռիսկը, որ Բանկը չի կարողանա վաճառել գրավի առարկան ակնկալվող շուկայական արժեքին հավասար գնով: Անշարժ գույքի և հիմնական միջոցների համար նման նվազեցումը սովորաբար տատանվում է շուկայական արժեքի 20%-ից 40%-ի միջակայքում: Ղեկավարությունն իրականացնում է գրավի շուկայական արժեքների մոնիտորինգ և պահանջում ապահովման հավելյալ միջոց՝ հիմնական համաձայնագրին համապատասխան, ինչպես նաև

«ԻՆԵԿՈՐԱՆՍԿ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

Ինտեռնալ է ստացված ապահովման միջոցների շուկայական արժեքին՝ վարկի արժեգրվման պահուստի բավարարության ստուգման ընթացքում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության ներկայացված է ծան. 15-ում:

Հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների գծով վարկային ռիսկի առավելագույն սահմանաչափը ներկայացված է ստորև՝

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	34,116,794	34,549,565
Բանկերից ստացվելիք գումարներ	1,073,545	1,061,361
Ներդրումային արժեթղթեր	29,470,717	28,968,524
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,132,214	2,718,140
Հաճախորդներին տրված վարկեր	238,649,450	206,416,531
Այլ ֆինանսական ակտիվներ	2,181,753	1,571,583
ԸՆԴԱՄԵՆՆԵՐ առավելագույն վարկային ռիսկ	308,624,473	275,285,704

Վարկային ռիսկի չափման մեթոդաբանությունը

Ռիսկերի կառավարման նպատակներով վարկային ռիսկերի գնահատումը բարդ է և պահանջում է մոդելների կիրառում, քանի որ շուկայական պայմաններով, ակնկալվող դրամական հոսքերով և ժամանակային փոփոխություններով պայմանավորված վարկային ռիսկը կարող է տարբերվել: Ակտիվների պորտֆելի վարկային ռիսկի գնահատումը պահանջում է հետագա գնահատումներ կատարել՝ կապված դեֆոլտի, դրանից բխող կորուստների գործակիցների և կոնտրագենտների միջև դեֆոլտի կորելացիաների հավանականության հետ:

Բանկը վարկային ռիսկը գնահատում է դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտից առաջաջացած վնասի (LGD) և դեֆոլտի ժամանակ գործիքի արժեք (EAD): Սա մոտ է ԱՎԿ-ի չափման նպատակով կիրառված մոտեցմանը՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի:

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ Բանկն օգտագործում է արժեգրվման «եռափուլ» մոդել՝ վարկի սկզբնական ճանաչումից հետո որակի փոփոխությունների հիման վրա, որն ամփոփված է ստորև.

- Սկզբնական ճանաչման պահին վարկային տեսանկյունից չարժեգրված ֆինանսական գործիքը դասակարգվում է «փուլ 1-ում», որի վարկային ռիսկը շարունակաբար վերահսկվում է Բանկի կողմից:
- Եթե սկզբնական ճանաչումից հետո հայտնաբերվում է վարկային ռիսկի զգալի աճը (SICR), ապա ֆինանսական գործիքը տեղափոխվում է «փուլ 2», սակայն դեռևս չի համարվում վարկային տեսանկյունից արժեգրված:
- Եթե ֆինանսական գործիքը վարկային տեսանկյունից արժեգրված է, ապա այն տեղափոխվում է «փուլ 3»:

Լիարժեք ԱՎԿ-ի դեպքում ֆինանսական գործիքի համար պահանջվում է կորուստների գծով պահուստներ, եթե այդ ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչումից հետո: Մնացած բոլոր այլ ֆինանսական գործիքների դեպքում ԱՎԿ-ները չափվում են 12-ամսյա ԱՎԿ-ին համարժեք գումարի չափով:

Չօգտագործված վարկային գծերի և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում ԱՎԿ-ն չափվում է՝ հիմնվելով 100% «վարկային ռիսկի փոխարկման գործոնների» (Credit Conversion Factor) վրա:

Ֆինանսական հաստատություններից, միջբանկային ավանդներից և թղթակցային հաշիվներից ստացված ենթակա գումարները, պարտքային գործիքներում ներդրումները ենթակա են արժեգրվման՝ հիմնվելով 12-ամսյա ԱՎԿ-ի վրա: Հաճախորդների մասով դեֆոլտի հավանականության

«ԻՆԵԿՐԱՆԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

և LGD-ի հաշվարկները ստացվում են միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, Fitch, S & P) տրամադրած վարկային վարկանիշի վերաբերյալ տեղեկատվությունից:

Այլ դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող վարկային կորուստների համար նախատեսված պահուստը հաշվարկվում է անհատական հիմունքով՝ կիրառելով հաճախորդի վարկային կորստի պահուստի դրույթաչափը: Եթե հաճախորդը բանկում վարկային ռիսկ չի ունենում, ապա օգտագործվում են հաճախորդի վարկային վարկանիշը և համապատասխան դեֆոլտի հավանականությունն ու LGD-ն: Բացի այդ, գնահատվում է նաև դեբիտորական պարտքի ակնկալվող ռիսկը: Եվ վերջապես, ԴՀ-ները, LGD-ները և ակնկալվող ժամանակահատվածը բազմապատկվում են՝ վարկային ակնկալվող պահուստը դեբիտորական պարտքերի համար հաշվարկելու համար:

Հաճախորդներին տրված վարկեր

Վարկառուների վարկային ռիսկերի գնահատման նպատակով Բանկը մշակել է ՀՀՄՍ 9-ի պահանջների վրա հիմնված մեթոդաբանությունը:

Ակնկալվող վարկային կորուստները Բանկը չափում է անհատական, իսկ վարկային պորտֆելների դեպքում՝ հավաքական հիմունքով, որոնք համանման վարկային ռիսկի հատկանիշներ ունեն:

Անհատապես նշանակալի վարկային ռիսկը համարվում է այն վարկառուների կամ փոխկապակցված վարկառուների խումբը, որոնք ռիսկը գերազանցում է կանոնադրական կապիտալի 1 տոկոսը: Բացի այն, նրանց պետք է վարկային ռիսկի գալի աճի հատկանիշներ դրսևորեն, ինչպիսիք են ժամկետանց օրերի ավելացումը կամ զգալի ֆինանսական դժվարությունները:

Վարկային ռիսկի զգալի աճը, կամ արժեզրկումից կորստի բացահայտման նպատակով Ռիսկերի կառավարման վարչությունը վերլուծում է վարկառուների իրացվելիության, վճարունակության, բիզնես գործունեության և ֆինանսական ռիսկերի առկայության, ժամկետանց, վերակազմակերպման, վարկային վարկանիշների և գրավադրումների իրական արժեքների մասին տեղեկատվությունը:

Անհատապես նշանակալի ռիսկերի ԱՎԿ-ն, որոնք վարկային ռիսկի գալի աճի հատկանիշների են դրսևորում, չափվում է անհատական հիմունքով: Անհատապես նշանակալի ռիսկերի ԱՎԿ-ն, որոնք վարկային ռիսկի գալի աճի հատկանիշներ չեն դրսևորում, չափվում են հավաքական հիմունքով:

Անհատական հիմունքով ԱՎԿ-ի չափումը

Անհատապես գնահատված վարկերի համար ԱՎԿ-ները չափվում են որպես պայմանագրով Բանկին տրվելիք դրամական միջոցների հոսքերի և բազմաթիվ ապագա տնտեսական սցենարների վերլուծման արդյունքում Բանկի կողմից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի տարբերության ներկա արժեք, որը գեղջվում է արդյունավետ տոկոսադրույթի մեթոդով: Բացի այդ, հաշվի են առնվում նաև վարկի գծով գրավադրված ցանկացած ակտիվների մարումը և իրացումը:

Բանկը, որպես կանոն, գնահատում է գրավի իրացման արժեքը՝ հիմք ընդունելով 2 տարին որպես հավաքագրման և գնահատման՝ 25 տոկոսով կրճատում կատարելու ժամկետ: Ընդհանուր մոտեցումը փոփոխվում է կախված առանձին դեպքերից, եթե այլ հանգամանքները ցույց են տալիս, որ հավաքագրման և գնահատման կրճատում կատարելու ընդհանուր ժամկետը ողջամիտ չեն:

Հավաքական հիմունքով ԱՎԿ-ի չափումը

ԱՎԿ-ի չափման հիմնական ելակետային տվյալները հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքն է՝

- Դեֆոլտի հավանականություն (PD),
- Դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD),
- Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD)

Այս պարամետրերը հիմնականում ստացվում են ներքին օգտագործման վիճակագրական մոդելներից և այլ պատմական տվյալներից: Դրանք կարգավորվում են կանխատեսումների արտացոլման նպատակով:

Հավաքական գնահատումն իրականացվում է վարկառուի մակարդակով, այլ ոչ թե պայմանագրի մակարդակով:

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Սեզմենտավորում

Հավաքական հիմունքով գնահատված վարկերը խմբավորված են ըստ իրենց վարկային ռիսկի հատկանիշների: Նման հատկանիշները ներառում են.

- Սեզմենտը/հատվածը
- Ժամկետանց օրերը
- Վերականգնակերպում
- Ապահովվածություն

ԱՎԿ-ի՝ հավաքական հիմունքով գնահատման ենթակա պորտֆելները բաժանվում են 5 սեզմենտների կամ հատվածների: Հաճախորդներ, հիփոթեք, արտադրություն, գյուղատնտեսություն, այլ:

Դեֆոլտի սահմանումը

ԱՎԿ-ի սահմանման համար կարևոր է սահմանել դեֆոլտը: Վերջինիս սահմանումն իրենից ներկայացնում է ԱՎԿ-ի չափի գնահատումը: Ստորև նշվածները Բանկը համարում է դեֆոլտի իրադարձություն.

- Վարկառուն ունի ավելի քան 90 օր ժամկետանց որևէ նյութական վարկային պարտավորություն Բանկին՝ հավաքական հիմունքով գնահատվող վարկերի պարագայում,
- Վարկառուի վարկը մեկից ավելի անգամ վերականգնակերպվել է,
- Վարկառուի՝ Բանկին ունեցած պարտավորությունների ամբողջական վճարման հավանականության բացակայություն, վերջինիս պարտքերը դուրս գրված են կամ իրացվել են զգալի զեղչով և վարկառուն սնանկ ճանաչվելու նպատակով դատական գործընթացում է գտնվում:

Վարկառուի՝ իր վարկային պարտավորությունների չկատարման հավանականության գնահատման ժամանակ Բանկը հաշվի է առնում որակական և քանակական ցուցանիշները: Դեֆոլտի գնահատման համար Բանկն օգտվում է տեղեկատվության բազմաթիվ աղբյուրներից, որոնք պատրաստվում են կազմակերպության ներսում, կամ ստացվում արտաքին աղբյուրներից:

Գնահատվող տեղեկությունը կախված է նաև բացահայտման կարևորությունից: Որակական ցուցանիշները, ինչպիսիք են վարկառուի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման մասին արտաքին աղբյուրից ստացված տեղեկությունները ծառայում են որպես վերլուծության կարևոր տվյալներ և օգտագործվում ԱՎԿ-ի անհատական հիմունքով գնահատման համար վարկերի բացահայտման նպատակով, եթե վարկառուի ներկայացրած ռիսկը էականորեն զգալի շեմից ավելի բարձր է:

Վարկային ռիսկի նշանակալի աճ

Բանկը վերահսկում է արժեզրկման պահանջներին ենթակա բոլոր ֆինանսական ակտիվները՝ գնահատելու դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի նշանակալի աճը: Վարկային ռիսկի նշանակալի աճի դեպքում Բանկը կչափի կորուստների գծով պահուստները՝ հիմնվելով գործողության ողջ ընթացքում, այլ ոչ 12-ամսյա, ԱՎԿ-ի վրա:

Ֆինանսական գործիքի՝ դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի նշանակալի աճի գնահատման ժամանակը Բանկը հաշվի է առնում որակական և քանակական տեղեկությունները, որոնք ողջամիտ են և հիմնավորված: Վարկառու վարկային վարկանիշի զգալի վատթարացումը, գրավի արժեքի զգալի նվազումը կարող են համարվել վարկային ռիսկերի զգալի չափով ավելացման որակական ցուցանիշեր, որոնք օգտագործվում են ԱՎԿ-ի անհատական հիմունքով գնահատման համար նախատեսված վարկերի բացահայտման համար, եթե վարկառուի ներկայացրած ռիսկը զգալիորեն բարձր է էականորեն նշանակալի շեմից:

Երբ ակտիվը դառնում է 30 օր ժամկետանց, Բանկը համարում է, որ վարկային ռիսկի զգալի աճ է տեղի ունեցել և ակտիվը գտնվում է արժեզրկման մոդելի 2-րդ փուլում, այսինքն՝ կորուստների գծով պահուստները գնահատվում են գործողության ողջ ընթացքի ԱՎԿ/ECL-ով:

«ԻՆԵԿՈՐԱՆՆԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

ԴՀ մոդելը

Յուրաքանչյուր խմբի համար ԴՀ-ի չափը որոշելու համար Բանկն օգտագործում է միգրացիայի մատրիցների մեթոդաբանություն, որը կիրառում է պատմական տվյալների, պարտավորությունների չկատարման և դեֆոլտի փորձի վիճակագրական վերլուծությունները վարկերի գումարը հուսալիորեն գնահատելու համար, որոնք, ի վերջո, կարծեգրվեն՝ մինչև հաշվեկշռային ամսաթիվը տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում: Համանման խմբի դիտարկման համար ընտրվել է յոթ տարվա ժամկետ՝ 2012 թվականի հունվարից մինչև 2018 թվականի դեկտեմբերը: Դիտարկվող ժամանակահատվածում պատրաստվեցին մեկամսյա միգրացիայի մատրիցները:

Միգրացիայի մատրիցներն օգտագործվում են հավաքական հիմունքով գնահատման յուրաքանչյուր խմբի դեֆոլտի 12-ամսյա հավանականությունը հաշվարկելու համար: Դրանից ելնելով, հաշվարկվում են հետագա տարիների սահմանային ԴՀ-ները, մինչև սպառվի պորտֆելի մարման ժամկետը: ԴՀ-ի հաշվարկներ համար դեֆոլտ է սահմանվել 90 օր ժամկետանց դեպքը: Դիտարկվող ժամանակահատվածում առնվազն մեկ անգամ արժեգրված վարկառու համարվում է արժեգրված դիտարման ողջ մնացած ժամանակահատվածում:

Ժամկետային (Point in Time PDS) ԴՀ-ները հաշվարկելու համար Բանկը տարբեր մակրո սցենարների ներքո կիրառում է նաև կանխատեսումներ:

LGD մոդել

Արժեգրման մոդելի բաղադրիչներից մեկը դեֆոլտի դեպքում կորստի չափն է, այսինքն՝ հաշվարկվում է դեֆոլտի դեպքում կորուստը: Այն չափելու համար ըստ սեզմենտների արժեգրված ռիսկերը նվազեցվում են գրավադրված դեպոզիտների և գրավադրված գույքի զեղչված իրացվելիության արժեքի չափով՝ կիրառելով հավաքագրման 2 տարվա ժամկետը և գնահատման 25 տոկոս կրճատումը: Չապահովված ակտիվների LGD մոդելներում հաշվի են առնվում արժեգրված ակտիվների մարման դրույթաչափերը: LGD-ները չափվում են սեզմենտի, այլ ոչ թե առանձին վարկառուի մակարդակով:

EAD մոդել

EAD-ն դեֆոլտի դեպքում ակնկալվող ռիսկն է: Բանկը EAD-ն ստանում է կոնտրագենտի համար ներկայացրած ընթացիկ/ներկա ռիսկից և ընթացիկ գումարի հնարավոր փոփոխություններից, որոնք նախատեսված են ամորտիզացիա ներառող պայմանագրով:

Կանխատեսումների ներառում

ԱՎԿ-ի չափման ժամանակ Բանկն կանխատեսված տեղեկություններ է օգտագործում: Այդ տեղեկությունները ներառում են դրամավարկային քաղաքականություն սահմանող մարմինների կողմից հրապարակված տնտեսական տվյալները և կանխատեսվող տնտեսական ցուցանիշները: Դեֆոլտի հավանականության որոշմանը մասնակցում են հետևյալ մակրոտնտեսական փոփոխականները. սպառողական գների համաթիվը, ԱՄՆ դոլար-ՀՀ դրամ փոխարժեքը և ՌԴ ռուբլի-ՀՀ դրամ փոխարժեքը: Դրանք հանգեցնում են դեֆոլտի տարբեր հավանականությունների: Այս տարբեր փոփոխականների համակողմանի վերլուծումը կամ կշռումը դեֆոլտի միջին կշռված հավանականության հիմքն է կազմում, որն օգտագործվում է ԱՎԿ-ի հաշվարկների համար: 12-ամսյա ԱՎԿ-ն (փուլ 1-ի վարկեր) չափվում է միայն 12 ամսվա ԴՀ-ով: Գործողության ամբողջ ընթացքի ԱՎԿ-ն (փուլ 2-ի և 3-ի վարկեր) չափվում է բոլոր տարեկան սահմանային ԴՀ-ներով՝ մինչև վարկի մարման ժամկետի ավարտը:

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներն իրենց տարբեր սցենարների և կշիռների հետ միասին հրապարակվում են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից:

ԱՎԿ-ի հաշվարկ

Յուրաքանչյուր խմբի/սեզմենտի համար սահմանային ԴՀ-ն և LGD-ն որոշելուց հետո վարկային կորուստների գծով պահուստների վերջնական հաշվարկ է կատարվում: Այն կախված է խմբերի ռիսկի հատկանիշներից. փուլ 1-ի խմբերի համար (31-ից պակաս ժամկետանց օր) հաշվարկվում է 12-ամսյա ԱՎԿ-ն, իսկ փուլեր 2-ի և 3-ի խմբերի համար (ավելի քան 90 օր ժամկետանց կամ վերակազմակերպված վարկեր) հաշվարկվում է ամբողջական ԱՎԿ-ն: Վարկային պորտֆելի LLP-ի

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Յազար 33 դրամով**

հաշվարկման արդյունքները հնարավորություն են տալիս տանալ հավաքական հիմունքով գնահատման 5 խմբերից յուրաքանչյուրի արժեզրկման միջին դրույթաչափը: Այս դրույթաչափերը կիրառվում են մինչև ամբողջ մոդելի հաջորդ հերթական վերահաշվարկ կատարելը արկային կորուստների գծով պահուստներ ձևավորելու համար: Արժեզրկման մոդելի վերահաշվարկը մեկ անգամ կատարվել է 2018 թվականին, իսկ վերջինը կատարվել է 2018 թվականի դեկտեմբերին՝ վերջին հասանելի տվյալների հիման վրա:

Բանկը կիրառում է սթորինգային համակարգը վարկային ռիսկի աստիճանի գնահատման համար՝ որպես Դ3-ի ժամանակային կառուցվածքի որոշման հիմնական ելակետային տվյալ: Բանկը հավաքագրում է իր վարկային ռիսկերի արդյունավետության և արժեզրկման մասին տվյալներ, որոնք վերլուծության են ենթարկվում ըստ վարկառուի և արտադրանքի տեսակի, ինչպես նաև ըստ վարկային ռիսկի աստիճանի: Գնահատվող պորտֆելով պայմանավորված, օգտագործվում են թե՛ ներքին, թե՛ արտաքին տվյալները: Ստորև ներկայացված աղյուսակում նկարագրվում են Բանկի վարկային ռիսկի աստիճանները:

Ստորև աղյուսակում ներկայացված է Բանկի վարկային ռիսկերի մակարդակները.

Վարկային ռիսկերի մակարդակներ	Նկարագրություն
AAA	Ցածր ռիսկային
AA	Ցածր ռիսկային
A	Ցածր ռիսկային
BBB	Միջին ռիսկային
BB	Միջին ռիսկային
B	Դիտարկվող (մոնիտորինգ)
C	Արժեզրկման հայտանիշով
D	Արժեզրկված

Բանկը վերլուծել է վիճակագրական մոդելների միջոցով հավաքված բոլոր տվյալները և գնահատում է մնացորդային կյանքի PD-ն և ինչպես է ակնկալվում, որ դրանք ժամանակի ընթացքում կփոխվեն:

Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերված աղյուսակներում նշված բացահայտումները պարունակում են ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ, որոնք.

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- ենթակա են պարտադիր զուտ հիմունքով ներկայացման՝ ելնելով ֆինանսական գործիքի բնույթից՝ անկախ սրանից, թե դրանք հաշվանցվելու են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Նմանատիպ համաձայնագրերը ներառում են ածանցյալ ֆինանսական գործիքները, հետգնման պայմանագրերը և արժեթղթերի գրավադրմամբ պայմանագրերը: Նմանատիպ ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալներ, վաճառքի և հետգնման պայմանագրեր, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխառության և վարկավորման պայմանագրեր: Ֆինանսական գործիքները, ինչպիսիք են վարկերը և ավանդները, ներկայացված չեն ստորև բերված աղյուսակում, եթե դրանք չեն հաշվանցվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում, ընդունում և գրավադրում է ինչպես կանխիկ միջոցներ, այնպես էլ շրջանառվող արժեթղթեր՝ վաճառքի և հետգնման, ինչպես նաև ռեպո և հակադրած ռեպո պայմանաֆրերի տեսքով: Նման գրավադրումը գործունեության բնորոշ գործարք է: Սա նշանակում է, որ որպես գրավի ստացված/տրված արժեթղթեր կարող են վերագրավադրվել կամ վաճառվել գործարքի ընթացքում, բայց դրանք պետք է վերադարձվեն գործարքի մարման ժամկետին: Պայմանագրերը նաև յուրաքանչյուր կողմին իրավունք են տալիս դադարեցնել գործարքները՝ պայմանագրային մյուս կողմի գրավի չապահովման դեպքում: Վերոնշյալ պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական դիրքի մասին հաշվետվությունում հաշվանցման չափանիշներին: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ

«ԻՆԵԿՈՐԱՆՍԿ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Չազար 33 դրամով

դրանք ստեղծում են ճանաչված գումարների մարման իրավունք, որն ուժի մեջ է մտնում միայն Բանկի կամ գործընկերների կողմից դեֆոլտի, անվճարունակության կամ սնանկության դեպքի հետևանքով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք ենթակա են հաշվանցման 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ֆինանսական ակտիվի/ պարտավորության տեսակը	Ֆինանսական ակտիվի / պարտավորության ճանաչված համախառն գումար	Ֆինանսական ակտիվի / պարտավորության փիճակի մասին հաշվետվու- թյունում հաշվանցված գումար	Ֆինանսական ակտիվ/ պարտավորության հաշվետվու- թյունում ներկայացված գումար արժեք	Ֆինանսական հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		Զուտ արժեք
				Ֆինանսական գործիքների ոչ դրամային ապահովվա- ծություն	Դրամային ապահովվա- ծություն	
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,132,214	-	3,132,214	(3,132,214)	-	-
Ընդամանը ֆինանսական ակտիվներ	3,132,214	-	3,132,214	(3,132,214)	-	-

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք ենթակա են հաշվանցման 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ֆինանսական ակտիվի/ պարտավորության տեսակը	Ֆինանսական ակտիվի / պարտավորության ճանաչված համախառն գումար	Ֆինանսական ակտիվի / պարտավորության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված գումար	Ֆինանսական ակտիվ/ պարտավորության ֆինանսական հաշվետվությունում ներկայացված գումար արժեք	Ֆինանսական հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		Դրամային ապահովվածություն	Զուտ արժեք
				Ֆինանսական գործիքների ոչ դրամային ապահովվածություն			
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,718,140	-	2,718,140	(2,718,140)		-	-
Ընդամանը ֆինանսական ակտիվներ	2,718,140	-	2,718,140	(2,718,140)		-	-

Վերոնշյալ աղյուսակում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն գումարները և համապատասխան գումար արժեքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չափվում են ամորտիզացված արժեքով:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Բանկն իր պարտավորությունները կատարելու համար կոճվարանա բավարար միջոցներ ներգրավելու: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:

«ԻՆԵԿՈՐԱՆՔ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Յազար 33 դրամով**

Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքի համապատասխանեցումը և/կամ վերահսկվող անհամապատասխանեցումը առանցքային դեր ունի ֆինանսական կազմակերպությունների, այդ թվում՝ Բանկի, կառավարման գործընթացում: Ֆինանսական կազմակերպությունները սովորաբար չեն ունենում ամբողջովին համապատասխանեցված ակտիվներ և պարտավորություններ, քանի որ բիզնես գործարքները հաճախ ունենում են անորոշ ժամկետներ և տարբեր բնույթներ են կրում: Չհամապատասխանեցված դիրքը կարող է բարձրացնել եկամտաբերությունը, բայց միևնույն ժամանակ մեծացնել նաև կորստի ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ղեկավարության կողմից:

Բանկն ակտիվորեն ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների կայուն կառուցվածքը, որը ներառում է բանկերից, օտարերկրյա և միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված կարճաժամկետ և երկարաժամկետ վարկեր, իրավաբանական և ֆիզիկական անձ հաճախորդների ավանդներ, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների պորտֆելներ՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու սահուն կերպով բավարարելու համար: Բանկի իրացվելիության կառավարման քաղաքականությունը պահանջում է.

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում՝ ըստ հիմնական արժույթների, և այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսական աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտավորությունների կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտավորությունների ֆինանսավորման պլանավորում,
- բարձր իրացվելիություն ունեցող ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարող է հեշտությամբ իրացվել դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ապահովման այլընտրանքային ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ հաշվապահական հաշվեկշռում արտացոլված իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Գանձապետական ծառայությունը բիզնես ստորաբաժանումներից տեղեկատվություն է ստանում վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի և ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետական ծառայությունը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում կազմված է իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ Բանկում իրացվելիության բավարար մակարդակ ապահովելու նպատակով:

Ռիսկերի վերլուծության և վերահսկման բաժինը վերահսկում է իրացվելիության օրական դիրքերը և պարբերաբար իրականացնում սթրես թեստեր՝ հաշվի առնելով շուկայի զարգացման նորմալ և պակաս բարենպաստ պայմաններ: Շուկայի նորմալ պայմաններում Բանկի իրացվելիության դիրքը նկարագրող հաշվետվությունները ներկայացվում են Ռիսկերի կառավարման հանձնաժողով և ԱՊԿԿ շաբաթական կտրվածքով: Բանկի իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացվում են ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Գանձապետական ծառայության կողմից:

Իրացվելիության կառավարման նպատակով հաշվարկվող հիմնական ցուցանիշը բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների սահմանային հարաբերակցությունն է: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցներ, նոստրո հաշիվներ, պետական և կորպորատիվ պարտատոմսեր, որոնց համար գործում է ակտիվ ու իրացվելի շուկա և որոնք գրավադրված չեն կամ որոնց օգտագործումն այլ կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են ցպահանջ ավանդներ և այլ ցպահանջ պարտավորություններ:

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ըստ ժամկետայնության 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	49,808,684	-	-	49,808,684	-	-	-	49,808,684
Ներդրումային արժեթղթեր	-	84	2,614,913	2,614,997	11,926,686	14,929,034	26,855,720	29,470,717
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	126,545	-	-	126,545	-	947,000	947,000	1,073,545
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,132,214	-	-	3,132,214	-	-	-	3,132,214
Հաճախորդներին տրված վարկեր	8,229,775	17,802,211	59,713,263	85,745,249	126,187,616	26,716,585	152,904,201	238,649,450
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	3,418	-	-	3,418	-	-	-	3,418
Այլ ակտիվներ	2,102,845	-	-	2,102,845	-	78,908	78,908	2,181,753
Ընդամենը ակտիվներ	63,403,481	17,802,295	62,328,176	143,533,952	138,114,302	42,671,527	180,785,829	324,319,781
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	4,027,490	-	-	4,027,490	-	-	-	4,027,490
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	89,318,171	15,624,999	66,789,881	171,733,051	23,922,097	1,384	23,923,481	195,656,532
Այլ փոխառություններ	2,585,155	2,596,696	19,370,589	24,552,440	31,837,263	1,360,897	33,198,160	57,750,600
Ստորադաս փոխառություն	-	284,138	-	284,138	-	7,129,067	7,129,067	7,413,205
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	74,772	42,368	117,140	10,195,500	-	10,195,500	10,312,640
Վարձակալության գծով պարտավորություններ	7,200	39,328	277,784	324,312	1,075,435	795,077	1,870,512	2,194,824
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	4,400	-	-	4,400	-	-	-	4,400
Այլ պարտավորություններ	1,406,208	-	-	1,406,208	-	1,324,404	1,324,404	2,730,612
Ընդամենը պարտավորություններ	97,348,624	18,619,933	86,480,622	202,449,179	67,030,295	10,610,829	77,641,124	280,090,303
Զուտ դիրքը առ 31 դեկտեմբեր 2019թ.	(33,945,143)	(817,638)	(24,152,446)	(58,915,227)	71,084,007	32,060,698	103,144,705	44,229,478
Կուտակային դիրքը առ 31 դեկտեմբեր 2019թ.	(33,945,143)	(34,762,781)	(58,915,227)		12,168,780	44,229,478		

Բացի այդ, ինչ վերաբերում է վերոնշյալ իրացվելիության աղյուսակին, 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտավորությունները ներկայացված են ծան. 29-ում: Վարկային գծերի, վարկային պարտավորությունների, երաշխավորությունների և համանման պարտավորությունները կազմում են 33,850,157 հազար ՀՀ դրամ (2018թ.՝ 31,271,967 հազար ՀՀ դրամ): Այս պարտավորություններից փաստացի դրամային արտահոսքերը տարբերվում են ժամկետայնությամբ և փաստացի առաջացմամբ: Դեկլարության կողմից Բանկի իրացվելիության վերլուծության դիտարկումը նաև ներառում է պարտավորություններից առաջացող հնարավոր դրամային արտահոսքերի վերլուծությունը:

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ								
	Ցայահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրա- գումար	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	12 ամսից ավելի, ենթահանրա- գումար	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	42,605,738	-	-	42,605,738	-	-	-	42,605,738
Ներդրումային արժեթղթեր	-	89,007	7,189,810	7,278,817	12,700,082	9,020,561	21,720,643	28,999,460
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	171,861	-	-	171,861	-	889,500	889,500	1,061,361
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,718,140	-	-	2,718,140	-	-	-	2,718,140
Հաճախորդներին տրված վարկեր	6,642,880	16,065,198	55,888,905	78,596,983	111,615,546	16,204,002	127,819,548	206,416,531
Այլ ակտիվներ	1,571,583	-	-	1,571,583	-	-	-	1,571,583
Ընդամենը ակտիվներ	53,710,202	16,154,205	63,078,715	132,943,122	124,315,628	26,114,063	150,429,691	283,372,813
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	7,196	-	-	7,196	-	-	-	7,196
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	70,060,915	18,476,534	60,220,494	148,757,943	15,612,458	7,126	15,619,584	164,377,527
Այլ փոխառություններ	2,675,776	2,973,469	12,617,856	18,267,101	47,802,651	1,391,164	49,193,815	67,460,916
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	-	37,039	37,039	5,530,776	-	5,530,776	5,567,815
Այլ պարտավորություններ	1,286,281	-	-	1,286,281	-	-	-	1,286,281
Ընդամենը պարտավորություններ	74,030,168	21,450,003	72,875,389	168,355,560	68,945,885	1,398,290	70,344,175	238,699,735
Չուտ դիրքը առ 31 դեկտեմբեր 2018թ.	(20,319,966)	(5,295,798)	(9,796,674)	(35,412,438)	55,369,743	24,715,773	80,085,516	44,673,078
Կուտակային դիրքը առ 31 դեկտեմբեր 2018թ.,	(20,319,966)	(25,615,764)	(35,412,438)		19,957,305	44,673,078		

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

Պայմանագրային ժամկետայնության վերլուծության ծանոթագրությունը չի արտացոլում ընթացիկ հաշիվների պատմական կայունությունը: Մասնավորապես, հաճախորդների ընթացիկ հաշիվները և մարման ցպահանջ դիրքերը պատմականորեն տեղի են ունեցել ավելի երկար ժամանակաշրջանում, քան ներկայացված է վերոնշյալ աղյուսակներում: Այս մնացորդները ներառված են վերոնշյալ աղյուսակներում՝ մինչև երեք ամիս ժամկետ ունեցող դասում:

Հաճախորդների հաշիվներում ներառված ժամկետային ավանդները դասակարգվում են հիմնվելով պայմանագրային մնացած ժամկետայնության վրա՝ համաձայն ՀՀ Զաղաքացիական օրենսգրքի: Այնուամենայնիվ, հաճախորդներն իրավունք ունեն հանել իրանց ավանդները ժամկետից շուտ, եթե նրանք մասնակի կամ ամբողջությամբ գրկվում են կուտակված տոկոսի իրենց իրավունքից, և Բանկը պարտավորվում է ըստ ավանդատուի պահանջի մարել նման ավանդները:

Հիմնվելով Բանկի ավանդային պատմության վրա՝ ղեկավարությունը չի ակնկալում, որ շատ հաճախորդներ կպահանջեն հնարավոր ամսաթվից վաղաժամ մարում: Հետևաբար՝ աղյուսակը չի արտացոլում փաստացի դրամային արտահոսքերի մասով ղեկավարության ակնկալիքները:

Բանկը նաև համակարգում և վերլուծում է հաճախորդների ավանդները՝ հիմնվելով նրանց վարքագծի պատմական օրինակի վրա: Նախորդ երեք հաշվետու ամսաթվերի դրությամբ հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների Բանկի մնացորդը կազմել է համապատասխանաբար 51,106,865 և 81,338,111 հազար ՀՀ դրամ: Ղեկավարությունը համակարգում է ընթացիկ հաշիվները կանոնավոր հիմունքով և դիտարկում է, որ չկան ընթացիկ հաշիվների անհամաչափ նվազում՝ չնայած դրանց ցպահանջ լինելու հանգամանքին:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Բանկի ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հիմնվելով պայմանագրով նախատեսված չգեղջկված պարտավորությունների մարման վրա:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար
Ոչ ածանցյալ պարտավորու- թյուններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	4,031,768	-	-	-	-	4,031,768
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ Ստորադաս փոխառություն վարձակալության գծով	89,355,846	15,919,025	19,925,159	49,668,474	26,573,569	201,442,073
Արտավարձային պարտավորություններ	2,608,064	2,761,720	5,066,050	17,075,918	37,220,974	64,732,726
Ֆինանսական պարտավորու- թյուններ իրական արժեքով շահույթ կամ վնասով չափվող	-	136,086	199,046	335,132	10,949,053	11,619,317
Այլ ֆինանսական պարտավորու- թյուններ	48,878	97,089	149,643	290,931	2,553,595	3,140,136
Ֆինանսական պարտավորու- թյուններ	-	366,100	-	362,121	10,971,065	11,699,286
Ֆինանսական պարտավորու- թյուններ	4,400					4,400
Այլ ֆինանսական պարտավորու- թյուններ	1,603,545	-	-	-	1,127,067	2,730,612
Ընդամենը ֆինանսական պարտավորու- թյուններ	97,652,501	19,280,020	25,339,898	67,732,576	89,395,323	299,400,318
Վարկավորման պարտավորվա- ծություններ	33,850,157					33,850,157

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Յազար 33 դրամով

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Բանկի ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմնվելով պայմանագրով նախատեսված չգեղջված պարտավորությունների մարման վրա:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար
Ոչ ածանցյալ պարտավորությու- ններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	7,196	-	-	-	-	7,196
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	70,095,711	18,791,712	22,950,505	39,755,442	16,775,230	168,368,600
Այլ փոխառություն- ներ	2,699,096	3,202,445	4,399,692	11,480,657	55,273,199	77,055,089
Թողարկված արժեթղթեր	-	-	177,919	177,919	6,178,959	6,534,797
Այլ ֆինանսական պարտավոր- ություններ	277,575	19,140	450,000	539,566	-	1,286,281
Ընդամենը ֆինանսական պարտավորու- թյուններ	73,079,578	22,013,297	27,978,116	51,953,584	78,227,388	253,251,963
Վարկավորման պարտավորվա ծություններ	31,271,967	-	-	-	-	31,271,967

Վերոնշյալ աղյուսակում ներկայացված են ակտիվների և պարտավորությունների արտահոսքի
 ընդհանուր համախառն գումարները հաշվետու ամսաթվի դրությամբ, որոնք ներառում են
 ապագայում հաշվարկվելիք տոկոսների գումարները:

Ղեկավարությունը հավատում է, որ չնայած ֆիզիկական անձնաց ժամկետային ավանդները
 ժամկետից շուտ խզելու հանարավորությանը՝ սահմանված ՀՀ Զաղաքացիական օրենսգրքով, և
 այն փաստին, որ հաճախորդների միջոցների 40.7%-ը ցպահանջ են, հաճախորդների միջոցների
 դիվերսիֆիկացիան ըստ քանակի և ըստ ավանդատուների, ինչպես նաև Բանկի անցած փորձը
 ցույց են տալիս, որ հաճախորդներից ներգրավված միջոցները հանդիսանում են երկարաժամկետ
 և կայուն ֆինանսավորման միջոց:

Բանկը հաշվարկում է նաև իրացվելիության պարտադիր ցուցանիշներն օրական կտրվածքով ՀՀ
 ԿԲ պահանջների համաձայն: 2019թ. և 2018թ. ընթացքում Բանկի իրացվելիության
 ցուցանիշները համապատասխանում էին սահմանված պահանջներին:

	2019 դեկտեմբեր (միջին ցուցանիշ)	2018 դեկտեմբեր (միջին ցուցանիշ)
Լ21-Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներ)	20.95%	22.49%
Լ22-Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	93.63%	105.13%

«ԻՆԵԿՈՐԱՆՍԿ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

28. ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀՀ ԿԲ-ն սահմանում և վերահսկում է Բանկերին անհրաժեշտ կապիտալի մակարդակը:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշի (օրենսդրորեն սահմանված Կապիտալի համարժեքության ցուցանիշ) նվազագույն մակարդակը կազմում էր 12% (2018թ.-ին՝ 12%): 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված մակարդակին:

Ստորև ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքությունը 2019թ.-ի և 2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2019թ. դեկտեմբերի 31 (աուդիտ չարված)	2018թ. դեկտեմբերի 31 (աուդիտ չարված)
Հազար ՀՀ դրամ		
Հիմնական կապիտալ		
Հիմնական կապիտալ	47,533,065	44,476,315
Նվազեցումներ	(5,851,271)	(5,182,465)
Ընդամենը հիմնական կապիտալ	41,681,794	39,293,850
Լրացուցիչ կապիտալ		
Վերագնահատման պահուստներ	3,777,901	2,904,006
Ստորադաս փոխառություններ	7,174,548	-
Ընդամենը՝ լրացուցիչ կապիտալ	10,952,449	2,904,006
Ընդամենը կապիտալ	52,634,243	42,197,856
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվները՝ ներառյալ վարկային, շուկայական և գործառնական ռիսկերը	345,062,064	304,354,270
Կապիտալի համարժեքության նորմատիվ	15.25%	13.86%

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավ կամ երաշխավորություն: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

29. ՀԵՏՅԱՇՎԵԿՇՈԱՅԻՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԳԾՈՎ ԲԱՆԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկը մշտապես ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկեր և վարկային քարտերի սահմանաչափեր:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումն երրորդ անձանց հանդեպ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պոտենցիալ և պայմանական պարտավորությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում նշված պոտենցիալ պարտավորությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում ներկայացված երաշխիքների և ակրեդիտիվների գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կգրանցվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չիրականացնեն իրենց կողմից ստանձնած պարտավորությունները:

«Ինեկորբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

Պայմանագրային գումար	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	18,124,610	15,774,469
Երաշխիքներ	8,382,945	9,037,632
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	7,115,445	6,092,770
Ակրեդիտիվներ	227,157	367,096
Ընդամենը	33,850,157	31,271,967

Վարկավորման վերը ներկայացված ընդհանուր պարտավորվածությունները չեն ենթադրում դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը:

30. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊԶԵՐ

Դատական վարույթներ

Բանկն իր ամենօրյա գործունեության ընթացքում ենթակա է դատական հայցերի և բողոքների: Դեկավարությունը կարծում է, որ հիմնական պարտավորությունը, առկայության դեպքում, որը բխում է Բանկի դեմ հարուցված դատական հայցերից և բողոքներից, նշանակալի ազդեցություն չի ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության վրա:

Հարկային համակարգ

Հարկային համակարգը Հայաստանում բնութագրվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանությունների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա են տարբեր մեկնաբանությունների: Հարկային օրենսդրությունը խախտելու դեպքում հարկային մարմինների կողմից լրացուցիչ հարկերի, տուգանքների կամ տուգանքների համար ոչ մի պարտավորություն չի կարող առաջադրվել հարկման մարմինների կողմից երեք տարի անց՝ այն խախտելու պահից:

Բանկի Դեկավարությունը գտնում է, որ այն պատշաճ կերպով իրականացրել է հարկային պարտավորությունները՝ հիմնվելով ՀՀ գործող հարկային օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել, և ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա:

Դեկավարությունը կարծում է, որ Բանկը պահպանել է բոլոր կանոնակարգերը և ամբողջությամբ մարել է իր բոլոր հարկային պարտավորությունները:

Գործարար միջավայր

Սկսած 2020 թվականից, ամբողջ աշխարհում արագորեն տարածվեց նոր կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19), որի արդյունքում 2020 թվականի մարտին Առողջապահության Համաշխարհային կազմակերպության կողմից հայտարարվեց համաճարակային դրություն: Սույն իրավիճակը իր բացասական ազդեցությունն է ունենում համաշխարհային ֆինանսական շուկաների և մի շարք խոշոր ընկերությունների վրա: Քանի որ իրավիճակը արագորեն զարգանում է, այն կարող է էական ազդեցություն թողնել բազմաթիվ ընկերությունների բիզնես-ոլորտի լայն շրջանակի վրա, ներառյալ՝ բիզնեսի գործունեության խափանումը՝ արտադրության ընդհատման կամ օբյեկտների փակման, մատակարարման դադարեցման արդյունքում, շղթայական խանգարումներ, անձնակազմի կարանտիններ, պահանջարկի կրճատում և ֆինանսավորման բարձրացման դժվարություններ: Բանկը կարող է բախվել COVID-19- ի լայն ազդեցություններին՝ համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա նրա բացասական ազդեցության արդյունքում: COVID-19- ի ազդեցության նշանակությունը Բանկի վրա մեծապես կախված է համաճարակի ազդեցության տևողությունից և դեպքից:

Դեկավարությունը կարծում է, որ Բանկը ձեռնարկել է պատշաճ գործողություններ՝ նվազագույն բացասական հետևանքներով գործառնական միջավայրի մարտահրավերները հաղթահարելու համար:

«ԻՆԵԿՈՐԱՆՍԿ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

31. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

ա) Գործարքներ տնօրենների խորհրդի և ղեկավար անձնակազմի գծով

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Միջին արդյունավետ տոկոսադրույթ %	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Միջին արդյունավետ տոկոսադրույթ %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն Ակտիվներ				
Տրված վարկեր (համախառն)	96,346	10.2%	29,060	11.5%
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	(31)		(50)	
Պարտավորություններ				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ, ավանդներ, ձեռքբերված պարտատոմսեր	441,639	5.3%	389,464	5.6%
Շահույթի կամ վնասի մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտներ	5,759		2,697	
Տոկոսային ծախսեր	(21,411)		(21,285)	
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(19,577)		(15,567)	
Աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը	(706,604)		(626,716)	

բ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Բաժնետերեր		Այլ կապակցված կողմեր	
		Միջին արդյունավետ տոկոսադրույթ %		Միջին արդյունավետ տոկոսադրույթ %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն Ակտիվներ				
Տրված վարկեր (համախառն)	1,043	9.2%	18,498	10.9%
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	(12)		(86)	
Պարտավորություններ				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ, ավանդներ, ձեռքբերված պարտատոմսեր	2,844,047	4.66%	265,371	6.0%
Այլ փոխառություններ	7,456,761	7.7%		
Շահույթի կամ վնասի մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտներ	29		1,375	
Տոկոսային ծախսեր	(631,885)		(15,640)	
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,504)		(8,251)	

«ԻՆԵԿՈՐԲԱՆՍԿ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Բաժնետերեր		Այլ կապակցված կողմեր	
	Միջին արդյունավետ տոկոսադրույթ %		Միջին արդյունավետ տոկոսադրույթ %	
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն Ակտիվներ				
Տրված վարկեր (համախառն)	2,780	12.0%	9,983	10.0%
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	(39)		(45)	
Պարտավորություններ				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ, ավանդներ, ձեռքբերված պարտատոմսեր	3,541,180	4.8%	293,288	5.9%
Այլ փոխառություններ	5,665,524	8.4%	-	-
Շահույթի կամ վնասի մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտներ	38		867	
Տոկոսային ծախսեր	(585,845)		(13,863)	
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(5,936)		(4,792)	

32. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՂՐՈՒՄ

Բանկի ֆինանսական հոսքերում փոփոխությունները կարող ենք նկարագրել հետևյալ կերպ՝

	Հունվարի 1, 2019թ.	Չուտ ավելացում /(մարում)	Տոկոսի մարում	Արտարժ- ույթի վերազնա- հատման ազդեցու- թյուն	Ոչ դրամային փոփոխություններ			Դեկտեմբերի 31, 2019թ.
					Տոկոս- ային ծախս	Ավելա- ցումներ		
Այլ փոխառություններ	67,460,916	(9,305,228)	(4,813,642)	(181,015)	4,589,569	-		57,750,600
Թողարկված պարտքային արժեթղթեր	5,567,815	4,881,300	(570,788)	(29,925)	464,238	-		10,312,640
Վարձակալության գծով պարտավորություն -ներ	2,448,698	(572,827)	-	-	192,326	126,627		2,194,824
Ստորադաս փոխառություն	-	7,344,300	(359,983)	(215,270)	644,158	-		7,413,205

33. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ

Ըստ ՖՀՄՍ սահմանման, իրական արժեքն այն գինն է, որով ակտիվը վաճառելու կամ պարտավորությունը փոխանցելու գործարքը տեղի կունենար շուկայի պատրաստակամ մասնակիցների միջև չափման ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված իրական արժեքը Բանկը չափում է՝ օգտագործելով հետևյալ իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է գնահատման մեջ կիրառվող չափանիշների նշանակալիությունը.

- Մակարդակ 1. Համանման գնանշված գործիքի շուկայական արժեքը (չճշգրտված)՝ ակտիվ շուկայում
- Մակարդակ 2. Գնահատման մեթոդներ՝ հիմնված դիտարկելի չափանիշների վրա, ուղղակի (օրինակ՝ գները) կամ անուղղակի ձևով (օրինակ՝ գներից բխող): Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են՝ օգտագործելով ակտիվ շուկայում նման գնանշված գործիքների շուկայական արժեքը, շուկայում գնանշված համանման կամ նմանատիպ գործիքների շուկայական արժեքը, որոնք ենթադրվում են ավելի քիչ ակտիվ շուկա, կամ այլ գնահատման մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի չափանիշները ուղղակի կամ անուղղակի դիտարկելի են շուկայի տվյալներից:
- Մակարդակ 3. Գնահատման մեթոդներ, որոնք օգտագործում են նշանակալի ոչ դիտարկելի չափանիշներ: Այս մակարդակը ներառում է բոլոր գործիքները, որտեղ գնահատման մեթոդը ներառում է չափանիշներ, որոնք հիմնված չեն դիտարկելի տվյալների վրա և ոչ դիտարկելի չափանիշները ունեն նշանակալի ազդեցություն գործիքների գնահատման մեջ: Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են՝ հիմնվելով շուկայական գնի վրա, որտեղ նշանակալի ճշգրտումներ կամ ենթադրություններ են անհրաժեշտ գործիքների տարբերությունները արտացոլելու համար:

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով**

33.1 Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը՝ շարունակական հիմունքով իրական արժեքով չափվող

Բանկի որոշ ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին: Հետևյալ աղյուսակը տրամադրում է տեղեկատվություն այդ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքների որոշման վերաբերյալ (մասնավորապես գնահատման տեխնիկաները և ելակետային տվյալները):

Ֆինանսական ակտիվ/պարտավորություն	Իրական արժեք		Իրական արժեքի հիերարխիա	Գնահատման մեթոդաբանություն	Էական ոչ դիտարկելի տվյալներ	Ոչ դիտարկելի տվյալների և իրական արժեքի միջև կապ
	Դեկտեմբերի 31, 2019թ.	Դեկտեմբերի 31, 2018թ.				
1) Իրական արժեքով չափվող այլ համապարփակ եկամտում հաշվառվող ներդրումային արժեթղթեր – պետական պարտատոմսեր (տես ծնթ.12)	13,865,514	28,373,307	Մակարդակ 2	Չեղջված դրամական հոսքեր: Ակնակալվող դրամական հոսքերը գեղջվում են այնպիսի շուկայական որոշումով, որն արտացոլում է որոշակի ժամկետայնություն:	կ/չ	կ/չ
2) Իրական արժեքով չափվող այլ համապարփակ եկամտում հաշվառվող ոչ պետական պարտատոմսեր (տես ծնթ. 12)	342,461	595,217	Մակարդակ2	Չեղջված դրամական հոսքեր: Ակնակալվող դրամական հոսքերը գեղջվում են այնպիսի շուկայական որոշումով, որն արտացոլում է որոշակի ժամկետայնություն:	կ/չ	կ/չ
3) Իրական արժեքով չափվող այլ համապարփակ եկամտում հաշվառվող կապիտալի գործիքներ (տես ծնթ. 12)	30,914	30,936	Մակարդակ 3	Բաժնային գործիքների գնահատման համար ակտիվ շուկա չկա և չի կարող կիրառվել գնահատման որևէ մեթոդ՝ դիտարկելի տվյալների բացակայության պատճառով:	Երկարաժամկետում հասույթի աճի տեմպ, կապիտալի միջին կշռված ծախսատարություն, ապագա գործառնական դրամական հոսքեր, շուկայական գնանշումներ, շուկայական համեմատականներ՝ պայմանավորված շուկայի բացակայությամբ, և նման ոլորտներում ցուցակված ընկերությունների բաժնետոմսերի գներ:	Ինչքան ավելի մեծ է հասույթի աճի տեմպը, այդքան ավելի մեծ է իրական արժեքը: Ինչքան ավելի բարձր է կապիտալի միջին կշռված ծախսատարությունը, այդքան ավելի փոքր է իրական արժեքը: Ինչքան ավելի մեծ են ապագա գործառնական դրամական հոսքերը, այդքան ավելի մեծ է իրական արժեքը:

«Ինեկորբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

Իրական արժեքը գնահատումը ենթադրում է մոտավորապես որոշելու այն գումար, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ, պատրաստական կողմերի միջև՝ «պարզած ձեռքի հեռավորության» գործարքում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ դատողությունների առկայությունը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես ակտիվների կամ պարտավորությունների անմիջապես վաճառքի գումար, ինչպես նաև այստեղ ներկայացված գնահատումները պարտադիր կերպով չեն արտացոլում այն գումարները, որոնք Բանկը կարող է ստանալ որոշակի գործիքի շուկայական փոխանակման արդյունքում: Իրական արժեքը գնահատելու նպատակով շուկայական տվյալների մեկնաբանությունը դատողություն է պահանջում: Հայաստանի Հանրապետության շուկան կարելի է բնութագրել որպես զարգացող, որտեղ տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկայում գործարքների ծավալը: Շուկայի գնանշումները կարող են հնացած լինել կամ արտացոլել սուղ ժամկետներում վաճառքի գործարքներ՝ արդյունքում չարտացոլելով ֆինանսական գործիքների իրական արժեքները: Դեկլարությունն օգտագործել է շուկայի ամբողջ հասանելի տեղեկատվությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատելիս:

Ընթացիկ ժամանակաշրջանում Մակարդակ 1-ի և Մակարդակ 2-ի միջև անցումներ տեղի չեն ունեցել:

33.2. Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը՝ ոչ շարունակական հիմունքով իրական արժեքով չափվող (սակայն իրական արժեքի բացահայտում պահանջող)

Ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների իրական արժեքների գնահատումները հիմնված են ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք պետք է ստացվեն՝ համանման վարկային ռիսկ և մնացած մարման ժամկետ ունեցող նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով զեղչելու դեպքում: Բացառությամբ ստորև նշված դեպքերի, դեկլարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրանց իրական արժեքին:

	Դեկտեմբեր 31, 2019		Դեկտեմբեր 31, 2018	
	Հաշվեկշռային մնացորդ	Իրական արժեք	Հաշվեկշռային մնացորդ	Իրական արժեք
Հաճախորդներին տրված վարկեր	238,649,450	261,560,912	206,416,531	206,416,531
Բանկերից ստացվելիք գումարներ	1,073,545	1,073,545	1,061,361	1,061,361
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ներդրումային արժեթղթեր	15,231,828	16,094,636	-	-
Այլ ֆինանսական ակտիվներ	2,181,753	2,181,753	1,571,583	1,571,583
Բանկերի ավանդներ և մնացորդներ	(4,027,490)	(4,027,490)	(7,196)	(7,196)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(195,656,532)	(185,482,970)	(164,377,527)	(164,377,527)
Այլ փոխառություններ	(57,750,600)	(57,750,600)	(67,460,916)	(67,460,916)
Թողարկված արժեթղթեր	(10,312,640)	(10,312,640)	(5,567,815)	(5,567,815)
Վարձակալության գծով պարտավորություն	(2,194,824)	(2,194,824)	-	-
Այլ ֆինանսական պարտավորություններ	(2,730,612)	(2,181,753)	(1,286,281)	(1,286,281)
Ստորադաս փոխառություն	(7,413,205)	(7,413,205)	-	-

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

34. ՀԵՏՀԱՇՎԵԿՇՈԱՅԻՆ ԻՐԱՂԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020 թվականի մարտի 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը Նոր կորոնավիրուսով առաջացած շնչառական հիվանդության բռնկումը հայտարարեց որպես «համաճարակ»: Առաջին անգամ հայտնաբերվելով 2019-ի վերջին և այժմ հայտնի որպես COVID-19-ի բռնկումը ազդել է ամբողջ աշխարհում հազարավոր անհատների վրա: Ի պատասխան՝ շատ երկրներ իրականացրել են բռնկման դեմ պայքարի միջոցառումներ, որոնք ազդել են համաշխարհային բիզնեսի վրա: Ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթվի դրությամբ Բանկի գործառնությունների վրա այն էական ազդեցություն չի ունեցել. այնուամենայնիվ, Բանկը շարունակում է վերահսկել իրավիճակը: Հետհաշվեկշռային իրադարձություններում կարող են բացասական հետևանքներ արձանագրվել Բանկի գործունեության արդյունքների, դրամական միջոցների հոսքի և ֆինանսական վիճակի վրա: Հաշվեկշռի ամսաթվից հետո Բանկը չի կրել ֆինանսական և տնտեսական իրավիճակի էական անբարենպաստ հետևանքներ, ղեկավարությունը ձեռնարկել է որոշակի կանխարգելիչ միջոցներ հետագա հնարավոր անբարենպաստ հետևանքները չեզոքացնելու համար: Սասնավորապես, ղեկավարության կողմից ձեռնարկված միջոցառումները ներառում են Բանկի իրացվելիության դիրքի շարունակական մոնիտորինգ: Այս առումով ղեկավարությունը դիմել է գործընկերներին փոխառությունների մարումների ժամանակացույցերի հետաձգման, ինչպես նաև Նոր ռեսուրսների ներգրավման համար: Հաշվետվության ստորագրման պահի դրությամբ այդ միջոցները կամ հաստատվել են, կամ գտնվում են հաստատման փուլում, ինչը հնարավորություն կտա Բանկին ապահովել իրացվելիության առնվազն 30% ցուցանիշ: Ավելին, ղեկավարությունը ձեռնարկել է ռիսկերի կառավարման միջոցներ հաճախորդների մարման ժամանակացույցերի հետ կապված՝ հաշվի առնելով կառավարության կողմից հայտարարված ծրագրերը, արտաքին միջավայրը և հաճախորդի սպասվող պահվածքը: Այս միջոցները կազմում են կառավարման իրացվելիության մոնիտորինգի միջոցառումների մի մասը և ստեղծված իրավիճակի համապատասխան պատասխանը: Ղեկավարությունը կարծում է, որ ներդրված ռիսկերի կառավարման միջոցները թույլ կտան կանխատեսել ապագա իրավիճակի ցանկացած անբարենպաստ հետևանքներ:

2019 թվականի առաջին եռամսյակում տեղի են ունեցել Բանկի սովորական բաժնետոմսերի առևտրային գործաքներ:

Ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ բաժնետերի կառուցվածքը և բաժնետոմսերի տոկոսները հետևյալն են.

	2020 թ. ապրիլի 23, %	2019 թ. դեկտեմբերի 31, %
Ավետիս Բալոյան	38.10	32.3
Կարեն Սաֆարյան	32.95	27.9
ՎԶԵԲ	-	12.7
ԱԳՐԻՖ ԿՈՊՊԵՐԱՏԻՖ ՅՈՒԷՅ	10.0	10.0
ԴԻՎԵԼՈՓՄԵՆՏ ԿՈՐԼԴ ՄԱՐԶԵԹՍ	5.1	5.1
Այլ բաժնետերեր	13.84	12.0
	100. 0	100. 0